

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

1/2010

JOURNAL FOR ARMENIAN STUDIES

*Տպագրվում է ԱրՊԿ գիտական
խորհրդի որոշմամբ*

Ստեղծանակերտ 2010

Խմբագրական խորհուրդ

- Դադայան Ս. Վ. - Խմբագրական խորհրդի նախագահ, ԱրՊԿ ռեկտոր,
պ.գ.թ, պրոֆեսոր
- Բալայան Վ. Ռ. - գլխավոր խմբագիր, ԱրՊԿ պրոռեկտոր, պ.գ.թ.,
դոցենտ
- Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊԿ
պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
- Մելքոնյան Ա. Ա. - «Հ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
պ.գ.դ.,
«Հ ԳԱԱ թղթակից անդամ
- Հովհաննիսյան Լ. Շ. - «Հ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ.,
պրոֆեսոր,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

- Պետրոսյան Հ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ,
պ.գ.դ.
- Մուսայելյան Հ. Գ. - ԱրՊՀ գիտական քարտուղար, բ.գ.դ., պրոֆեսոր
- Սարգսյան Ա. Յ. - ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բ.գ.թ.,

դրցենտ

- Կարապետյան Ս. - ՀՃՈՒԿ կազմակերպության տնօրեն

$$\text{ԳՄԴ} \frac{63.3(2\zeta) + 81.2\zeta + 83.3 (2\zeta)}{\zeta 24}$$

$$\zeta S\eta \quad 908/941(479.25)+809.181.1+891.981.1$$

Редакционная коллегия:

- Дадаян С.В. - председатель редакционной коллегии, ректор АрГУ, к.и.н., профессор
- Балаян В.Р. - главный редактор, проректор АрГУ, к.и.н., доцент
- Сафарян В.А.- АрГУ, ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ,
- Мелконян А.А. - к.и.н., доцент
- корр. директор Института Пр8ՏՈՈՆ НАН РА, д.и.н., член
- Оганесян Л.Ш. - НАН РА
- корр. директор Института языка НАН РА, д.ф.н., член
- Петросян Г.Լ. - НАН РА
- Мусаелян О.Г. - зав. кафедрой культурологии ЕրГУ, д.и.н.
- Саркисян А.Ю.- доцент
- Карапетян С. - учений секретарь АрГУ, д.ф.н., профессор
- изучению декан филологического факультета АрГУ, к.ф.н.,
- Карапетян С. - председатель общественной организации по
- армянской архитектуры.

Editorial Board:

Dadayan S.V. -	Chairman of the Editorial Board, rector of ASU, Ph.D. in History, Professor
Balayan V.R. -	Editor in Chief, vice-rector of ASU, Ph.D. in History, Associate Professor
Safaryan V.A. - Department of	Executive Secretary, Head of the History ASU, Ph. D. in History, Associate Professor
Melqonyan A.A. -	Director of the Institute of History of NAS in RA, Ph. D. in History, a member of NAS in RA
Hovhannisyan L. Sh. -	Director of the Institute of Linguistics of NAS in RA, Ph. D. in Philology, member of NAS in RA
Petrosyan H. L -	Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History,
Musaelyan O.G. - Professor	Scientific Secretary of ASU, PhD in Philology,
Sargsyan A. Y. -	the Dean of the Philological Faculty of ASU, Ph. D. in Philology, Associate Professor
Karapetyan S. - Study of	Chairman of the Social Organization for the Armenian Architecture

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուժն է ծնում իրավունք: Այս անարդար, բայց իրատեսորեն բանաձևած «Ճշմարտությունը» երկրագնդի ժողովուրդների բոլոր ժամանակների ուղեկիցն է եղել: Եկառավել շատ ճակատագիրը բարյացակամ է վերաբերվել նրանց նկատմամբ, ովքեր ավելի վաղ են ընկալել այս իրողությունը:

Արցախահայությունը, ճիշտ ընկալելով այս Ճշմարտությունը, իր պատմական երկարատև կենսափորձի

վրա հենվելով, կենաց ու մահու պայքար է մղել արտաքին ու ներքին թշնամիների դեմ՝ հանուն սեփական հայրենիքի, պետականության, ժողովողի ազատության ու անկախության։ Այդ պայքարի բարձրակետը դարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծնունդը։

Ազգային պետականության գոյության պայմաններում Արցախում նոր հեռանկարներ է բացվում գիտության տարբեր ոլորտների, այդ թվում՝ հայագիտության զարգացման համար։

21-րդ դարին հատուկ նոր իրողությունների և տեղեկատվական բազում միջոցների գոյության պայմաններում տարբեր արժեհամակարգեր դաշտանող ազգերի միջև սուր պայքար է ծավալվել քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գիտության ասպարեզներում։ Ավելին՝ Ադրբեյչանի քաղաքական և գիտական շրջանակները, կեղծելով ու եղծելով իրողությունը, ամեն կերպ փորձում են սեփականացնել Հայոց Արևելից նահանգների պատմական ժառանգությունը։

Նման պայմաններում ԼՂՀ-ում հայագիտության զարգացումը հրատապ անհրաժեշտություն է դառնում։

Սույն հանդեսի նպատակն է իր շուրջը հանախմբել ԼՂՀ, ՀՀ և սփյուռքի, ինչու չէ՝ նաև այլազգի հայագետներին՝ փորձելով լցնել այն պարապը, որ գոյացել է այս ասպարեզում։

«Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնեթենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ

տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչոք քան
կոյր մտօք»:

Մեծն պատմիչից՝ Եղիշեից լավ չես ասի:

Ճշմարտության բացահայտման՝ գիտնականի առաքելու-
թյանը հավատարիմ «Հայագիտական հանդեսը» կփորձի
պատասխանել Կուր-արաքսյան հայկական միջագետքի և
հարակից շրջանների պատմությանը, գրականությանը,
բանահյուսությանը, ազգագրությանը, հնագիտությանը,
մշակույթին առնչվող հարցերին՝ ցրելով այն մուժը, որ
տասնամյակներ շարունակ նպատակային և մեթոդիկ կերպով
ստեղծվել է այս ասպարեզում:

Հարգելի ընթերցող, անցյալի վերարժնորման, ներկայի և
ապագայի արդյունավորման առումով մեզ հուզող բազում
հարցերի պատասխանները կարելի է ստանալ սույն հանդեսի
էջերում:

Վ. Բալայան

ԱՐՑԱԽԻՀԱԿԱՌԱԿԱԲԵՐԴ ՏԵՂԱՆՔԸ, ԱՆՎԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիլվա Մինասյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրԴՀ

Հակառակաբերդ տեղանունը ամրոց//բերդ ու լեռնաշղթա է գիտակցվում, իսկ հնացած անվանք՝ նաև Չափար զյուղը: Այդ անվանքը բերդը Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Տրտուի վերին հոսանքի մօռվամերձ ու ձախակինյա Պղտորագետ վտակի ենթավտակ Ակնաջրի ակունքի վերին մասն է: Հակառակաբերդը Մռովի Արիություն գագաթնակետի արևմտյան մասից դեպի Տրտուն ծգվող նովճանուն լեռնաշղթայի վերջին վեհանիստ գագաթն է, ինչպես նաև արդի Չափար բնակավայրի հին ու նոր թաղամասերի արևմտյան կողմով վեր խոյացող բարձունքը: Չափար ու Հակառակաբերդ տեղանունները երբեմն գործածվում էին ու են փոխադարձաբար: Մեր նպատակն է պարզաբանել խնդրո առարկա տեղանքի՝ բնակատեղի, սրբավայր, բերդ-ամրոց լինելը, անվան տարբերակներ ունենալու իրողությունները և նրանց ստուգաբանությունը:

Հակառակաբերդը՝ որպես ամրոց, անհիշելի ժամանակներից դժվարացածուց, անտառածածկ ու հեռվից անտեսանելի է: Այն պատճական Շռստակի, այնուհետև Զրաբերդի ամրակութ բերդերից էր: Նրա մասին գրավոր ծավալուն նկարագրություն և ուսումնասիրություն առ այսօր հրապարակի վրա չկա: Հանրածանոթը Մ. Բարխուդարյանի *Արցախ* գրքում է. «Գտնուում է Դատի վանքից վերև, մի թրածն և անտառապատ սարի վերայ: Բերդս ունի ամուր դիրք, հիանալի տեսարան և նշանաւոր ջուր: Մի քարուկիր և մեծ ջրամբար է՝ լի կենդանի ջրով, որ ոչ պակասում, ոչ ջուր է ընդունում, և ոչ արտահանում: Բոլորովին անջրապետուած է բերդասարս իւր չորս կողմերից խորանդունդ և լայնգող ձորերով. միայն ունի մի թելուղի, որ մի սերի գլխով բարձրանում է դեպի բերդն: Ամրոցիս մէջ տեղ երևում են հին շինութեանց հետքեր», ու տողատակին ավելացնում. «Անունս (Հակառակաբերդ անունը՝ - Մ. Մ.) կայ Դատի վանուց արձանագրութեանց մէջ, այժմ կոչում են Չափարի բերդ»¹: Հակառակաբերդի

¹ Բարխուդարյան Մ., Արցախ, Բագու, 1895 թ.՝ վերահատարակություն, Ստեփանակերտ-Երևան, 1995, էջ136

Վերաբերյալ մասնագիտական բառարանում հետևյալն է նշված. «Բերդ Մեծ Հայքի Արցախ աշխարհի Բերդածոր գավառում, Հաթերքի գավառակում: Գտնվում է Դադի վանքից վերև, Զափար գյուղի մոտ, անտառապատ թրածև լեռան վրա: Դիրքը գեղեցիկ է ու անմատույց, ունի առաջնակարգ ջուր: Այժմ ավերակների հետքերը հազիվ են նշմարվում: Այստեղ կա քարուկրով կառուցված մի մեծ ջրամբար, որն այժմ ևս լիքն է լինում ջրով: Բերդը չորս կողմից անջրաբետված է անդնդախոր ծորերով, որտեղից բերդակիր ժայռի կատարը կարելի է բարձրանալ մի նեղ կածանով: Վաղեմի բերդի հնավայրն այժմ տեղացիները կոչում են Զափար գյուղի անունով: Թե երբ և ով է կառուցել, հայտնի չէ»¹: Նախ նշենք, որ երկու մեջբերումներում ել ընդգծված առաջին կապակցությունը՝ Դադի վանքից վերը՝ որպես աշխարհագրական դիրք, անընկալելի է: Դադի վանքից վերը տվյալ վաճառյան համալիրի ծորն ի վեր դեպի լեռան գագաթն է, որտեղ Հակառակաբերդ չկա²: Այդ վերը նաև Տրտուի՝ Թարթառի հոսանքն ի վերը կարելի է հասկանալ, մինչեւ Հակառակաբերդը վար է³: Հետո՝ երկրորդ ընդգծումներում տեսնում ենք, որ Ս. Բարխուդարյանը բերդասարն է անջրաբետված համարում, իսկ բառարանում՝ բերդը, և վերջինիս արտաքին նկարագրությունը ճիշտ չի ստացվում: Հակառակաբերդի տեղանքը ճիշտ չի գծագրված նաև Կոլլած հրատարակչության լույս ընծայած քարտեզում⁴: Այն լայնչի տեղադրված է պատմական Քրահունջի// Գյեռավանդի և Կվենքի// Երե Քղբտեղի// Փիրփայայի// Սև քաղաքի տեղանքներում Պղտորագետի// Գյարաքի ակերին⁵:

Հակառակաբերդն իր շրջապատում բնական դիրքով էլ է համապատասխանում անվանք, այն է՝ որպես բերդ, ամեն կողմով հարմար է դիմակայելու, հակառակելու թշնամուն: Շրջակայքում ունի կիրճեր, կապաններ, անդնդախոր ծորեր, որոնց հարմար տեղերում տարբեր ժամանակներում մարդիկ կառուցել են այլ բերդակներ

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանումների բառարան, հ. 3, Եր., 1991, էջ 312:

² Այդ ծորը հաջորդում է Դադիվանքի լեռնաշղթային. լեռնաշղթաների անունները նոր են գրությունում: տես. Լեռնային Դարաբաղի Հանրապետության ասլամա, Եր., 2009:

³ Երևի մի բնագրի վրհպակ թուրիմացորեն դատեար կրկնելու է՝ վար պիտի լիներ, իսկ եթե բարձրությունը նկատի ունենալիս լինեն, այսինքն՝ Դադի վանքից բարձրադիր է, ապա իրարից հեռու գտնվող երկու լեռնաշղթաների տարբեր կարգի շինություններն այդպես չեն համեմատվի:

⁴ Բեզմայամ Գ., Արցախի քարտեզ (Տախսագիծը Ա. Մուրադյանի, ծնավղումը Ա. Ճերմակյանի), Կոլլած հրտուկ, Եր., 2004:

⁵ Ընդդրկված է նաև նշված քաղաքատեղի հիմնահատակ ավերված բերդը. Երկի ոչ մեկը տեղանքին լավ ծանոթ չէր:

(Բերդաքար//Սալդաշ), դարպասներ (Զրի կապը, Բերդաքարի կապը, Ստուպկեն կապը) ու այլ շինություններ (հատկապես՝ Ս. Մինաս, Ս. Պողոս, Դարձ//Թարսխաչ) և այլն, որտեղ սպառվում էին թշնամու ուժերը¹:

Հակառակաբերդը ոչ միայն հուսալի ամրոց էր շրջակա տասը բնակավայրերի (Մանանասար, Երե Ճղցնե, Երե Քղքատեղը, Գետամեջերը, Քրահունջը, Ներքե Ծենատեղը, Ներքե, Երե Մշհաններ, Հինաս, Ներքե Քղքատեղ) մեծատունների ծերերի, կանանց ու երեխանների համար, այլ նաև իին դիցային պաշտամունքի տեղ է եղել (Աստղիկ, Ծովինար): Բերդամիջի հարթությունում պահպանված ժայռակտորը հազարամյակներ առաջ զոհարան՝ զոհասեղան է եղել, որի վրա դրվել էր մատուցված մատաղ-զոհ-ընծամը²: Զոհ բառը պահլավական փոխառություն է պարսկերենի միջնորդությամբ և հայերենում նշանակում է ողջակեզ, մատաղ, ընծա, իսկ միջնորդ լեզվում ժողովրդական ընկալմանք՝ օրինյալ ջուր³, որը հենց հյուսիսարևմտյան կողմի ջրամբարի պարունակությունն է, իսկ հնդեվրոպական նախալեզվում զոհ/ր բառի նախատիպը զիեռու արմատն է, որից հայերենում ունենք բնիկ ծոն, ծև բառերը⁴: Զոներ, բնական է, եղել են Աստղիկին, Ծովինարին նվիրված, որից հիմա միայն անձրև խնդրելիս ժողովրդական մտածողությամբ պարզ ու մատչելի աղաչանքներն են ու նրանցում Շարմաղ աղջկա՝ Աստղիկի գեղեցկությունը փառաբանող մի երկու մակորի: Քրիստոնեության ընդունումից հետո դադարեցվել է կուռքերի պահպանությունն ու պաշտամունքը: Այս բառը՝ պաշտել՝ իրանական փոխառություն է և նշանակում էր շուրջը պատուիլ, դրանից են նաև պաշտոն, ամբարիշտ և այլ բառեր ծևավորվել⁵: Կուռքերի փոխարեն խաչքարեր են դրվել, Մարիամ Աստվածածին են կանչել, բայց

¹ Հակ բաղադրիչով այլ տեղանքներ ևս կան հայերենում, ինչպես՝ Հկեղանք՝ Տրտուի աջափնյա՝ Վաղուհասի, Հարությունագոմերի, Կծողոսի, Արաջածորի և այլնի պաշտպանական ամրոցը, Հակառակահողեր՝ Լորիում և այլն, որոնք, բացի աշխարհագրական դիրքից, նաև իրենց գործունեությամբ հակառակելու, թարսվելու, ընդդիմանալու հատկանիշներ են ցուցաբերել հավատի, կառավարման բնագավառում ծգտելով ինքնուրույնության ու ինքնիշխանության, որից կենտրոնախույս ուժեր դարձալով, նաև վնասել էին կենտրոնածիզ պետականությամբ:

² Նախորդ դարում էլ դեռևս նախադ անելիս պտտվում էին ժայրի շուրջը ու մորթված կենդանու կամ թրչունի ուժքերը, գոլիքը դնում այդ ժայրի վրայի փոքր ու կոտրված խաչքարի առաջ: Արցախյան գյուղաքարի ժամանակ՝ Բերդի ժայրի արևմտյան ստորոտից թերված մեծ խաչքարով են փոխարիմել այդ խաչքարակտորը:

³ Աճայշան Հր., Հայերեն արմատական բառարան, Վերահր., հ. 2, Եր., 1972, էջ 103:

⁴ Սովոր տեղը, տես նաև Աճայշան Հր., Հայերեն արմատական բառարան, Վերահր., հ. 3, Եր., 1977, էջ 161-162:

⁵ Աճայշան Հր., Հայերեն արմատական բառարան, Վերահր., հ. 4, Եր., 1979, էջ 23-24:

մարդկանց անհրաժեշտն ու օգտակարը, բնական է, բանահյուսական ծեսի փշրանքների տեսքով մնացել են: Դրանցից էր ջուր, անձրև խնդրելու արարողությունը գյուղի հին թաղամասում ապրելու ժամանակ՝ մինչև 20-րդ դ. 60-ականները, երբ չոռօգվող բանջարանոցները շատ էին (հատկապես Եգիպտացորենի, կարտոֆիլի, ոչ ծիլավոր լոբու՝ փյադա լոբու// տփիլոբու տեսակներն անձրևներով բավարարվում էին): Անձրևները սակավ լինելու դեպքում դիմում էին այդ խնդրանքի արարողությանը: Կատարողները միայն իգական սերի հասուն ներկայացուցիչներն էին: Խլզավոր ու քոփիկով կանայք, մի արորի լծված, ոտարորիկ, աղբյուրի նովի ջուրը վարում էին ու Շարմաղ աղջկանից անձրև՝ թռոնք, հայցում, աղաչում: Մի կույս աղջկա ուղարկում էին Հակառակաբերդի ավագանի սուրբ ջուրը շարժելու՝ խաօնելու:

Հնագույն ժամանակներից կառուցված այս Բերդի նպատակն իր մեջ գանձերի պահպանությունն ու երեխաներ, կանայք և ծերեր պատսպարելն էր անագորույն թշնամուց: Այն կառուցվել է ի պատիվ Աստղիկ դիցուիու¹:

Բերդը նաև Հայկաբերդ են կոչել, որն իբր Հակառակաբերդից կամ Զափարի բերդից առաջ եղած անունն է (Հայկ անունը Զափարում շատ հարգի էր ու է, բայց դա Հայկ Նահապետի անվան հետ է կապվում): Քանի որ ավանդություններում Հայկ նահապետը Մռով սարն է գիտակցվում, ուստի բնական է, որ այդ անվանքը բերդը ժայռանիստ Մռովի փեշին է, և ոչ թե քննարկվող բերդը: Հակառակաբերդը ժողովրդի կողմից շատ հիշվող Շարմաղ աղջկա տեղն է, այսինքն՝ աննման գեղեցկություն ունեցող Աստղիկ դիցուիի սրբատեղին է՝ վերածված բերդի: Պարկեշտ ու հավատացյալ չափարցիք, քրիստոնեության ընդունումից հետո, Աստղիկի, Ծովինարի անուն չեն տվել: Խուսափել են կրապաշտությունից ու շրջասությամբ Շարմաղ աղջիկ կոչել: Շարմաղ՝ ամենաչքնաղ, քնքուչ՝ աղջիկը հայ իրականությունում Աստղիկն է ընկալվել: Հակառակաբերդից հարավ՝ Ս. Մինասի գոգի Ծովատեղում էլ Ծովինարի սուրբ աղբյուրն է եղել, որ հիմա Գյոլեն ծոր է կոչվում: Քրիստոնեության ընդունումից հետո այն Ս. Մինասի աղբյուր է կոչվել և հին թաղանանց, իսկ հիմա՝ Աղլութալայի ու Պլալանի առուն կազմելով՝ Մեծ

¹ Ըստ ավանդության՝ Տրտուի հակադիր բարձունքին՝ առավել վեր, Վահագնի դիցարանն է, որը, Հայր աստծո՝ Մռովի ուղարկած պատիժ կարկուտը, կայծակով մտրավելով, իր կողմն է տանում՝ Աստղիկին փրկելով սույժից ու էլի, ըստ նոյն ավանդության, այդտեղ միշտ եղել է Աստղիկի մեջմ իրավիճակում գտնվող սրբազն լրգարանը, եթե խաթարվի անդրդոր, այսինքն՝ Աստղիկը մեջը լողանա, անձրև կթափի, որպեսզի մարդկային սովորական աչքերից վարագուրի նրա աստվածակերտ գեղեցկությունը:

² Մայիսաւեանց Սու., Հայերէն բացատրական բարարան, 3 հ., Եր., 1944, էջ 507:

տնջրու՝ սոսու մոտ թափվում է Տրտուն¹: Հակառակաբերդի հյուսիսարևելյան կողմում ալիքվող նոր բրալանջին Մարիամ Աստվածունի մատուիթի տեղում էլ Անահիտ դիցուիո՝ մայրության աստվածուիո սրբատեղին է եղել (սրանից թիզ ցածի սարավանդի հյուսիսային, արևելյան տարածքները սրբերի գերեզմանոցը, վանքային համալիրն էր՝ Մայրավանք, իսկ հարավային լեզվակի ցցվածքը՝ փոքր ժայռով, Ս. Պողոսի ճգնարանն է. հեթանոսականը լրիվ քրիստոնեությամբ է փոխարկվել): Հակառակաբերդը նաև հշխանական Հարերքի գանձատունն է եղել միջին դարերում, հատկապես Վահարանգյան շրջանում: Մինչև արցախյան մելիքական վարչակարգը՝ Հակառակաբերդում աշխատանքային եռուգեռով նիստուկաց է եղել (փոքր զորապահակային գաղտնապահ խմբի պարտադիր աշխատանքը միշտ եղել է): Շահաբայյան հայարավումից հետո դադարել են Հակառակաբերդի հշխանական ներքին փառքն ու հավատը: Այնուհետև պատերազմական իրավիճակներում հասարակ մարդկանց համար երբեմն պաշտպանական արժեք է ունեցել ու մի քանի անգամ մասնակիորեն ավերվել՝ անընդհատ սակավ կարողություններով ու նվազող ամրություններով վերականգնվել: Հակառակաբերդը Զափարի մարդկանց համար ուղղակի հոյս, հավատ, ուժ ներշնչող է եղել ու, մինչև արդի հեռահար իրեւանակոծությունն ու ռմբակոծությունը, վստահելի ապաստարան լինելու ապավեն է ծառայել: Նրա գերբնական զորությունը, վեհությունը, վաղեմի փառքն ու պարծանքն առ այսօր ժողովրդի հավատալիքներից չի ջնջվում: Հակառակաբերդի լեռնաշղթան ունի տարբեր ուղղություններով ծգվող և տարբեր ձևերով վերջավորվող բազմաթիվ ենթաբազուկներ: Հակառակաբերդ լեռնաշղթայի՝ ամրոց կրող հատվածի լեռնալանջային ամենամեծ ու լայնչի տարածքն արևելքն է, որտեղ և Զափար բնակավայրն է: Նշված տարածքի բարձր գագաթնակետ ժայռին նույնանուն ու դժվարանատույց ամրոցը, ինչպես նշեցինք, Աստոիկ դիցուիու՝ Շարմաղ աղջկա բերդն է՝ իր առեղծվածային ու կախարդական ջրամբարով, զոհարանմատաղատեղի ժայռակտորով: Քրիստոնեությունից առաջ զոհասեղանի դեր է կատարել այս դիցուիու արձամի պատվանդան լինելով համերձ, իսկ քրիստոնեությունից հետո խաչքար է տեղադրվել այդ մեծ ժայռակտորի վրա: Խորիրդային կարգերում խաչքարից մի փշրանք էր մնացել: Արցախյան գոյապայքարի ժամանակ, ինչպես նշվեց, կատարյալ խաչքարով փոխարկվեց

(նկ. 1):

¹ Հիմա շատ բարակ առու է, որովհետև աղբյուրների ջրերը խողովակներով տեղափոխված են գետավան:



Հակառակաբերդ ամրոցի կալաչափից քիչ փոքր հարթության մեջտեղում բնական այդ մեծ ժայռակտորը պահպանվել է նույնությամբ: Ժայռի տակից գաղտնութիւն է ձգվել արևմտյան կողմի անտառածածկ, ժայռու խորխորատի Մթնաձորի՝ Մեծ դուգեի ուղղությամբ, որն առ այսօր ուսումնասիրված չէ: Կես դար առաջ ժայռի տակի բացվածքը դեռևս տեսանելի էր: Այն հիմա հողով լցված է: Ժայռից այն կողմէ հյուսիսային մասի վիմահերձ ժայռի վրա ջրամբարն է կառուցված: Հինգ կողմից կորավուն անկյուններով՝ սովորական բարակ հաստությամբ պատ է՝ ներսից ամուր սվաղված: Այդ ջրամբարը դպրոցական տարբեր շրջանի երիտասարդներ բազմաթիվ անգամ դատարկել են, բայց գոգաննան հատակից աննկատելի ծնով պարզ, սառնորակ ու քաղցրահամ ջուր է նորից աննկատ ավելացել և մի քանի օրում նոյն մակարդակի վրա կանգնել¹: Շ. Սկրտյանը ջրամբարը կալաչափի է համարում², բայց այդպես չէ: Այն քիչ կորավուն մի նեղ խուցի նմանվող սենյակի չափ է, որի հարավարևելյան մասը՝ որպես դուռ, բաց է, բայց արևի շողերը տարվա մեջ հազվագյուտ են դիպչում ջրի մակերեսին՝ կախարդական խաղեր ցոլցացնելով պատերին: Ջրամբարի հյուսիսային պատի մոտից մի նեղ աստիճաններով սանդուղք, որը հիմա համարյա քանդված է, բարձրա-

¹ Խորությունը հասկանալու համար ամեն նորեկ՝ երեխաներից մինչև միջահասակները, քար է մեջք նետում ու ավելորդ քարերի կույտ է երբեմն ստացվում, իսկ անձրև խնդրելիս, երբ խարնում են ջուրը, բազկաչափ հաստությամբ երկու մետրից ավելի երկարություն ունեցող վիայտի ծայրը թողնում են ջրի մեջ. Եթե ջուրը երկար ժամանակ կանգնուն է մոնւմ, մեջք երբեմն դեղնակարմրավուն մանրէներ են լինում լցված ու մի քանիսու ծալված ժարշայով քամելիս անգամ, նոյնությամբ ջրի հետ անցնում են, բայց խմելուց ոչ մի վճառ չի լինում, աղբյուրի ջրի նման քաղցրահամ է, ու օգոստոսին՝ դեռ սառնորակ. մենք երկու բաժակից ավելի միանգամից ընպել ենք ու շատ սովորական է եղել:

² Սկրտյան Շ., Ետքնային Դարաբաղի պատմաճարտարապետական հուշարձաններ, Եր., 1985, էջ 35:

նում է ժայռի այդ հյուսիսային ծայրի պնդապարիսա կառուցված խորանարդած փոստվ փոքրիկ դիտարան աշտարակը: Այս վերջին անգամ վերանորոգվել է 20-րդ դ. 18-20-ականներին՝ վերականգնելով բերդապարիսան ու դարպասը¹: Բերդը վերակառուցելիս նոր բարակ կաղնե տախտակից շուտափոյթ դարպաս պատրաստելով՝ տեղադրել են հարավային հնագույն տեղում, կամարի տակ՝ մինչև վերին ծայրը բռնցքաչի քարերով լցնելով, որպեսզի, ըստ անհրաժեշտության, գործածեն²: Գաղտնամուտքը հյուսիսային աշտարակից էր. չվաճով իջեցրել կամ բարձրացրել են յուրայիններին (ստորերկրյա գաղտնամուտքը չի գործածվել): Այդ կողմում վերջացող ժայռի մասին ամրակուր պարիսա էր դրված, որի մի մասը կես դար առաջ հենց չափարշիններն են պայմանական իջվածքը՝ հեշտ ելունու անելու համար, որովհետև գյուղի եկող հեշտ, բայց երկար ճանապարհի մուտքն այդ կողմից է: Բերդի հարավային կողմում, որն արդեն իջվածք է, մեծ դարպասներ էին՝ պահպանված մինչև նախորդ դարի վերջերը: Ներսից՝ դարպասի առաջ, ինչեւս նշեցինք, շատ քար է եղել կիսված որպես ռազմամթերք, և այն մինչև հիմա մնում է կիսահոս վիճակում: Հարավային այդ կողմը՝ դարպասին մոտ տեղանքը, թեք, մացառապատ ու արհեստականորեն դժվարանց է դարձրած, իսկ Հակառակաբերդի դարպասների հարավարևելյան կողմի անմատչելի ժայռի մոտից, լեռան սռով, մինչև Ս. Մինաս, քարակարկառ, մացառապատ տեղանքն էլի դժվարանց է: Դարպասներից քիչ հարավ արևմուտք գոգանման տեղ կա, որը հրապարակ է եղել: Ըստ ավանդության՝ ամենակատաղի ու օրիհասական վերջին ճակատանարտերն այդտեղ են եղել³: Ընդհանրապես ոսկինները միշտ ծգտել են խուսափել

¹ Կապիտանի գլխավորությամբ պատրաստվել են դիմակային քարվաճառի//քերեցառի կողմից եկող այս-քուրդ-քուրքերին և Զարեքուարի հայերին պաշտպանելու, որոնց մեջ մասը գաղթել էին Ղազախից՝ թուզ չուպու այդ հայերի անասունների հափշտակումը վայրենարարող նշված քոչվորների կողմից. հետո՝ իր կոմունիստներին դիմադրելու համար, բայց ոչ մի պայքար, կրիվ տեղի չի ունեցել. բռլուքերն, ինանալով հայերքիների մտադրությունը մոտակա այլ այրմ-քուրդ-քուրքերի մկանամբ ու չափարից Սկրտցան Բեյլարի մասմակցությունը պաշտպանական այդ գործունեությամբ, որի քաջազդություններին լավ ծանող էին, միայն քավարարվել են հրացանով գաղտագործի նրան սպամելով. Երկու ամիս պատուապարվելով՝ Հակառակաբերդում՝ չարեքուարժիների մի մասը գնում է Միգրելսկ՝ այստեղ գաղթած յուրայիններին միանալու (որա մասին ոչ մի տեղ չի հիշատակվում կամ խեղայուրված է ներկայացվում, օր.՝ Դավթյան Կ., Ներնայի Դարարարի բարբառային քարտեզը, Եր., 1966, էջ 275), մի մասն էլ են է վերաբառնում, բայց խորհրդային կարգերի առաջն տասնամյակում աստիճանաբար ցովում են՝ զիշելով օսուարներին):
² Հրազենի պակասի դեպքում նախատեսվում էր քարեր նետել, իսկ դուրը թշնամու կողմից խորտակվելու դեպքում թերույթային դիրքով պայմանավորված քարահոյք լինի ոսկի գիշիմ:

³ Դարպասի արևմույն կողմից վիմաներու ժայռի վերին պատից հեռահար քարնետություն, նետաձգություն, միզականնետություն է եղել, իսկ դավթթելյան ժամանակներից սկսած և կոմունիստական հեղափոխությամբ ավարտած եղել է հրետանու փողի համար նախատեսած անցք

Հակառակաբերդի ուղղությամբ ճակատանարտ տպալուց, որովհետև նախ՝ դիրքը հարմար չէր հարձակվողների համար, հետո՝ շրջակայքի բոլոր բերդերը կիմնահատակ ավերելուց հետո, հեշտ էր տրտուամերձ կամ Մանանասարով եղած ճանապարհներով նյոււ տեղանքների վրա հարձակվելը, ուստի Հակառակաբերդը կանգուն, բայց շրջակակված էր մնում: Բերդի արևամտյան ժայռանդունից խաչքարեր, գաղտնարաններ ուներ¹:

Հակառակաբերդ ամրոցը՝ Հկրապերթ՝ Պերթն ունի Բերդ, Չափարի բերդ, Հայկաբերդ, Դալա, Շարմաղ ընծակա ճյուղը և հնագույն Աստողիկի դիցարան անվանումները²: **Հակառակաբերդ** բարձր բաղկացած է **հայ** ստացվածքային ձևույթից (այս արմատը հիմա ածանցի արժեք ունի նույն իմաստով՝ **հակառակ**).³, **առ** բնիկ հայերեն կապակցող բաղադրիչից (նախորդ՝ **դեպի** ինաստով),⁴ **ակն** (աչք բնիկ հայերեն արմատից),⁵ և **բերդ** (ասորական փոխառություն)։⁶ բաղադրիչներից ու նշանակում է՝ Բերդից աչքի առաջը տեսնել, հսկել և հակառակել՝ դիմակայել յուրաքանչյուր ոստիսի (ԱԿՆ արմատի պատճառով այս բերդը երբեմն շփոթվում էր Հաթերքից արևելք գտնվող Ականաբերդի հետ): **Հկրապերթ** Հակառակաբերդի արցախյան բարբառային հնչյունակիրիսված տարբերակն է, իսկ **Պերթ**

պատի վերին մասում, որից մեկը մինչև հիմա դեռ մնում է, իսկ հյուսիսային մասի դիտակետի մոտի այդպիսի նպատակների ծառայող մասերից մնացած ոչինչ չկա:

¹ 1941-45թ. պատերազմում նահատակված և կոր խնամքին վեց աղջիկ ու մի փոքրիկ տղա թողած Սարգսյան Շամիրի դուստր Վասոսնիկը, երազում Հակառակաբերդի գանձարանին էր տեղեկացել հետևյալ կերպ: ավագ քոյրն արդեն հարսնացու էր, մյուսը զնացել էր սովորելու, ուստի տղամարդու աշխատանքը բաժին էր ըսկել իրեն, հատկապես, գերազնի ու կացին բանեցմելը, և ահա Վարսիկը երբեմն երգատանաց էր լինում ու հետո պատմում էր իր տեսվիները. Հակառակաբերդի հետ կապված տեսիլը ուն պատմել էր, չին հավատացել, հետո պատմել էր անս ամուսնուն՝ կուսակցական Կազզեն Ներսեսի Սկրտույանին, որը ևս չէր հավատացել. Վարսենիկը երազում տեսել էր ճերմականորուս մի պատկառագրու անձնավորության, որն իբր Վարսիկի ճակատագիրն է պարզել. այն է՝ ապերելու համար կամ փակիլան (արախտաց, կրկնիվ աշխատող, սպորտամեն, դեռասան-Ա. Ս.) պիտի դառնա կամ Հակառակաբերդի ժայռի մոտի խաչքարի գրությունը կարդալով՝ զանձի տեղը իմանա ու վեց տղամարդու հետ չորս օր քանդելով. շվալով ուսկին՝ սպասաբեն, զարդելեն, դրամ, հանի ու հարսունա, բայց այդ զանձն ուրախություն չի բերելու, պիտի խելամտորեն ու պայքարով տեր մնա հարսությանը. ասել ու ծեռքով խաչքարի գրություն է ցոյց տվել, որը թեն Վարսիկի համար սովորական գիր չէր, բայց այդ պատկառագրու մարդու մատի ուղղությամբ պարզ տեսել է ու հավացել. Են զանձին են նայում, զանձը՝ ինձ (արդպիսի գրության մասին նաև պատմում են Տրտուի Թարթարի աջակինա Խնդրավանքի//Խալքավանքի//Խաղավանքի մասին, բայց առ այսօր դեռ ոչ ոք չի գտել, թեն գտնողն էլ չի ասի, թե գտել է:

² Այրմ-քուրդ-քուրդեր ՀՀ դ. սկզբին Հակառակաբերդին, Չափարին նաև Ի/Ուսացի էին կոչում. Հիսուսի հետք՝ Ենելով գյուղի եկեղեցու Ամենափրկիչ անվանումից, որը տարածում չի գտել:

³ Ամայան Հր., Հայերեն արմատական բառարան, Վերահր., հ. 3, էջ 11:

⁴ Ամայան Հր., Հայերեն արմատական բառարան, Վերահր., հ. 1., էջ 247:

⁵ Նույն տեղը, էջ 106

⁶ Նույն տեղը, էջ 442

Բերդի: Այդ տեղանքն Աստոիկ դիցուիու անունը կրում էր մինչև քրիստոնեությունը, և բնիկ հայկական արմատից է սերվում՝ ԱՍԴ, -իԿ նվազափաղաքական ածանցի հետ (այդ անվանը փոխարինած ժողովրդախոսակցական Շարմաղն արդեն մեկնաբանված է): *Հայկաբերդը* սերվում է Հայկ Նահապետի անունից և մեկնաբանված *բերդ* արմատից: Չափարի բերդ անվանումը սերվում է գյուղի պարսկահպատակ ժամանակներից ընդունված անունից¹: Չափարը հայերենի որոշ բարբառներում նաև Ո-ով է գործածվում Չափար: Մոկաց բարբառում այն նշանակում է որտորդի կամ զինվորի դիրք Չափար՝ Ճապիր, Ճեպար, Ճիպոր, արաբական և երրայլական իրեական, ձևերից է նաև մեկնաբանվում, որը պատճականորեն նշանակում է հզոր, ահավոր, ռամկական՝ ժողովրդական ձևով՝ *ցանկապատ*²: Չափար/ո բառը նաև սուրհանդակ, բանբեր, լրաբեր, թղթատար, փոխտատար ու նրանց հանգրվանելու տեղ իմաստն էր բովանդակում, որը արաբական էր: Այս բոլոր իմաստները համընկնում են Չափարի անվանը և դարեր առաջ (V-X դ.դ.)՝ պարսկահպատակ ժամանակահատվածում, օրինականացվել է պարսկական այդ անունը Բերդ, Քարաբերդ, Հակառակաբերդ, իսկ ժողովրդի համար՝ Պերթ, Հկրապերը անունների փոխարեն՝ իբր հաստատելով նվազողների զարմանքի արտահայտությունը տեղանքի ամրության վրա՝ Այսքան անանցանելի արգելք (չափար) դեռ չի եղել մեր զորքի համար՝ Տրտուի՝ մարդարի հովտով բարձրանալիս: Որպեսզի գերիշխողի աչքը քաղցր լինի իրենց վրա, տեղացիները նաև պահպանել են իշխողների կողմից տրված տեղանունը, որը XX դ. ռուսական գրագրություններում ստացվում էր առով կամ ֆով ձևով ձև վիճ բացակայության պատճառով՝ Չափար՝ ՃՈտՈՐ, Չաֆար՝ ՃՈՒՈՐ: Ազերիները, իրենց արտասանական բազայով պայմանավորված, երբեմն գործածում էին Զ/Չափար անունը, որը էլի պարսկերեն բառ է ու նշանակում է գրերի միջոցով՝ կատարվող գուշակություն, գրքացություն, իմաստություն, իմացական կարողություն՝ ³: Այդ իմաստը համընկնում է Չափարի արդի Սիբիրդարայի գերեզմանոցի տեղանքին, որն առաջ Սիբիլյան մատուռ ուներ, ուր այդպիսի աշխատանք էր կատարվում (դրանից հիմա մի խաչքար է մնացած Ճանապարհի ոլորանից քիչ վեր՝ ընկուզենու տակ): XX դ. սկզբին

¹ Չափար բառը ծագում է պարսկերենից և ունի արգելք նշանակությունը՝ ներառյալ պատճեզ, պարհսպ իմաստները . տես՝ Աճառյան Հ.ր., Հայերեն արմատական բառարան, Վերահրտվ., հ. 3, էջ 627:

² Ավետիքեան Գ., Սիլրմելյան Խ., Ավերեան Ս., Նոր բարգիրք հայկագեան լեզուի, Վերահրտվ., հ. I-II, Եր., 1979-81, էջ 574:

³ Ղազարյան Ռ., Ավետիքյան Հ., Միջին հայերենի բառարան, 2 հ. Եր., 1987-92, էջ. 294:

այրմ-քուրդ-թուրք-ազերիները ցանկացել էին Ուսաջ՝ Հիսուսի հետք, Վերանվանել, բայց չի հաջողվել: Գարդման-Գյուլստան Երկրում էլ կար նաև Չափար, Չափար դալա (Վերջինս Մռովից արևելք հողաբերդ է, ինչայի ազ վտակի մոտ. այդտեղ կա նաև Ամենափրկիչ Եկեղեցի. ինչպես նաև Չարեքս/դար, Դատ, Կարմիր վանք, Ամենափրկիչ և այլ նույնանուն կառույցներ, որը նաև բնակիչների պատմական տեղաշարժերի պատճառով է ստացվել): Սրանք շփոթության տեղիք էին տալիս ոչ տեղացիներին: Մի քարտեզում էլ Չափարի փոխարեն Չափնի են գրել՝ շփոթելով Սոդքի կողմերի համանուն գյուղի հետ:

Դալա//Ղալե բառը արաբական, պարսկական օտարաբանություն է, որ նշանակում է բերդ, ամրոց¹ և գործածվում է միայն խոսակցական լեզվում:

Արցախյան գոյապայքարի ժամանակ Հակառակաբերդի ժայռն ու պարիսպները երբեմն դիտակետ են ծառայել, բայց ընդհանուր պայքարի համար որպես տեղանք չի գործածվել: Ուխտավորներ հիմա հազվագյուտ են Հակառակաբերդում լինում: Նորից ծառեր ու բազմազան բույսեր են աճում բերդի ներսում, ջրամբարի կամարի վրա, կողքի քանդված դիտակետի փոսում ու խարխլում պատերը: Երևանում ապրող Սերյոժա Ռափիկոնի Սարգսյանը Գոյապայքարի ժամանակ Հակառակաբերդին նվիրված երգ էր ստեղծել, որը ժողովրդականացել էր: Սրտամորմոք ծայնով գովաբանվում է Բերդի//Ղալայի խրոխտ դիրքը, դիմացկուն լինելը՝ ամընդիատ կրկներգելով օտար բառը. *Այ իմ Ղալա, զան իմ Ղալա, Եղածի մեջ շատ լավ Ղալա:*

Резюме

Местность Акаракаберда Мартакертского района в Арцахе является одним из древних поселений, который одновременно функционировал и как крепость и, как священное место. Данная местность в древности и в более поздние времена называлась по-разному.

В статье все эти названия подвергается этимологическому анализу

Summary

The locality Akarakaberd in Martakert region of Artsakh is one of the oldest settlements, which also functioned as a fortress and as a sacred place. The area in ancient times and later was named differently. All these names are etymologically analyzed in this article.

¹ Նոյն տեղը. էջ 65:

ԱՌՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ X ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն

IX դարի երկրորդ կեսին Հայաստանում վերականգնվել էր ինքնուրույն պետականությունը՝ հանձինս Բագրատունյաց թագավորության, որը, սակայն, թշնամաբար տրամադրված արաբա-բյուզանդական պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական մրցակցության պայմաններում չէր կարող կայուն լինել, քանի որ այն ուղղված էր նաև հայ իշխանների քաղաքական միտույան դեմ: Արդյունքում՝ պետականության գլուխ կանգնած Բագրատունի թագավորներն ստիպված էին պարբերաբար պայքարել Հայաստանի հզորացմանը խոչընդոտող և հարևան տերությունների կողմից հովանավորվող կենտրոնախույս ուժերի դեմ: Այնուհանդեռ, ստեղծվեցին հայկական մի շարք իշխանություններ, որոնք աստիճանաբար ձեռք էին բերում թագավորության կարգավիճակ: Դրանց շարքին էր պատկանում Աղվանքի կամ Հայոց Արևելից կողմանց իշխանությունը, որի գլուխ կանգնած Բագրատունիները ևս ձեռք էին բերել թագ կրելու իրավունք՝ հանձին Բագրատունի Համամ Արևելցու¹: Այս փաստին անդրադարձել է նաև Կոնստանտին Ցուկերմանն իր «Կովկասյան Աղվանքը 10-րդ դարում» ուսումնասիրության մեջ²:

Քաղաքական այս մասնատումը, բնականաբար, լուրջ վտանգ էր ներկայացնում նաև Եկեղեցական հաստատության մասնատման համար: IX դարի վերջին Աղվանից «ինքնակոչ» կաթողիկոսների հայտնվելը հոգևոր առաջնորդության գլուխ, թվում է, հենց ասվածի վկայություններից է: Սակայն, հիմք ընդունելով աղբյուրների հաղորդած տեղեկությունները, հարկ է նկատել, որ Աղվանից Եկեղեցին շարունակաբար մնաց որպես Հայոց Եկեղեցուն ենթակա արքեպիսկոպոսություն:

902 թվականին վախճանվում է Աղվանից կաթողիկոս Հովհանն և կաթողիկոս է ծեռնադրվում Սիմեոն Բ-Ա (902-923թթ.): Առկա բոլոր աղբյուրները դրականորեն են խոսում վերջինիս գործունեության վերաբերյալ: Սակայն Սիմեոն Բ-ի կաթողիկոսությունը նսեմացնող մեկ հանգա-

¹ Տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Հայաստան 9-11-րդ դարերում, Եր., 1959, էջ 31:

² Constantin Zuckerman, L'Albanie caucasienne au X siècle, Travaux et Mémoires 13, Paris, 2000, p. 563-592.

մանք գոյություն ուներ. նա ձեռնադրությունն ստացել էր իր միայն Ենթակա Եպիսկոպոսներից և ոչ՝ ընդունված կարգի համաձայն՝ Հայոց կաթողիկոսից: Նույն իրավիճակն էր նաև նրան հաջորդած Փարիսոսի Տեր Դավիթ Եպիսկոպոսի (923-930թթ.)՝ Մեծ Կողմանքի Եպիսկոպոս Տեր Սահակի (930-948թթ.) ժամանակներում:

Ստ. Օրբելյանը, խոսելով Սյունյաց և Աղվանից Եկեղեցական թեմերի հիշյալ շրջանում գոյություն ունեցող հարաբերությունների մասին, նշում է, որ «Էր կաթողիկոս յԱղվանս Սահակ անուն, որ հոգևորական սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր Տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր»¹: Պատմիզը դրական է գնահատում Երկու հոգևոր թեմերի «խիստ մոտ» հարաբերությունը, եւ, միաժամանակ ներկայացնելով դրա օբյեկտիվ պատճառները, որու ակնարկ չի կատարում հիշյալ թեմերի մերձեցումը վերագրելու՝ որպես Հայոց Աթոռից անջատվելուն ուղղված ձեռնարկում:

948 թվականին Հայ Աղվանից Սահակ կաթողիկոսին հաջորդեց Գարդման գավառի Եպիսկոպոս Տեր Գագիկը (948-958թթ.): Ինչպես Մ.Դասխուրանցին, այնպես և Կ. Գանձակեցին, տարաբախտաբար, Տեր Գագիկի գործունեության վերաբերյալ առանձին տեղեկություններ չեն հաղորդում, որի պատճառով և ստիպված ենք բավարարվել միայն Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկություններով, որոնք պահանջում են քննական մոտեցում ունենալ խնդրո առարկա հարցի կապակցությամբ, քանի որ նույն աղբյուրի մեջ կան հակասական տեսակետներ:

Պատմագիրը նշում է, որ «Եւ յետ Սահակայ առաջնորդէր Գագիկ՝ Եղբայր նորին. և սա առաւել համարձակեալ էր ի սկզ միաբանութեան ընդ Յակոբայ՝ Սիւնեաց Եպիսկոպոսի»²: Իսկ Անանիա Սոլկացին գրել է. «...վախճանէր ապա կարծեալ հայրապետն Աղուանից՝ Սահակն կոչեցեալ, և թողոյր փոխանակ ինքեան զիարազատ իւր զԳագիկ՝ նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր ինքն ունէր առանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ աթոռակալացն. այր համեստ և գեղեցկադէմ և չափաւոր հասակաւ»³: Ա.Սոլկացու նաև հետագա շարադրանքից կարելի է նկատել, որ հայոց հայրապետը, այնուամենայնիվ, չէր թաքցնում իր

¹Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Ախալքան Միսական, Թիֆլիս, 1911, էջ 274:

²Ստ. Օրբելյան, էջ 274:

³Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցեն ծերմադրութիւնն արտաքր սուլր լուսավորչի աթոռոյն, Յավելուած Արարատի, 1897, մարտ, էջ 133:

համակրանքը Հայ Աղվանից Գագիկ կաթողիկոսի նկատմամբ, որը նույնական անօրինական ձեռնադրություն ընդունած կաթողիկոսների թվին էր պատկանում:

Այս այսպես, Հովման Եպիսկոպոսից սկսած՝ Աղվանից կաթողիկոսական աթուին մեկը մյուսի Ետևից բազմեցին կաթողիկոսներ, որոնք իրենց օրինական ձեռնադրությունը չէին ստացել հայոց հայրապետից: Պահպանված աղբյուրներում Հայ Աղվանից հիշյալ կաթողիկոսների ձեռնադրությունը ենթակա Եպիսկոպոսներից գնահատվում է որպես Հայոց Եկեղեցական ընդհանուր օրենքին հակասող երևոյթ, քանի որ ընդունված կարգի համաձայն, նրանք պետք է ձեռնադրություն ստանային հայոց հայրապետներից, մի կարգ, որ գոյություն ուներ Եկեղեցական հաստատության հիմնադրման պահից ի վեր:

Արդարև, այս իմաստով Աղվանից հիշատակված կաթողիկոսների ընդունված կարգին հակասող ձեռնադրությունը պետք է համարել անընդունելի, անգամ դատապարտելի քայլ, քանի որ այն իր հերթին կրաօնար արարա-բյուզանդական կողմերի՝ Հայաստանը քաղաքականապես մասնատելուն ուղղված քաղաքականության իրագործման լուրջ խթան:

Հայ ժողովորի պատմությունը շարահարող վարդապետ-պատմիչները սերունդներին ավանդել են այն պարզ Ճշմարտությունը, որ ազգի հզորության աղբյուրը նրա հոգևոր ու բարոյական միասնության մեջ է: Եվ այդ գիտակցությամբ էլ մեր հոգևոր նվիրապետներն աշխատել են հնարավորինս կայուն պահել ժողովորի հոգևոր-բարոյական միասնությունն անգամ քաղաքական մասնատվածության պայմաններում, հիշյալ ասպարեգում ամեն մի, թեկուզեւ աննշան խախտում որակելով որպես դավաճանության համահավասար արարք: Բայց և միաժամանակ պետք է նկատել, որ նրանք հաճախ անտեսում էին երկրում տիրող քաղաքական իրավիճակը և միանգամայն անզիջում կեցվածք ընդունում Եկեղեցական թեմերի ինքնուրույն գործունեության նկատմամբ: Այս տեսանկյունով կարելի է մեկնաբանել նաև X դարի սկզբին ստեղծված կացությունը, երբ Հայ Աղվանից կաթողիկոսները պարզապես ստիպված էին ձեռնադրություն ընդունել միայն ենթակա Եպիսկոպոսներից, քանի որ նույն ժամանակներում աստանդական վիճակում էին հայտնվել նաև Ամենայն Հայոց հայրապետները՝ Մայր Աթոռին սպառնացող քաղաքական արհավիրքների պատճառով: Այդպես էին Գևորգ Բ Գառնեցու /877-897թ./, Մաշտոց Եղվարդեցու /897-898թ./, Հովմաննես Դրասխանակերտցու

/898-929թթ./, Ստեփանոս Բ Ոշտունու /929-930թթ./, Թեղողորոս Ա Ոշտունու /930-941թթ./ ժամանակներում¹:

Թերևս տվյալ ժամանակների հետ առնչվող մի շարք փաստարկներից պետք է նկատել, որ Հայոց Եկեղեցու արևելյան թևի կաթողիկոսների ընդունված կարգին հակառակ՝ ձեռնադրությունը բացատրվում է լոկ քաղաքական աննպաստ պայմաններով. աստանդական վիճակում հայտնված Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրություն ընդունելու անհնարինության և կամ, երբեմն մեծ դժվարությունների հետ կապված լինելով, բայց ոչ Հայոց Եկեղեցուց անջատվելու միտումով: Հիշյալի վկայություն է նաև Ստ. Օրբելյանի հետևյալ գրառումը. «Եւ զի կաթողիկոսքն Հայոց հեռացեալ էին յայնմ ժամանակի զի վասն հանապազրդեան հինահարութեանցն Իսմայելացւոց թողեալ էին զաթոռն որ ի Դվին և շրջէին այսր և անդր ընդ թագաւորացն Հայոց: Երբեմն բնակէին առ Գագկայ թագաւորին ի Վասպուրական աշխարհի, ի վանս Զորյո, ուր կայր սեղանն և աթոռն և գաւազան սրբոյն Գրիգորի. Երբեմն բնակէին ի Շիրակ գավառի Առ Շիրակավանին ի վանսն Արգինայի. և այսպէս տարաբերեալք լինէին»²: Նկարագրելով Հայոց կաթողիկոսների աստանդական վիճակը՝ Ստ. Օրբելյանը մի կողմից կարծես փորձում է արդարացնել Սյունյաց Հակոբ Եպիսկոպոսի Հայ Աղվանից կաթողիկոսից մեռն ընդունելու հանգամանքը, սակայն մյուս կողմից այն համարում է «մեծ գայթակղութիւն և անկանգնելի գլորումն»³:

Եվ անդրադարձալով Հայ Աղվանից հոգենոր առաջնորդության կողմից Սյունիքի Եպիսկոպոսի խնդրանքը անմիջապես իրագործելու, ինչպես նաև, ձեռնադրության հանգամանքին, պատմագիրը իրավացիորեն նշել է. «արքեպիսկոպոսքն Աղվանից ի Հայոց կաթողիկոսացն առնուին ձեռնադրութիւն. և սակաւ մի անօք յառաջ քան զայս եւս էին կացեալ՝ ի վախճանէն Գեղրգեայ կաթողիկոսին մինչ ի ժամանակս այս Անանիայի»⁴: Այնուիետև Օրբելյանը, կարծես ինքն իրեն լրացնելու, թերևս նաև, ուղղելու մտայնությամբ, հետևյալն է գրել. «... Իսկ ի վախճանէլն Գեղրգայ, վասն դառն և ազգի ազգի անցից աշխարհիս յիսմայելականացն, ոչ կարացին հասանել առ հայրապետքն Հայոց յԱղվանից. նմանապէս և անփոյթ լինէր ի Հայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին

¹ Տես՝ Բ. Ուլուբարյան, Հայոց Արևելից Եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 165:

² Ստ. Օրբելյան, էջ 274-275:

³ Սույն տեղում, էջ 275:

⁴ Սույն տեղում, էջ 276:

ինարս հայթիայթէր զերծման յիսմայէլական սրոյն: Զեռնադրեն ապա կաթողիկոս Աղվանից յետ Յօնանու զնորին հարազատն Սիմէոն անուն, ապա գԴավիթ, ապա զՍահակ, ապա զԳագիկ զայս, որ լինէր ամք 69 ինքնածեռն և անձնիշխան թերակատար օծման նոցա»¹:

Ուրեմն պատմիչը քաղաքական պատճառներով է բացատրում Աղվանից կաթողիկոսների «ինքնածեռնադրական թերակատար օծումը»: Միաժամանակ, չարդարացնելով այն, չի համարում Ամենայն Հայոց կաթողիկոսությունից երես դարձնելու կամ լրիվությամբ անջատվելու միտում, որպիսին ներկայացված է Աքրահամ Զամինեանի աշխատության մեջ. «Իսկ Աղուանք մօտ 70 տարի արդէն դադարել էին Հայոց կաթողիկոսներից ձեռնադրութիւն առնել... Արդ Անամիա կաթողիկոսը Գագիկ ու Աքաս թագաւորների յորդորներից քաջալերուած՝ վճռում է ս. Լուսաւորչի հօտից բաժանուած ու օտարացած ժողովորդին կրկին միացնել Հայոց Եկեղեցու հետ և նրա նախնական միութիւնը անխախտ պահպանել»²: Հետաքրքիր է, որ «օտարացած ժողովորդ» մասին է խոսքը և կամ ուրիշ ինչ փաստարկներ կամ այդ «օտարանալու» Վերաբերյալ: Երկիրը կարող է ենթարկվել քաղաքական մասնատման, օտարի տիրապետության, բայց ժողովուրդը «օտարանալ» ինքն իրենից՝ թերևս անգամ տրամաբանական չէ, որովհետև այդ նույն ժողովուրդը մշտապես հավատարիմ է մնացել իր հավատքին, հետևաբար նաև իր արմատներին:

Այդպիսի հակասական տեսակետ զարմանալիորեն արտահայտել է նաև Մաղաքիա Օրմանյանը՝ գրելով. «Շատոնց ծանոթ էր Աղվանից արքունին հակամիտութիւնը, որ Հայոց հայրապետութեան հետ ունեցած կապակցութիւնը խզէ և ինքնազլուխ կաթողիկոս ըլլա և ոչ թէ Հայոց աթուին ներքն իբրև լոկ արքեպիսկոպոսութիւն սեպուի»³:

Հարցի քննությունը պահպանված աղբյուրների հիման վրա երբեք այդպիսի լուծման չի հանգեցնում: Համենայնդեպս, եթե երբեմն Աղվանից աթուի կողմից դրսնորվել են որոշակի շեղումներ, այն էլ արտաքին քաղաքական տարաբնույթ ճնշումներով պարտադրված, ապա երբեք համընդհանուր ու նպատակային անջատողական միտումներ չեն նկատվել: Աղբյուրների հաղորդման համաձայն՝ ինքը՝ Հայոց Մայր Աթոռը, երբեմն որոշ կաթողիկոսների ազդեցության տակ դեպի քաղկեդոնականությունը

¹ Նույն տեղում, էջ 281-282:

² Աքր. Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջևան, 1908, էջ 167:

³ Ս. Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, մաս Գ, Պեյրութ, 1961, էջ 1088:

թեքվելու փորձության է Ենթարկվել, որը, համենայնդեպս, հիմք չի տալիս պնդելու, թե Հայոց Եկեղեցին հակվել է դեպի քաղկեդոնականությունը: Նույն դրությունն էր նաև Աղվանից Եկեղեցու համար, և դա հիմնավորելու ներկայացնել, թե Աղվանից կաթողիկոսությունը միշտ էլ փորձում էր դուրս գալ Ամենայն Հայոց նվիրապետության Ենթակայությունից, կարծում ենք, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, և Մ.Օրմանյանը այդ տեսակետուն արտահայտել է լոկ ընդհանուր երևույթների ազդեցության տակ՝ առանց վկայակոչելու որևէ հիմնավոր աղբյուր: Իր տեսակետը կարծես հիմնավորելու միտումով՝ Մ.Օրմանյանն այնուհետև շարունակել է. «Հայաստանի շփոթ և ընկճեալ վիճակը և կաթողիկոսներուն տարտամ և թափառական աստանդականութիւնը, և իրենց ազդեցութեան նորագիլը նոր պատեհ ընծայեցին աղուաններուն՝ իրենց հնամենի ջանքը վերսկսելու, և Սահակ Աղուանից կաթողիկոս նորէն ոյժ տուավ այդ նպատակին: Որպէսզի ավելի զօրաւոր ընէ իր գործը, իրեն օգնականներ ալ սկսաւ որսալ, և Հայաստանի հիւսիսային կողմերը իր ազդեցութեան ներքեւ առնել»¹: Ակնհայտ է, որ «Հայաստանի հյուսիսային կողմերը» ասելով նա ի նկատի ուներ Սյունյաց թեմի առաջնորդ Հակոբի ձեռնադրությունն Աղվանից կաթողիկոսից, որի նկատմամբ, թեկուզ քննական մոտեցում է ունեցել նաև Սյունիքի պատմության շարահարողը, սակայն Ճշմարտացիորեն ներկայացրել է նաև արդարացուցիչ հանգամանքներ պարունակող քաղաքական կացությունը:

Չպետք է մորանալ նաև մեկ այլ հանգամանք, որ եթե Աղվանից կաթողիկոսությունը որևէ կերպ անջատողական ձգտում ունենար, ապա դրան նպաստող քաղաքական պայմանները թերևս նույնպես առկա էին. նախ և առաջ երկրի քաղաքական մասնատվածության հետևանքով ստեղծված Հայոց Արևելից ինքնուրույն թագավորությունը, որ ինքնուրույն կաթողիկոսության հիմնավոր պատվարներից էր և որը, սակայն, պատմագրի վկայությամբ, երբեք չի ընդունել Հայոց Եկեղեցական հաստատությունից որևէ կերպ անջատվելու և ինքնուրույնություն ունենալու տարբերակը:

Ասվածի վկայություններից պետք է ընդունել վերը նշված մեջբերումը՝ կապված Սամվել Եայսկոպոսի ինքնուրույն ձեռնադրության հետ, որի դեմ ըմբռստացել էին Աղվանից աշխարհիկ տերերը: Պակաս համոզիչ վկայություն չէ նաև հետո ինքնուրույն թագավորության հիմնադիր Համամ

¹ Նոյն տեղում, էջ 431:

Բարեպաշտի վերաբերմունքը հիշյալ խնդրի առնչությամբ, երբ Հայոց արևելից իշխանի թախանձանքի շնորհիվ Գևորգ Բ Գառնեցին վերահաստատեց ինքնուրույն կաթողիկոս հօչակված Հովհաննին: Եվ երկրորդ, ինչպես Ստ. Օրբելյանն է իրավացիորեն նշել, որ Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսնայելական սրից ազատ մնալու համար¹:

Հիշյալի կապակցությամբ շատ բնորոշ ու արտահայտիչ ձևակերպուն է կատարել Բ.Ռուլուբարյանը. «Այդ կաթողիկոսները բառացիորեն թափառական էին, գավառից գավառ էին փախչում, վանքից վանք և իրենք իսկ չգիտեին, թե որտեղ են գլուխ դնելու հաջորդ օրը... Այս դեպքուն նրանց որտեղ այցելեին այս Արցախի ու Սյունիքի ամբարտավանացած առաջնորդները»²:

Ինչ վերաբերում է Մ.Օրմանյանին, ապա իր տեսակետը հավանաբար հիմնավորելու միտումով այնուիետև գրել է. «Միւս կողմէն այդ կողմի իշխանները, ամենքն ալ Բագրատունի սերունդէ, չէին սիրէր անուղղակի կերպով Արծրունի իշխաններու ազդեցութեան ներքև ըլլալ, որոնց հովանավորութեան ենթարկեալ էին Աղթամար նստող վերջին կաթողիկոսները»³: Բնականաբար խոսքը վերաբերում է Հայ Աղվանից իշխաններին, սակայն պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր աղբյուրն է հաղորդում նրանց ու Արծրունիների միջև գոյություն ունեցող հակասությունների մասին: Իսկ ինչ վերաբերում է նրանց կողմից տեղի հոգևոր նվիրապետներին Ամենայն Հայոց Մայր Աթոռին հակադրելու միտումներին, ապա այստեղ փաստերը բոլորովին հակառակն են հաղորդում: Հայ Աղվանից Համամ Բագրատունի իշխանի արարքը, կապված Ամենայն Հայոց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին գերությունից ազատելու հետ, արժանի է միայն գովեստի ու մեծարման, վկայություն է Ամենայն Հայոց հայրապետի նկատմամբ տածած անսահման նվիրվածության ու խոնարհումի: Իսկ նրա հաջորդ և նույնպես աստանդական վիճակում հայտնված ու Հայոց Արևելից կողմերում որոշ ժամանակ ապրած Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը որևէ ակնարկ անգամ չի կատարել հիշյալ երկրամասի աշխարհիկ տերերի կողմից հանդես բերած անբարյացկամ վերաբերմունքի մասին: «Սակա այնորիկ և ես ըստ տէրունեանն իրամանի

¹ Տես՝ Ստ.Օրբելյան, էջ 281:

² Բ.Ռուլուբարյան, Հայոց Արևելից Եկեղեցին և մշակույթը, էջ 164: Մ.Օրմանյան, էջ 431:

³ Մ.Օրմանյան, էջ 431:

հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ Երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեի, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին: Եւ ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ռոճկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարգէր մեզ պարտապանաբար ՎՃարելով զպէտս ամենեցունց»¹:

Կարծում ենք հիշյալից դժվար չէ ենթադրել, որ հայրապետն անգամ իր գոհունակությունն է հայտնում Հայոց Արևելից աշխարհիկ տերերին, որոնք չեն խնայում իրենց միջոցներն աստանդական վիճակում հայտնված հոգևոր առաջնորդարանի կարիքների համար: Ինչ վերաբերում է Հայ Աղվանից Եկեղեցու հիշյալ շրջանում ունեցած անջատական ծգոտումներին, ապա դրանց փաստացի առկայության պայմաններում անհնար էր, որ կաթողիկոսը որևէ ակնարկ չկատարեր այդ մասին:

Հիշյալ տեսակետը հիմնավորող վկայություն, բարեբախտաբար, հանդիպում ենք նաև հենց քննարկվող ժամանակաշրջանում Հայոց Մայր Աթոռը առաջնորդած Անանիա Մոլացու մոտ. «Իսկ մեք՝ վասնզի ոչ էր ըստ իրամանի աստուծոյ և ոչ ուներ ձեռնադրութիւն ի մէնջ՝ ոչ ընկալաք զնա և ոչ իրաման տուաք ուրուք յիշխանաց ընդունել զնա: Իսկ զնախնեացն բարեմտութիւն և զիարցն դաւանութիւն, որ կայր յԱղուանից Պատմութեանն, գիտելով իշխանացն Աղուանից, որ լիեալ էր առ նախնեօք ընդայլ սրբոյ Լուսաւորչին աթօ(Փ)ռակալաց, ոչ ընկալան զնա»²:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 9-րդ դարի Երկրորդ կեսից սկսած, քաղաքական հանգամանքների թելադրանքով, թուլացել էին կապերը՝ մի կողմից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության, մյուս կողմից՝ ծայրամասային թեմերի միջև: Արդյունքում՝ ծայրամասային որոշ թեմեր, այդ թվում Հայ Աղվանից և Սյունյաց թեմերը ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն, որը, սակայն, Երբեք չի հասցրել ամբողջական մեկուսացման կամ անջատման: Եվ X դարի Երկրորդ կեսին, կապված Բագրատունյաց հայկական թագավորական իշխանության հզորացման հետ, Վերստին կանոնակարգվեց Հայոց Մայր Աթոռի գործունեությունը:

946թ. Հայոց հայրապետ ընտրված Անանիա Մոլացի կաթողիկոսը (946-967թթ.) ջանք ու եռանդ չի խնայել վերստին վերականգնելու Հայոց Եկեղեցու Մայր Աթոռի ու նրա ծայրամասային թեմերի միջև գոյություն

¹ Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտուցոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1996, էջ 220:

² Անանիա Մոլացի, էջ 133:

ունեցող նախկին հարաբերություններն ու միասնությունը վերականգնելու, և այդ նպատակին ուղղված միջոցառումներն ամբողջությամբ բարեհաջող ավարտ ունեցան, քանի որ դրանց դիմակայող լուրջ խոչընդոտմներ չհանդիպեցին: Այստեղ տեղին է մեջ բերել հայ պատմագրության կարկառուն ներկայացուցիչներից Մ. Ուռիհայեցի վարդապետի աշխատության հետևյալ տողերը. «Արդ այս ամենայն խռովութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարին Աղուանից, որ ասի խորին աշխարի Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թաղէոսի: Արդ այս ամենայն յայնմ աշխարիի ոչ եղև բաժանումն սրբոյ աթոռոյն, այլ մնաց անշարժ հաստատութեամբ, հայրապետութեամբ և թագաւորութեամբ»¹:

Քննարկվող հարցի հստակեցման նկատառումով, անդրադառնալով հայ պատմագրության մեկ այլ ականավոր ներկայացուցչի՝ Կ. Գանձակեցուն, կրկին կարող ենք համոզվել վերոհիշյալ տեսակետի հավաստիության մեջ: Կ.Օհանջանյանը գրել է. «Կ.Գանձակեցու պատմությունը, անշուշտ, շատ արժեքավոր է հայ-աղվանական եկեղեցու ներքին կյանքի, եկեղեցական նվիրապետության, ծիսական խնդիրների, վանական դպրոցների և դպրության... պատմության համար»²: Աղվանից եկեղեցու պատմությանը նվիրված գլխում հաջորդական կարգով նշված են Աղվանից եկեղեցու կաթողիկոսները, ընդ որում՝ ընդգծված են նաև այն կաթողիկոսները, որոնք ծեռնադրություն են ստացել Հայոց կաթողիկոսներից, իսկ իիշյալ ծեռնադրությունը չստացած կաթողիկոսների վերաբերյալ որևէ ակնարկ անգամ չկա Հայոց կաթողիկոսությանը նրանց չենթարկվելու և կամ հակադրվելու վերաբերյալ: Եվ սա այն դեպքում, եթք պատմիչը առանձնակի ուշադրություն է դարձրել նաև ծեռնադրություն ընդունելու եկեղեցակարգի վրա, հավանաբար դրան կարևորագույն նշանակություն վերագրելու տեսանկյունով: «Եւ մինչդեռ ի գերութեան էր Գէորգ, սա (Եպիսկոպոս Տեր Հովհանն-Ա.Բ.) գայ յԱղուանս և անդէն ծեռնադրի առանց կամաց տեառն Գեորգայ. և իբրև գնեցին զտէր Գէորգ իշխանքն Աղուանից, լուծանէ զՅովնան ի պատույն, բայց աղաչեալ զնա իշխանացն Աղուանից վասն երախտեացն, որ առ նա, կրկին ծեռնադրէ զնա ևս»³: Կարծում ենք պատմիչը շատ պարզ ու իրական է ներկայացրել իրականությունը, առանց ուռչացնելու և անհիմն եզրակացությունների:

¹ Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրութիւն, Եր., 1991, էջ 230-231:

² Sts' Նոյն տեղում, էջ 27 - 28:

³ Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 198:

949 թվականին (Հայոց ՅՊ)՝¹ Անանիա կաթողիկոսը հովվապետական առաքելությամբ մի խումբ Եպիսկոպոսների ու հոգևոր այլ գործիչների ուղեկցությամբ այցելում է Սյունիք, իսկ այնուհետև պետք է գնար Հայոց Արևելից կողմերը: Ստ. Օրբելյանի նկարագրությամբ՝ հայոց հայրապետն արժանանում է Սյունյաց աշխարհիկ ու հոգևոր տերերի ամենազերմ ընդունելությանը: Սյունիքի Հակոբ Եպիսկոպոսը խոնարհվում ու մեղքերի թողություն է խնդրում հայոց հայրապետից²: Սյունյաց Եպիսկոպոսի կողմից արտահայտած ներողանտական խոսքը, բնականաբար, վերաբերում էր օրինական օծմանը և հասկանալի է, որ, անկախ օրբեկութիվ կամ սուրբեկութիվ բոլոր հանգամանքներից, կատարվածն իրոք «հանդգնություն» էր, բայց ոչ՝ միտումնավոր, այլապես այն գոնե կիանդիմանվեր հայոց հայրապետի կողմից և ոչ թե «շնորհակալ եղավ և ուզեց գնալ Աղվանք»:

Կաթողիկոսի այցելությունն Արցախ, սակայն, հետաձգվեց՝ կապված Հայոց Արաս Բագրատունի թագավորի տիկնոջ մահվան հետ: Ստ. Օրբելյանն այնուհետև շատ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, որն էլ ավելի է օգնում առաջադրված տեսակետի հավաստիությունն ընդունելու խնդրում: «Իսկ ամենաչարն, որ հանապազ խանդայ ընդ բարին և գրգռէ զմարդիկ ի խռովար չարութիւն, ոչ ետ թոյլ այսն արարուածոյ... սկսան քսել վերստին զՅակոբ առ կաթողիկոսն, եթէ կրկին ապստամբեաց ի ձենջ. և նա չտայ թոյլ հնազանդել Աղվանից ընդ ձեռամբ քով... և այնպէս խռովութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մեջ Եկեղեցւոյ: Չոր և ես իսկ զրպարտանք հարիմ զայսպիսի բանս և ոչ ճշմարտութիւն զրադատ Եպիսկոպոսին Յակոբայ, զի զի՞նչ փառք էր և պարծանք նմա թողով զմեծ աթոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և ծառայել իրում ծառայակցին որք և անկատար և թերի ունեին զօծումն շնորհին»³:

Ահա այսպես, պատմագիրը շատ հստակ ու իրականությանը համապատասխան ներկայացնում է Հայոց Եկեղեցու հոգևոր-քաղաքական կացությունը և «պաշտոնական օծությամբ անկատար ու թերի» Հայոց Եկեղեցու երկու թեմերի տարանջաւոման զաղափարն ընդունում է պարզապես որպես «զրպարտանք» ու «ոչ ճշմարտութիւն»: Մանավանդ որ, դժբախտաբար, Հայոց Եկեղեցու ներսում ևս երբեմն տեղ էին գտնում

¹ Բ.Ռլուրաբյան, Հայոց Արևելից Եկեղեցին ու մշակույթը, էջ 165:

² Ստ. Օրբելյան, էջ 276:

³ Նոյն տեղում, էջ 277:

քրիստոնեական գաղափարաբանությանն անհարիր նախանձն ու «բանսարկությունը». «Դարձեալ նախանձ, դարձեալ բարկութիւն և քսութիւն, դարձեալ որոշումն յաստուածային միաբանութենէն ...»¹:

Առկա աղբյուրների համադրությունից կարելի է նկատել, որ, իրոք, թե՛ Սյունյաց և թե՛ Աղվանից թեմերում Երբեմն հակասություններ են եղել կաթողիկոսական աթոռի թեկնածուի առաջադրման ու օրինական հաստատման շուրջ, ինչը, բնականաբար, չի կարելի տարածել ողջ թեմի վրա ու բնորոշել որպես անջատողական քայլ:

Հայոց Արևելից եպիսկոպոսների խնդրանքը հարգելով՝ Անանիա կաթողիկոսը Հովնանին ձեռնադրեց կաթողիկոս և ուղարկեց Արցախ: Սակայն Հովնանի ձեռնադրումով խնդիրը չփակվեց, քանի որ բավականին սուրբ բնույթ ընդունեցին հատկապես մերժում ստացած Գագիկի ու օրինական ձեռնադրություն ստացած Հովնանի հարաբերությունները, ինչի պատճառով Ամենայն հայոց կաթողիկոսն ուղևորվում է դեպի Արցախ: Հասնելով Խաչեն՝ Անանիա կաթողիկոսն արժանանում է Երկրամասի գլխավոր իշխան Գրիգորի մեծաշուք ընդունելությանն ու հյուրընկալությանը. «Ընդ առաջ Եղև մեզ մեծ և փառաւոր աստուածապահ և բարեպաշտ տէր Գրիգոր իշխան»²:

Իշխանը հատուկ իրովարտակով դիմում է բոլոր գավառների հոգևոր առաջնորդներին, որպեսզի շուտափույթ հավաքվեն Գանձասարի իր ապարանքը: Անանիա Մոկացու հավաստմանք՝ հավաքվել էին Աղվանից աշխարհի «բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ գիտնական քահանայք...»³:

Ժողովին ներկա էին նաև Գագիկ ու Հովնան եպիսկոպոսները, որոնց ընտրության շուրջն առաջացել էին տարակարծիքներ: Հովնան եպիսկոպոսն օրինական ձեռնադրություն էր ստացել հայոց հայրապետից, սակայն ժողովականների մեծ մասը չէր ընդունում նրա թեկնածությունը: Գագիկի թեկնածության շուրջը ևս տարակարծություններ կային, սակայն, առկա փաստերի համաձայն, ժողովականների մեծ մասը պաշտպանում էր նրան: Գագիկի թեկնածությունը պաշտպանում էր նաև Խաչենի Գրիգոր իշխանը, որը խնդրում է կրկին ձեռնադրել Գագիկին, որ սակայն, ուղղադատ ու ճշմարտաքննին հայրապետը «զոր ոչ պատշաճ

¹ Ստ.Օրբելյան, էջ 132:

² Անանիա Մոկացի, էջ 134:

³ Նոյն տեղում:

համարեալ»¹: Նույն է հաղորդում նաև հենց ինքը՝ Ամենայն հայոց հայրապետը²: Իսկ Աբրահամ Զամինեանը, առանց ստույգ ու համոզիչ հիմնավորման, ուղղակիորեն նշելէ, թե «Գագիկն էլ կամովին հրաժարվում է»³:

Ի դեպ, այստեղ էլ պետք է նկատել, որ հիշյալ տարածայնությունները կապված էին զուտ առանձին կաթողիկոսական թեկնածուների «ինքնուրույն» օժնան հետ և բոլորովին ակնարկված չէ Եկեղեցական թեմի տարանջատման մասին: Հոգևոր պետը, ըստ Ստ.Օրբելյանի, անմիջապես չի ձեռնադրում Հայ Աղվանից աթոռի առաջնորդ, քանի որ տեղի հոգևոր ու աշխարհիկ տերերը նրան հավաստիացնում են, որ շուտով իրենք կընտրեն մի արժանավայել այրի եւ կուղարկեն հայոց հայրապետի մոտ՝ օրինական ձեռնադրություն ստանալու խնդրանքով:

Անանիա Մոկացին ճանապարհվում է Սյունիք ու այնտեղից էլ Վերադարձնում իր աթոռը: Հավանաբար այս իրադարձությունները տեղի են ունեցել 949 թվականին⁴: «949 թուին (ՅՂԲ) արդէն Վերջացրած է լինում նա իր երկրորդ ճանապարհորդութիւնը Շիրակից դեպի Աղուանք»⁵:

Հայրապետի Վերադարձից հետո, ինչպես վկայում են աղբյուրները, մասնավորապես Ստ. Օրբելյանը, նրա ուշադրության կենտրոնում է մնացել հիշյալ երկու թեմերի շարունակվող գործելակերպը: Ստ. Օրբելյանը, հիշյալի Վերաբերյալ իր խոսքն ավարտելով, նշում է, որ «այսպէս խափանեաց զմեծ պատերազմն Եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն կեղեքեալ և տառապեալ ազգիս Հայոց. և զպատուական անդամնն Եկեղեցւոյ որ օծտեալ էին Վերստին միացոյց ի գլուխն գովելի ի մեծ պատրիարքսն Հայոց, որ սրբոյն Գրիգորի են աթոռակալք»⁶: Այնուհետև Անանիա կաթողիկոսից օդինական ձեռնադրություն է ստանում Փառիսոսի Տեր Դավիթը և Վերադարձնում Արցախ: Մ.Դասիսուրանցու վկայությամբ՝ 6 տարի հայրապետություն անելուց հետո, նա կնքում է իր մահկանացուն⁷:

Ա.Հակոբյանի կողմից ճշտված VI-X դարերի Աղվանից կաթողիկոսաշարքում ևս հիշատակված է Փառիսոսի Տեր Դավիթ կաթողիկոսը, որի

¹ Նոյն տեղում:

² Տե՛ս Անանիա Մոկացի, էջ 135

³ Արք.Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 168:

⁴ Արք.Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 168:

⁵ Յավելուած Արարատի, 1897, Վետրուար, էջ 91:

⁶ Ստ.Օրբելյան, էջ 286:

⁷ Մ.Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 347:

աթոռակալության ժամանակահատվածը կարծես ճշգրտված է մի շարք աղբյուրների համադրությամբ՝ 958-964թ.¹: Հիմք ընդունելով առկա որոշ աղբյուրները և համապատասխան ուսումնասիրությունները՝ մենք ևս հակված էինք այն ընդունել որպես ճիշտ եզրակացություն: Սակայն, Վերստին անդրադառնալով Մ.Ուրիհայեցու հայտնի «ժամանակագրության»-ը, բոլորովին այլ եզրակացության հանգեցինք:

Հայտնի է, որ 961 թվականին Անին հօչակվեց Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք, և նույն թվականին էլ կատարվեց Աշոտ Գ Բագրատունու օծման արարողությունը²: «Ի թուականութեանն Հայոց 410 հարկաւորեալ հայրապետն սուրբ և ամենայն իշխանք Գագկայ, և առաքեալ դեսպան առ կաթողիկոսն Աղվանից Տէր Յովիաննէս և առ թագաւորն նոցա Փիլիպպէ, կոչեցին գալ յօծումն թագաւորին Գագկայ»³: Հիշյալ արարողության հանգամանալից նկարագրությունը հասկանալի ոգևորությամբ է տվել Մ. Ուրիհայեցին, իսկ այնուհետև, խոսելով օծման հանդիսավոր արարողությանը ներկա իշխանների ու հոգևոր գործիչների մասին, գովեստով ներկայացրել նաև «զամենագովելին զՏէր Յովիաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն Եպիսկոպոսունք ընդ նմա»⁴: Այսպիսով, Մ.Ուրիհայեցին, ու նաև, նրա վրա հենվելով, Հովհ. Շահիսարունյանցը Ամենայն Հայոց Անանիա կաթողիկոսի կողմից Հայոց Աշոտ Բագրատունի թագավորի օծման արարողությանը մասնակից են համարում Աղվանից Հովիաննես կաթողիկոսին: Սույն տեսակետն է արտահայտել նաև Մ.Բարիսուտարյանցը⁵: Սակայն Բաղդասար Միտրոպոլիտ Հասան-Զալալյանը Հովիաննեսի Աղվանից կաթողիկոս ընտրվելու տարեթիվ է իշխատակում 963-ը՝ այն թյուրինացաբար կապելով Հայոց Անանիա կաթողիկոսի մահվան ու նրա հաջորդ Վահանի նոր կաթողիկոս ընտրվելու արարողությանը մասնակցելուն հետ⁶: Փաստորեն աղբյուրները մատնանշում են Աղվանից Հովիաննես կաթողիկոսի անունը 961թ իրադարձությունների առնչությամբ, բայց և զարմանալիորեն ուսումնասիրողների մի մասի տեսադաշտից այն դուրս է մնացել: Հենվելով հավանաբար ուսումնասիրողների համոզիչ թվացող

¹ Ալ. Ակոպյան, Ալբանիա-Ալյանք в греко-латинских и древнеармянских источниках. Ер. ё 1987ء срт.277.

² Sts' Հ.Ա. Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, էջ 96:

³ Տարեգիր Սմբատայ սպառապետի, Փարիզ, 1859, էջ 22:

⁴ Սույն տեղում:

⁵ Sts' Մ.Բարիսուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա., Վաղարշապատ, 1902, էջ 170-171:

⁶ «Սիլիքր Աղուանից պատմութեան համար», «Լումայ», 1897, գիրք Բ, էջ 329:

փաստերի վրա՝ նույն վրիպումը թույլ է տվել նաև Կ.Ցուկերմանը: Մասնավորապես՝ նրա կողմից ներկայացված Աղվանից կաթողիկոսների ցանկում դուրս է թողնված Հովհաննես կաթողիկոսի անունը¹:

Աղվանքի Փիլիպոս իշխանի և Տեր Հովհաննեսի գործունեության վերաբերյալ գովեստով են արտահայտվում հայ մատենագիրները: Նրանք հոգևոր քաղաքական ասպարեզ եկան այնպիսի ժամանակաշրջանում, երբ վերջապես Երկրամասն ազատագրվել էր արաբական լծից, սակայն տակավին թարմ էին նրանց թողած ավերիչ հետքերը: Եվ «խաղաղանում են բնակիչներն շնորհիւ անխոնջ ջանից Յովհաննէս կաթողիկոսի, Փիլիպոս թագավորի և Սենեքերիմ իշխանաց իշխանի, շինուում և նորոգուում են Եկեղեցիներն և բերդերն, դառնուում են ս. Եկեղեցու ծոցն բռնի մահմետականացեալներից ամենամեծ մասն... ամրապնդուում են Քրիստոնեության հաւատն, յոյսն և սէրն. շինութիւն է առնում Երկիրն և օրաւուր շատանում է ուսումնականաց թիւն»²: Հայոց Արևելից Գրիգոր Բ Մէջ իշխանի որդի Փիլիպեի իշխանապետության շրջանում Փառիսոսի իշխանության սահմանները ձգվում էին Շամքոր գետակի վերին ավագանում, Արցախյան Լեռնաշղթայի փեշերով դեպի հյուսիս ու արևմուտք մինչև Շամքոր, հյուսիսում սահման ունենալով Կուր գետը³: Հայ ժողովորդի արևելյան հատվածի համար ինքնուրույն իշխանության գոյությանք ստեղծվում են հոգևոր-քաղաքական ու տնտեսական առաջընթացի պայմաններ:

Մ. Ուռիայեցու հավաստմամբ՝ Հայոց Անանիա հայրապետի ցանկությունն էր իրեն հաջորդ ծերնադրել Սյունիքի Վահան Եպիսկոպոսին, ինչը և իրականացվեց: Սակայն Վահանի կաթողիկոսությունը «մի ներքին խռովութիւն առաջ բերեց»⁴, որի պատճառը նրա «հուանսիրություն» էր, ուստի հայ հոգևոր խավը, չհանդուրժելով Վահանի գործունեությունը, ժողով գումարեց՝ Եկեղեցում տիրող իրավիճակը քննարկելու նպատակով:

Վահանի «հունասիրության» մասին վկայություն կա Ստ.Օրբելյանի⁵ և Կ.Գանձակեցու մոտ⁶: 970 թվականին գումարված ժողովը քննեց ու դատապարտեց Վահանի ընթացքը և «միաբանեալ նստուցին յարու

¹ Constantin Zuckerman, *L'Albanie caucasienne au X siècle, Travaux et Mémoires 13*, p. 583.

² Ս. Բարխուստարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Ա, էջ 170:

³ Վ. Բալյայան, Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 109:

⁴ Արք. Զամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, էջ 170:

⁵ Stu Ստ.Օրբելյան, էջ 287-290:

⁶ Stu Կ. Գանձակեցի, էջ 87:

սրբոյ Լուսաւորչին զՍտեփանոս..., որ ի Սևան կղզւոց»¹: Մ.Ուրիհայեցու հավաստմամբ՝ վերոնշյալ ժողովը, ինչպես նաև Վահանի մահվանից հետո Հայոց 432թ./983թ./ տեղի ունեցած Հայոց նոր կաթողիկոսի օծման հանդիսավոր ժողովները վերստին գլխավորում էր Աղվանից Հովհաննես կաթողիկոսը: Պետք է նկատել, որ հիշյալ ժամանակահատվածում Հայոց հոգևոր-Եկեղեցական ժողովների վարումը Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի կողմից ևս մեկ վկայություն է այն իրողության, որ Հայ Աղվանից կաթողիկոսությունը շարունակում էր մնալ որպես Հայոց Եկեղեցական հաստատության ամենահզոր թեմերից մեկը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ Աղվանից Դավիթ կաթողիկոսից հետո աթոռակալել է Տեր Հովհաննեսը և հենց այս Հովհաննեսից հետո Աղվանից կաթողիկոսական աթոռն անցավ Տեր-Պետրոսին, որը Գարդմանի Եպիսկոպոսն էր: Այստեղ արդեն դժվար է միանշանակորեն ճշգրտել Հովհաննեսի և Պետրոսի աթոռակալության կոնկրետ թվականները, բայց փաստն այն է, որ Պետրոսի անվան հետ կապված միակ տեղեկությունը Մ.Դասիսուրանցու կաթողիկոսաշարքում պարզապես նրա անվան հիշատակությունն է և այն, որ աթոռակալել է «ամս ԺՇ. յեպիսկոպոսութենէն Գարդմանայ»²:

Խ դարի երկրորդ կեսին Հայաստանում իշխանական տների ինքնուրույնության ուժեղացմանը զուգընթաց սկսված կենտրոնացված պետության մասնատվածության գործընթացը գնալով ավելի վտանգավոր բնույթ էր ստանում և որն, ի վերջո, հանգեցրեց Բագրատունյաց թագավորության ներսում տեղական թագավորությունները³: Ըստ Մ.Դասիսուրանցու՝ Տեր Պետրոս Աղվանից կաթողիկոսին հաջորդում է Փաթիսոսի վանքի առաջնորդ Մովսես Գ-ն, որն աթոռակալեց շուրջ 6 տարի՝ 983-988թ.⁴: Ա.Հակոբյանի հավաստմամբ՝ Մովսես Գ Աղվանից կաթողիկոսի օրոք էլ հենց շարահարվել է Մ. Դասիսուրանցու «Աղվանից պատմությունը»⁵: Մովսես Գ կաթողիկոսին հաջորդած հոգևոր առաջնորդների մասին տեղեկություններ հաղորդում են Մխիթար Գոշը,

¹ Նոյն տեղում:

² Մ.Կաղանկատվացի, էջ 347:

³ Տե՛ս Հ.Ա.Հարությունյան, Հայաստանը 9-11-րդ դարերում, էջ 118:

⁴ Մ.Կաղանկատվացի, էջ 347:

⁵ Ա.Հակոբյան, Մ.Կաղանկատվացու «Աղվանից պատմության ձեռագրերը», ԲՍ, էջ 142-143: Տե՛ս նաև Ալ.Ակոլյան, Ալբանիա-Ալյանք в греко-латинских и древнеармянских источниках, стр.223.

Կ.Գանձակեցին: Ըստ այդ տեղեկությունների՝ Մովսես Գ-ին հաջորդել են «Աստուծոն այդ Մարկոս Ա-ն, ապա Հովսեփ Գ-ն»¹:

Резюме

Со второй половины IX века, вследствие политических обстоятельств, ослабли связи между Всеармянским католикосатом и окраинными епархиями. В результате, некоторые окраинные епархии, в том числе Албанская и Сюникская епархии приобрели определенную самостоятельность что, однако, никогда не приводило к полному отделению. И во второй половине X века, в связи с усилением армянского царства Багратидов, снова упорядочилась деятельность Всеармянского Святого Престола.

Summary

Since the second half of the 9th century, in consequence of political circumstances, the relationship between Pan-Armenian Catholicosat and outlying dioceses weakened. As a result, some outlying dioceses, including Albanian and Syunikian dioceses gained certain autonomy which, however, never led to a complete separation. And in the second half of the 10th century, in connection with the strengthening of the Armenian kingdom of Bagratids, the activity of Armenian Holy See was restored again.

**ԵՍԱՅԻ ՀԱՍՏ-ԶԱՊԱԼՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍը ՈՐՊԵՍ ԱՌՑԱԽԱՀԱՅ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**

Վահրամ Բալայան

Պատմական գիտությունների թեկնածու

¹ Կ. Գանձակեցի, էջ 199: *Տես նաև՝ Դ. Ալիշան, Հայապատում, հ.Բ, Վենետիկ, 1901, էջ 386:*

Արդէ

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին հայ ժողովրդի ապագա գրական շարժումը թևակոխեց նոր փուլ: Երևան եկան այդ շարժման գաղափարական սկզբանը, որոնք հանդես էին գալիս քաղաքական որոշակի ծրագրով:

Այդ շարժում առավել ընդգծված գործիչներ էին Սյունիքի մելիքական տների հայրենասիրական ավանդույթներով դաստիարակված իսրայել Օրին և Արցախի Հասան-Զալայան մեծանուն տոհմի արժանի ժառանգ Եսային, որը, 1703 թվականից սկսած, կաթողիկոս ընտրվելու օրից դարձավ ազատագրական պայքարի ամխոնջ մարտիկներից մեկը:

Իսրայել Օրին քաջ գիտակցում էր, որ իր ծրագիրը հնարավոր է իրագործել բուն մայր երկրում կազմակերպված ուժերի առկայության ռեացում:

Որպես իրական և շոշափելի ուժ՝ նա տեսնում էր Արցախի մելիքներին և Գանձասարի կաթողիկոսին:

Պատահական չէ, որ 1701թ. Մոսկվայում, իշխան Գոլովինի հետ ունեցած զրոյցում, ակնարկում է, որ Մեծ Հայքում կա հինգ նահանգապետ¹, որոնք, ոռւսական զորքերի մոտենալու դեպքում, «24 ժամ էլ չի անցնի, որ նրանք կը շնորհած անհավատներին և 15 օր էլ չանցած, կտիրեն ամբողջ երկրին»²:

Անգեղակորթի ժողովը լիազորագիր և մելիքների կողմից ստորագրված, բայց չգրված թուղթ տվեց Իսրայել Օրուն՝ նրան լիազորելով իրենց անունից դիմումներ գրել: Հետագայում, Մոսկվայում, Օրին այդ իրավասու թղթերն օգտագործում է: Այս աթիթով Ա.Հովհաննիսյանը գրել է. «1703թ. Խմբագրած նրանց դիմումներն անմիջականորեն համընկնում էին եթե ոչ Պահանի մելիքների, գեր Ղարաբաղի մելիքների և մանավանդ սրանց քաղաքական դեկավարի՝ Գանձասարի Եսայի Հասան-Զալայան կաթողիկոսի տրամադրությանը»³:

Վերոհիշյալ փաստի մասին են խոսում նաև Անգեղակորթի ժողովին նախորդած իրադարձությունները:

¹ Իսրայել Օրին նկատի ունի Խամսայի մելիքներին:

² Շ. Չոշենիա Պետրա Բելուկոց սարգաւորության մասին պատմության, 1898, հ. 76.

³ Ա.Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Եր., 1959, էջ 523:

1699թ. գարնանը Օրին վերադարձավ Հայաստան՝ իր հետ բերելով Հռենոսյան Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի նամակը՝ հասցեագրված հայ մելիքներին և Եջմիածնի ու Կապանի կաթողիկոսներին¹:

Քննարկվող ժամանակահատվածում Կապանում կաթողիկոսական աթոռ չկար, բնականաբար դա վերաբերում է Գանձասարի կաթողիկոսին: Հովհան Վիլհելմին ուղղորդելու գործում անկասկած իր դերն է ունեցել Խորայել Օրին, որովհետև նրա հետագա գործունեության առանցքում Արցախն էր յուր հոգևոր և աշխարհիկ տերերով հանդերձ:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Անգեղակորի ժողովի որոշմամբ, Օրիի օգնական է նշանակվում Արցախի Ս.Հակոբ վանքի միաբան Մինաս Վարդապետ Տիգրանյանը, որը մինչև իր կյանքի վերջն անդադրում ծառայում էր հայրենիքի ազատագրության գործին:

Մինաս Վարդապետը և Խորայել Օրին բանակցություններ են վարել ցարական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ փորձելով Ռուսաստանի միջոցով հասնել իրենց ծրագրերի իրագործմանը: Այդ բանակցությունների արդյունքները նրանք հաղորդեցին հայ մելիքներին, Գանձասարի ու Եջմիածնի կաթողիկոսներին: Այդ առաքելությամբ 1702թ. Գանձասարում և Եջմիածնում եղավ Մոսկվայում ապրող մի հայ կապիտան Միրոն Վասիլկը:

Նամակներում Օրին կաթողիկոսներին և մելիքներին հորդորում էր, որ նրանք նախապատրաստվեն՝ մասնակցելու ազատագրական պայքարին և իրենց կողմից դիմումներ հղեն ռուսական պետությանը: Գալիք պարսկական արշավանքի մանրամասները նախապատրաստելու համար Պետրոս Առաջինն անհրաժեշտ գտավ հետախուզել ապագա ռազմական գործողությունների թատերաբենը և պարզել Այսրկովկասի ժողովուրդների տրամադրությունները Ռուսաստանի հանդեպ: Օրին պատրաստականություն հայտնեց մասնակցելու հետախուզական այդ աշխատանքներին: Նա առիթը փորձում էր օգտագործել, մանավանդ, հայ մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ իր կապերն ամրապնդելու համար: Արքունիքը նպատակահարմար գտավ, որ դեսպանությունը գլխավորի հենց ինքը՝ Օրին: Իր առաքելության ընթացքում Օրին հանդիպումներ ունեցավ Գանձասարի կաթողիկոսի և Արցախի մելիքների հետ: Ժամանակի ամենալուսավորյալ անհատներից մեկը՝ Եսայի Հասան Զալայյանը, սերված լինելով Առանշահիկների

¹ Ա.Հովհաննիսյան, ճշգ. աշխ., էջ 230:

իինավուրց նախարարական տոհմից, արտահայտում էր ոչ միայն հայ հոգևոր և աշխարհիկ, այլև բովանդակ արցախահայության ծգուումներն ու տրամադրությունները: Ուստաստանի և Ուկրաինայի հայ Եկեղեցական համայնքները Գանձասարի կաթողիկոսությանը Ենթարկելու նպատակին հետամուտ՝ Եսային քաղաքական շեշտված հակում ուներ դեպի Ուստաստանը: Հայ իշխող դասի ներկայացուցիչների մեջ առաջիններից մեկն էր նա, որ ի սկզբանե հակված էր դեպի Օրիի մուսկովյան ծրագիրը և հետագայում հանդես եկավ որպես այդ ծրագրի կենսագործման եռանդուն պրոպագանդող և կազմակերպիչ: Այդ հանդիպումն առավել կարևորվում է, որովհետև Արցախի հայ տերերը սերտ կապեր և ազդեցություն ունեին ոչ միայն հայկական ողջ լեռնաստանի, այլև հայաշատ վայրերի վրա: Օրիի՝ Արցախի մելիքների հետ հանդիպման մասին է վկայում հայ գործիչների 1721թ. նամակը՝ հասցեագրված Պետրոս Առաջինին: Նամակի հեղինակները վկայում են, որ Օրին տեղեկացել է իրենց երկրի բոլոր եկամուտների, Ճանապարհների, մետաքսի արտադրության և պարսկական զորաբանակի մասին: Եսայի կաթողիկոսից և Ղարաբաղի չորս վանահայրերից զատ, այդ նամակի տակ կա Զրաբերդի Մելիք Եսայու ստորագրությունը¹:

Հայ ժողովրդի քաղձանքներն անձամբ Պետրոս Առաջինին հաղորդելու համար 1710թ. Եսայի կաթողիկոսը Պարսկաստանից վերադարձող Օրու դեսպանությանը միացավ և ուղևորվեց դեպի Ուստաստան: 1711թ.² Աստրախանում, չպարզված հանգամանքներում, Օրին մահացավ: Նրա գործը շարունակող Եսայի Հասան-Զալայյանը, վերադաշնալով հայրենիք, գիտակցելով սեփական ներուժի կազմակերպման և կանոնավոր հունի մեջ դնելու անհրաժեշտությունը, ձեռնամուխ եղավ Գանձասարի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող գավառների պետական կյանքն ընթացքավորելու դժվար գործին:

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում «տիրապետութեան տակ՝ Գանձասարի վանքի շրջապատում, ինը հարիւր գիւղ կայ, եւ այդ գիւղերը մեծ են. ունեն հարիւրից մինչեւ չորս հարիւր եւ աւելի տուն»²:

Նկատենք, որ ուշ միջնադարում հայ նահապետական ամեն մի գերդաստանում (տուն) ապրում էր տասից տասնհինգ մարդ: Նշանակում է,

¹ Армяно-русские отношения в первоый трети XVII века, т. 2., ч. 1, док. 161.

² Г.Эзօն, Աշխ. աշխ., էջ 322:

ամենահամեստ հաշվարկներով, հայոց արևելից նահանգներում և անդրկուրյան հայաշատ գավառներում ապրում էր հայ առաքելական եկեղեցու առնվազն երկու միլիոն հավատավոր: Նրանց հոգևոր, մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքը կազմակերպելու և պետական ծիրի մեջ դնելու նպատակով 1714թ. Եսայի կաթողիկոսը Գանձասարում հրավիրում է գաղտնի ժողով, որտեղ ընդունվում են մի շարք կանոններ:

«ԺԱ. Իւրաքանչիւր մելիք, պարտաւոր է գահերէց Ճանաչել Զալալեան մելիքները եւ թէ՛ յայտնի և թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունել Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ՝ իւր զօրավարին եւ ամէն զօրական՝ իւր գնդապետին եւն:»

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրիանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթե վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթե կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրավունքը բանի յափշտակել, կը պատժուի միւսների ժողովով որոշած պատժով եւ ԺՌ (10.000) թուման տուգանք, կըտուժէ մելիքաց (ընդիհանուր) գանձարանին եւ կըտուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցաք գործողն թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մոլիքական խառն ժողովոյորոշած պատժով:

ԺԸ. Ոչ այլազգի իշխանաւորաց հետ խնամիութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոյա յարիլ:

ԺԹ. Եթե օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի, կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Իվրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը՝ իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իր զօրաց զիսին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը:

ԻԳ. Մեզանից ով որ կյանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայր հայի դէմ թշնամի յարուցանել եւ արիւնահեղութիւն պատճառել, այնպիսի մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրենութիւն»¹:

Մինաս Վարդապետ Տիգրանյանն ազատագրական պայքարը գործնական հունի մեջ դնելու և հետագա գործողությունների ծրագիրը ձգրտելու նպատակով 1716թ. Գանձասարում հանդիպեց Եսայի Հասան-Զալայյանի հետ:

Մինաս Վարդապետ Տիգրանյանը համանման նպատակով Էջմիածնում հանդիպեց Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու (1715-1725) հետ: Ի տարբերություն Եսայի Հասան-Զալայյանի՝ նա ավելի զգուշավոր էր, իսկ ավելի շուտ՝ անվճռական քաղաքականություն էր վարում: Դրա մասին Մինաս Վարդապետը Ռուսաստանի դեսպանական վարչությանն ուղարձ 1717թ. մարտի 14-ի զեկուցագրում գրել է, որ Աստվածատուր կաթողիկոսը մեծ մտավախություն ուներ շահից, այնպես չպատահի, որ «այդ մեծ գործը իրենց բոլորի համար կործանարար լինի: Սակայն եթե նորին ցարական մեծութիւնը բարեհաձի պատերազմ սկսել Պարսկաստանի դեմ եւ իր զօրքերը այդ երկիրն ուղարկել, ապա նա իր հաւատարիմների հետ որքան կարող է, որպէս բարի միջոց, կօգնի»: Միաժամանակ նա չի համարձակվում գրավոր դիմել ցարին²:

Պատահական չէ, որ Մինաս Վարդապետը ռուսական արքունիքի հետ ունեցած բանակցությունների ժամանակ մշտապես ընդգծում էր Եսայի կաթողիկոսի և Արցախի մելիքների պատրաստականությունը՝ ներգրավվելու ապագա տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումներին:

¹ Ա.Քէմազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 210-214:

² Ե. Դանիելյան, Գանձասարի վանքը, Եր., 2009, էջ 37:

Նկատենք նաև մեկ այլ հանգամանք. Աստվածատուր Ա Համադանցին անվճռականություն ցուցաբերեց նաև Արցախի ներքին միաբանությունն անխաթար պահելու գործում:

Այսպես նա Եսայի կաթողիկոսի լիազորություններին համարժեք ձանաչեց, իրեն ինքնակոչ Աղվանից կաթողիկոս հրչակած Երից Մանկանց վանքի Ներսես Եպիսկոպոսի իրավունքները: Փաստորեն՝ Հայոց Արևելից նահանգներում հակաաթոռությունն օրինականացվեց, որն իր բացասական հետևանքներն ունեցավ ժողովրդի թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական կյանքում:

Սակայն Եսայի կաթողիկոսը խոհենություն դրսեւրեց և ապագա արհավիրքներին դիմակայելու, պետականաշեն մթնոլորտ ստեղծելու և թշնամու նկատմամբ միասնական ճակատ հարդարելու նպատակով հանդուրժեց մի առ ժամանակ իր կողքին տեսնելու անօրինական կաթողիկոսին, մանավանդ, եթե Ներսեսին հովանավորում էին Գյուլիստանի և Զրաբերդի մելիքները:

Ամենայն հավանականությամբ՝ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների ներուժը մեկտեղելու և Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցուն առավել վճռական դարձնելու նպատակով 1719 և 1721 թվականներին Եսայի կաթողիկոսը երկու անգամ այցելեց Էջմիածնին:

Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերի անունից 1716թ. օգոստոսի 10-ին դիմեց Պետրոս Առաջինին՝ խնդրելով նրանց վերցնել Ռուսաստանի հովանավորության տակ «...Յառաջ քան զայս առաքեալ ի քումն է թագավորութեն Խարայէ! Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբավ բարեյադրութեանըդ սկրեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն...: Խսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագավորութենեդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս, որ ի յազգէ մերմէ, եկն եհաս երկիրս մեր և առ մեզ և զբարի և աստուահածոյ մեզ, և մեր լսելով զուարձացաք և ցնծուցաք ի հոգի և ի մարմին և յօժար սրտիկ կամինք ընդ հովանեավ թեոց քոց լինիլ...մեք պատրաստ ենք ընդ առաջ քո ըստ իմուն կարողութեանս և մեր նահանգին մելիքովս և մեծամեծովք և փոքրումբք և յորժան կամեսցի հզօր և մեծ թագավորդ յաձապարել այսր կամօքն աստուծոյ...»¹:

Այս շրջանում արցախահայության համար նոր պատուհաս էին դարձել հյուսիսային լեռնական ցեղերի մշտապես կրկնվող արշավանքները: Պարսկաստանի դարավոր թշնամին՝ Թուրքիան, նրան առավել հյուժելու

¹ Аրмяно-русские отношения в первоый трети XVII века, т. 2, ч. 1, док. 360-364.

նպատակով իրակրում էր Դաղստանի ավարառու լեռնականներին, որոնք էլ մշտապես ահ ու սարսափի մեջ էին պահում Իրանի հյուսիսային նահանգների բնակչությունը: Դրանից առավել շատ տուժում էր հայությունը:

Պարբերաբար կրկնվող ավերիչ արշավանքների առաջն առաջն առնելու նպատակով անջատ-անջատ գործող Արցախի մելիքները, ապավինած իրենց անառիկ բերդերին, ստեղծեցին զինական միասնություն, որը պատմությանը հայտնի է սրբական անունով: Այդ ամենի կազմակերպիչը դարձավ Եսայի Հասան-Զալայանը:

Արդեն կանոնավոր գործը Զրաբերդի շրջանում 1722թ. գարնանն արժանի հակահարված հասցրեց թշնամուն: Ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ձախափնյակը և այլս չհամարձակվեցին Երևալ Արցախի կողմներում:

Հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանության գործը տարերայնորեն վեր է ածվում պարսկական իշխանության դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժման: Այդ շարժման դեկավարները ժամանակին այս երևույթի մեջ նշմարում էին հայոց ազգային հանգած իշխանության «նոր նորոգում»¹:

Լեզգիների դեմ մղվող պայքարը՝ սրբախական շարժման սկզբնափուլը և այն հակապարսկական ընդվզման վերածելու ընթացքը համընկեց Եսայի կաթողիկոսի 1722թ. մայիսի 28-ին Տփղիս մեկնելու փաստի հետ:

Այս հանգամանքը մեզ իմք է տալիս ասելու, որ Եսայի Հասան-Զալայանը փորձ է կատարում ազգային ազատագրական պայքարը դուրս բերել համահայկական հարթույթից՝ նրա մեջ ներգրավելով նաև քրիստոնեական Վրաստանը:

Հիշենք, որ Եսայի Հասան-Զալայանն իր այս ծրագիրը փորձում էր իրագործել Հակոբ Զուղայեցու ժամանակ՝ գործակից դարձնելով հայոց կաթողիկոսին:

Այդ ամենի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 1722թ. սեպտեմբերի 22-ի Գանձակի մոտ՝ Չոլակ գյուղում հայ և վրաց ռազմական ուժերի հանդիպումը: Հայկական 10 հազարանոց ընտիր գործը գլխավորում էր Եսայի կաթողիկոսը և Ավան, Շիրվան, Շահնի ու Սարուխան հարյուրապետերը:

¹ Եսայի կաթողիկոս Հասան-Զալայան, Պատմութիւն կամ յիշատակ իմչ-իմչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Ծուշի, 1839, էջ 58:

Եսայի կաթողիկոսը հայտարարեց, որ հայերն իրենց հոգիները, զավակներին և ունեցվածքն ի սպառ են դնում սկսած գործին¹: Բայց ռուսական և վրաց-հայկական զորքերի նախատեսված հանդիպումն ու միավորումը չիրականացավ:

Պատմագիտության մեջ այն թյուր կարծիքն է տիրում, թե իբր միջագային դրության լարվածության մեծացումը, մյուս կողմից՝ ռուսական նավերի խորտակվելն ու վնասվելը, պարենի և զինամթերքի հսկայական կորուստը, հիվանդություններն ու մարդկային զոհերը դժվարացրին արշավանքի ողջ ծրագրի կենսագործումը²:

Մինչեւ իրականում Պետրոս առաջինի ժամանակ ողջ Այսրկովկասն ու մասնավորապես խնդրո առարկա տարածքի Ղարաբաղի գրավման, առավել ևս ազատագրման մասին մոտակա ծրագրեր անգամ չկային: Խնդիր էր դրված նվաճել մետաքսառատ մերձկասայյան շրջանները, որոնց կարիքն անչափ զգում էր Ռուսաստանի նոր ձևավորվող մանուֆակտուրային արտադրությունը: Ռուս հեղինակները ժամանակին նկատել են, որ Պետրոս առաջինի հիմնական նպատակն էր Ռուսաստանի գերիշխանությունը տարածել Կասպից ծովի վրա, որը Եվրոպան Ասիայի հետ կապող միջանկալ օդակ կդառնար³:

Ռուսական արքունիքը ծրագրել էր նվաճել մինչև Կուր գետը, այնուհետև գետի ակունքներում կառուցել խոշոր առևտրական քաղաք, որը հայ, վրացի, պարսիկ և հնդիկ առևտրականների համար կդառնա հավաքատեղի: Այստեղից էլ ճանապարհը կծագվի մինչև Աստրախան⁴:

Այդ մտադրությունների մասին 1722թ. սեպտեմբերին Պետրոս առաջինը բաց տեքստով հայտնում է նաև Նեալյուկին. «Մեր զորքերը Վրաստանով և Հայաստանով անցնող Թուրքիայի սահմաններին չեն մոտենա և միայն Կասպից ծովի առափնյա շրջանները կմտնեն, որի մասին քեզ հանձնարարուն ենք Բարձր Դուռը հավաստիացնել»⁵:

¹ Եսայի Հասան-Զալայյան, Պատմութիւն համարու Աղուանից Երկրի, Երուաղեմ, 1882, էջ 45-49:

² ՀՃՊ, հ. IV, Եր., 1972, էջ 148, Պ. Բուտկով, Материалы для новой истории Кавказа, ч. 1, СПБ, 1869, Փ. Սումոնով, Описание Каспийского моря, СПБ, 1763, Կոմարօվ, Պерсидская война 1722-1725гг., Մ., 1845, Ս. Սоловьев, История России с древнейших времен, т. 18, Մ., 1867, Կոմարօվ, Պерсидская война 1722-1725гг., Մ., 1845; Խեցավ, Внешняя политика Петра Первого, СБ. «Три века», т. 3, Մ., 1912 Մելյոնով, Պоход Петра Великого в Персию, .«Русский вестник», т. 110, 1874, Վ. Լышев, Պерсидский поход Петра I 1722-1723гг., Մ., 1951.

³ История человечества, под общим редакцией Г. Гельмольта, том V, Юго-Восточная и Восточная Европа, С-Петербург, типо-литография книгоиздательского товарищества «Прогресс», 1905, с. 566.

⁴ Գոլիկով, Դեյնութիւն Պետրա Великого, том 8, с. 263-264.

⁵ ԱՎՊՐ, Փ. ԾՊԴ, 1722, ձ. 4, ս. 56.

Այդ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով 1725թ. հոկտեմբերի 23-ին Գաղտնի խորհուրդը որոշում է. «Կուր գետի ափին հիմնավորվել և այդ նպատակով մի քանի ամրոցներ կառուցել»¹: Վերոհիշյալ ծրագրերից գատ՝ Պետրոս առաջինը մերձկասպայան առափնյա շրջաններով հետազայում Հնդկաստան հասնելու գաղափարն էր մտմտում: Այդ առիթով նա գեներալ Մատյուշկինին գրել է. «Բաքուն մեր բոլոր գործերի բանալին է»²:

Ազատագրական պայքարի թափը չկոտրելու, ժողովրդի մոտ հուսալքություն չառաջացնելու նպատակով Եսայի կաթողիկոսը հորդորում է Մինաս Վարդապետին, ապագա արշավանքը կազմակերպելու միտունով, գոնե ռուսական արքունիքից հուսադրող հավաստիացումներ ստանա:

Պետրոս Առաջինը, անսալով Մինաս Վարդապետի խնդրանքին, հավաստիացնում է, որ, Կասպից ծովի առափնյա շրջաններին տիրելուց հետո, հայերին կազմական անհավատների լծից³:

Իր հերթին Պետրոս Մեծը ռուսական ազեցությունն Արցախում չկորցնելու, սղնախնների հետագա անելիքները պարզելու, ինչպես նաև հետագայում հակաթութքական և հակապարսկական ճակատ ստեղծելու նպատակով՝ 1723թ. Այսրկովկաս և, մասնավորապես, Արցախ է ուղարկում դեսպանորդ Իվան Կարապետին: Նույն թվականի վերջին Իվան Կարապետը կանցելու Գոլովինի նամակը, ուղղված Ներսես կաթողիկոսին, Գյուլիստանի մելիք Եսայուն, Զրաբերդի մելիք Սարգսին և այլ մելիքների ու յուգբաշների վերցրած, որտեղ օգնելու և ազատագրելու նոր խոստումներ էր տրվում⁴, մեկնում է Արցախ:

Ապագա արհավիրքներին դիմակայելու նպատակով, Եսայի կաթողիկոսի նախաձեռնությամբ, Արցախի անջատ-անջատ գործող ուժերը մեկտեղվեցին և, ապավինելով անառիկ բերդերին, ստեղծեցին գինական միասնություն, որը պատմությանը հայտնի է սղնախներ անունով:

Հիմնական ուժերը կենտրոնացված էին Զրաբերդի և Գյուլիստանի գավառներում, Մռովի ստորոտում: Այն հայտնի է նաև Մեծ սղնախ անունով: Ի սկզբանե Մեծ սղնախի գինվորականության դեկավարն ու ոգեշնչողը Գանձասարի Եսայի կաթողիկոսն էր: Հայոց գորքի մի մասը

¹ Е.Зевакин, *Прикаспийские провинции в эпоху русской оккупации XVIIIв.*, «Известия общества обследования и изучения Азербайджана», 1927, N 5, с. 15.

² Г.Абдулаев, *Азербайджан в XVIIIв. и взаимоотношения его с Россиеи*, Баку, 1965, с. 15.

³ Г.Эзов, Աշվ. աշխ., էջ 355:

⁴ *Армяно-руссские отношения*, т. 2, ч. 2, стр. 26.

տեղակայված էր Քիրսի ստորոտում՝ Վարանդայի Ավետարանոց և Սղմախ գյուղերի տարածքում, ինչպես նաև Ներկայիս Շուշի քաղաքի շրջակայքում: Մինչև այժմ էլ Շուշիի հարավ-արևելյան հանդիպակաց ձորի անմատչելի ծերպերում պահպանվում են պաշտպանական կառույցների մնացորդները: Փոքր սղմախը գլխավորում էր Ավան հարյուրաբետը, որը մինչև 1717թ. Շամախու խանական զորքերի մեջ ծառայող հայ գինվորականներից էր:

Ստանձնելով այսքան բացառիկ մի դեր՝ Եսայի Հասան-Ջալայյանը փաստացի դառնում է երկրի գերազույն տերն ու տնօրենը, կենտրոնացնում իր ամբողջ իշխանությունը, և այնուհետև բանակցություններն ու դիմումներն առանձին անհատների անունից չեն վարվում, այլ հայոց համահավաք ուժի՝ սղմախների, ասել կուզի՝ պետության անունից:

Լեռն իրավացիորեն գրել է. «Դա ժողովրդական մի գինվորություն էր, կառավարվում էր իր առաջնորդների, հրամանատարների խորհրդով, ուր իր տեղու ու ազդեցությունն ուներ նաև Գանձասարի կաթողիկոսը»¹:

1723թ. Արցախի սղմախականների համար սկսվեց փորձության մի նոր շրջան: Այս անգամ լեռնատանի հայությանը վիճակված էր դիմակայելու ավելի վայրագ ու ահեղ թշնամու՝ թուրքերին, որոնք համառորեն փորձում էին հասնել Կասպից ծովի ափերը: Թթվիլսին գրավելուց հետո 1723թ. հոկտեմբերին թուրքական 80 հազարանոց զորքը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ շարժվեց դեպի Գանձակ: Քաղաքի պաշտպանությանը մասնակցում էր նաև սղմախների մարտական ուժերի մի մասը: Թուրքական զորքը պարտություն կրեց և նահանջեց՝ Գանձակի պատերի տակ թողնելով հազարավոր սպանվածներ: Դեռ ավելին, հայ գինվորականության պահանջով Իբրահիմ փաշան ազատ արձակեց քաղաքի շրջակա գյուղերից գերեվարված հայերին: Ականատես լինելով հայկական բանակի մարտունակությանը՝ Իբրահիմ փաշան Ավան հարյուրապետին հակապարսկական և հակառաւսական ճակատ ստեղծելու առաջարկություն արեց: Հայերը մերժեցին: Ցարական արքունիքն այդ օրերին ոչ թե ծգտում էր աջակցել արցախահայությանը, այլ ուղիներ էր որոնում լեզու գտնել Պարսկաստանի և Թուրքիայի հետ:

Դեռ ավելին, 1724թ. հունիսի 12-ին Կ.Պոլսում ռուսական դեսպան Նեալյուկը Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն ռուսները ճանաչեցին թուրքերի իրավունքներն իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ՝ ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաք-

¹ Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Եր., 1973, էջ 140:

ները, Ղարաբաղի ու Կապանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունն Արդեքիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ- Քերմանշան գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա¹:

Կոստանդնոպոլիսի ռուս-թուրքական պայմանագրով չէր կարելի միջամտել կողմերի գրաված Երկրամասերի գործերին, ուստի ռուսական արքունիքը պարբերաբար խուսափողական պատասխաններ էր տալիս օգնություն խնդրող հայերի նամակներին՝ միաժամանակ գգուշացնելով վրաց և հայ գործիչներին՝ չգրգռել թուրքերին:

Ստեղծված պայմաններում թուրքական իրանանատարության առաջնահերթ խնդիրն էր՝ Վերացնել Ռուսաստանի և Թուրքիայի արանքում գոյություն ունեցող հայկական սեպը:

Այդ խնդիրը լուծելու համար 1724թ. հունիսին թուրքական գորքը Գյումրիի վրայով մտավ Արարատյան դաշտը, այնուհետև գրավեց Նախիջևանն ու Օրդուբաղը, ապա թափանցեց Գողթն, իսկ հարավում նվաճեց Համադանը: Չորս կողմերից աքցանի մեջ առնվեց Երևանը: Չնայած քաղաքի հերոսական պաշտպանությանը՝ սեպտեմբերի 26-ին պաշարված Երևանն անձնատուր եղավ:

Երևանը գրաված թուրքական իրանանատարությունը հարկադրեց Եջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին՝ նամակ գրել Գանձասարի Եսայի կաթողիկոսին և խորհուրդ տալ նրան, որ համոզի Արցախի մելիքներին՝ պատգամավորներ ուղարկել թուրքական իրանանատարության մոտ և իրենց հպատակությունը հայտնել, այլապես նա սպառնում է մտնել Ղարաբաղ և կոտորել հայերին:

Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի քաղաքական շրջանները որոշել էին մինչև վերջ կրվել թուրքական բանակի դեմ, ուստի և մերժեցին թուրքերի առաջարկը:

Մյուս կողմից էլ կաթողիկոսն անընդունելի է համարում Պետրոս Մեծի առաջարկը՝ արցախահայությունը վերաբնակեցնելու Կասպից ծովի առափնյա շրջաններում՝ գտնելով, որ տեղահանման ընթացքում թուրքերի համար նպաստավոր պայմաններ կստեղծվեն հայերին կոտորելու և գերեվարելու համար:

Ի մի բերելով ուժեղ՝ Եսայի կաթողիկոսն իր գինակիցների հետ միասին շարունակեց պայքարն ահեղ թշնամու դեմ:

¹ Полное собрание законов Российской империи, т. VII, СПБ, 1730, стр. 303-309., М.Соловьев, История России, т. 18, М., 1968, стр. 73.

Արյունահեղ կրիվները, ինչպես գրում է Մինաս Վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր¹: Ուշագրավ է գեներալ Դոլգորուկովի 1727թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հայտնած այն զարմանքը, թե ինչպես են հայերդ դիմանում ստեղծված դրությանը. «Միայն աստված էր պահպանում հայերին, թե չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահպում այդքան զորեղ թշնամու առաջ»²:

Ազատագրական մաքառումների ամենաթեժ պահին՝ 1728թ., վախճանվեց Եսայի Հասան-Զալայյանը:

Չնայած այդ մեծ կորստին՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը մինչև Գյուլիստանի պայմանագրի կնքումը, զինված պայքարից մինչև դիվանագիտական փնտրությունների ոլորտը, շարունակում էր մնալ հայոց արևելից նահանգների ազատագրական պայքարի դրոշակակիրը:

Резюме

Освободительная борьба армянского народа в конце 17-го - начале 18-го века вступила в новую фазу. Появились идеологи этого движения, выступившие с определенными программами. В их ряду особенно заметную роль играл достойный представитель Арцахского рода Асан-Джалалянов, Есаян. С момента избрания католикосом (1703 г) он стал одним из преданных борцов освободительного движения и основателем новой государственности.

Summary

The struggle for the independence of the Armenians in the late 17th and early 18th century entered a new phase. Some ideologists of this movement appeared, with their certain programs. Among them a particularly significant role was played by a worthy representative of the Artsakhian genus Hasan Jalalyan, Yesayi. When elected as a Catholicos (1703), he became one of the faithful fighters of the liberation movement and the founder of the modern statehood.

ԴԱՏԱԱՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Վլաղիմիր Հովսեփյան
ԼՂՀ Կերաքննիչ դատարանի նախագահ

¹ Շ. Էզօք, Աշվ. աշխ., էջ 459:

² Լեռ, Աշվ. աշխ., էջ 174:

Չնայած թուրքական և մոնղոլական դժնդակ դարերը, Լենկ Թեմուրի և թուրքմենական վաչկատուն ցեղերի ավերիչ արշավանքները կարողացան ոչնչացնել Բագրատունյաց և Կիլիկիայի հայոց թագավորությունները, սակայն պատմական Հայաստանի մի շարք հայաշատ վայրերում, հատկապես՝ Սյունիքում և Արցախում, երկրի բնիկ տերերն ընդհուած մինչև ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասուն կարողացան գենքի ուժով պաշտպանել իրենց ազգային ինքնիշխանությունը:

Եվ եթե 18-րդ դարի սկզբներին Սյունիքի և Արցախի մելիքությունները հասան փաստական անկախության, այդ երկրամասերը գերծ պահելով մահմեդական ուժացումից ու սերունդներին ավանդեցին, որ ազգերի և ժողովուրդների անկախությունը ձեռք է բերվում քաղաքական պայքարի միջոցով, ապա մեր ժողովրդի հերոսական անցյալն ոչ պակաս էական դեր է խաղացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման գործում:

Արցախն ու Սյունիքը, որոնց վրա միշտ էլ աչք են դրել անկուշտ հարևանները, Մայր Հայրենիքի հյուսիս-արևելյան կողմի ռազմավարական բանալիներն են հանդիսանում: Զատո է մոռանալ զորավար Նժդեհի իմաստուն այն միտքը, որ «Հայաստանն ինչպիսի ցուցանակ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի և Զանգեզուրի»:

Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ Արցախ նահանգը գրադարձը է Կուրակ գետից մինչև Երասխ գետը՝ թիկունքին ունենալով Հայաստանի հետ սահմանային շրջանները, իսկ առջևում՝ Կուր-Արաքսյան հովիտը: Այդ նահանգի մի մասում, դեռևս X-XVI դարերում, ձևավորվել էր Խաչենի իշխանությունը, որի տերերի հետ գրագրություններ է ունեցել նույնիսկ բյուզանդական արքունիքը¹: Խաչենը, որի անունով է կոչվել ամբողջ Արցախ նահանգի հիմնական մասը X-XIII դարերում, Հայաստանի ամենաազդեցիկ վարչաքաղաքական միավորներից մեկն է եղել: 17-րդ դարի սկզբներին Խաչենի գավառների իշխանավորներն իրանի շահ Աբաս 1-ինի հրովարտակներով ստացել են մելիքական տիտղոսներ և իրավունքներ: Մելիքները հայոց հին իշխանական տներից սերող ֆեոդալական կառավարիչներ են եղել, որոնց պարսից շահերը տվել են

¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6. Եր., 1970, գիրք բ., գլուխ 48: Ք.Ուուրաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 50:

արաբական «մելիք» հորջորջումը, որը նշանակում է «տեր», «իշխան»: Քանի որ գավառները հիմնականում հինգն էին՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ և Գյուլիստան, ապա դրանք պատմության մեջ հայտնի են «Խամսա» /արաբերեն նշանակում է հնայակ/ անունով¹:

Վերոհիշյալ մելիքություններն ունեցել են պետականության հատուկ կարգավիճակ, իսկ դրանց կառավարիչները՝ մելիքները, ներքին կառավարման հարցերում՝ լիակատար ինքնուրույնություն: Նրանք ունեցել են իրենց բերդերը, սեփական գործը, հարկային քաղաքականությունը, դատու դատաստանի իրավունքը: Մելիքների գլխավորը՝ Դիզակի մելիք Եգանն էր, որը Նադիր Շահի կողմից բեկլարբեկի տիտղոս էր ստացել և որի մոտ էլ հավաքվում էր արքունական հարկը²:

Ըստ Ոաֆֆու՝ Արցախի մելիքություններն որպես հայկական իշխանություն պահպանվել են 19-րդ դարը³:

Հայոց գավառական մելիքների իրավունքները վերջին անգամ վերահսատվել են Նադիր Շահի հրովարտակներով: Նրանց մեջ նշվում էին մելիքների իրավունքները և պարտականությունները, մասնավորապես հրովարտակները, օժտելով մելիքներին հարկ վերցնելու, գորք պահելու, կառավարելու և դատ անելու իրավունքներով, միաժամանակ նրանցից պահանջում էին հապատակների հանդեպ լինել արդար և ուղղամիտ, գործել այնպես, որ չինի ոչ ամենափոքր ձնշում և ոչ էլ կողմնապահություն:

Քաղաքական անկախության կորստի պայմաններում հայ ժողովրդի ներքին կառավարման հարցերում միշտ էլ էական դեր է ունեցել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, և հայ հին նախարարական տոհմերի ու իշխանական տների ներկայացուցիչները և մելիքները: Իսկ ժողովրդի ներքին կառավարման գործառույթներից մեկն էլ իրականացվել է իրավունքի միջոցով, որի աղբյուրներն են հանդիսացել սովորություն, կանոնական իրավունքը, օտար իրավունքի թարգմանչական հուշարձանները, ազգային դատաստանագրերը և իրավահայտ աղբյուրները:

Հայ ժողովուրդն ազգային պետականությունը կորցնելուց հետո օտար գավթիչներին կուլ չգնալու համար առաջնահերթ նշանակություն է տվել սովորությային իրավունքի նորմերին, որոնք դարեդար անցել են սերուն-

¹ ՃՅԱ, »Տիկին Առաջնահերթ Ն. 10, Է՞ս՞է՞Ս Ա» ԵՇԱԾԱՌԱՌԱՌԱՌԱ, պահանջման մեջ հետո օտար գավթիչներին կուլ չգնալու համար առաջնահերթ նշանակություն է տվել սովորությային իրավունքի նորմերին, որոնք դարեդար անցել են սերուն-

² Անձնագիր 187, 191:

³ Անձնագիր 564:

դից սերունդ և հասարակական կյանքում դարձել պարտադիր: Նույնիսկ հնուց եկող որոշ սովորություններ պահպանվել են նաև մեր իրականության մեջ:

Պատմությունից մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել ինչպես Խաչենի իշխանությունում, այնպես էլ Արցախի մելիքություններում իրականացված դատական իշխանության վերաբերյալ: Դեռ ավելին, այդ ժամանակներին վերաբերող որևէ դատական գործ կամ դատական որոշում մեզ գրավոր չի հասել: Սակայն բոլոր հետազոտողները միահամուր են այն բանում, որ ինչպես Խաչենի իշխանները, այնպես էլ Արցախի մելիքներն ունեցել են իրենց դատն ու դատաստանը¹:

Հանրահայտ փաստ է, որ Մխիթար Գոշը, հայոց աշխարհիկ իրավունքի անդրանիկ ժողովածուն, իր հոչակավոր «Դատաստանագիրքը» գրել և ավարտել է 1184 թվականին Հաթերքում՝ Խաչենի մեծ իշխան Վախթանգի ապարանքում և վայելել նրա հովանավորությունը: Հայ իրավական մտքի հուշարձանի առաջին օրինակներից մեկը Մ.Գոշն ընծայագրով նվիրել է Արցախի իշխանաց իշխան Վախթանգին՝ ակնարկելով, որ իշխանն անսխալ ուղղությամբ կվիրարի նրա պատվիրանները: Դա մի ծանրակշիր հանգամանք է և խոսում է այն բանի օգտին, որ Մ.Գոշի «Դատաստանագիրքը», որով հայկական արդարադատությունը դեկավարվեց մինչև 16-րդ դարը, ամենայն հավանականությամբ օգտագործվել է նաև Խաչենի իշխանությունում²:

Դժվար է ասել, թե միջնադարյան հայ իրավական մտքի այդ ամենախոշոր հուշարձանից կարողացան օգտվել Արցախի մելիքություններում, սակայն հստակ է, որ մելիքները չեն դեկավարվելու շարիաթի օրենքներով կամ իրեն ինքնակոչ Ղարաբաղի խան հռչակած Փանահի կարգադրություններով: Դա այն դեպքում, երբ Աստրախանի հայ գաղութում, որտեղ հայերի թիվը 18-րդ դարի կեսերին հասնում էր շուրջ 2000-ի, կիրառ-

¹ Ղաֆէի, էջ 164; ԹԿՏՅՅ, կպ՛Չօպ ՊՏՈՐՁՉԱՖՈ ԽՈՂՈՂՈՅ, ԶՈՒԱՐԵ-1902, էջ 2-4; Հ.Սուսայելյան, Ղարաբաղի նուաճնան հարիրամեալը, «Արարատ» 1914-ՌՅԿԳ ՆՍ Ս.Էջմիածին էջ 150; Ֆ.Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «ԲՀԱ»-1966 թիվ 1, էջ 199-200:

² Մ.Գոշ, Դատաստանագիր հայոց, իրավաբանական հետազոտությինը ծանրությամբք Վ.Բաստամեանց, Կաղարշապատ, 1880, էջ 104, 178, Բ.Ուղութայան, Հայոց արևելից կողմանը Եկեղեցին և մշակույթը, Երևան-1998, էջ 304-306, Ա.Մաղայլյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները, Եր., 2007, էջ 35:

վում էր Աստրախանի հայոց «Դատաստանագիրքը», որի դրույթները մերձեցման շատ եզրեր ուներ Ս.Գոշի «Դատաստանագրքի» հետ¹:

Ս.Գոշի «Դատաստանագիրքը» սկզբունքորեն ընդունում է, որ քրեական գործերը քննելու, հանցագործությունների ու մեղքերի համար մարդկանց պատժելու իրավունքը հավասարապես պետք է պատկանի և հոգևոր, և աշխարհիկ դատարաններին²:

Պատմագիտական փաստերը ցույց են տալիս, որ դատավարությունը միջնադարյան Հայաստանում բոլորովին էլ հոգևոր դասի առանձնաշնորհը չի եղել, ավելին՝ եկեղեցական դատարանը զբաղվել է գերազանցապես եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհիկ գործերի խիստ նեղ բնագավառն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով³:

Արցախի մելիքություններում աշխարհիկ դատարանների գործառույթները կատարել են մելիքները և տանուտերեր-քղոխակաները: Վերջիններս նշանակված կամ հաստատված լինելով մելիքների կողմից՝ հանդես էին գալիս որպես ստորադաս դատարաններ: Միջնադարյան Հայաստանում դրանք կոչվում էին տանուտիրական դատարաններ: Նրանց իրավասության մեջ էր մտնում գյուղական վեճերի և թեթև հանցանքների քննումը: Դատավարության ժամանակ հիմնականում դեկավում էին սովորութային իրավունքի նորմերով: Կողմը դժգոհ լինենով տանուտիրական դատարանի արձակած վճռից՝ կարող էր գանգատարկել այն «մելիքական դատարանին», որը հանդես էր գալի որպես վճռաբեկ ատյան տանուտիրական դատարանի նկատմամբ: Մելիքական դատարանն առաջին ատյանի կարգով քննում էր նաև ծանր հանցանքների վերաբերյալ գործերը: Դատավարության կարգը բանավոր էր և դատավարության ելքը հիմնականում կախված էր սովորութային իրավունքի նորմերից և մելիքի կամքից, որը հպատակների համար օրենքի ուժ ուներ:

Մելիքի արձակած վճիռը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր:

¹ «Դատաստանագիրք Աստրախանի հայոց» Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, Եր., 1967:

² Ս.Գոշի Հայոց դատաստանագիրքը, Եր., 1954, նախադրություն, Ե. գլուխ, Ա.Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1977թ. էջ 8-9:

³ Խ.Թորոսյան, Դատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Ս.Գոշի Դատաստանագրքի, «Տեղեկագիր հասարակական գիտությունների»-1965 թիվ 12, էջ 94:

Դատավարության համար հատուկ շենք չի եղել, դատը տարվել է մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Գանգատավորն իր ցուցմունքները հաստատելու համար պարտավոր էր վկաներ բերել, իսկ վկաներ չլինելու դեպքում՝ երդվել: Դատաստանական երդման համար եկեղեցում կան մի սրբի առաջ գանգատավորը մի զույգ մոմ էր վառում և մեղավորին առաջարկում հանգընել մոմերը: Եթե փչերի հանգըներ՝ համարվում էր անմեր: Երբեմն բարձրաստիճան մարդիկ էին երդվում իրենց ստորադրյալների փոխարեն:

Նահապետական սովորույթներով ապրող արցախցու համար երդվելը շատ ծանր է համարվել և երբեմն չերդվելու համար մարդիկ հանցանքը հանձն են առել, իսկ սուտ երդվողներ շատ հազվադեպ են եղել:

Որոշ դեպքերում գանգատավորը մի վառ ածուխ էր տալիս հանցավորին, և սա, ածուխի վրա ջուր լցնելով, ասում էր,- այսպես անցնեմ, թե որ արել եմ:

Տարածված են եղել հետևյալ պատիժները՝ ծեծը, տուգանքը, բանտարկությունը, անվանարկությունը, դամդա խփելը, ձիու պոչից կապելը ու քարշ տալը և մահապատիժը:

Հանցագործների նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի էր առնվուն կատարված արարքի բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը:

Ամենաստվորական և տարածված պատիժը ծեծն էր ու տուգանքը: Ծեծը գործադրում էր մելիքը կամ նրա ծառաները: Հանցավորին ծեծում էին ճիպոտներով՝ մերկացրած կամ ծառից կապած վիճակում: Շատ անգամ էլ հանցավորին ծառից կապված վիճակում 2-3 օր պահում էին: Տուգանքը բանագանձվում էր մելիքի օգտին: Միայն տուգանքից Վարանդայի մելիք Շահնազար Երկրորդը տարեկան ստանում էր մոտ 20.000 ռուբլի արծաթ:¹ Որպես բանտ ծառայում էր մելիքի ախոռը կամ ցախատունը, իսկ վտանգավոր հանցագործներին պահում էին թաղակապ ներքնատներում կամ ստորգետնյա վիրապներում: Անվանարկության պատժին իհմնականում ենթարկվում էին անառակ կանայք, որոնց երեսին մուր կամ թրիք էին քսում, էշի վրա նստեցնում և շրջեցնում էին գյուղում, իսկ անուղղելի անառակ կանանց կապում էին

¹ Են, երկերի ժողովածու հ. 3. գիրք 2, Եր., 1973, էջ 23, նույնի՝ Խոջայական կապիտալ, Եր., 1934, էջ 168:

ձիու պոչից և քարշ տալիս: Պատժի այս ձևով մելիք Հովսեփ Ա-ն սպանել է պոռնիկ Մարիամին:

Դամդա խիելու պատժի էությունը կայանում էր նրանում, որ հանցավորին մերկացնում էին և մելիքի կնիքը խփում նրա հետույթին: Բոլոր մելիքները կնիքադրոշն են ունեցել, որ ներկայացնում էր մի կեր թուր, շուրջը գրված. Քսի ծառայ մելիք... (այսինչ):¹

Առավել ծանր հանցանքներ կատարած անձանց կուրացնում կամ կտրում էին ձեռքը կամ էլ դատապարտում էին մահապատժի, որն իրականացվում էր այրման, կախելու, խեղդամահ կամ սրախողխող անելու միջոցով:

Այդ հարցում չնայած խիստ և դաժան, բայց արդարադատ են եղել Ղիզակի մելիքները, մասնավորապես մելիք Եսային և մելիք Աբասը: Վերջինս ժողովրդի կողմից ստացել էր նաև Աբաս Դաժան մականունը: Հանցագործը չէր կարող ազատվել մելիք Եսայու ձեռքից ոչ կաշառքով և ոչ էլ բարեխսությամբ: Յուրաքանչյուրին ըստ կատարած հանցանքի նշանակվում էր պատիժ և կշտամբանք: Մելիք Եսայու օրոք գավառում վերացված էին ոչ միայն գողությունը, պոռնկությունը և մարդասպանությունը, այլև՝ կանանց բարձրաձայն վեճերն ու կրիվները: Մելիք Աբասի կառավարման տարիներին հանցագործը սրախողխող էր արվում հենց հասարակության առջև, որպեսզի ոչ ոք չհամարձակվի հետագայում նույն հանցանքը գործել²:

Մահապարտների նկատմամբ ոչ պակաս խիստ են եղել նաև մյուս մելիքները: Այսպես, մելիք Թեգլարի կողմից մահապատժի դատապարտված հովիվ Հախվերդու գլխին դրել են շիկացրած փլավքամին, որն անմիջապես մահացել է, իսկ մելիք Աբով Գ-ին չենթարկվելու համար Փանոսանց Հայրապետին ծառից կախել են:

Արցախից Հնդկաստան տեղափոխված Մովսես Բաղրամյանը, մեծահարուստ հնդկահայ Հակոբ Շամիրյանի տպարանում 1772թ. տպագրած իր «Նոր տետրակ», որ կոչվում է «Հորդորակ» գրքի մեջ նշում է, որ Զերբերդի մելիք Աղամը և Գյուլիստանի մելիք Հովսեփն առանց որևէ մեկի հրամանի կարող էին իրենց Ենթակա ժողովրդի միջից հանցավորին կամ վնասապարտին ինքնակամ կերպով պատժել ու սպանել³:

¹ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Եր., 1988թ. էջ 245-274, 252:

² Առաքել Վարդապետ Կոստանդնաց, Ղիզակի մելիքությունը, Վաղարշապատ, 1913, էջ 44-47, 73-74, Ռաֆֆի էջ 274:

³ «Նոր տետրակ, որը կոչվում է «Հորդորակ», Եր., 1991, էջ 102-103:

Սրանք ծանրակշիռ փաստեր են, որոնք ապացուցում են, որ նոյնիսկ Ղարաբաղի խանության տարիներին յուրաքանչյուր մելիքությունում դատավարության իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի ձեռքում: Խաները միայն իրենց ազգին յուրահատուկ արևելյան խորամանկությամբ և խարդախությամբ կարողանում էին դավեր նյութել մելիքների գլխին: Նման քստմնելի դեպք է եղել, երբ Իբրահիմ խանը բարեկամական գրուց ունենալու նպատակով Շուշի հրավիրեց Զրաբերդի մելիք Մեժլումին, Գյուլհատանի մելիք Աբովին, Դիզակի մելիք Բախտամին և Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին ու նրանց բանտարկեց Շուշիի բերդում:

«Մելիքական իրավունքը» կազմված լինելով չգրված իրավական և բարոյական վարքագիծ կանոններից, տարածվում էր նաև հենց մելիքների վրա: Որևէ մելիքի կողմից սովորույթային իրավունքի նորմերի կամ բարոյականության հիմնարար սկզբունքների խախտման դեպքում, մյուս մելիքները միավորվել են նրա դեմ և չգրված օրենքի խստությամբ պատժել նրան: Այդպես է եղել, երբ իշխանատենչ մելիք Շահնազարը Վարագադայի մելիքը դառնալու համար սպանել է եղբորը՝ մելիք Հովսեփին և կոտորել տվել նրա ամբողջ ընտանիքը ու անօրեն կերպով տիրացել մելիքությանը: Ոճրագործին պատժելու և մելիքության ժառանգման սահմանված կարգը վերականգնելու համար մյուս մելիքները պատժիչ արշավանք են ձեռնարկել մելիք Շահնազարի դեմ, սակայն այդ եղբայրասպան գժտություններից կարողացավ օգտվել միայն Արցախի ոխերին թշնամի Փանահ Խանը: Մեկ այլ օրինակ, մելիքների կողմից ռուսների հետ վարած գաղտնի բանակցություններն Իբրահիմ Խանին հայտնելու համար մելիքական տոհմի ներկայացուցիչ Ալլահ-Ղուլի բեկի նկատմամբ ամենայն խստությամբ կիրառվեց մելիքական օրենքը: Նա բռնվեց և գլխատվեց: Այդպես է եղել և կիմնի՝ ազգային շահերի դավաճանությունը համարվել է ամենաքստմնելի հանցագործությունը և խստորեն պատժվել:

Թեկուզ մելիքները ներքին հարցերում եղել են միահեծան՝ ունենալով անսահմանափակ իրավունքներ, բայց նրանք հանդիսանալով Իրանի շահի վասսալներ՝ հարկահավաքության գործում ինքնագույն չեին կարող լինել: Պատմությունը վկայակոչում է, որ Վարանդայի Մելիք

Միրզաբեկը շահական գանձարանին հարկը չվճարելու համար Ենթարկվել է մահապատժի՝ խեղդամահ անելու միջոցով:

Արցախի մելիքություններում դատական որոշումներն ի կատար էին ածվում տանուտերերի և մելիքների կողմից: Տանուտիրական դատարանի վճիռը կատարվում էր տվյալ գյուղի գգիրի, իսկ մելիքական դատարանինը՝ մելիքի ծառաներից մեկի կողմից: Վճիռն արձանագրված չէր հանձնվում ծառային, այլ միայն մի թղթի վրա խփված մելիքի կնիքը կան նրա համրիչը: Վճիռ էությունը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ՝ դատապարտվածին, և իբրև վկայակոչում իր ասածին՝ ցույց էր տալիս մելիքի կնիքը կան համրիչը: Տանուտերը և մելիքը դատավարության համար վարձ չէին պահանջում, բայց ծառան պոկում էր ինչքան կարող է թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից:

Քաղաքացիա-իրավական հարաբերություններից բխող վեճերի քննությունը և լուծումը իրականացրել է Հայ Առաքելական Եկեղեցու Գանձասարի հոգևոր իշխանությունը: Վերջինս լծորդված էր մելիքական իշխանության հետ՝ կազմելով մեկ միասնական քաղաքական միավոր: Երկու իշխանությունների միջև գործում էր հաղորդակից անոթների օրենքը: Երբ թուլանում էր մեկը, բնականաբար թուլանում էր և մյուսի դիրքերը:

Նման պայմաններում մելիքներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև իրենց իշխանության ներքո գտնվող գավառի հոգևոր գործերին: Մելիքների թույլտվությամբ է տեղի ունեցել պսակը և ամուսնությունը:

Ամուսնանալու համար մելիքի հպատակները նրան վճարում էին որոշակի դրամական գումար: Նրանք պարտավոր էին տանել մելիքին մսացուի սուկին և երիկամները, 1 կուժ գինի, 2 հավ և 2 շիշ օղի: Եթե հարսն ուրիշ գյուղ էր տարվում, պարտավոր էին ավելի վճարել: Մելիքն իր հերթին նորապասակներին մի «խալաթ» /նվեր/ է տվել:

Իրենց հպատակների ամուսնալությունների հարցում մելիքները երբեմն թույլ են տվել կամայականություններ՝ հարկադրելով Եկեղեցուն ամուսնալութել իրենց հպատակներին և ամուսնացնել այլ անձանց հետ: Այսպես, երբ մելիք Հովսեփ Ա-ի հպատակ Մուսին գանգատվել է իր կնոջից, ապա մելիքի հրամանով Եկեղեցին նրանց ամուսնությունը լուժել է և Մուսին ամուսնացել է մեկ այլ կնոջ հետ¹:

Ժառանգման իրավունքի հարցերը գտնվել են հոգևոր իշխանության ձեռքում: Պատմությունը մեզ թողել է Ամարասի Խորայել կաթողիկոսի մի

¹ Ե. Լալայան, էջ 241

շատ հետաքրքիր գրավոր վկ8այություն, համաձայն որի Վարանդայի մելիք Շահնազար Երկրորդը 1792 թվականին իր գույքը կտակել է կրտսեր որդուն՝ Զհանբախշին: Գրությունը հետաքրքիր է ինչպես իրավական, այնպես էլ ժամանակի բարքերի տեսակետից:

Ինչպես հայտնի է, Վարանդայի մելիք Շահնազար Երկրորդն ունեցել է 3 կին, որոնցից միայն առաջինը՝ Թագուհին է եղել օրինավոր: Եվ երբ իրահիմ Խանի հլու սպասավոր, Գանձասարին հակաթոր Խորայել կաթողիկոսը գրավոր հաստատել է մահամերձ մելիք Շահնազարի կամքը՝ ամբողջ գույքն իր արտամուսնական կապերից ծնված որդուն՝ Զհանբախշին կտակելու նաևին, ապա նրա օրինավոր կնոջից ծնված որդին՝ մեջլիք Զումշուդը, հետագայում կարողացել է մոլլա Հուսեինի միջոցով Խորայել կաթողիկոսի հաստատած կտակն անվավեր ճանաչել¹: Ավելորդ չել, որ կտակարարն ու կտակը հաստատողն այնքան վնաս են հասցել Արցախի մելիքական և հոգևոր իշխանությունների ազգային ազատագրական պայքարին, որ նրանց կողմից Ղարաբաղի լեռնաստանին պատճառված վնասի հետևանքները վերացվեցին միայն մեր օրերում:

Ինչպես նշվեց, մելիքները, լինելով աշխարհիկ գործերի տեր, վճռական ներ են խաղացել նաև հոգևոր գործերում: Պատմական փաստ է, որ Պետրոս Խանցքեցին՝ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Հասան Զալայյան տոհմի անդամ դառնալու հարցում վճռական դեր է խաղացել Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Զալայյանի համաձայնությունը²:

Ուստական կայսրության առաջին տարիներին մելիքները և նրանց ժառանգները, թեև պաշտոնապես գրկվեցին նախկին մելիքական իրավունքներից, բայց ճանաչվեցին իբրև տոհմիկ ազնվականներ՝ բեկեր:

Այսպիսով, ժողովրդի մեջ այնքան խորն է եղել արմատավորված սովորությային իրավունքը, նահապետական կացութաձևները և համակրանքն երկրի նախկին հայ տերերի նկատմամբ, որ նույնիսկ Ղարաբաղը ցարական Ուստաստանին միացնելուց հետո, թեպետ ոչ դատավոր, բայց որպես գյուղի ամենաազդեցիկ և հեղինակավոր մարդիկ, գյուղացիները տեղական վեճերը լուծելու համար դիմել են

¹ Ետո, հասող 3, գիրը 2, էջ 376-377:

² Մ.Բարխուդարյան, Արցախ Բարքու-1895, էջ 54, Լ.Սկրտումյան, Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանցքեցի կաթողիկոսի օրոք, «ԼԳՀ» թիվ 1, էջ 90:

բեկերին: Մելիքների ժառանգներն ընդառաջել են համազուղացիների խնդրանքին և «Դատ կտրել» կամ դատն իրենց ցանկացածի պես վճռելու համար ձնշում են գործադրել գյուղական պաշտոնյաների վրա: Վերջիններս չեն խոչընդոտել մելիքների ժառանգերի միջամտություններին և շոյված լինելու ակնկալիքով՝ իրենց բերանները քաղցրացրել են բեկերի տանը¹:

Резюме

По представлению главы епархии 25 июля Верховный Духовный Совет ААЦ во главе с Верховным Патриархом Католикосом Всех Армян Вазгеном I образовал в структуре Нор-Нахичеванской и Российской епархии ААЦ (в пределах территории РФ) три викариата: Западный (церковные общины Москвы и Санкт-Петербурга), Ростовский (общины Ростовской области и Поволжья) и Северо-

Кавказский (Краснодарский и Ставропольский края, северокавказские республики), на территории которого проживает около половины российских армян.

25 июля 1991 г. Католикос Вазген I назначил викарием Северного Кавказа архимандрита Езника Петросяна, много сделавшего для налаживания церковной жизни.

Архимандрит Езник Петросян родился 19 января 1955 г. в Тбилиси. В 1973 г. закончил Эчмиадзинскую духовную академию и в том же году был рукоположен в иеромонахи. Первые несколько лет он работал в редакции журнала „Эчмиадзин“ в качестве секретаря. В 1975 г., защитив в Первопрестольном Св. Эчмиадзине диссертацию на тему „Литературно-богословское наследие Мовсеса Ерзинкаций“, был удостоен сана Вардапета (архимандрита). С 1976 по 1981 г. учился на богословском факультете Афинского национального университета, где в 1978 г. защитил докторскую диссертацию по теме „Отношение Армянской Церкви к святым образам“ и получил научную степень доктора богословия. Являлся ректором Эчмиадзинской духовной академии, был членом Комитета богословского образования Всемирного совета церквей. До своего назначения на Северный Кавказ архимандрит Езник Петросян был настоятелем Ахпатского монастыря, в пределах которого в средние века действовал университет. В Ахпата отец Езник продолжал заниматься научной и издательской деятельностью. Итогом его научных изысканий стала защита в Св. Эчмиадзине (1993) диссертации на соискание санаprotoархимандрита по теме „Христология Армянской Церкви“. Его перу принадлежит целый ряд ценных богословских трудов, за которые ему присвоили звание доктора богословия.

18 августа 1994 г., в возрасте 86 лет, умирает Католикос Вазген I, возглавлявший Армянскую Церковь с 1955 г. В начале апреля 1995 г. для избрания нового Католикоса созывается Церковный Национальный Собор, проводившийся уже в независимой Армении. 4 апреля Верховным Патриархом Католикосом Всех Армян становится известный в церковном мире ученый-богослов Католикос Киликийский Гарегин, который 9 апреля восходит на престол Св. Эчмиадзина под именем Гарегин I (1995-1999).

Возрождение церковной жизни в регионе с многочисленным армянским населением стало основанием для образования Епархии Юга России ААЦ, что получило закрепление 13 января 1997 г. специальным Кондаком (Указом) Католикоса Гарегина I. Новую епархию с центром в Краснодаре Езник Петросян принял уже в сане епископа. Выполнив свою историческую миссию, епископ (в прошлом году получивший сан архиепископа) Езник Петросян вернулся в Св. Эчмиадзин, где возглавил весьма ответственный отдел межцерковных связей. В новое тысячелетие епархия вступила с новым предводителем – епископом Мовсесом Мовсесяном.

Глава епархии епископ Мовсес Мовсесян родился в 1964 г. в с. Гохт Армении. В 1982 г. он поступил в Духовную Академию Св. Эчмиадзина. В то время учащимся Академии отсрочку от армии не давали, поэтому с 1983 по 1985 год он проходил службу в армии, после чего продолжил учебу. В 1989 г., защитив дипломную работу на тему „Акнерская школа“, он завершает учебу в Академии и рукополагается в дьяконы. В том же году дьякон Мовсес поступает в Загорскую Духовную Академию для продолжения богословского образования. В 1991 году защитил диссертацию и получил степень кандидата богословских наук. 28 июля 1991 г. был рукоположен в иеромонахи и назначен настоятелем московской церкви Сурб Арутюн. Наряду с исполнением священнических обязанностей, он преподавал Закон Божий в армянской гимназии и организовал проведение уроков христианского воспитания в Московской армянской общине. В 1996 г. он защитил диссертацию и получил звание архимандрита. С 1997 по 1999 г. архимандрит Мовсес Мовсесян служил настоятелем храма Св. Рипсиме в Св. Эчмиадзине. В 1999 г. вновь избранный Католикос Гарегин II назначил его местоблюстителем главы Епархии Юга России ААЦ. В апреле 2001 г. архимандрит Мовсес был назначен главой епархии и 30 сентября того же года рукоположен в епископы.

Краснодар был определен центром архиерейского престола новой епархии. Учредительное собрание избрало епархиальный совет – высший орган этого регионального церковного объединения. В состав епархии вошли викариаты, центры которых находились в Краснодаре, Пятигорске, Владикавказе. Заместителем главы епархии является

настоятель пятигорской церкви Сурб Саргис протоиерей Арам Унанян, викарий армянских церквей Ставрополья и Терека.

На рубеже XX-XXI вв. руководящими органами ААЦ на Северном Кавказе и религиозными общинами была проделана огромная работа по реставрации сохранившихся старых церквей (в Армавире, Владикавказе, Эдиссии, Буденновске), возведению новых храмов (в Пятигорске, Кисловодске, Адлере, Сочи, Гайкодзоре, Краснодаре, Ставрополе, Георгиевске, Курганинске, Апшеронске, Славянске-на-Кубани, Ново-Михайловке, Шаумяне и др.), молельных домов и памятных хачкаров. При церквях начинают функционировать воскресные школы, где изучают Святое Писание, историю церкви и родной язык. Несколько новых церквей освятили Католикос Гарегин I, посетивший в августе 1997 г. Краснодарский и Ставропольский края и ныне здравствующий – Гарегин II, 29 ноября 2003 г. освивший пятигорскую церковь Сурб Саргис.

Таким образом, возрожденная епархия и приходы ААЦ на Северном Кавказе, так же как и вся Церковь на современном этапе подтвердила свою традиционную историческую позицию – быть со своим народом, сплотить его на духовно-религиозном уровне.

Ամփոփում

Սույն հոդվածում հեղինակը ներկայացնում է Հյուսիսային Կովկասի Հայ Առաքելական Եկեղեցու դեկապար կառույցների կազմավորման պատմությունը (XYIII դ), նրա վերածննունդը հետխորհրդային տարիներին ու նրա դերը արդի ժամանակաշրջանում հայ ժողովրդի միաբանման գործում:

Summary

The author of this article represents the history of the formation of governing structures of the Armenian Apostolic Church in the North Caucasus, its revival in the post-Soviet years and its role in the current period of the unification of the Armenians.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ում (1991-2002թթ.)

Արմինե Առստամյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԱրԴՀ

Խորհրդային Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղում սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում հետևողականորեն իրականացվել է հայ բնակչության շահերը ոտնահարող խտրական քաղաքականություն:

Ազգային հալածանքի քաղաքականությունն ուղեկցվել է սոցիալ-տնտեսական կյանքում առկա բազմաթիվ չլուժված հիմնախնդիրներով, որոնք հակագրել են ոչ միայն երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման, այլ նաև ժողովրդագրական զարգացման ընթացքի վրա:

1921թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը հասնում էր 131,5 հազար մարդու, որի 94.4%-ը հայեր էին, իսկ մնացած 5.6%-ը այլազգիներ:

Խորհրդային իշխանության տարիներին, ադրբեջանական կառավարության հայացինջ քաղաքականության պատճառով, Արցախի բնակչության թիվը չնչին չափով աճեց: Այսպես, 1939-1979 թթ. երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում երկրամասի բնակչությունն ավելացավ ընդամենը 7%-ով՝ 151 հազարից հասնելով 162 հազար մարդու: Ընդ որում, հայերի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվակազմում 75.9%-էր, իսկ ադրբեջանցիների թվաքանակը աճելով կազմեց 22.9%¹: Միաժամանակ հարկ է նշել, որ եթե Ղարաբաղի բնակչությունը 1926-1990թ.թ. աճել է 1,56 անգամ, ապա նույն ժամանակաշրջանում Ադրբեջանի բնակչությունը աճել է շուրջ 4 անգամ: Եթե 1990թ. Ադրբեջանում բնակչության խտությունը կազմում էր 82,3 մարդ, ապա Ղարաբաղում այդ ցուցանիշը կազմում էր 44 մարդ²: Պարզ է, որ հայ բնակչության թվաքանակի նվազումը կապված էր ադրբեջանական խտրական քաղաքականության հետևանքով թելադրված հայերի կայուն արտահոսքի և ադրբեջանցիների ներհոսքի պատճառով:

¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 286:

² ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության տրամադրության տակ եղած նյութերից:

Բնակչության կազմում հայերի նվազման միտումների շարունակումը կարող էր, ինչպես Նախաջնանի պարագայում հանգեցնել Արցախի լիակատար հայաբախմանը:

1988թ. սկիզբ առած ազգային ազատագրական պայքարի պատճառով, սակայն բնակչության կառուցվածքում հայերի տեսակարար կշիռը էապես փոփոխվեց: 1988թ. բնակչության թիվը կազմում էր 189 հազար մարդ, իսկ 1990թ.՝ 195,2 հազար մարդ, որի 98%-ը հայեր էին¹:

1990թ. Արցախի բնակչության թվաքանակի նման աճը հիմնականուն պայմանավորված էր Բաքվից և Աղրբեջանի մյուս շրջաններից հայերի բռնագաղթմամբ:

1988-1994թթ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից 1988-1994թ.թ. արտագաղթած 48 հազար հայ բնակիչ սկզբուն ապաստան գտավ Հայաստանի Հանրապետությունում, ապա մի մասը վերադարձավ Ղարաբաղի Հանրապետություն:

1990-1992թ.թ. պատերազմական իրադարձությունների և Մարտակերտի, Շահումյանի և ԼՂՀ այլ շրջաններից արտագաղթի պատճառով բնակչության թիվը նվազեց մինչև 121 հազար մարդու:

Պատերազմական իրավիճակով պայմանավորված խիստ նվազեց բնակչության բնական աճը: Այսպես, եթե 1985թ. ծնվածների թիվը կազմում էր 4498 հոգի, ապա 1992թ.՝ 1359, 1993թ.՝ 1308: Դրան հակառակ բարձր էր մահացության գործակիցը: Այսպես, եթե 1993թ.՝ 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմեց 10,6 մարդ, ապա նույն ժամանակահատվածում մահացածների թիվը 1000 բնակչի հաշվով կազմեց 16,6 մարդ: Համեմատության համար նշենք, որ շարժման նախօրյակին Արցախում ծնվողների միջին տարեկան թվաքանակը 1000 շնչի հաշվով կազմում էր 22,3 մարդ, շարժման տարիներին այդ թիվը կրճատվեց գրեթե 2 անգամ²:

Ծնելիության գործակցի նվազումը և մահացության աճը ինչպես նաև մեծ չափեր ընդունած արտագաղթը պայմանավորեց Արցախի բնակչության թվաքանակի նվազեցումը: Այսպես, եթե 1985թ. բնակչության թիվը կազմեց 173,6 հազար, ապա 1995թ.՝ 126,4 հազար:

Բնակչության թվաքանակը և կազմը Հազար մարդ

¹ ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները 1985-1996, էջ 8:

² նոյն տեղում:

Տարիներ	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում՝	
		քաղաք.	գյուղ.
1985	173.6	82.7	90.9
1990	195.2	101.7	93.5
1991	143.3	64.1	79.2
1992	121.9	64.1	57.8
1993	123.2	71.5	51.7
1994	126.9	71.8	55.1
1995	126.4	71.2	55.2
1996	131.4	73.1	58.3

Բնակչության բնական շարժը Հազար մարդ

Տարիներ	Ծնվածների թիվը	Մահացածների թիվը	Բնակչության բնական աճը
1985	24.0	7.8	16.2
1990	17.3	7.1	10.2
1991	21.6	12.2	9.4
1992	11.6	11.2	0.4
1993	10.6	16.6	-6.0
1994	14.2	15.2	-1.0
1995	14.2	9.5	4.7
1996	15.2	10.2	5.0

Փաստորեն Արցախյան պատերազմի, սոցիալ-տնտեսական բնույթի կտրուկ անցումների արդյունքում Լեռնային Ղարաբաղում ապակայունացվեց ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակը: Ելելով սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական բարդ իրավիճակից, ինչպես նաև դրսում ապաստան գուած դարաբաղցիներին վերադարձնելու, պետության սահմաններն անրապնդելու, ազատագրված բնակավայրերը վերականգնելու անհրաժեշտությունից, 1993թ. ի վեր ԼՂՀ-ում իրականացվում է վերաբնակեցման ծրագիր: Արցախի վերաբնակեցումը դարաբաղյան հարցի բաղկացուցիչ մասն է, համազգային խնդիր, որն ազգային ծրագիր պետք է դառնա:

1988թ. հետո Ադրբեյջանի տարրեր տարածքներից Ղարաբաղ են ներգաղթել 75000 փախստականներ¹: 1993թ. ապրիլի 1-ին և սեպտեմբերի 13-ին ՀՀ կառավարությունը ընդունեց ԼՂՀ տարածքում պատերազմական գործողությունների հետևանքով ավերված բնակավայրերի

¹ «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N10(17), 2002, էջ16:

վերականգնման և վերաբնակեցման միջոցառումների մասին որոշում, որտեղ նախատեսվում էր վերաբնակիչների կենսապայմանների ապահովման, բնակավայրերի վերականգնման միջոցառումներ:

1993թ. նոյեմբերի 8-ին ԼՂՀ Պաշտպանության Պետական կոմիտեն (ՊՊԿ-ն) ընդունեց ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից բխող միջոցառումների կիրարկումն ապահովող համապատասխան որոշում¹: Հրաժարարից հետո, ցավոք, պատերազմից հյուծված հանրապետությունն ի վիճակի չեր համակողմանիորեն գրաղվելու փախստականների խնդիրներով, առաջին հերթին՝ նրանց բոլորին ապահովելու բնակարաններով: Զինադարձարից հետո ԼՂՀ իշխանություններն ակտիվորեն ձեռնամուխ եղան վերաբնակեցման խնդրի իրագործմանը: 1994թ-ից ի վեր Արցախի կառավարությունն իրականացնում է «Վերաբարձ Արցախ» ծրագիրը, իսկ 2000թ-ից ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը ևս աջակցում է այս ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն էր վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները:

Իշխանությունների կողմից առանձնակի ուշադրություն էր դարձվում պատերազմի հետևանքով մշտական բնակավայրերից տեղահանվածների պահանջնունքների բավարարմանը: Կառավարության համապատասխան որոշման համաձայն (թիվ 108 որոշում, 30 ապրիլի, 1996թ.) վերաբնակ ընտանիքներն ապահովվում էին բնակարաններով, ընտանիքի անդամներին ցուցաբերվում էր միանվագ դրամական օգնություն, սեփականության իրավունքով հատկացվում էր զյուղատնտեսական նշանակության հողամաս, տրամադրվում էին երկարաժամկետ վարկեր՝ ինքնազբաղվածությամբ նրանց ապահովելու համար և այլ արտոնություններ²:

Վերաբնակեցումն իրականացվում էր կամավորության սկզբունքներով, վերաբնակվել ցանկացողների մեջ հոսքը բացատրվում էր ստեղծված գրավիչ պայմաններով: Բնակարանը տրամադրվում էր սեփականության իրավունքով, սակայն այդ իրավունքը փաստաթղթային ձևակերպում կարող էր ստանալ միայն 5 տարի հետո: Տրվում էր 2 հազ. քմ տնամերձ հողամաս, 6 հազ. քմ տնամերձ հողամաս, 6 հազ. քմ սեփականաշնորհվող հող՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին:

¹ ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի որոշում, 1993, հր.320:

² «ԼՂՀ անրապետություն», 11 հունիսի, 1996:

Տեղափոխման բոլոր ծախսերը հոգում էր Արցախի կառավարությունը: Ընտանիքի զիջավորին տրվում էր միանվագ օգնություն աշխատավարձի քսանապատիկի և յուրաքանչյուր անդամին՝ հնգապատիկի չափով: Վերաբնակիչներն ազատվում էին որոշակի հարկերից, նրանց տրվում են նաև վարկային արտոնություններ: Վերաբնակիչների գերակշռող մասը հասարակության սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներն էին՝ Աղրեջանից բռնազարդվածները, պատերազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված արցախցիները, նախկին ԽՍՀՄ կոնֆլիկտային գոտիներից դուրս եկածները, բնակարանային խնդիրը չլուծած նորաստեղծ ընտանիքները, քաղաքների և նախկին շրջկենտրոնների գործազուրկ, հողով չապահոված ընտանիքները:

Աշխատանքը տարվում էր երկու ուղղությամբ՝ նորաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի հզորացում: ԼՂՀ կառավարության որոշմամբ, 2001թ. նույնականացնելու 30-ին կառավարությանն առընթեր ստեղծվում է միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչություն: Մինչ այդ, վերոհիշյալ գործառույթներն իրականացվում էին սոցապ նախարարության համապատասխան ստորաբաժանումները¹:

2001թ. կառավարությունը հաստատեց ԼՂՀ վերաբնակեցման տասնամյա ծրագիր, որով նախատեսվում էր այդ տարիներին երկրում ընդունել մինչև 67000 գաղթականի: Համաձայն վերաբնակեցման տասնամյա ծրագրի, ԼՂՀ-ն պետք է տարեկան ընդունի միջինը 1200 ընտանիք, որպեսզի հանրապետության բնակչության թվաքանակը հասներ նախապատերազմյան մակարդակին: Վերաբնակեցման քաղաքականությանը նպաստում էր նաև ԼՂՀ-ում 1997թ. նշակած «Ծնելիության և բազմազավակության խթանման ծրագիրը»: Բազմազավակ ընտանիքներն այստեղ օգտվում էին առավելություններից, սկսած երրորդ երեխայից՝ Արցախի կառավարության որոշմամբ, նրա անվանք բանկում հաշիվ էր բացվում 700 դոլարի չափով, 9-10 երեխայի դեպքում գումարի չափը հասնում էր մինչև 3000 դոլարի: Արտոնությունների այս մեխանիզմը խթանում էր Արցախի բնակչության աճը:

Կարվող քաղաքականության արդյունքում՝ վերջին տարիներին աճել է ՀՀ-ից, ԱՊՀ և այլ երկրներից Ղարաբաղ վերադարձների թիվը: Ահավասիկ՝ 1999թ. ԼՂՀ է վերադարձել շուրջ 230 ընտանիք (1000 հոգի): 2000թ. պետական բյուջեով վերաբնակեցման համար նախատեսվել է

1149357.0 հազար դրամ, որի շնորհիվ ապահովեց շուրջ 194 ընտանիքի (847 հոգի) Վերադարձը¹:

Մեծ թափով սկսվեց սահմանամերձ, պատերազմական գործողությունների հետևանքով ամբողջովին ավերված և ռազմավարական նշանակության բնակավայրերի Վերաբնակեցումը: Գյուղեր Վերաբնակեցվեցին հանրապետության բոլոր շրջաններում, այդ թվում նաև 12 գյուղ Շահումյանի շրջանում: Վերաբնակեցված գյուղերի մեծ մասում կառուցվել են դպրոցներ, բուժկետեր և սոցիալական այլ օբյեկտներ, նորոգվել են ճանապարհները, անցկացվել էլեկտրահաղորդման գծեր, Վերականգվել է ջրային համակարգը:

2001թ. բյուջեի միջոցների սղության պատճառով համեմատաբար պակաս գումար հատկացվեց Վերաբնակեցման գործնթացին, այդուհանդերձ հնարավորություն ընծեռվեց Վերաբնակեցնել ևս 154 ընտանիք:

2001թ. ԼՂՀ կառավարությունը հաստատեց Շուշի քաղաքի և Շուշիի շրջանի զարգացման 10-ամյա ծրագիրը, որը ներառում էր Վերաբնակեցման և աշխատատեղերի բացման խնդիրներ:

2002թ. Վերաբնակեցման ծրագրի համաձայն պետքյուշեցից հատկացվեց 450 մլն դրամ: 1993թ-ից մինչև 2002թ-ը Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել 4498 Վերաբնակիչ (1148 ընտանիք), որոնցից 161-ը (57 ընտանիք) բնակություն է հաստատել մայրաքաղաքում, մյուսները՝ շրջենտրոններում²: Չնայած իրականացված լայնածավալ աշխատանքներին, Վերաբնակիչները դեռևս շատ գյուղերում հայտնվում էին ոչ բարենապատ կենսապայմաններում: Վերաբնակիչները բախվում են էներգամատակարարման խնդրի, ջրի պակասի, դպրոցների, ճանապարհների շինարարության ոլորտում բազմաթիվ թերությունների հետ: Հանրապետության գյուղական դպրոցներում, հատկապես Վերաբնակեցվող տարածքներում հիմնախնդիր է ուսուցիչնազնագետների պակասը:

ԼՂՀ կառավարության 2001թ. մայիսի 4-ի թիվ 122 որոշմանը համաձայն Վերաբնակներին տրվում են նոր արտոնություններ³.

- անհատական տնով կամ բնակարանով ապահովում,
- միանվագ դրամական օգնության ցուցաբերում,
- <<-ից ԼՂՀ ճանապարհածախսի վճարում,

¹ «Ազգ», 18 ապրիլի, 2001:

² «Ազատ Արցախ», 28 մայիսի, 2002:

³ ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, 2001թ. մայիսի 4-ի որոշում, թիվ 122:

- ընտանիքի գույքի տեղափոխում կամ գույքի տեղափոխման դրամական փոխհատուցում (<<-ից 17<) երկարաժամկետ արտոնյալ բյուջետային վարկի տրամադրում՝ 260 հազար դրամի չափով,
- մշտական օգտագործման իրավունքով հողի հատկացում,
- 5 տարի ժամկետով բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից ազատում,
- նոր ընտանիք կազմած զորակոչային տարիքի անձանց ժամկետային գինվորական ծառայության երկու տարով հետաձգում,
- Վերաբնակիչների ընդգրկում վերաբնակեցման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքներում:

ԼՂՀ կառավարությանն առընթեր գործող միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչության խնդիրն է վերաբնակեցման ծրագրի իրականացմանը օժանդակելու համար ներգրավել համահայկական կառուցներին և հասարակական քաղաքական կազմակերպություն Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի գրավիչ պայմաններ, որպեսզի վերջիններս շահագրգուված լինեն ապրելու և արարելու այդտեղ: Դա առաջին հերթին վերաբերում է ինչպես բնակարանների կառուցմանը, այնպես էլ սոցիալական, արդյունաբերական օբյեկտների ստեղծմանը, բիզնես-ծրագրերի շահավետ պայմաններով վարկավորմանը:

Վերաբնակեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և տնտեսական որոշ դրական տեղաշարժերի արդյունքում Արցախում վերջին շրջանում արձանագրվեց բնակչության թվաքանակի աճ: Այսպես՝ 2002թ. բնակչության թվաքանակը կազմեց 145.0 հազար մարդ, այն դեպքում, եթե 1995թ. կազմում էր 126.4 հազար¹: Միևնույն ժամանակ նշենք, որ հանրապետությունում ցածր է բնակչության բնական հավելածը, չնայած կառավարության կողմից իրականացվող ծննդիության և բազմազավակության խթանման միջոցառումներին. դրան հակառակ նկատվում է մահացության դեպքերի շատացում: Այսպես՝ ծնվածների թիվը 2000թ. կազմել է 2222, 2001թ.՝ 2306, 2002թ.՝ 2190. մահացածներ՝ համապատասխանաբար՝ 1185, 1075, 1242²: Համեմատության համար նշենք, որ նախապատերազմյան 1000 բնակչի հաշվով 22.2 ծնվածի դիմաց, 2002թ.՝ նույն ցուցանիշը կազմում է 15.1:

Չնայած վերաբնակեցման քաղաքականության արդյունքում երպատերազմյան տարիներին Արցախում ներգաղթը գերազանցեց արտագաղթին, այդուհանդերձ վերջինս շարունակում է մնալ որպես

¹ ԼՂՀ վիճակագրական տարեգիրը 2000-2003, էջ 10:

² Նույն տեղում, էջ 12:

Աերքին ժողովրդագրական իրավիճակն ապակայունացնող գործոն, որի վերացման համար անհրաժեշտ է վերլուծել այն դրդապատճառները, որոնք մղում են արտագաղթի և այդ ուղղությամբ ձեռնարկել վճռորոշ քայլեր:

Այսպես, եթե 1990-1994թ.թ. արտագաղթը պայմանավորված էր գլխավորապես պատերազմական իրավիճակով և դրա ծանր հետևանքներով, ապա 90 ականների II կեսից արտագաղթի դրդապատճառները հիմնականում թելադրված էին սոցիալ-տնտեսական շարժառիթներով: Արտագաղթի որոշիչ դրդապատճառներ դարձան աշխատատեղերի բացակայությունը, սոցիալական լարվածությունը, բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը, մասնագիտական որակավորվածությանը համապատասխան աշխատանքի բացակայությունը, ձեռներեցությամբ գրադարձությունները, երկրի ներսում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը, քաղաքական անկայուն իրավիճակը կապված արցախյան հիմնահարցի հետ:

Ազգային վիճակագրական ծառայության հաղորդած տվյալների համաձայն՝ հանրապետությունից 2000թ. արտագաղթել է 709 մարդ, 2001թ.՝ 857 մարդ, 2002թ.՝ 1138 մարդ¹:

Վերոնշյալ երևույթները պահանջում են Արցախի վերաբնակեցման, արտագաղթի դրդապատճառների հետևողական վերացման քաղաքականություն, որն էլ իր հերթին ենթադրում է տնտեսական աճի խթանման, բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրագործում:

Արցախի զարգացման ու հզորացման հիմնախնդիրների լուծումը Ենթադրում է նրանում ժողովրդագրական իրավիճակի կսրուկ փոփոխություն՝ վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Հիմնավորված միջոցառումների շնորհիվ անհրաժեշտ և կարծում ենք միանգամայն հնարավոր է որպեսզի արդեն 2010թ. բնակչության թիվն հասցնել 250-300.000 մարդու: Վերաբնակեցումը այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի իրագործումը նշանակում է տնտեսության հզորացում, անրապնդում, ազգային համախմբվածություն: Արցախի բնակեցման, նրա տարածքի հարուստ բնական և գրոսաշրջության նպաստող աղբյուրների յուրացումը պետք է հանդիսանա աշխույժ պետական քաղաքականության առարկա

¹ ՀՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2004, էջ 25:

ինչպես ՀՀ, այնպես էլ ԱՐՀ իշխանությունների համար: Այն թերևս հնարավոր կլինի իրականացնել խնդիրների համալիր ծրագրման միջոցով: Այստեղ պետք է կարևորվեն պետության և տնտեսական և վարչական-կազմակերպական և քարոզչական հնարավորությունների նպատակային գործադրումը: Անհրաժեշտ է ստեղծել նյութական, բարոյահոգեբանական և կազմակերպական լուրջ նախադրյալներ Արցախում բնակչության թվակազմի կտրուկ ավելացման նպատակով:

Резюме

В статье исследуется демографическая ситуация в Нагорно-Карабахской Республике в 1991-2002 гг., которая сильно дестабилизировалась вследствие Арцахской войны и изменений социально-экономического характера. Главной стратегической задачей, разработанной правительством НКР в послевоенный период, стало заселение опустошенных районов республики и создание благоприятных условий для роста численности населения.

Summary

In this article is discussed the demographic situation in the NKR in 1991-2002, which was hardly destabilized by Artsax war and social-economic changes. The important strategic political problem of congestion, which was developed by the government of the NKR after the war, was the desolated regions of the republic and growth of population.

ԱՐՑԱԽԻ ՀԱՅԱԳԻՐ ԴՊՌՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Գրիշա Հարությունյան

Սամկավարժական գիտությունների դոկտոր
ԱրՊՀ

Պատմական Արցախի բազմադարյան հարուստ մշակութային ժառանգության անբաժանելի մաս կազմող դպրոցն ունի փառահեղ էջեր: Բոլոր

ժամանակներում էլ հայ ժողովրդի արևելյան հատվածի՝ Արցախի հայագիր դպրոցներում կրթությունը դիտվել է որպես ազգային ինքնուրույնության դրսնորման և գոյապահպաննան կարևորագույն գործոն:

Հայ դպրոցի պատմությունն ուսումնասիրողներին, պատմաբաններին, բանասերներին, հայագետներին, մանկավարժ-պատմաբաններին (Լեռ, Մ. Աբեղյան, Հ. Մանանյան, Ա. Աբրահամյան. Ալ. Երիցյան, Ար. Մովսիսյան և շատ ուրիշներ) հետաքրքրել է այն հարցը, թե գրերի գյուտից առաջ Հայաստանի արևելյան հատվածում՝ Արցախում ինչ տիպի դպրոցներ են գործել «մի գուցե և չեն գործել», ինչպես պնդում են խորհրդային շրջանում հայ դպրոցի պատմությունը ուսումնասիրողներից շատերը: Անշուշտ, ժամանակի քաղաքական բարդ իրավիճակում, երբ ամեն կերպ ձգտում էին խարարել ազգային համախմբման գործընթացը, որոշ մանկավարժ-պատմաբաններ, պատմաբաններ երբեմն շեղվում էին իրենց հետազոտություններում բացահայտել ճշմարտությունը և ներկայացնել հայագիր՝ այդ թվում Արցախի դպրոցի ամբողջական պատմությունը հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Հարկ է նշել, որ տողերիս հեղինակն իր աշխատությունում («Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում», «Լուս» իր., 1985թ.) նույնպես խուսափում էր ամբողջական ներկայացնել Արցախի դպրոցի հազարամյա պատմությունը: Վերստին ընդգծենք, որ տողերիս հեղինակը քննարկվող հիմնահարցի վերաբերյալ հրատարակել է աշխատություններ, մեթոդական ձեռնարկներ: Սակայն, մեր ուսումնասիրության նպատակն է նորահայտ արխիվային վավերագրերի տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մանուլում հրատարակված հոդվածների հիման վրա (ժամանակին հնարավոր չի եղել մեզ մոտ եղած փաստագրական տվյալները ամբողջացնել դպրոցի պատմությունը ընդհանրացնող աշխատությունում) գիտական տեղեկագրի շրջանակներում ընթերցողին ամբողջական պատկերացում տալ Արցախի դպրոցի զարգացման պատմաշրջանների մասին:

Երկարամյա մեր ուսումնասիրությունները գիտական անհերթելի տվյալներով հաստատում են այն իրողությունը, որ 4-րդ դարից սկսած՝ Արցախի կրթության գործի ուսումնասիրությունը ունի հաստատուն պատվանդան և հիմնված չէ կրահումների կամ ենթադրությունների վրա, այլ՝ մատենագրական և օտար աղբյուրների վկայությունների ու տվյալների վրա:

Համաձայն այս վկայությունների՝ 4-րդ դարից սկսած, Արցախում գործող դպրոցները եղել են հունական, ասորական, Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.)՝ պարսկական:

Այսպես, Հայաստանի ԳԱՍԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատողը աշխատության մեջ վկայելով¹ Անտուան ՄԵՅԵՒ աշխատության փաստերը, մատնանշում է, որ հունաբան հայերենի մեջ նկատելով Հայաստանի հյուսիսարևելյան շրջանին հասուլ քերականական մի քանի առանձնահատկություններ՝ ենթադրվում է, որ հունաբան դպրոցները գործել են Հայաստանի հյուսիսարևելյան կողմերում՝ Արցախում, Սյունիքում և Փայտակարանում: Պատմական այս իրողության օգտին խոսում են Հայաստանում և Արցախում գտնված հուշարձանները, հայ թագավորների և իշխանների անունով մնացած դրամները, ինչպես նաև հայ և օտար պատմիչների վկայությունները:

Ազարանգեղոսը՝ Գրիգոր Լուսավորչի կենսագիրն ու հայոց հավատի արմատավորման առաջին պատմիչը, նշում է, որ հայ գրերի գյուտից առաջ հայ սերունդը Մեծ Հայքի նահանգներում, այդ թվում՝ 10-րդ նահանգում՝ Արցախում գործող դպրոցներում սովորում էր հունարեն, ասորերեն, իսկ հետո՝ պարսկերեն²:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արցախում լուսավորական շարժումը ծավալվում է հատկապես, քրիստոնեության շրջանում: Գրիգոր Լուսավորչը շարունակելով հայության քրիստոնեացման անհետաձգելի գործը, որը սկսել է Եղիշե Երանելին Արցախի կենտրոնական մասում՝ Հաբանդ գավառում կառուցում է հայոց երկիր առաջին Եկեղեցիներից մեկը՝ պատմական Արցախի առաջին լուսավորության օջախը, ուր մինչև մեսրոպյան գրերի ստեղծումն ու հայեցի կրթություն տվող դպրոցի հիմնադրումը անընդմեջ գործել են օտարալեզու դպրոցներ: Այստեղից է սկսվում Արցախի դպրոցի բազմադարյան պատմությունը, որն ունեցավ իր հետագա զարգացման շրջանները:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենախոշոր իրադարձություններից մեկը (քրիստոնեության ընդունումից հետո) եղավ հայ գրերի ստեղծումն ու հայագիր դպրոցի հիմնադրումը: Հայ ժողովրդը

¹ Ա. Ն. Մուրադյան, Հունական դպրոցը և նրա դերը հայերենի քերականության տերմինարանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 76:

² Ազարանգեղոս, Պատմություն հայոց, Տիգրիս, 1909, էջ 437:

գիրն ու դպրոցը դարձրեց ազգապահպանման հզոր գենք, իր գոյության մաքառման անպարտելի դրոշ:

Ականավոր պատմագիր Մովսես Կաղանկատվացու հավաստի տվյալներով¹ մեծն Մաշտոցը հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի գործուն աջակցությամբ ծերնամուխ է լինում նորաստեղծ հայագիր դպրոցների ցանցի ընդայնմանը Արևելյան Հայաստանի նահանգներում, լինում է Արցախում, իհմնում հայեցի կրթություն տվող առաջին դպրոցը Հաբանդ գավառի Ամարաս վանքում: Առաջին ուսուցիչն էլ եղել է ինքը՝ Մաշտոցը: Իսկ սքանչելի Կորյունը ասում է. այնուհետև Մաշտոցը հայ գիրը գործածության մեջ է դրել նաև Արևմտյան Հայաստանում, ուր ապրում էր «մյուս կես ազգն հայոց»²:

Այսպիսով, Գրիգոր Լուսավորիչն ու Մեսրոպ Մաշտոցն իրենց գործունեության լուսավոր շղթայի մեջ են առել Ամարասը, որը դարձել է Արցախի կրթատունն ու հոգևոր ներշնչարանը: Այստեղից է սկսվել հայոց տառերի հոգեկրթիչ ու հայակրթիչ արշավը Հայոց Արևելից կողմանց բոլոր գավառներում:

Հետագա ժամանակներում հայոց Արցախական աշխարհի դպրոցական կյանքում զգալի տեղաշարժեր են կատարվում Արցախ-ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակներում: Անուրանալի են Բարեպաշտի ծերնարկուները՝ Հայոց Արևելից կողմանց գավառներում, հատկապես՝ դպրոցաշխնության ասպարեզում: Աղվեմի հայտնի Եկեղեցական ժողովում ընդունած կանոնի («Սահմանադրութիւն կանոնանակ», հայերեն հնագույն օրենքների ժողովածու, 21 կանոններից 18-րդը վերաբերում է կրթությանը) համաձայն՝ «Հայոց Արևելից կողմանց տերութեան առաջին օրենքն այն պետք է լինի, որ բոլոր մարդիկ սովորեն հայերեն գրելն ու կարդալը», ընդայնվում է դպրոցների, ինչպես արքան է ասում, կրթատների ցանցը: Անվանի պատմաբան Բ. Ուլուբարյանը իրավացիորեն նշում է³, որ Արցախյան հայաշխարհի այս ռազմաքաղաքական վարչական ժամանակաշրջանում վերելք է ունեցել լուսավորական գործը՝ Վաչագան Բարեպաշտի թագավորության շրջանում: 6-7-րդ դարերում, չնայած ճգնաժամային շրջանին, Արցախական հայաշխարհում շարունակվում են Վաչագան Բարեպաշտի

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, գլուխ 27, Թիֆլիս, 1913, էջ 26:

² Հ. Գրիգորյան, Գ. Հրությունյան. Արցախի դպրոցը հնագույն շրջանից մինչև մեր օրերը, «Զանգակ».

³ Բ. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 61:

լուսավորական ծեռնարկումները հոգևոր-մշակութային կյանքի վերափոխումների ոլորտներում: Բ. Ուլուբարյանը վկայում է, որ Երկրամասի ներքին կյանքում Իշխան Զիվանշիրը (գահակալել է 637-683թթ.) անշեղորեն հետևում է Վաչագան Բարեպաշտի օրինակին, ամրապնդում տնտեսական իրավական կարգը, կիրառում հայոց լուսավորչական հավատի սկզբունքները, Արցախի վանքերի եկեղեցիներին կից բացում դպրոցներ, որտեղ սովորում են բազմաթիվ հայ պատանիներ:

8-9-րդ դարերում՝ պատմական անբարենպաստ իրավիճակներում իրենց գոյությունը շարունակում են պահպանել Դադի, Ս. Հակոբ, Գտիշ Վանքերում գործող կրթօջախները: Ազգային մշակույթի, դպրոցի պահպանման ու բարգավաճման ոգին բարձր էր Արցախի ժողովրդի մոտ. ամենաօրհասական պահին անգամ նա չի կորցրել հոգու արիությունը և մտցի սլաքը:

Արցախական աշխարհում դպրոցական գործը լայն բարձր ստացավ հատկապես 10-12-րդ դարերում՝ հայկական վերածննդի դարաշրջանում: Վերածնունդն իր բարերար ազդեցությունն է թողնում նաև դպրոցի վրա: Սկզբում է ուսումնական հաստատությունների աստիճանական աշխարհականացում, որոշակի մերձեցում կյանքին, ուժեղանում է հետաքրքրությունը դեպի բնական և մաթեմատիկական գիտությունները, լեզուների ուսումնասիրությունը: Այդ բնագավառում անուրանալի են արցախցի ականավոր գիտնական, մանկավարժ Հովհաննես սարկավագ Ինաստասերի ծառայությունները: Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը «Հովհաննես սարկավագ Ինաստասերը» գրքում նշում է, որ հայ մանկավարժության պատմության մեջ սարկավագը բացառիկ դեմք էր, կրթական գործի բարենորոգիչ, նոր դպրոցի հիմնադիր, մանկավարժական մտքեր հղացող, Շիրակացուց հետո ամենախոշոր դեմքը բնագիտամաթեմատիկական գիտությունների ասպարեզում: Որպես ուսուցիչ, ուսուցչապետ աշխատել է Անիի, Հաղպատի, Արցախի թեմի դպրոցներում, բարեկավել ուսումնադաստիարակչական աշխատանքների գործը: Քննարկվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում, Արցախական աշխարհի դպրոցական կյանքում կատարվող դրական տեղաշարժերը, բարենորոգումները պայմանավորված էին համեմատաբար երկարատև խաղաղ ժամանակաշրջանով: Հայ դպրոցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, պատմագիտական աղբյուրներում հիշատակվում է

նաև, որ 5-12-րդ դարերում՝ ներառյալ 13-րդ դարի սկիզբը, արևելահայերի՝ պատմական Արցախի դպրոցական գործի վիճակը բավարար հիմքի վրա էր դրված՝ հայերի ազգային համախմբման շնորհիվ:

13-15-րդ դարերում պատմական Արցախն ընկնում է նոր նվաճողների՝ մոնղոլ-թաթարների, թուրքմենական վաչկատուն վայրագ ցեղերի ծանր լծի տակ: Թաղաքական այդ ծանր պայմաններում արցախահայերը կյանքի գնով պահպանել ու զարգացրել են իրենց դարավոր մշակույթը, այդ թվում նաև՝ իրենց դպրոցն ու կրթական մյուս հաստատությունները:

Այսպես, 12-13-րդ դարում Արցախում առաջանում են իշխանական մի շարք նոր տներ, որոնք մեծ դեր են խաղում երկրի պատմության մեջ:

Բ. Ուլուբարյանը, «Արցախի պատմություն», «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում», աշխատություններում վկայում է¹, որ այդ իշխանական տներից Արցախում հայտնի են երեք իշխանությունները՝ Ներքին Խաչեն, Միջնարցախ կամ Հաթերք և Վերին Խաչեն: Այս երեք իշխանություններում իրենց հայրենասիրությամբ ու սխրագործություններով, մշակութային, լուսավորական ազգանվեր ձեռնարկումներով հայտնի են եղել կին գործիչների Խորիշահը (Ներքին Խաչենի տեր Վախթանգ Տանգիկի կինը), Դոփին (Վերին Խաչենի կամ Ծարի տեր Հասանի կինը), Արզու Խաթունը (Միջնարցախի տեր Վախթանգի կինը):

Իշխանուիկի Խորիշահը ակտիվ կերպով նասնակցել է երկրի շինարարության զանազան մեջ ու փոքր կառուցումներին և խոշոր նշանակություն ունեցող բարեգործական ձեռնարկումներին: Նա զբաղվել է նաև երեխաների դաստիարակությամբ ու կորուրյամբ: Մատենադարանի մի ձեռագրում (թիվ 387, թիվ 308 ա. թ) նշված է, որ Վախթանգի և Խորիշահի կողմից գրվել է մի Ավետարան հիշատակարան, որտեղ խոսվում է այն մասին, որ Վախթանգն ու Խորիշահը կառուցել են Եկեղեցի, նրան կից բացել դպրոց:² Խոսքը Մեծառանք գավառի Եախսկոպոսանիստ Սուրբ Հակոբ վանքի մասին է, որ Խոխանաբերդի ճյուղի հոգևոր մշակութային կենտրոններից է եղել, Վարդան Հացունին «Հայուիկն պատմութեան առջև» (Վենետիկ, էջ 36, էջ 109) աշխատությունում գրում է, որ իր կյանքի վերջին տարիներին հիմնում է օրիորդաց դպրոց, սովորեցնում ձեռագործության արվեստը և այդ արհեստով էր ապրում տիկին Խորիշահը, որի մասին ասում են, թե «ինքը ձեռագործով իւրով կերակրէր»:

¹ Բ. Ուլուբարյան, նշվ. աշխատություն, էջ 62-63:

² Ս. Բարինուդարյան, Արցախ, 1895, էջ 171:

Խաչենի շնորհալի կանանց լուսավորական գործունեության մասին Վարդան Վարդապետ պատմիքը գրում է. Իշխանուի Դոկին մասնակցելով Ճարտարապետական կառույցներին՝ Հովհաննես Եպիսկոպոսի նախաձեռնությամբ հավաքում է ձեռագիր մատյանները, հիշատակարանները, Եկեղեցական գրքերն ու ավետարանները և Վաղուհասից արևմուտք գտնվող Խորա վանքի (1204թ.) համալիրում հիմնում մատենադարան, վանքին կից բացում են նաև դպրոց:

Որպես ուսուցչուհի-ուսուցչապետ հայտնի էր տիկին Արզու Խաթունն իր հիմնած դպրոցներով, լուսավորական բարենորոգումներով: Կիրակոս Գանձակեցի պատմիքը գրում է «Նա ուներ նկարակերտութեան ու ոստայնանկութեան հանձար, տաղանդաւոր արուեստագիտուհուն տեսնում ենք վարագույրներ հրաշակերտելիս հրաշակերտուհիների հետ, որոնք ինքը կրթել, դաստիարակել է...»¹:

Հետագայում հայրենասեր կանանց լուսավորական գործունեությունը շարունակել է նաև Խաչենի Մամքանի դրուստր Մամախաթունը:

Այդ ժամանակաշրջանում արցախից կանանց համար հանրային համակարգի կրթության բացակայության դեպքում անջատ ու երկսեռ դպրոցներ չունենալու, կյանքի բազմաթիվ բնագավառներում իրենց դրսնորելու համար պարտական են տնային կրթությանը. տնային դպրոցները հայոց կրթության համակարգում մեծ դեր են խաղացել և երբեմն էլ՝ նույնիսկ երկար ժամանակ, փոխարինել են հասարակական ու պետական դպրոցներին: Նույնիսկ՝ երբ Հայաստանի, Արցախի ամենածանր պայմաններում քայլայվում էին դպրոցները, երբ երկիրը հեծում էր նվաճողների ծանր լծի տակ, աճում էին «մանր դպրոցները»² և «իմաստնոց տները»:

Հավաստի աղբյուրների համաձայն՝ 13-րդ դարում մշակութային, շինարարական լուսավորական գործը վերելք է ապրում Հասան Զալայանի (Վախթանգ Տանգիկի ավագ որդու) իշխանության ժամանակաշրջանում: Գանձակը դարձավ Արցախական աշխարհի ազատագրական շարժումների, գրական շարժումների, հոգևոր-մշակութային և լուսավորության խոշոր կենտրոն: Հայտնի էր իր դպրատներով, կրթօջախներով, հարուստ մատենադարանով, որի

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, 1858, էջ 202:

² Ա. Բ. Սովորով, «Ուրվագծեր հայ դպրոցի և մամկանադարության պատմության», Երևան, 1958, էջ 72-74:

ձեռագրերից շատերն այսօր պահպանվում են << Ազգային մատենադարանում:

Արցախի քաղաքական կյանքի ծանր կացությունը հարատևել է մինչև 18-րդ դարի վերջը: Անբարենպաստ պայմաններ էին ստեղծվել, հատկապես, թուրք-պարսկական տեսական նվաճողական պատերազմների շրջանում: Կրթական գործը, մշակութային, հասարակական մտքի հետագա զարգացումը լուրջ վտանգ էր ապրում, ժողովուրդը գրկված էր տնտեսական և մշակութային զարգացման նվազագույն հնարավորությունից: Նման իրադրության մեջ ահա Արցախի կրթական օջախները կենաց ու մահու գոտենարտում մաքառում էին և պահում իրենց կենսահաստատությունը մինչև 19-րդ դարը:

Պատմական այդ ծանր ժամանակաշրջանում, Ռուսաստանին միանալուց հետո, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Երկրամասի տնտեսության, մշակույթի, դպրոցական կյանքի զարգացման համար: 19-րդ դարի առաջին կեսին, ինչպես բնութագրում է Մ. Սամթրոսյանը, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատությունում¹, համարվում է արևելահայ, այդ թվում՝ Արցախի նոր դպրոցի կազմավորման շրջան: Գնալով ընդլայնվում է նոր տիպի դպրոցների ցանցը: Արխիվային տվյալները վկայում են² (ՀԱԱ, թ. 9, գ. 19, գ. 56, գ. 78), որ 1800-1820թթ. դպրոցներ են բացվում Գանձասարում, Երից Մանկանց վանքում, Նուխիի հայկական թեմում: 1821թ. Մ. Թաղիառյանը Եփրեմ կաթողիկոսի հետ այցելելով Շուշի, բացում է մասնավոր դպրոց, իսկ ժամանակի հայտնի լուսավորիչ Հովսեփ Արցախեցին դպրոց է բացում Մ. Հակոբ վանքում և Դադիվանքում: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ 1827թ. Արցախի դպրոցական կյանքում սկսվում է մի նոր տեղաշարժ. Շվեյցարիայի Բագել քաղաքի միսիոներները գալով Շուշի՝ հիմնում են ուսումնարան սկիզբ դնում տպագրական գործին:

Նրանց ուսումնարանում սովորում է 130 աշակերտ, դասավանդում՝ 5-6 ուսուցիչ: Արցախի դպրոցի պատմության մեջ 5-19-րդ դարի սկիզբը այս ուսումնարանը առաջին բարձր տիպի դպրոցն է իր աշակերտական կազմով՝ ու բարձրորակ ուսուցիչներով՝ Հովսեփ Արցախեցին,

¹ Մ. Սամթրոսյան, «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին»:

² ՀՊԱ, կար. դիվ., ֆ 78, թ. 9:

համբավավոր գիտնական մանկավարժ Պողոս վարդապետ Ղարաբաղցին և ուրիշներ:

Արցախի դպրոցական համակարգում որոշակի փոփոխություն է կատարվում, հատկապես 1836թ. մարտի 11-ին կառավարության կողմից հայկական դպրոցների վերաբերյալ առաջին պաշտոնական կանոնադրության ընդունումից հետո (պատմության մեջ հայտնի «Պոլոտենիե» անվամբ): Այդ կանոնադրության համաձայն՝ Արցախի հոգևոր-մշակութային կենտրոն Շուշի քաղաքում 1838թ. հունիսի 22-ին բացվում է Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը՝ Արցախի բարձրագույն կրթության առաջնեկը, իհարկե, ժամանակի առումով։ Բացի թեմական դպրոցից, Շուշի քաղաքում գործում էր 1830 թվականից բացված ռուսական տիպի գավառային ուսումնարանը, 1837թ. Բաղդասար Միտրոպոլիտ Հասան Զալայյանի հիմնած հոգևոր ուսումնարանը։ Ալ. Երիցյանի «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի» աշխատությունում մատնանշում է, որ 19-րդ դարի առաջին կեսին Արցախի թեմում գործել են 20-ից ավելի հայկական դպրոցներ, իսկ Նույի գավառում (այն ժամանակ Նույին մտնում էր Արցախի թեմի մեջ՝ 18 կրթական օջախներ։

19-րդ դարի 2-րդ կեսին արևելահայ հատվածում սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթացը շոշափում էր նաև հոգևոր կյանքի ոլորտը։ Նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաև ժողովրդական լուսավորության ասպարեզում։ Արցախի ժողովուրդը ևս մոտիկից հաղորդկացվում է արևելահայ հատվածում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին։

Արցախի դպրոցի պատմության զարգացման այս շրջանում ասպարեզ են մտնում Ռուսաստանում և Եվրոպյան մանկավարժություն առաջ պրակտիկ մանկավարժներ Պ. Շանշանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Ս. Մանոհինյանը, Խ. Ստեփանյանը, Ն. Տեր Ղևոնյանը, Լևոն Սարգսյանը, Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց հարուստ փորձով թարմություն նտցրին Արցախի դպրոցի ներքին կյանքու¹։

Ուշագրավ է հատկապես Պետրոս Շանշանի, Պերճ Պռոշյանի, Մարիամ Հախումյանի գործունեությունը Շուշիի բարեկարգ օրիորդաց դպրոցի հիմնադրման գործում (1864թ.): Ի դեպ, նշենք, որ դարի երկրորդ

¹ Գ. Հարությունյան, Արցախի դպրոցը 5-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը, 2002թ., էջ 146։

կեսին Ղարաբաղի առաջին օրիորդաց դպրոցը հիմնել է տիկին Եղիսաբեթ Սարգսյանցը՝ 1867թ., Շուշիում, որի շրջանավարտներից էր Արցախի հայտնի լուսավորիչ մանկավարժ, գեղանկարչուիի Մարգարիտ Ալեքսանյանը (1838-1902):

Պաշտոնական տվյալների համաձայն՝ Արցախի կրթական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում Շուշիի ռեալական ուսումնարանը (1887թ.), որն իր 40-ամյա գոյության տարիներին սերտ կապերով կապված էր թեմական և օրիորդաց դպրոցների, ինչպես նաև հայ լուսավորչական մյուս թեմերի (Երևանի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Բաքվի (Շամախի-Դերբենդի) ուսումնական հաստատությունների, Մոսկվայի Լազարյան Ճեմարանի հետ: Ինչպես թեմական դպրոցը, այնպես էլ Շուշիի ռեալական ուսումնարանը կարևոր դեր խաղացին արցախահայ ժողովորդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացման, մատադ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Արցախահայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակահատվածում թեմի հայկական դպրոցների հիմնական տիպերն էին՝ ծխական, հոգևոր, եկեղեցական-ծխական, իգական, թեմական դպրոցները և ռեալական ռուսական տիպի ուսումնարանը:

Ժողովրդին լուսավորելու ձգտումը ստիպեց հայ գործիչներին՝ աստիճանաբար դպրոցները մոտեցնել այն վայրերին, ուր ապրում էր ժողովրդի հիմնական զանգվածը: Շուշիում իրատարակված «Հայկական աշխարհ», «Քնար Խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես» պարբերականներում լուս տեսած բազմաթիվ հոդվածներից և այլ նյութերից տեղեկանում ենք, որ գնալով ակտիվանում էր ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների (միդասյան, Երկրագույն, Երկմեռ) ստեղծման ուղղությամբ: Եվ պետք է ասել, որ ցարիզմի լուսավորական-դպրոցական հետադիմական քաղաքականության անբարենպաստ պայմաններում (որի ազդեցությամբ 1896-1905թ. փակվել են հայկական դպրոցները) անգամ Արցախի թեմում կառավարությունից գաղտնի գործել են հայկական դպրոցները:

1906-1907 ուսումնական տարում Արցախի թեմում գործում են 60-ից ավելի միդասյան, Երկրագույն դպրոցներ: Արցախի դպրոցների ընդհանուր վիճակի, փոփոխվող ուսումնական պլանների, ծրագրերի ու դասագրքերի և դպրոցի ներքին կյանքին առնչվող այլ հարցերի մասին պարբերաբար հաղորդումներ է տալիս 1910թ. Շուշիում Մելքոն Բաբա-

ջանյանի տպարանում հրատարակված «Ղարաբաղ» թերթը: Դպրոցական կյանքում զգալի տեղաշարժ է կատարվում հատկապես Առաքել Արաքեյանի տեսչության (1911-1913թթ.) շրջանում. բարելավվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործը, դպրոցներն ապահովվում են բարձրորակ ուսուցական կադրերով: Այդ շրջանում Արցախի դպրոցական գործի բարելավման ուղղությամբ հսկայական աշխատանք են տանում հայրենասեր գործիչներ Լևոն Վարդունին, Աշոտ Հովհաննիսյանը, Ալ. Ծատուրյանը, Լ. Աթարելյանը, Գր. Ներսիսյանը, Ս. Տեր Մինասյանը և շատ ուրիշներ:

Չնայած ազգային ճնշման քաղաքականությունը այս կամ այն չափով արգելակում է ժողովրդական կրթության առաջընթացը, այնուհանդերձ, որոշակիորեն կարգավորվում է դպրոցական գործը և պահպանում իր գոյությունը մինչև խորհրդային շրջանը: Իսկ ժողովրդական ուսուցիչները մեծ մաքառումներով ու անձնվիրաբար շարունակել են կրթել ու դաստիարակել հայ մանուկներին:

Խորհրդային իշխանության տարիներին Արցախի ժողովուրդը հայտնվեց նոր փորձությունների ոլորտում: 70 տարիների ընթացքում արցախահայերը զրկված լինելով անկախությունից, ազատ մտածելակերպից, ենթարկվելով ազգահալած ստորացուցիչ քաղաքականությանը՝ երբեք չեն կորցրել հավատն ու հույսը լուսավոր ապագայի նկատմամբ, նրա առաջադեմ մտավորականությունը հայ սերնդին ավանդել է անգամ այդ պայմաններում աչքի լուսի պես պահպանել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները՝ հանուն ազգային գոյատևման ու անկախության, որին նա խորապես ու սրբությամբ հավատացել է:

Անժմանելի է, որ խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կրթության զարգացման ասպարեզում շոշափելի նվազումներ ենք ունեցել: Անհամեմատ (նախախորհրդային շրջանի) մշակույթի, գիտության, արվեստի, դպրոցի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել և ոչ միայն Աղրբեջանի իշխանությունների, այսպես կոչված, «կեղծ մտահոգության», այլև մայր Հայաստանի անգնահատելի օգնության, Արցախի ազատատենչ ժողովրդի, նրա անձնագրի մտավորականության (որոնցից շատ-շատերին

արտաքսել են իրենց բնիկ երկրամասից) համար ջանքերի ու սխրագործությունների շնորհիվ, ինչը այսօր անտեսել մենք չենք կարող:

Խորհրդային իշխանության եռամյա օրենսդրական նվազումները մի ակտով տարածվում են Հայաստանի (1920թ. նոյեմբեր), Ադրբեյջանի լուսժողկոմատների վրա (1920թ. ապրիլ):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության հաստատումից հետո (բռնակցում Ադրբեյջանին, 7-ին հունիսի, 1920), օրենսդրական ուժ են ստանում Ադրբեյջանի կենտրոնական մասին դեկրետները և պարտադիր կերպով իրականացվում էր ԼՂ նորաստեղծ լուսժողկոմատի կողմից, մասամբ իրականացվում էր միայն Հայաստանի լուսժողկոմի որոշումը՝ ուսուցումը մայրենի լեզվով տանելու վերաբերյալ, այն էլ՝ մեծ դժվարություններով:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1923թ. օգոստոսի 1-ից ԼՂ կուստողկոմը դեկավարում է Շուշիի ռեալական ուսումնարանի շրջանավարտ, ականավոր քաղաքական գործիչ, մանկավարժ Արշավիր Քամայանը, իսկ նրա տեղակալն էր Առաքել Առաքելյանը (ԼՂՀ արխիվ, թիվ 10, գ. 1, թիվ 5, ցավոք, այժմ այդ արխիվը չկա, վառվել է, այդ և այլ տվյալներ վերցվել են մինչև 88-ի Շարժումը):

Հենվելով Հայաստանի կրթական համակարգում ծեռք բերած եռամյա փորձի վրա (1920-1923թթ.) ԼՂ լուսժողկոմը իրապարակում է որոշումներ, որտեղ շարադրված էին ժողկրթության բնագավառում ինքնավար մարզի հեղկոմի հիմնական սկզբունքներն ու խնդիրները: Սկզբնական շրջանում մարզում ստեղծվում է աշխատանքային միասնական 9-ամյա դպրոց՝ Երկու աստիճանով. «Ա» աստիճան՝ 1-4-րդ դասարան, «Բ» աստիճան՝ 5-9-րդ, որի բազայի վրա գործում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ Շուշիի մանկավարժական ուսումնարան (1921-1922 ուստարում), Ստեփանակերտի գյուղտեխնիկում (1923թ.), Երաժշտական ուսումնարան, որ բացել է ականավոր Երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը՝ 1923թ. հոկտեմբերին (ցավալի է, որ վերջին տարիներին մեր մարզում նշվում է, իբր, Երաժշտական ուսումնարանը գործել է 1961 թվականից): Արխիվային տվյալների համաձայն՝ 1923-1924 ուստարում մարզում գործում էին 79 առաջին և 3 երկրորդ աստիճանի դպրոցներ: Առաջին աստիճանի դպրոցներն ունեին նաև, այսպես կոչված,

մանկապարտեզային կամ «գրագիտական» խմբեր, որոնք փաստորեն նախապատրաստական դասարաններ էին: Առաքել Առաքեյանի (լուս-ժողկոմիսար 1925-1927թթ.) բեղմնավոր գործունեության շրջանում Լեռ-նային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 134-ի, որտեղ սովորում է 7940 աշակերտ, դասավանդում՝ 212 ուսուցիչ: 1926թ. Ստելիանակերտ հրավիրված՝ մարզի ուսուցիչների 3-րդ համագումարում տված իր գեկուցման մեջ Առ. Առաքեյանը շեշտակիորեն նշում է, որ շոշափելի են մարզի լուսավորության բնագավառում ձեռք բերած նվաճումները, արդեն գործում էին 13 առաջին աստիճանի, 6 երկրորդ աստիճանի դպրոցներ, 3 տեխնիկում, կուսակցական դպրոց (հիմնադրվել է 1923թ.), մեկ նկարչական ստուդիա: Մարզում ծավալուն աշխատանք է տարվուն անգրագիտության վերացման ուղղությամբ: Լուսժողկոմին կից ստեղծվում է «Անգրագիտության վերացման օժանդակ ընկերություն», որի նախագահն էր ականավոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էղիլյանը, որը ղեկավարում էր նաև ԼՂՀ սոցդասվարչությունը: Շատ ուսուցիչներ բնակչության անգրագիտությունը վերացնելու գործում իրենց հասանելիք աշխատավարձը նվիրում էին անգրագիտության վերացման ֆոնդին. նկատի ունենք Ս. Օհանյանին (գ. Վաղուհաս), Ս. Օհանյանին (գ. Կոճողոս), Գ. Չինգարյանին (գ. Շուշիքենդ), Պ. Մուսայելյանին, Թամար Օհանյանին (գ. Սոս) և շատ ուրիշների: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը 1929թ. նոյեմբերի համարներից մեկում գրել է. «Ուսուցիչները հանդես են գալիս ոչ միայն որպես խմբակների դասատուներ, այլև անգրագիտության վերացման կազմակերպիչներ»:¹

1930-ական թվականներին ԼՂ հանրակրթական դպրոցներում արմատականորեն վերակառուցվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգը. իրականացվում է պարտադիր տարրական կրթությունը, ստեղծվում է միասնական դպրոցական համակարգ երեք աստիճանով՝ տարրական դպրոց՝ 1-4-րդ, ոչ լրիվ՝ 5-7, լրիվ՝ 8-10-րդ դասարաններ, մանկավարժական նոր որոնումների շնորհիվ կատարելագործվում են կրթության բովանդակությունը, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերն ու մեթոդները: Այդ շրջանում հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական ուսումնական

¹ Խորհրդային Ղարաբաղ, 1929, 21 նոյեմբերի:

հաստատությունների համակարգում համալրվում է նորովի՝ իր տեսակի մեջ մարզում առաջին բժշկական ուսումնարանը և բարձրագույն ուսումնական հաստատությունը Շուշիի, իսկ հետո՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը (1939-1953թթ.), որն իր 13-ամյա գոյության տարիներին Արցախի դպրոցներն ապահովել է բարձրագույն կրթություն ունեցող ուսուցչական կադրերով։ Ի դեպ, նշենք, որ այդ ուսումնական հաստատության հիմնադրման նախաձեռնողներն եղել են Լեռնային Ղարաբաղի լուսժողկոմներ Արտո Վարդանյանը, Հայկ Բալայանը (հրապարակախոս Զորի Բալայանի հայրը), Գրիգոր Բաղյանը, Արտեն Խաչատրյանը, Կարո Ղավթյանը և շատ ուրիշ հայենաներ գործիչներ։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1938-1939 ուսումնական տարում մարզում գործում էր 193 դպրոց, որտեղ սովորում էին 28000 աշակերտներ, դասավանդում՝ 1690 ուսուցիչ (ԼՂ լուսբաժնի արխիվ, թ. ՀՕ, ց. 1, գ. 95, թ. 9):

Վերը համառոտակի շարադրանքց ակնհայտ է դաշնում, որ իր բազմադարյան պատմության ընթացքում Արցախի հայագիր դպրոցը զարգացել է դպրոցի ու մանկավարժության ասպարեզի մշակույթի բնագավառի գործիչների անուրանալի ծառայությունների շնորհիվ։

Резюме

В статье на основе анализа архивных данных и статей историко – педагогического содержания, опубликованных в периодической печати кратко представлены основные этапы развития армянской школы Арцаха. Автор по-новому освещает документальные данные касающиеся анализируемой проблемы.

Summary

The article, based on the analysis of the historical data and articles with historical - pedagogical maintenance published in the periodical press, summarizes the main stages in the development of Artsakh Armenian school. The author newly highlights the documentary data concerning the problem being analyzed.

ՀԱՅ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՅԻՆ ԻԴԵԱԼԱԿԱՆ ԱՅՋՈՒ ԵՎ ՆՐԱ ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համլետ Պետրոսյան

Պատմական գիտությունների դրվագություն

ԵՊՀ

Երկինք միսրձվող ձյունածածկ լեռնազագաբ և հովտում աճող խաղողի այգի - ահա բնության և մշակույթի այն երկու խտացումները, որոնք դարեր շարունակ ուղեկցել են հայերին և կազմավորել նրանց աշխարհն ու կենսընթացը նկարագրող հիմնական համակարգերը: Այգեգործության և, մասնավորապես խաղողագործության հնագույն այս երկրում, ուր խաղողի մշակութայնացման առաջին քայլերը հայտնի են մ.թ.ա. 5-րդ հազ. սկսած, հովտային և նախալեռնային բնակավայրերի պեղումները երևան են բերել այգիներում, տներին, պալատներին և տաճարներին կից կառուցված հնածանների և գինու մառանների տասնյակ շենքեր: Հին վիմագրերը, մատյանները, քանդակներն ու մանրանկարները լի են այգիների մասին հիշատակություններով, նկարագրություններով, պատկերներով: Նրանք մեր առջև բացում են ավանդական երկրագործ հանրույթի աշխարհը, ուր այգին միայն պտղատու ծառերի ամբողջություն չէ, ուր խաղողը սոսկ քաղցր պտուղ տվող տնկի չէ և ոչ էլ գինին՝ ուրախ ժամանցի միջոց:

Խաղողը տարբերվում էր բոլոր այլ պտուղներից նրանով, որ նրանից ստացվում էր գինի¹, որը արյան հետ ունեցած իր արտաքին նմանությամբ և օրգանիզմի վրա թողած ազդեցության շնորհիվ միֆապոետիկ մտածողության մեջ հեշտությամբ կարող էր գրադարձնել նրա տեղը: Ավելին, այն նույնացվում էր աստվածային արյան հետ և ծեռք բերում նահը հաղթահարելու, անմահություն պարզեցնելու սրբազնա ֆունկցիա: Ուստի, «անմահության հեղուկ» տվող «կենաց ծառի» տնկումը, աճեցումը և պահպանությունը նույնպես ստանում էին սրբազն գործունեության իմաստ: Դեռևս ուրարտական արքաները գահ բարձրանալով հոգ էին տանում իրենց անունով այգի տնկելու մասին՝ այս գործը պակաս կարևոր չհամարելով ռազմական սխրանքներից և

¹ Իվանով Բ. Բ. Սինո.- Ե հիմ.: Միքայ նարում միքայ, Մ., 1991, Յ. 1, թ. 236. Այս առումով խաղողի հետ համեմատելի էր միայն նույզը, որը հորիմվածքներում համրեն է զայիս խաղողի հետ միասին կամ հեշտությամբ փոխարինում կրամ: <Այլական հեքիաթներում, էպոսում և պոեզիայում նոյնիսկ ընգծվում է նրան գինու առաջնությունը՝ հատկապես յոթ տարվա, որը շնչում է նրա սրբազնա-մողական բնույթը:

տաճարների կառուցումից: «Իշպուինի Սարդուրորդին և Մինուա Իշպուինորդին նոր խաղողուտ իհմնեցին... հաստատեցին կարգ. Երբ խաղողի ծառերը էտվեն, Խալդի աստծուն 3 խոյ թող զոհաբերեն, 3 խոյ՝ բոլոր աստվածներին, երբ խաղողուտը կառուցվի (Վագերը բարձրացվեն հենակների վրա՝ Խալդի աստծուն 3 խոյ թող զոհաբերվի, 3 խոյ՝ բոլոր աստվածներին), - կարդում ենք Իշպուինի և Մինուա արքաների մի հայտնի արձանագրության մեջ¹: «...Չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ ու պտղատու այգի տնկեցի, սխրանքներ այնտեղ կատարեցի», - այսպես է ներկայացնում իր գործունեության դրվագներից մեկը Արարատյան դաշտում Ուրարտուի արքա Արգիշտի Առաջինը²:

Հայ պատմիչների հաղորդմամբ առասպելական Շամիրամն Արայի մահից հետո (այսինքն, երբ ստանձնում է հայոց «արքայի» դերը) Վանա լճի մոտ քաղաք է հիմնում «և բազումս բազմաբերս և գիներերս ի նմա տնկեաց հովիտս»³, Երվանդ արքան զահ բարձրանալուն պես հիմնում է «ծննդոց անտառը»⁴, Խոսրով արքան հիմնում է իր անվամբ հայտնի անտառը, որը Փավստոս Բուզանդը ուղղակի անվանում է «տաճար մայրի»՝ շեշտելով նրա սրբազն բնույթը⁵: Փաստորեն արքայի տնկած այգին այն մոդելն էր, «քաղաքական»⁶ այն «ծրագիրը», որին պիտի հետևեին ինքը արքան, նախարարն ու հոգևորականը, երկրագործն ու վարպետը: Պա-

¹ Հնայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 11-12, 97: Փաստորեն արքական այգու ամբ բոլոր կարևոր փուերը պիտի նշվեին հասուն զոհաբերություններով: Ավելին, թվում է, թե այս այգին նաև մի յուրօրինակ «սոռնացոց» էր և համապետական տոնների ժամանակը սահմանվում էր ըստ նրանում ընթացող փոխդությունների (Տե՛ս Հնայակյան Ս., Նշվ.աշխ. էջ 76-78):

² ԾՈՂՈՅՑՐՈՒԹՎԱԿ ՍԱՐՎԱՐՈՒՅՑՎՈՅ ՎՐՈՊՈՂՐՈՇ, Ծ., 1960, ր.263.

³ Սովորի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տիգիս, 1913, էջ 53.

⁴ Սոյն տեղում, էջ 166: «Ծննդոց» է կոչվում Աւալպանձմին առաջին գիրքը, ուր նկարագրվում է Արարի կողմից աշխարհ-տիեզերքի ստեղծումը: Ութեան արքայի ստեղծածն էլ պատկերացվում էր որպես նման մի կառուց, այլ ոչ թե մի սովորական անտառ:

⁵ Փաստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, էջ 18:

⁶ «Քաղաքականութիւն» բառը միջին դարերում ուներ համարյա նոյն իմաստը, ինչ մեր օրերում և նշանակում էր երկրի բարգավաճմանը, բարեկարգմանն ուղղած գործունեություն (մանրանասն տես Ավդաբեկյան Թ., Զվարդնոցի հարցի շուրջը - Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 158): Մենք արդեն նշեցինք, որ Զվարդնոցի տաճարը շնորհիվ իր բուսաբանդակ գոտիների ներկայանում է որպես երկնային այգու մի մոդել: Ուշագրավ է, որ Զվարդնոցի տաճարի հարևանությամբ պայմանական համալիրի կառուցումից հետո Ներսեն Շինարար կաթողիկոսը «կարգեա կացուցաներ ի նմա ամբոխութիւնն երդումարդաց ըստ պայմանի քաղաքանաց». և ածեալ ծուր ի թասադ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանն ծաղկոցաց» (Յովհաննու Դրասխանակերտուցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 118) այսինքն՝ բնակեցնում է այնտեղ բազմաթիվ ընտանիքներ, տնկում է այգիներ ու ծաղկանոցներ, ինչպես և պահանջում է քաղաքականությունը: Եվ հատկանշական է, որ տաճարին կից պալատական համալիրի կարևոր բաժանմունքներից մեկն էլ հնածանահարկն է՝ խաղողը ճգմելու ընդարձակ հարթակներով և գինու մեծածավալ հորեղով:

տահական չէ, որ երկրի խաղաղ և ապահով վիճակը պատկերվում էր որպես մշակված այգի: Ահա թե ինչպես են նկարագրում Աշոտ Ա և Սմբատ Ա Բագրատունի թագավորների կառավարման խաղաղ տարիները ժամանակի պատմիչները. «Իսկ աշխարհիս Հայաստանեաց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն... տնկեցին այգին և արմատացուցին բուրաստանս ծիթենեաց և պարտիզաց, հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կրեցին պտուլս հարիւրաւորս, գեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց, լցան գութք գինոյ ի կութս այգեստանեաց»¹: «Յաւուրս սորա և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարեկութեանն՝ հանգել իւրաքանչիւր ուրութք ընդ որթով իւրով և ընդ թգենեաւ»²: Իսկ Արիստակես Լաստիվերտցին «այգային» լեզվով է նկարագրում երկրի թե՛ բարեկեցիկ, և թե՛ ողբերգական կացությունը: Ըստ նրա՝ բյուզանդական նվազման ժամանակ Հայաստանում «ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ բարեբանութիւն առ կոխօսս հնձանի»³: Եվ ի հակադրություն դրա՝ Բագրատունիների ժամանակ Հայոց աշխարհը նման էր արքայի առաջ փուլված տնկախիտ, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ այգու՝ «Աշխարհ՝ որ երենմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւրացն ցուցանիւր...»⁴: Այդի-աշխարհի այս իդեալն է ձգտում պատկերել և վարպետը, և դրա լավագույն արտահայտությունն է Վանա լճի Աղթամար կղզում 10-րդ դ. Գագիկ Արծրունի արքայի հրամանով Մանվել Ճարտարապետի կառուցված Սուրբ Խաչ տաճարի «որթագալարի գոտին» (նկ. 1): Գյուղական կյանքի ռեալիստական պատկերներն այստեղ ոչ միայն համադրվում են առասպելական-սիմվոլիկ դրվագների հետ, այլև ընտրված են այնպես, որ ներկայացնում են ոչ թե ռեալ այգին և այգեգործական ցիկլը, այլ իդեալական աշխարհն ու կենսընթացը: Այդ այգին, ինչպես որ ցանկացած տիեզերական նոդելի դեպքում է, ներկայացված է հասուն պահին, համանասն կրկնվող, սկզբունքորեն չընդիհատվող կամարաձև որթն ինքն է կազմակերպում աշխարհը, ինքն է նրա կենաց ծառը, ինքն է լցոնում ողջ տիեզերքը ողկույզներով: Այն նաև

¹ Դրամիսանակերտցի, էջ 198-199:

² Ստեփանոսի Տարօնեցոյ Ալողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերովոց, 1885, էջ 161:

³ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, Երևան, 1963, էջ 58:

⁴ Նոյն տեղում:

անձնավորված է և սովորաբար ներկայանում է վազի բնում ապրող մորուքավոր ծերունու տեսքով: Ողջ գոտում միայն մի կառուց է պատկերված և դա հնձանն է՝ այգու «դիմամիկ» կենտրոնը, ուր կենաց ծառի պտուղը վեր է ածվում կենաց հեղուկի (նկ. 2): Այգին բաց է յուրայինների համար. թշունների ու կենդանիների մեծ մասն այստեղ ապրում է ազատ և անհոգ, ծերունիները հանգստանում են «որթի շվաքում», մի երիտասարդ բերում է մատաղացու գառը, ուրիշ երկուսը կոխի են բռնվել, քահանան աղոթք է մրմնջում: Բայց անողոք պայքար է մղվում թշնամու դեմ, որի բացարձակ սիմվոլը արջն է՝ պատկերված յոթ անգամ, որից հինգ դեպքում մարդու հետ արյունահեղ կրվի մտած¹: Գոտին արևելքուն ավարտվում է բերքի համտեսման և գինու ընպնան տեսարանով, ուր պատկերված է Գագիկ արքան իր երկու մերձավորների հետ (նկ. 3)՝ գոտու ողջ տրամաբանությունից բխող նույն պարզությամբ: Նրա առջև նույնիսկ մատուցարան չկա, նրա հագուստն ի տարբերություն տաճարի արևմտյան ճակատին պատկերված «պաշտոնական» հագուստի, բավականին համեստ է, փոխված է նույնիսկ փառահեղ թագը: Արքան որպես «բարի այգեպան» նստել է ոչ թե պալատում՝ զահի վրա, այլ այգում՝ «որթի և նօնենու տակ»: Նա աջով բռնել է «կենաց քաժակը», իսկ ծախսվ խաղող է պոկում «կենաց ծարից»: Երկու մերձավորներն ել աջից և ծախսից նրան մատուցում և ցուցադրում են այգու պտուղները: Արքայի առջև փոփած է նրա աշխարհը, նրա քաղաքականության արդյունքը՝ «տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ մի դրախտ»:

Աշխարհի և կյանքի «այգային» ընկալումը հատուկ վերաբերմունք էր ցուցաբերում նաև դեպի Սուրբքրքային այն առասպելները, կերպարներն ու նկարագրությունները, որոնք այս կամ այն չափով կապ ունեին այգու հետ: Դա նախ վերաբերում էր Եղեմի դրախտին (Ծննդ., Բ, 8-15) և Նոյի տնկած այգուն (Ծննդ., Թ, 20, 21), որոնք տեղայնացման մեծ հնարավորություն ունեին մի երկրում, ուր ավանդական ռռոգովի այգեգործությունը տնտեսա-մշակութային մեծ արժեք ուներ, և որտեղից սկիզբ էին առնում դրախտային Եփրատն ու Տիգրիսը: Այս առումով հատկապես առանձնացվում էր Արարատյան դաշտը՝ Մեծ Հայքի հայտնի երկրագործական, քաղաքական և մշակութային կենտրոնը: Օրինակ, 5-րդ դ. պատ-

¹ Ուշագրավ է, որ ըստ հայկական մի ավանդության աշխարհի առաջին այգեպանը՝ մեղք գործելով՝ վերածվում է արջի՝ դարնալով արքայի և Թրիստոսի թշնամին (Տե՛ս Ղանաղանյան Ա., Ականդապատում, Երևան, 1969, էջ 120):

միշ Ղազար Փարպեցին այն համարում էր աստվածատուր, դրախտին և Ավետյաց Երկրին համենատելի մի մեծություն. «Եւ արդ՝ զայսպիսի զըղձակերտ զաւառ, զչնաշխարհիկ և զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զայրաբատեան զաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան օրինակ լիութեան, ըստ բանի գրոյն, գերկրին Եգիպտացւոց և գրդախտին Աստուծոյ...»¹:

Իսկ 11-րդ դ. սկիզբ առնող հայկական ավանդություններն արդեն Արարատյան դաշտը և Մասիս լեռը կապելով ջրհեղեղի հետ (այս մասին տես «Սուրբ լեռը») հատուկ կարևորություն են տալիս Նոյի տնկած խաղողի այգուն. «գեօն Ակուրի, որ ստուգաբանի Արկուրի, յոտն Աւագ Մասեաց,- կարդում ենք 12-13-րդ դդ. մի տեսիլքում,- վասն զի յելանելն Նոյի ի տապանէն և յիշանելն ի լեռնէն, անդ տնկեաց այգի և անուանեաց զտեղին Արկուրի»²: Այս հենքի վրա Արարատյան դաշտով անցնող Արաքսն էլ նույնացվում է դրախտային Գեհոն գետի հետ³, և Արարատյան դաշտը (Երբեմն Հայաստանն ընդհանրապես) կորուսյալ դրախտի հայրենիք ու մարդկության Երկրորդ բնօրրան համարող մտայնությունը լայն տարածում է ստանում:

Հայկական մի գրույց էլ՝ ընդգծելով Աբրահամի հյուրասեր կերպարը (հմմտ. Ծննդ., ԺՈ), պատմում է, թե ինչպես այս նահապետի մորթած հորթի ոսկորներից՝ իրեշտակի պատվերով խաղողի որթ է աճում⁴: Հետևելով այս գրույցին, 14-րդ դ. մանրանկարիչը Աբրահամի հյուրասիրության տեսարանում Մամբրեի կաղնիները փոխարինել է խաղողի բարձր վազերով, որոնք կից բանաստեղծության մեջ բնորոշվում են միանգամից աճած, երդիկից էլ վեր բարձրացած և այնտեղից ցած կախված այսինքն տիեզերական մի ծառ:

Այզարյան պատկերացումների արտահայտման լայն դաշտ էին բացում նաև Նոր կտակարանային մի շարք ալեգորիաներ. Քրիստոսը որպես Ճշմարիտ որթատունկ (Հովհ., ԺԵ, 1,5), գինին որպես աստվածային արյուն (Մատթ., ԻՉ, 27, 28), Արդար դատաստանը որպես հոգիողկույզների հավաքում և Ճմլում Աստոն հնձանում և Աստված էլ որպես

¹ Ղազարյան Փարպեցւոյ Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 23-24:

² Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1910, էջ 472:

³ Սիմիթար Սեբաստոցի, Բարգիրք հայկագետան լեզուի, հ.Բ, Վենետիկ, 1769, էջ 76:

⁴ Ղանձանցան Ա., Ավանդապատում, էջ 116-117:

վերին (և վերջին) այգեպան (Հայտն., ԺԴ, 18-20): Քրիստոսի հետևությամբ խաղողի որթի և հնձանում ճնլվող խաղողի են նմանեցվում հայ սրբերն ու մարտիրոսները:

Ճշմարիտ որթոյն Քրիստոսի շառաւիղք
և ողկոյզ ճնլեալք Երկնաւոր մշակին,
կոլտեցայք ճգնութեամբ ի հնձանս ծեր,
զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն», - այսպես է բնորոշում նահատակ Հռիփսիմեյան կույսերին 6-րդ դ. կաթողիկոս Կոմիտասը:¹

Քրիստոսի, որպես Ճշմարիտ որթի և ողկոյզի պատկերացումը սերտորեն կապվում էր նաև խաչի հետ: Չե որ Քրիստոսը խաչի վրա «Ճգմվելով» ինչպես խաղող՝ թափեց իր կենսաբեր արյունը, որպեսզի արբեցնի-մաքրի մեղսագործ մարդկությունը: Խաչը մեկ նույնանալով օռետոսի հետ հանդես է գալիս որպես խաղողի որթ, որը կազմակերպում է ողջ տիեզերքը², ինչպես տեսնում ենք Դվինի բարավորի քանդակում: Կամ էլ դառնում է այգու կենտրոնում գտնվող հնձան, որի վրա Ճգմվում է խաղող - Քրիստոսը³, ինչպես որ հարյուրավոր խաչքարերում է, երբ դեպի խաչահատումն են իջնում խաղողի ողկոյզներ կամ նոներ: Ահա Քասաղից մի քանդակ, որն ամենայն հավանականությամբ Սոլոմոնի 42-րդ սաղմոսի Վերարտադրությունն է (որպես փափագէ եղջերու յալբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած”): Եվ ինչ ենք տեսնում. հայ վարպետը եղջերուներին պատկերել է խաղողի այգում, իսկ աղբյուրին փոխարինում է խաչ-հնձանը: Այս հորինվածքները Սուրբքրքային թեմաները «այգային լեզվով» ներկայացնող դիդակտիկ պատկերներ չեն միայն. դրանք արտահայտում էին մի կողմից կարոտը դեպի կորուսալ դրախտը և մյուս կողմից՝ ճգտումը դեպի Երկնային այգին ժամանակների վերջում: Ահա թե ինչու այդքան հաճախ էին նրանց դիմում աստվածաբանն ու պատմիչը, քանդակագործն ու մանրանկարիչը:

¹ Հոգևոր երգերի ժողովածու, Կ. Պոլիս, 1730, էջ 516:

² Ահա 5-րդ դ. Վիլիսուկա Դավիթ Անհայթի խաչին տված բնորոշումներից մեկը. ”Փայտ սուրբ, որ յերկրի բուսանելով գերազոյն երկնից կամարացն ծայր արծակեալ բարձրացար՝ զանտանելին ի թեզ բարձեալ բերելով պտուղ. գերկին իսկ միանգամայն և զմիջոցս լցեր գերկնի և գերկրի” (Դաւթի ամյացր Վիլիսուկայի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1932, էջ 13):

³ Ահա նոյն վիլիսուկայի մի այլ բնորոշում. ”Օրինեալ ես, փայտ սուրբ, իմանալի հնձան, քանզի ի քեզ նոյնում վերայ Երկնային այն ճնլեցաւ ողկոյզ բաւական յուրախութիւն Երկմայնոցն և Երկրայնոց” (Նոյն տեղում, էջ 23):

Հայերը հաճախ որպես այդի և «այգային» լեզվով են ներկայացրել մարդկային մարմինն ու հոգին, մարդկային կյանքն ընդհանրապես: «Եւ հասեալ ի բարուք ծերութեան՝ ալևորեալ և լի աւուրբք, որպես գոռկոյց հասեալ ի հընձան...», այնպես էլ սուրբ Հովհաննեսը ամփոփվեց գերեզմանում, գրում է 8-րդ դ. Կաթողիկոս Հովհան Օձնեցու մասին Վարքագիրը¹:

«Քո գունովըն զինի այստեր
խըմէի ու արքենայի,
Քո ծոցդ Աղամայ դըրախստ
մըտնէի խընծոր քաղէի,
Քո երկու ծըծամիջին
պառկէի ու քուն լինէի», -
սիրած աղջկան այսպես է երազում 13-14-րդ դդ. հայտնի բանաստեղծ
Նահապետ Քուչակը²:

Այժմ նորից անդրադառնանք Աղթամարի սուրբ Խաչ տաճարի որբագլարի գոտուն և նկատենք, որ գոտում պատկերված են Երկու փորողներ (Ակ. 4), որոնք բահերով զինված փորում են գետինը: Ուսումնասիրողների այն ենթադրությունը, թե բահավորները փխրեցնում են կամ թաղում այգին³, հավանական լինել չի կարող, քանի որ ողկույզներով ծանրաբեռնված վազերը բերքահավաքի պահին նման խնամքի կարիք չունեն: Նկատենք, որ փորողներից մեկի կողքին պատկերված է մուկ-առնետը՝ ժամանակի անցողիկության հանրահայտ սիմվոլը: Թվում է՝ այստեղ ալեգորիկ կերպով ներկայացված է մեկ այլ ավանդական պատկերացում, որի դրսնորումները տեսնում ենք միջնադարյան պոեզիայում: Երկրային ամենագեղեցիկ այգին անգամ հավիտենական չէ, մինչ մենք վայելում ենք նրա պտուղները, ժամանակը (ի դեմս փորողների) ավերում է այն: Եվ սա մի հիշեցում է՝ ուղղված «բարի ալգեպանին»⁴:

¹ Յայսմաւուրը, Կ. Պոլիս, 1730, էջ 516:

² Ζωή η ασιατικήν ρύμαρτεροφυτεύον, h. 2, Ερικιανό, 1986, έχ 141:

³ Տես օրինակ Օրբելի Ի. Ա., *Памятники армянского зодчества на острове Ахтамар – Орбели И. А., Избранные труды*, М., 1968, с. 138. *Der-Nersessian S. Aghtamar. Church of the Holy Cross, Cambridge. Mass.*, 1965, р. 28. Дурново Л. А. *Очерки изобразительного искусства средневековой Армении*. М., 1979, с 75: Հայոց երևոյան վիպա մեղողաբանական է, եթե պատկերված են իրական այգին և իրական ազեղործական ապրերաշըշանը, ինչպես ընդունել են հետազոտողները, ասս սասանի է արքանին որպատճերի իրական-գործական մենարաբություն:

Այս կապակցությամբ հիշենք հայ արրողիքին արասէլեակն Կաղաքացի արքայի սահմանած կարողը. «Եւ (կառագ) իշեռուանո՞ւն Երկուս ի ծերն արու. այլ ոճն գրադի իշողութիւնս արնելով, և այլ

«Կամին բուսացանել,

Բայց տօթն չար է»,- այսպես է մտորում աշխարհի մասին 12-րդ դ. հայտնի բանաստեղծ, կաթողիկոս Գրիգոր Տղան¹: Իսկ Գրիգորիս Աղթամարցու (16-րդ դ.) մի բանաստեղծության մեջ այգում ընթացող կյանքն անընդհատ նրանից վտարվելու վտանգի տակ է: Ճիշտ է, այս դեպքում սպառնացողը «հիգեառ» Գաբրիելն է, բայց նույնն է անցողիկության, երկրային այգու անկատարության և թերաժամության գաղափարը.

«Յամէն առաւօտ և լոյս

Գաբրիելն ասէր հոգոյս,

- Արի, ել ի յայս այգոյս»²:

Մեջբերենք նաև աշխարհին ու կյանքին 10-11-րդ դդ. պարսիկ բանաստեղծ Ռութաքի տված բնորոշումը.

«Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի՝ փնտրիր, գտնել չէս կարող,

Ութենուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,

Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,

Սիրտ իմ, հող դարձիր ու քամու նման անցիր աշխարհով»³:

Եվ նրան կարծեք թե երկրորդում է Գրիգոր Տաթևացին՝ գրելով. «Որպէս երկու դրանի քաղաք է կենցաղս մեր. և ընդ մի դուրս յարգանդէն մտանէմք յաշխարհ. և ընդ մի դուրս գերեզմանին ելանէմք յաշխարհէս»⁴: Նույն միտքն է տանջում և ուշ միջնադարի հայ ամենամեծ բանաստեղծին՝ Սայաթ-Նովային.

«Աշխարհը մե փանջարա է, թաղարումեն բեզարիլ իմ»⁵:

Եթե նկատի ունենանք, որ միջնադարում մոտավորապես երկու-երեք մետր լայնություն ունեցող պատերում բացվող նեղ պատուհաններն իրոք անծուկ միջանցքի տեսք ունեին, ապա լիովին հասկանելի է դառնում նաև նման «միջանցքով» անցնելու հեռանկարի դեպքում պատուհանի թաղակապ առաստաղից հոգնել-նեղվելու գաղափարը⁶:

ուն զվրէժմնորութեանցն: Եւ բարոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիրա հրամանն յիշեցուցանել զիրաւ և զմարդասիրեն» (Մովսիս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 117):

¹ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 180:

² Գրիգորիս Աղթամարցի, (Բանաստեղծություններ), Երևան, 1963, էջ 254:

³ Մարգարտաշար. ուրբայաթ /կազմ. Ա. Կողմոյան, Երևան, 1960, էջ 27:

⁴ Գրիգոր Տաթևացի, Զննում հատոր, Երևանադէմ., 1998, էջ 258:

⁵ Հայ դասական քնարերգություն, Երևան, հ. 2, 1986, էջ 311:

⁶ Ցավոք «Նոռան գոյմը» հայտնի ֆիլմում Սերգեյ Փարաջանովը Սայաթ Նովայի այս միտքը հասկացել է այլ իմաստով՝ դրան դեպի ուսուցչության և նոյնացնելով այն ռուսական «օկոն օ մոր» (պատուհան դեպի աշխարհ) արտահայտության հետ:

Ուշագրավ է, որ փորողները, որպես ժամանակի անցողիկության խորհրդապատկեր և հիշեցում արքային, բավականին լայնորեն կիրառվել են և պարսկական մանրանկարչական արվեստում: 12-րդ դ. սկսած դրանք արքայի գահակալությունը պատկերող տեսարանների համարյա պարտադիր կերպարներն են: Նրանք արքայի աչքի առաջ փորում են ծառերի արմատները (նկ. 5)` ակնարկելով, որ երկրային այգին թերարժեք է և արքան պարտավոր է հիշել այդ մասին¹:


Աշխարհի անցողիկության փիլիսոփայությունն ինքնին նորույթ չէ Մերձավոր Արևելքում, ուշագրավն այն է, որ հայկական ու պարսկական մշակույթներում, որոնք հենված են երկրագործական-այգային հզոր ժառանգության վրա, այն ձեռք է բերել նաև այգային լեզու և այգային կերպարում:



նկ. 1 Մանրամաս Աղթամարի սր. Խաչ տաճարի որթագալարի գոտուց, 10-րդ դ.
(լուս. Զ. Սարգսյանի):



նկ. 2 Հնձան, մանրամաս Աղթամարի սր.
Խաչ տաճարի որթագալարի գոտուց
(լուս. Օրծելու, 1968):



‘օվոց Իրան, Խ




Բարձրագույն գոտու վրա (Հայ-Հայ)



Բարձրագույն գոտու վրա (Հայ-Հայ)

նաև Աղթամարի
պարի գոտուց
նի):

նկ. 4 Բահակիրմերը, մանրամաս Աղթամարի
սր. Խաչ տաճարի ողբազալտի գոտուց
(ըստ Օրբելի, 1968):



նկ. 5 Արքայի թագադրությունը բահակիրմերով հանդերձ,
մանրամար պարսկական «Թիթար ալ-Թիրիաք» գրքից, 1199թ. (ըստ Շլկուրօ, 1989):

Резюме

В статье рассматриваются традиционные армянские садовые представления об идеальном пространстве и жизненном процессе. Обосновывается, что садовые идеи христианства попав в систему армянского мировосприятия генерировали ряд представлений об Армении как об утерянном рае, об Адаме как о последнем и Христе как о первом садовнике и т.д.

Среди народных представлений восстанавливаются образ Армении как виноградника, образ царя как доброго садовника. Подробно рассматриваются армянские и персидские представления о бренности мира, которые в обеих культурах приобрели подчеркнутый садовый характер.

Summary

Article outlines the *garden* language, themes and iconographical manifestations of perceptions on ideal lifespace and lifeprocces. It is pointed out that the *garden* ideas of Christianity were processed by Armenian worldperception into a wide range of notions presenting Armenian land as a “paradise lost”, Christ and Armenian saints and martyrs as a vine or as grapes pressed in the winepress, Adam (Noah, Abraham) as the first and Christ as last and highest gardener, cross as a vineshape cosmic-tree etc.

Among the folk notions are restored the ideal Armenian land as a winegard, the ideal life as that ongoing in the garden, the king as a good gardener, the real world as an anti-garden. It is stressed that the philosophy of inferiority of the world by itself was not a novice in the Middle East. It is remarkable, that in Armenian and Persian cultures, which based on strong agricultural-garden making heritage, the philosophy gained also garden language and garden image.

ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱԸՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Լուիքա Կիրակոսյան

Ճարտարապետության թեկնածու

ԵՊՀ

Մինչև արցախյան շարժումը հայագիտությունը զրկված էր Արցախում ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից: Ազատագրված Արցախում նմանատիպ ձեռնարկումները հասանելի դարձան, որոնց շարքում կարևոր էին 2004-2010 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախմբի հետազոտություններն ազատագրված տարածքներում (Շուշի, Հանդաբերդ, Տիգրանակերտ): Մասնավորապես, Հանդաբերդի վանքում իրականացված պեղումները բարենպաստ միջոցառում էր Արցախի միջնադարյան մշակույթի ուսումնասիրության համար: Պեղումները կատարվել են 2004 և 2005 թթ. հոլիստ-օգոստոս ամիսներին: Դրանք իրականացրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը (ղեկավար պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյան,

հնագետներ, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Վարդգես Սաֆարյան (Արցախի պետական համալսարան) ու Տատյանա Վարդանեսովա (ԵՊՀ Պատմության թանգարան), ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու, դոցենտ՝ Լուբա Կիրակոսյան (ԵՊՀ Հնագիտության գիտահետազոտական լաբորատորիա): Պեղումների շնորհիվ վանական համալիրն ամբողջությամբ բացվել է, որի պատմամշակութային հետազոտությունն արդեն ներկայացված է առանձին գրքով¹: Բավարար հիմքեր են ստեղծվել նաև հուշարձանախմբի վերականգնման և միջավայրի բարեկարգման համար: Այս համալիրի վերականգնումը կլուծի ոչ միայն հուշարձանի պահպանության խնդիրը, այլև հազարավոր հայ վերաբնակիչների մեջ կամրապնդի իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները և ստանձնելով հոգևոր կենտրոնի դերը իր շուրջը կիսմբի նրանց:

Կանքը գտնվում է ԼՂՀ Նոր Շահումյանի (նախկին Քարվաճառ) շրջանում, որը 12-14-րդ դր. մտնում էր Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության մեջ: Այս տեղադրված է Լևոնագետի միջնահովտի աջ ափի երկարությամբ ձգվող անտառապատ լեռնաբազկի նի գոգավորության կենտրոնով դեպի գետը ձգվող հովտի բարձրադիր ափի եզրին՝ ընդարձակ բացատի հարավարելյան կողմում՝ Հանդաբերդ ամրոցից մոտ 1,0 կմ հյուսիս-արևելք²: Տարածքը նախօրոք ենթարկվել է մշակման. ստեղծվել են հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք իջնող դարավանդ-հարթակներ, որոնց վրա էլ իրականացվել է կառուցապատումը: Այսօր՝ առաջին՝ վերին դարավանդի վրա դիտելի են կառուցների և առանձին պատերի հետքեր: Երկրորդ դարավանդի վրա կառուցված է շինությունների հիմնական խումբ՝ բաղկացած գլխավոր եկեղեցուց, նրան կից երկու մատուռներից, ժամատուն-գավթից հյուսիսից կցված մատուռով և արևմուտքից կցված զանգակատնով, որոնցից հյուսիս, ստորին դարավանդի վրա տեղադրված են առանձին կանգնած հյուսիսային մատուռը, ամրապատը և տապանաբակը: Համալիրի

¹ Հ.Պետրոսյան, Լ.Կիրակոսյան, Վ.Սաֆարյան, Հանդաբերդի վանքի պեղումները, Երևան, 2009:

² 1985թ. Մուրադ Հասրաթյանը այցելել է վանք և իրականացրել համալիրի սխեմատիկ չափագրությունը: Համալիրի նախնական ներկայացումը տես Միմոյան Հ., Սանամյան Հ., Հանդաբերդի վանական համալիրը //Հայաստանի Համբավնությունը 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նուտաշը, Զեկուլըման թեգեր, Երևան, 1996, էջ 71-73: Առավել մանրամասն համալիրը նկարագրված է՝ Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ալլրեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 24-30:

շինությունների հիմնական մասը, ըստ շինարարական արձանագրության, 1276 թ. կառուցել է ոմն Դավիթ Վարդապետը՝ տեղում գոյություն ունեցող ավելի հին Եկեղեցու շուրջը: Հետագայում ավելացվել են նոր շինություններ:

Դեռևս 2005-2006 թթ. Հանդաբերդի վանքում իրականացվել են ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ, որպեսզի կանխվեն հետագա փլուզումները¹: Այդ աշխատանքների արդյունքում լրացվել են հյուսիսային և հարավային կցված մատուրների պատերի բացակայող մասերը, թաղածածկերը, որմնասյունները: Տեղում պահպանված փաստացի նյութերի հիման վրա կատարվել է որոշ հատվածների մասնակի վերականգնում: Վերականգնվել են մատուրների արևելյան պատուհանները: Հյուսիսային մատուրի պատուհանի պսակի քարը, որը գտնվել էր պեղումների ժամանակ, դրվել է իր տեղը: Երկու մատուրների ներսում էլ վերականգնվել են զույգ հորինվածքով որմնակամարները, որոնց վրա էլ նստել է թաղածածկը (նկ. 1): Վերականգնվել է հյուսիսային մատուրի մուտքի կամարը: Ամրակայման աշխատանքներ են կատարվել նաև ժամատանը: Ներսում՝ հյուսիսարևելյան անկյան ներքևի՝ խարիսլված մասը քանդվել և վերաշարվել է, լրացվել է պատի մեջ բացված անցքը: Քանդվել և նորից կառուցվել է նոյն անկյան վերևում որմնակամարի ծեսափոխված և շաղախից անջատված հատվածը: Այս անկյունը վերականգնվել է նաև դրսից: Ժամատան թաղի պահպանված հատվածը ամրացնելու և պահպանելու համար թաղի տակ տեղադրվել են ժամանակավոր փայտյա հենակներ: Այս միջոցառումը հրատապ էր, որովհետև ծածկի մեջ մասի կործանված լինելու պատճառով կորել էր թաղի կոնստրուկտիվ ամբողջականությունը և այն ցանկացած պահի կարող էր քանդվել: Ծածկի կործանմանը նպաստող պատճառներից մեկն էլ կարող էր լինել դրա ներքին և արտաքին հորինվածքների անհամապատասխանությունը, որի հետևանքով թաղի վրա առաջացել են կրաշաղախի ավելորդ զանգվածներ:

Այսօր արդեն, երբ պեղումներն ավարտվել են և առկա են վանական համալիրի գլխավոր հատակագծի մանրամասն վավերացումը, հուշարձանախմբի բոլոր կառույցների ճարտարապետական չափագրությունները, հորինվածքային և ծավալատարածական

¹ Սասնակի վերականգնման նախագիծը մշակել են Լուքա Կիրակոսյանը և Սամվել Ավագյանը: Աշխատանքներն իրականացրել են ճարտարապետ Սամվել Ավագյանն ու աշխենկ Կոլոյան Հարությունյանը:

բացահայտումներն ու համալիրի պատմաճարտարապետական քննությունը, հնարավոր և անհրաժեշտ ենք համարում Հանդաբերդի վանքի վերականգնումը, որն ավելի քան իրատեսական է: Մինչդեռ ոչ հեռու անցյալում՝ խորհրդային տարիներին, հայ մշակույթի համալիրները հայտնվել էին այնպիսի իրավիճակում, որտեղ բացակայում էին հայկական հուշարձանների նկատմամբ բայրացկամ վերաբերմունքը, դրանց պահպանումն ու վերականգնումն իրականացնողների մասնագիտական պատրաստվածությունը և երևոյթներն անկողմնակալ և գիտական տեսանկյունով մեկնաբանելու կարողությունը: Այսպիսի իրավիճակում քիչ չէին այն դեպքերը, երբ ճարտարապետական հուշարձանները ավերվում, եղծվում և «աղավաղված» վերանորոգումների էին ենթարկվում: Դրա վառ օրինակն է Վանքասարի վրա կառուցված Վաշագան Բարեպաշտի վաղքրիստոնեական խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցին, որը ադրբեջանական վերակառուցման արդյունքում կանգուն է այն կերպարով, որն անհարիր է հուշարձանի նախնական՝ վաղքրիստոնեական հայկական այդ տիպի եկեղեցուն բնորոշ դասական հորինվածքին (նկ. 2):

Հանդաբերդի վանքի շինությունները մինչև պեղումներն ամբողջովին ծածկված էին փլատակների և հողի մինչև 2,0 մ հաստության շերտով, ծառերով և թփերով (նկ. 3): Պեղումները երևան են բերել վանքի կիսավեր կառուցմերը (նկ. 4): Առավել վատ են պահպանվել գլխավոր եկեղեցին և ժամատուն-գավիթը: Կառուցմերի ավերմանը նպաստել է նաև բնությունը: Առատ բուսականությունն աճել էր հուշարձանների ծածկերի վրա, քայլայել դրանք, արմատներով մխրճվել պատերի մեջ՝ լայն ձեղքեր ու ճաքեր առաջացնելով դրանցում:

Խորհրդային տարիներին ադրբեջանցիները վանական համալիրի համարյա մեջտեղով անց են կացրել մոտ 4,0 մ լայնությամբ և 2,0 մ խորությամբ ավտոճանապարհ, որը լիովին բացել է հիմնական խմբի կառուցմերի հյուսիսային հիմքերը: Հուշարձանախմբի պահպանումն ապահովելու համար նախատեսվում են նաև հիմնական խմբի հյուսիսային մասում հենապատի կառուցում՝ հողաշերտի, նրա հետ միասին նաև կառուցմերի փլուզումից խուսափելու համար: Նոյն կերպ էլ դեպի մոտակա անտառները տանող ավտոճանապարհը անց է կացվել վանքի շուրջը տարածվող միջնադարյան գերեզմանոցի մեջտեղով, որի հետևանքով ավերվել է մի ընդարձակ հատված: Որոշ տապանաքարեր ու

խաչքարեր՝ տեղահան արվելով, սփրավել են ողջ տարածքով մեկ։ Դրանց մի մասն էլ գլորվել է ձորը։

Հանդաբերդի վաճքի համալիր հետազոտությունները հնարավորություն են տալիս ներկայացնել հուշարձանախմբի վերականգնման հայեցակարգը՝ այն է, ելելով հուշարձանների հիմնական մասի պահպանվածության աստիճանից (բացառությամբ զանգակատան, որի երկրորդ հարկն ավերված է, գավիթ-ժամատան, որի ծածկը մասամբ առկա է և գլխավոր եկեղեցու, որի ծածկը նույնական չի պահպանվել) կատարել ամբողջական վերականգնում՝ հնարավորինս նվազագույն միջամտությամբ։ Զանգակատան և եկեղեցու համար առաջարկվում է նաև վերակառուցում և վերաստեղծում։

Հանդաբերդի վաճքի կառույցների հիմնական խմբի ամենավաղ շինությունը գլխավոր եկեղեցին է, որը նաև այդ պատճառով ամենավատ պահպանվածն է։ Այն արևելքից արևմուտք ձգված, արևելքում ուղղանկյուն խորանով ավարտվող միանավ դահլիճ է։ Խորանն ունի եկեղեցու աղոթասրահի լայնությունը և նրանից անջատվում է որմնասյուներով, որոնց վրա առաջարկվում է բարձրացնել թաղակապ ծածկի կամարը։ Երեք պատերում (բացի արևելյան բեմապատից) խորշեր են բացվել։ Կամարակապ միակ մուտքը գավիթ-ժամատնից է և գտնվում է արևմտյան պատի համարյա կենտրոնում։ Լուսամուտի միակ հնարավոր տեղը արևելյան ճակատն է, որը շատ վատ է պահպանված։ Ինչպես գլխավոր եկեղեցուն կցված մատուրները, այնպես էլ ժամատանը հյուսիսից կից մատուրը արևելյան խորաններում ունեն դեպի դուրս նեղացումով լուսամուտի բացվածքներ, որոնք պահպանված են, հանգանակ, որը հնարավորություն է տալիս եկեղեցում էլ չբացառել այսպիսի բացվածքի գոյությունը։ Եկեղեցու ծածկն ամբողջովին բացակայում է, բայց վերականգնելի, քանզի հյուսիսային և հարավային պատերի առավելագույն պահպանված բարձրությունները ժամատանը կից հատվածում՝ ծածկի մակարդակում կազմում են՝ 4,2 մ և թաղի բարձրությունը հավաստի վերականգնելի է։ Եկեղեցին ունեցել է երկթեք՝ կղմինդրներով պատված ծածկ։ Բեմի և աղոթասրահի հատակները սպառված են կրաշաղախով։ Սպառված են եղել նաև եկեղեցու ներքին պատերը, որոնցից որոշ հատվածներ են պահպանվել։ Նախատեսվում է վերականգնել պատերի ներքին այդ հարդարանքը, բացառությամբ այն հատվածների, որոնք շարված են խաչակիր քարերով, որոնց երեսները չեն սպառվում։ Հատակի երկարակեցությունն

ապահովելու համար առաջարկվում է սալապատում: Լուսամուտները պարզ պսակներով են:

Գլխավոր Եկեղեցուն կցված հարավային և հյուսիսային մատուռներն ունեն նույնատիպ հատակագծային և ծավալատարածական լուծումներ: Դրանք արևելք-արևմուտք առանցքով ձգված, արևելակողմում ուղղանկյուն խորաններով թաղածածկ կառույցներ են, որոնք հիմնականում (մասնակի վնասվածությամբ) պահպանված են, որն էլ հնարավորություն է տալիս կատարել վերականգնումներ: Տանիքները միաթեք են, որոնց վերին՝ կղմինդրածածկույթը չի պահպանվել տեղում, սակայն ամբողջովին վերականգնելի է: Խորաններն աղոթարահներից անջատվում են որմնասյուններով և դրանց վրա նստած թաղակապ ծածկի կամարով: Կամարային այս շրջանակը նաև թաղածածկին կոչտություն է հաղորդել: Հարավային մատուռի թաղը հարավային կողմում հենված է մատուռի պատի, իսկ հյուսիսում՝ գլխավոր Եկեղեցու հարավային պատին կցված գույգ որմնակամարների վրա: Հյուսիսային մատուռի թաղը հարավային կողմում նստել է գլխավոր Եկեղեցու հյուսիսային պատին կցված գույգ որմնակամարների վրա: Սակայն ի տարբերություն հարավային մատուռի, թաղը հյուսիսային մասում հենված է հյուսիսային պատին կցված գույգ կամարների վրա: Կոնստրուկտիվ այս համակարգը մասնակի վնասվածությամբ է պահպանվել և հավաստի վերականգնելի է: Մատուռների մուտքերը արևմտյան կողմից են: Հյուսիսային մատուռի մուտքի վրա շինարարական արձանագրությամբ բարավորի քար է դրված եղել, որի մի կեսն ընկած էր ժամատան ներսում, որը պիտի տեղադրվի նախնական տեղում:

Գլանածն թաղերն իրականացվում են ուղղաձիգ դրված և աստիճանաբար առաջացող քարերի ու ամբողջ կոնստրուկցիան շաղկապող կրաշաղախի գանգվածով (գծ. 1):

Հանդարձող վանքի գավիթ-ժամատունը հատակագծում նույտավորապես քառակուսի է: Մուտք ունի ինչպես արևմտյան, այնպես էլ հարավային կողմում: Արևմտյան՝ կենտրոնական մուտքը այժմ բացվում է դեպի հետագայում կցված զանգակատուն և հաղորդակցվում վերջինիս հյուսիսային կողմում բացված կամարակապ մուտքի հետ: Երկրորդ մուտքը բացվել է հարավարևելյան անկյան մոտ՝ հարավային պատի կողմից: Ժամատան հարավային, հյուսիսային և արևմտյան ներքին պատերը հարդարված են ալաքածն կամարակապ խորշերով:

Հարավարևելյան խորշը համընկել է մուտքի հետ: Հյուսիսային խորշերը պահպանված են ողջ՝ 2,7 մ բարձրությամբ: Ժամատան հատակը և ներքին պատերը սվաղված են կրաշաղախով, որը թափված մասերում վերականգնվում է: Շատ հետաքրքիր լուծում ունի ժամատուն-գավթի ծածկը: Ներսում՝ թաղի հորինվածքը ենթադրում է արտաքին քառալանջ տանիք, սակայն ժամատան հատակին ընկած ծածկի մեծածավալ բեկորը, տանիքի տեղում պահպանված հատվածը և ամբողջ համալիրի մանրանասն զննումը հնարավորություն են տալիս խոսել նրա նախնական ծկի մասին. իրականացվել է երկանջ տանիք, որի վրա բարձրացել է գագաթում երդիկ ունեցող ցածր՝ ութանիստ թմբուկ ունեցող գմբեթը:

Այն կրկնում է անսյուն գավիթների՝ հատվող կամարների վրա հենվող ծածկերի ծևերը: Գմբեթատակ քառակուսին անկյուններում կառուցված կամարների միջոցով վեր է ածվել ութանկյան, վերջինիս վրա էլ հենվել է գագաթում երդիկ ունեցող «կեղծ» գմբեթը: Երդիկը ներսույթի լուսավորության միակ աղբյուրն է եղել, քանի որ բացակայել է դասական բարձր թմբուկը, որը կարող էր պատուիաններ ունենալ (գծ. 2):

Հյուսիսային կողմից ժամատանը կցված մատուռը միանավ թաղակապ սրահ է: Այն ունի պայտաձև հատակագծով խորան: Խորանի մեջ է բացվում դեպի դուրս նեղացումով փոքրիկ պատուհանը, որը մատուռի լուսավորության միակ աղբյուրն է: Խորանի հարավային պատը որմնախորշ ունի: Աղոթասրահը և խորանը ծածկված են սլաքածն միասնական թաղով, որը հյուսիսային կողմում նստել է պատի վրա, իսկ հարավում՝ ժամատան պատին կցված հարթ որմնակամարի: Այն հավանաբար հետո է կցվել ժամատանը և անհրաժեշտություն է առաջացել դեպի ժամատուն մուտք բացել, որը ժամատուն-գավթի հյուսիսարևմտյան անկյունային խորշի մեջ է: Մատուռն ունի միաթեք ծածկ, պատերը ներսից սվաղված են կրաշաղախով: Համարյա ամբողջապես պահպանված է, վերականգնման ենթակա է կղմինդրածածկը:

Ինքնատիա կառուցվածք ունեն Հանդաբերդի վանքի հիմնական խմբի շինությունների ծածկերը: Դրանք բաղկացած են թաղն արտաքինից անմիջապես պատող 10-15 սմ հաստության ամուր կրաշաղախե շերտից, որն իր հերթին «լցոնված» է կոտրտված կղմինդրների 2-3 շերտերով: Կղմինդրներն այստեղ երկրորդական

կիրառության են և նախատեսված են ծածկը թեթևացնելու և ջրամեկուսացումը մեծացնելու համար: Օգտագործվել են ավելի վաղ կառույցներից վերցված ջարդոտված կղմինդրներ: Կրաշաղախե շերտն ավարտվել է ամբողջական կղմինդրների կանոնավոր ծածկույթով: Տեղում՝ զիսավոր եկեղեցուն հյուսիսից կցված մատուռի ծածկի վրա երևում են դրանց հետքերը միայն: Կղմինդրների ամբողջական օրինակներ չեն պահպանվել: Հանդաբերող վանական համալիրի ողջ տարածքից հավաքվել են կղմինդրների հազարից ավելի բեկորներ, որոնց ուսումնասիրությունից պարզվել է, որ այստեղ օգտագործվել են տափակ և փորակավոր կղմինդրներ: Տարածված է եղել նաև կղմինդրի մի հատուկ տեսակ, որը համատեղում է փորակավոր և տափակ տարրերը: Հանդաբերող վանքում կիրառվել է տափակ կղմինդրի սեղանաձև տարրերակը: Փորակավոր կղմինդրը կիսագլանաձև է՝ նեղացող վերին ծայրով, կողին ունի բլթակաձև ելուստ, որ նեցուկ էր ծառայում նոյն ձևի վերին կղմինդրի համար: Հանդաբերող վանքի տարածքից հայտնաբերվել են այդպիսի կղմինդրի մի քանի տեսակներ: Ծածկերը կազմվել են տափակ և փորակավոր կղմինդրների համադրությամբ կամ միայն տափակ ու փորակավոր տարրերն համադրող կղմինդրներով: Նախատեսվում է տաճիքները ծածկել պահպանված կղմինդրների նոր պատրաստված կրկնօրինակներով (նկ.5):

Զանգակատունը Հանդաբերող վանքի ամենաուշ կառույցն է՝ ժամատանը կցված արևմտյան կողմից: Այն հատակագծում ուղղանկյուն՝ 4,9 մ պահպանված բարձրությամբ աշտարակ է՝ արևմտյան պատի մեջ բացված փոքր պատուհանով և հյուսիսային սլաքաձև մուտքով: Առաջին հարկը թաղածածկ սրահ է և դեպի ժամատան զիսավոր մուտք տանող անցումի դեր է կատարում: Այսինքն՝ գուգակցվում են զանգաշտարակի և մուտք-նախասրահի գործառույթները: Զանգակատան երկրորդ հարկից պահպանվել են հյուսիսարևմտյան և հարավարևմտյան անկյունների շարվածքները: Ըստ երևույթին այդպիսին են եղել նաև մյուս անկյունները: Պահպանված հատվածները թույլ են տալիս վերականգնել երկրորդ հարկը՝ վերցնելով երկթեք ծածկի տակ: Մեր առաջարկում այս ծածկի վրա բարձրացնում ենք ռոտոնդա: Վստահաբար այդ մասին խոսել հնարավոր չէ՝ թերի պահպանվածության պատճառով, առավել ևս, որ զանգակատները չունեն կանոնիկ մշակված

Ճարտարապետական ծև և յուրաքանչյուր մասնավոր դեպքում դրանք տարբեր և ինքնատիպ լուծումներ ունեն: Մենք հակված ենք ընդունել ռոտոնդայի առկայությունը, քանի որ այս դեպքում է, որ զանգակատունն իր բարձրությամբ զգալիորեն կգերազանցեր մնացած ծավալները և կաշխուժացներ համալիրի միապաղաղ ուրվագիծը (գծ.3):

Հյուսիսային՝ առանձին կանգնած մատուռը հատակագծում ներսից խաչածև, դրսից ուղղանկյուն ոչ գմբեթավոր կառույց է: Արևելյան խաչաթերությունը կիսակլոր է և որպես «ավագ» խորան է ծառայել, մյուսները ուղղանկյուն են: Ավագ խորանում՝ պատի հարավ-արևելակողմում խորշ է բացված: Հյուսիսային և հարավային խաչաթերությունը ծածկված են թաղով: Արևելյան, արևմտյան և կենտրոնական մասը վերցված են մի ընդհանուր ցածր, կիսակլոր թաղային ծածկի տակ: Մուտքն արևմուտքից է և ունեցել է բարավորի սալաձև արձանագրակիր քար: Շաղախի մեջ պահպանվել է քարի տեղը, իսկ քարն ընկած է մուտքից արևմուտք՝ թմբի լանջին: Լուսավորության միակ աղբյուրը մատուռի մուտքն է: Պատուհանները բացակայում են: Ակնհայտ է զանգվածեղ պատերի, թաղածածկի և ներքին սահմանափակ տարածության անհամապատասխանությունը: Հյուսիսային և հարավային խաչաթերությունը մեջ ուղղանկյունաձև փոքրիկ կառուցումներ կան՝ իրագործված հին, շքեղ պատկերաքանդակներ կրող խաչքարերով, որոնք ինքնատիպ ծիսական միջավայր են ստեղծել:

Հյուսիսային առանձին կանգնած մատուռի վերականգնումը հիմնականում վերաբերում է նրա արտաքին ծածկին, քանի որ պահպանված է ներքին թաղածածկը: Պեղումների ընթացքում մատուռի շրջակայքում կղմինդրի բեկորներ և ծածկասալեր չեն գտնվել: Ի սկզբանե մատուռը կարող էր նոյնիսկ տոփանված հողածածկ ունենալ: Մեր առաջարկում ծածկը երկթեք, պարզագույն սալածածկով է նախատեսվում: Սալածածկը նախատեսվում է կառույցի ջրահեռացման խնդիրները, կայունությունն ու դրանով երկարակեցությունը ապահովելու նպատակով: Սալածածկ է նախատեսվում նաև մատուռի մուտքի դիմաց: Մուտքի բարավորի՝ շինարարական արձանագրությունը կրող ընկած քարը տեղադրվում է իր տեղում: Վերականգնման աշխատանքների ընթացքում պետք է նորոգվի և իր տեղում՝ մատուռի ներսում կանգնեցվի հարավային խաչաթերությունը:

Պեղումներով բացվել են մատուռի մուտքից դեպի հյուսիս և հարավ ձգվող հենապատերը, որոնք 1,7 մ մետրով ցածր են վերևում տարածվող տապանաբակի միջից:

Ճարտարապետական համալիրի վերականգնման հայեցակարգը բովանդակում է նաև շրջակա տարածքի և միջավայրի կազմակերպման առաջարկներ: Հանդաբերողի վանքի հուշարձանախումբը անբաժանելի մասն է կազմում այն գեղատեսիլ բացատի, որտեղ այն տեղադրված է: Լանդշաֆտն անխաթար թողնելու և միաժամանակ տարածքը կազմակերպելու միտումը ենթադրում է հետիոտնային անկանոն սալարկված արահետներ կառուցել վանական համալիրի տարածքում՝ հիմնականում պահպանելով կանաչապատ տարածքները: Որոշ տեղերում կենտրոնացվում և ցուցադրվում են միջնադարյան գերեզմանոցի տարածքում ցաքուցրիվ եղած խաչքարերը (գծ.4): Ամբողջացվում է նաև տապանաբակը պահող հենապատը, որի առջև՝ հյուսիսային առանձին կանգնած մասուրի մուտքի երկու կողմերում նախատեսվում է կանգնեցնել պեղումներով հայտնաբերված առավել դիտարժան խաչքարերը:

Զրահեռացման և բարեկարգման նպատակով սալահատակ է նախատեսվում նաև շինությունների հիմնական խմբի շուրջը (նկ.6):



Նկ. 1. Հարավային կցված մատուռի թաղի ամբողջացումը:



Նկ. 2. Վանքասարի վաղքրիստոնեական եկեղեցին:




Նկ. 3. Հանդաբերդի վանքի տեսքը պեղումներից առաջ:



Նկ.4. Հանդաբերողի վանքի շինությունների հիմնական խումբը՝
պեղումներից հետո, տեսքը հարավից:




Նկ. 5. Շինությունների հիմնական խմբի վերականգնման առաջարկ, տեսքը՝
հյուսիսարևելքից (Եռաչափ մշակումները Լ. Կիրակոսյան, Դ. Նահատակյան):




Կերպարանային համական
Պատշաճապահ համական
Պատշաճապահ և վերականգնման համականներ սահմանը


Գծ. 1. Ծինությունների հիմնական խմբի հյուսիսային և հարավայն ճակատները (վերականգնում):



Գծ. 2. Գավիթ ժամատան ծածկի վերականգնումը:



Գծ. 3. Զանգակատան արևմտյան ճակատի վերականգնումը:



Գծ. 4. Վանքի գլխավոր հատակագծի բարեկարգում:





Ավ. 6. Հանդերքի վանքի տեսքը արևմտյան կողմից՝ պեղումներից հետո և վերականգնան արաջարկում:

Резюме

Благодаря комплексному исследованию Андабердского монастыря стало возможным представить концепцию реставрации ансамбля. Учитывая уровень сохранности памятника предлагается версия целостной реставрации, а для колокольни и главной церкви дается еще и реконструкция. Рассматривается возможность благоустройства окружающей среды.

Summary

Due to the complex investigation of Andaberdsk monastery it became possible to introduce the restoration concept of the ensemble. Taking into consideration the preservation level of the monument, is proposed the complete restoration version, and a reconstruction is needed for the belfry

and the main church. The possibility for the improvement of the environment is studied.

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՔԱՂԱՔԱՏԵՂ»

Սլավա Սարգսյան

Պատմաբան, հուշարձանագետ

Ամրոց-բնակատեղին գտնվում է Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղից մոտ 2,5 կմ հարավ-արեւմուտք, Թարթառ (Տրտու) գետի աջ ափի անտառապատ, հարավահայաց, «Սնգրատեղի քար» կոչվող լեռան լանջին: Աշխարհագրական կոորդինատներն N 40 14 27.6, E 46 41 25.4: Ծովի մակերեսութից բարձրությունը 784 մ է: Այս Արցախ երկրամասի պատմական նշանավոր կենտրոններից մեկն է եղել, որը գոյատեև է գրեթե ողջ միջնադարում եւ հետագա տարիներին, նկատելի հետք թողնելով հայ ժողովրդի Արցախյան հատվածի պատմության մեջ: Այդ մասին վկայում են ոչ միայն այնտեղ գտնվող շինությունները, այլեւ արեւելա-

կողմ բարձունքում տեղակայված մատուրի եւ այլ հուշարձանների (խաչքար, տապանաքար) արձանագրությունները¹: Չի բացառվում նաեւ բնակատեղիի առկայությունն ավելի վաղ ժամանակներում, որի մասին կարող են վկայել օրինակ, հնավայրի ներկայիս տարածքի հարավ-արեւելյան եզրամասում հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն ի հայտ եկած դամբարանները՝ քարարկղային ու կատակունբային թաղումներով, բնորոշ I-IV դարերին:

XVII-XIX դդ տվյալներով ամրոց-բնակատեղին հիշատակվում է «Քաղաքատեղի»² եւ «Մայրաքաղաք»³ անուններով:

Տեղակայրին անդրադարձ մի շարք հեղինակներ⁴ պատմական աղբյուրներում հիշատակվող «Բերդակուր»⁵ եւ «Կաթողիկոսաքար» (նաեւ Կաթողիկոսասար)⁶ ամրոցները համարում են նույնական, որոնք վերագրվում են ամրոց-քաղաքատեղիին: Որպես հիմք է ընդունվում ոչ միայն Ս. Բարիուտարեանցի հաղորդումը, ըստ որի պատմական այդ տեղավայրը «... մի ժամանակ եպիսկոպոսանիստ աթոռ եղած է»,⁷ այլեւ Բերդակուր ամրոցի՝ Հայոց Արեւելից կողմանց կաթողիկոսության ամառանց եւ կաթողիկոսարան լինելու իրողությունը,⁸ ինչպես նաև՝ «քար»-ի «բերդ» նշանակությունը «Կաթողիկոսաքար» անվան մեջ: Մեր կարծիքով, ընդունելի է այդ մոտեցումը, սակայն մասնակիորեն: Տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն հետեւության, որ ի սկզբանե կաթողիկոսների ամառանց եւ նստավայր

¹ Ս. Բարիուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 222, Դիվան, Հայ վիմագրության, Եր., 1982, V, էջ 85-96:

² «Քաղաքայ տեղի բերդը» (1724թ.), - Պ. Արյունյան, Օսвободителյու ճակատագրեան արմանակագրությունը, 1724-1725 թվականների մոտ գոնովու Քաղաքատեղ գյուղում», - Ա. Իոաննիսյան, Ռուսական արմանակագրությունը 1724-1725 թվականների մոտ գոնովու Քաղաքատեղ գյուղում», Երևան, 1954, ս. 208, «Քաղաքատեղ բնակավայրի մոտ գոնովու Քաղաքատեղ գյուղում»:

³ Ս. Բարիուտարեանց, Արցախ, էջ 222: Առանձին ուսումնասիրությունների մոտ պահպանվում է նոյնինչ այն կարծիքը, ըստ որի հնավայրը «Մայրաքաղաք» անունով հիշվում է »սկսած վաղ միջնադարից« (Ան, հ. 8, էջ 541, ծան. 27՝ Բ. Ուլուբարյանի), որը, կարծում ենք, հետու է իրականությունից:

⁴ Բ. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Եր., 1975, էջ 116, Ս. Կաղանկատվացի, Պատմություն Արցախից աշխարհի, Երեւան, 1969, ծան. 4. Արաքելյանի, էջ 289, Ա. Դույսան, Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 75: Ըստ XIX դարի պահպանված մի պահպանությունից, ամոցը կարուցել է Վաշագան թագավորի կողմից եւ ծառայել որպես անառաջին նստավայր (ԾՄՕՄԴԿ, XIII, էջ 50, հմնտ. Ա. Դույսան, նշվ. աշխ., էջ 73):

⁵ Ս. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 231, 270, Կ. Գանձակեցի, ՊատմությունՀայոց, Երեւան, 1961, էջ 198 եւ այլն:

⁶ Ս. Գոշ, Կաթողիկոսը եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ժը դարու, - Դ. Ալիշան, Հայապատում, էջ 386^ւ, հմնտ. Ա. Դույսան, Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանքները, էջ 73:

⁷ Ս. Բարիուտարեանց, Արցախ, էջ 427, ծան.:

⁸ Ս. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 231, 270, Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 198: Հմնտ. Բ. Ուլուբարյան, նշվ. աշխ., էջ 116:

կարող էր լինել ոչ թե ներկայիս «Քաղաքատեղին», որտեղ տվյալ ժամանակաշրջանի շինությունների հետքեր կամ հնագիտական նյութեր ի հայտ չեն բերվել, այլեւ դրա հյուսիսային վերնամասում՝ լեռան գագաթին տեղակայված ավելի հին ժամանակաշրջանին վերաբերող «Սնգրատեղի քար» կոչվող ամրոցը: Վերջինս ավելի ուշ իր մեջ էր ներառել լեռնալանջի ստորոտում գտնվող «Քաղաքատեղին», որն առաջին հերթին պայմանավորված էր տարածքի հարմարվեստությամբ (շրջավակված է լեռներով, գտնվում է գրեթե անտեսանելի տեղավայրում, ապահովված է ջրով եւ այլն): Նշենք նաև, որ «քար» անվանումներ ունեցող ամրոցները չեն կարող վերաբերել ձորակներում կամ լեռնալանջերին տեղակայված ամրությունների, դեռ ավելին, այնպիսի պաշտպանական շինությունների, որտեղից տեսանելի չեն այլ ամրոցներ: Դա տվյալ դեպքում վերաբերում է «Քաղաքատեղին», որտեղից ոչ մի արտաքին ամրոց, այդ թվում մոտ 2 կմ հարավարեւմուտք գտնվող նշանավոր Զրաբերդը տեսանելի չէ: Կարողիկոսների ամառանոց-նստավայրը չի կարող անպաշտպան ու անվտանգ տեղավայրում գտնվել: Բերդակուր (Բերդաքար), Կաթողիկոսաքար եւ «քար»-ով այլ ամրոցները ստուգաբանորեն վերաբերում են լեռնային բարձունքների, որտեղից տեսանելի են մոտակա պաշտպանական հանգույցներն ու դիտակետերը, այդ թվում՝ մասնավորապես Զրաբերդ ամրոցը: Ահա թե ինչու նույնական դիտարկվող վերոհիշյալ երկու ամրոցները չեն կարող անմիջականորեն առնչվել «Քաղաքատեղի» ամրոց-բնակատեղիի հետ, բայց գտնվելով մերձակայքում՝ այսպես կոչված «Կաթողիկոսասար» լեռան վրա, ըստ էության ամրոց-բնակատեղիի հետ պատմական զարգացման որոշակի ժամանակաշրջանում մի ամբողջություն էին կազմում, որն էլ հանգեցրել է աղբյուրներում հիշատակվող այդ ամրոցների եւ «Քաղաքատեղիի» նույնականությանը ուսումնասիրողների մոտ:

Ամրոց-քաղաքատեղին առաջին անգամ ներկայացրել է տեղագրող Ս. Զալայանցը¹, հետագայում, ավելի հանգամանորեն՝ Մ. Բարխուտարեանցը՝ մանրամասն նկարագրելով տեղում եղած շինությունների մեջ մասը: Այն դիտվում է որպես Զրաբերդ գավառի մելիքանիստ

¹ «Ե աւերակ տեղի քաղաքի ի դժուարակոյն ծորամիջի, յորում են աւերակք բազմաց տանց եւ մեծամեծ ապարանից, ի սան է պալատ քաջազօր իշխանին Սէլիք Աղամայ կառուցեալ սքանչելի ծեւակերպութեամբ, գրդով է արուածան ընդարձակ ի պահպանութիւն նորին, ի վեր քան զայս պալատ է սազածեն մասուու կառուցեալ ի թուխն Հայոց Զթ ծեռամբ Խուռումայ եւ եղրօն Վահրամայ շահին...»: (Ս. Զալայեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Ա. Տիկիսիս, 1842, էջ 177):

բնակավայրերից մեկը, իսկ տարածքում գտնվող ապարանքը՝ Վերագրվում Մելիք Աղամին (XVIII դ), որը նորոգել է կանխավ եղած այդ շինությունը¹:

XVIII դարի սկզբին սխնախների ազատագրական պայքարի ժամանակաշրջանում եւ դարի կեսերից հետո, Մելիք Աղամի իշխանության օրոք Քաղաքատեղին մոտակա Զրաբերդ ամրոցի հետ միասին ազգային անկախության պայքարում համախոնի Զրաբերդ-Գյուլիստան միացյալ գավառի ու ռազմաքաղաքական միավորման կենտրոնն էր, կապված այդ պայքարի մյուս օջախների՝ Գյուլիստանի բերդի, Երիցնանկանց եւ Եղիշ առաքյալի վանքերի, Մոխրաթաղի, Թալիշի ապարանք-ամրոցների եւ այլ պաշտպանական ամրությունների հետ²:

Մելիք Աղամի իշխանության հզրացումը նկատելի էր հատկապես XVIII դ 70-ական թվականներից հետո ընկած ժամանակահատվածում, երբ նա եւ Գյուլիստանի Մելիք Հովսեփը իրենց հպատակներով, Շուշիի իբրահիմ Խանի հորդորանքով 1767թ. Գանձակի մոտերքից վերադառնում են իրենց հայրենի տիրույթները³: Ըստ Էտիքյան այդ ժամանակաշրջանում էլ (1767-1783թթ.) իրականացվել էր ապարանքի եւ այլ շինությունների վերակառուցումը, մանավանդ-որ Մելիք Աղամին վերագրվող Մոխրաթաղի ամրոց-ապարանքը եւս կառուցվել է նույն ժամանակահատվածում (1771թ.)⁴:

Այսպիսով, 1724թ. տվյալներով հիշատակվող «Քաղաքայ տեղի բերթը» ամրոց-քաղաքատեղիի բերդաձեւ ապարանքն է, որը մելիքական շինության մնացորդների վրա վերակառուցվել-լրացվել է XVIII դ. 20-ական թվականներին, իսկ դարի կեսերից հետո նորոգվել եւ դարձել Մելիք Աղամի նստավայրը:

¹ Ս. Բարիտուտարեանց, Արցախ, էջ 223-224: Հիմք ընդունելով Ս. Զալալյանցի եւ Ս. Բարիտուտարեանցի տեղենկությունները, Ռաֆֆին նոյնապես գրել է, որ «Մելիք Արամը իր բնակչության համար նորոգեց քաղաքատեղ կամ Մայրաքաղաք Կոչված ավերակների մոտ մի հոյսակ պալատ, որի մեջ տասներկուերորդ դարու վերջերու բնակվում էր Խաչենի Եղամբորի իշխան Վահրամ Չակը» (սեպ'ս Երկերի ժողովածու, հ. 10, Երեւան, 1964, էջ 171):

² Պ. Արյունյան, Օսвободительное движение армянского народа, с. 226-228. – Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов. Т. II, часть I, Ереван, 1967, с. 113, 282-283: А. Иоаннисиан, Россия и армянское освободительное движение..., с. 15-42, М. Нерсисян. Из истории русско-армянских отношений, фрагмент архивной документации, Ереван, 1956, էջ 50, 256. Դարաշրջանի պատմական իրադրության մասին, սեպ'ս նաեւ՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքություններ, հ. 10, Երեւան, 1964, էջ 161-382, Լեռ, հ. 3, գիրք Բ: Հմնու. Ա. Դույան, Պ. Արգարյան, Արցախի քաղաքատեղ բերդավանք, ՊԲՀ, 1988, N 1, էջ 148-149:

³ А. Иоаннисиан, Россия и армянское освободительное движение..., էջ 17, М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, էջ 50, 112-113, հմնու. ՊԲՀ, 1988, N 1, էջ 149:

⁴ Ս. Բարիտուտարեանց, Արցախ, էջ 218, Դիվան, V, էջ 94:

Կառուցվածքը¹: Ամրոց-քաղաքատեղին գբաղեցնում է մոտ 50 հա տարածություն: Տեղանքը արեւելքից արեւմուտք ամբողջությամբ թեքադիր է: Արեւելակողմն վերջնամաս է դիտվում հնավայրի ամենաբարձրադիր վայրում գտնվող, ներկայումս ավերակված մատուռ-եկեղեցին եւ գերեզմանոցը, իսկ արեւմտյան կողմում՝ քաղաքատեղիին հարող լեռները: Երկու կողմերում էլ տեղակայված են մեկական երկիարկանի բուրգ-աշտարականեր, որոնց Մ. Բարխուտարեանցն անվանում է դիտարաններ²: Վերջիններս, գրեթե կենտրոնական մասում տեղակայված ապարանքի եւ հյուսիս-արեւմտյան եւ հարավ-արեւմտյան կողմերում գտնվող «Եռաբուրգ» եւ «Կախաղան» կոչվող ամրությունների հետ միասին կազմել են ամրոց-քաղաքատեղիի հիմնական ու անմիջական պաշտպանական հանգույցները³: Թեքադիր տեղանքի սուլ հնարավորություններից ելնելով, ամրոցբնակավայրի ամբողջ տարածքում բնակելի ու տնտեսական շինությունները կառուցվել են անկանոն դասավորվածությամբ: Դրանց մեծ մասը հիմնովին կամ մասնակիորեն ավերված է, շրջակակված ծառերով, մացառուտներով: Նույն անխնամ վիճակում է գտնվում նաև Քաղաքատեղիի երկայնական առանցքը կազմող հարավ-արեւելքից հյուսիս-արեւմուտքը ձգվող միակ ճանապարհը՝ կից արահետներով:

Ամրոց-քաղաքատեղին ունեցել է երկու հիմնական մուտք. «... արեւմտեանն՝ խոր ծորին ստորոտովն, որ համարեա թե իպած է Թարթառ գետի աջ եզերքին, իսկ արեւելեան կողմի մուտքն նույն ծորի վերի ծայրովն: Երկու մուտքերն ամրապնդուած է եղել քարուկիր պատով, որը քանդուած են այժմ: Իսկ մնացեալ կողմերն բնութենաստեղծ եւ անմատչելի ամրութիւններ են, այս է բարձր վիմահերծ եւ քարաժայռ քերծեր են եւ ահարկու ծորեր»⁴:

Հնավայրում պահպանվող շինություններից ուշագրավ է հատկապես իշխանական ապարանք՝ կառուցված կիսակլոր բուրգեր ունեցող հենապատմեշով ստեղծված արհեստական դարավանդի վրա (չափերը՝ 23,3

¹ Մեր ժամանակներում ամրոց-քաղաքատեղիի հանգամանալից ուսումնասիրությունը կատարել են ճարտարապետ Արտակ Ղուլյան ու Ռաֆիկ Արզարյանը (տե՛ս վերը նշված աշխատությունները):

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 222-223:

³ ՊԲՀ, 1988, N 1, էջ 150:

⁴ Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 222: Խոսքը ծորի երկու կողմերում տեղակայված եւ ամրոցբնակատեղի տանող հավանական անցուղիները փակող պարսպապատերի մասին է, որոնց մացցրունքը պահպանվում են հատկապես ծորի արեւելյան հատվածում, որտեղ ի դեպ կատարված հողային աշխատանքների ժամանակ ի հայտ են թերվել նաև կավել խողովակներ, որը ցույց է տալիս, որ ամրոց-քաղաքատեղիի ջրամատակարարումն ըստ էության եղել է նաև այլ վայրերից:

x 36,5 մ), ինչի շնորհիվ շրջապատի նկատմամբ իշխող դիրք է գրավում¹: Հյուսիս-արեւելյան կողմից կառուցված հենապատի շնորհիվ, այն գրեթե աննկատ է: Հորինվածքով վերաբերում է XVIII դ եւ վերագրվում Մելիք Աղամին: Պատերը շարված են անկանոն ու մանր տեղական, դեղնանարնջագույն, ործաքարերով ու կրաշաղախով (հաստությունը՝ 0,8-0,9 մ):

Ըստ Մ. Բարխուտարեանցի, «շինութեանս գետնայարկն ծառայած է միայն տեղի գառիվայր դիրքը հարթելու, վերնայարկում կայ տասնեւինինս սենեակ, ընդարձակ դահլիճ, խոհանոց, երկու պատշգամբ: Գեղեցկաձեւ տաշուած եւ նախշած ճակատակալ քարեր ունին վառարաններն (բուխարի)»² Արեւելակողմի չորս սենյակները միաչափ են (4 x 7 մ), իպված լանջին եւ ազատ լայնական ճակատներում ունեն մեկական մուտք: Այս սենյակների դիմաց, արեւմտյան դարավանադաեզրին կան դեպի բակ ուղղված եւս չորս միաշարք սենյակներ, որոնցից պահպանվել է միայն բակահայաց ընդիհանուր պատոր՝ մուտքերով, որմնախորշերով, լայնական պատերի մնացորդներով, իսկ ձորահայաց ճակատամասը փլվել է դարավանդի բրգավոր հենապատնեշի հետ³: Նախամուտքերն ու սենյակները եղել են փայտածածկ: Հորինվածքային միասնականությամբ համակառուցի այս հատվածում նախամուտքերի արեւմտակողմյան երկու եւ ձորահայաց չորս սենյակները ներքին հարդարանքով ավելի վայելուչ են ու հանդիսավոր, քան լանջամերձ չորս սենյակները. պատերը հագեցած են համաչափ դասավորված ու լայն որմնախորշերով եւ ունեցել են լայն պատուհաններ ձորահայաց ճակատի ողջ երկայնքով⁴: Բացի այդ, հատկանշական է, որ ապարանքի արեւելակողմ վերին եզրային սենյակի գետնահարկում փորված է անցք-գաղտնուղի, որը դուրս է գալիս դարավանդի բրգավոր պարսպապատի տակից բացված մուտքով:

Ապարանքի XVII շինությունների խումբը կազմում է վերոհիշյալի շարունակությունը: Այն բաղկացած է նախասենյակից՝ կից երկու փոքր գետնահարկ խցերից, երկու այլ սենյակներից եւ խորշածեւ բաժանմունքով դահլիճից (չափերը՝ 3,7 x 7,45 մ): Հին ու նոր կառուցմասերի դիտարկումներից պարզվում է, որ հնավանդ ապարանքից մնացած

¹ Ա. Դույան, նշվ. աշխ., էջ 79:

² Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223-224:

³ Ա. Դույան, նշվ. աշխ., էջ 79:

⁴ Նոյն տեղում:

շինություններին XVIII դ սկզբում ավելացված ներփակ բակով գերանածածկ սենյակները համակառուցի բնակելի մասն են կազմել, իսկ մելիքական ընդունարան-դահլիճը մնացել է նախկինը՝ խորշածել թաղածածկ դահլիճը՝ համդիսավոր, լայն ու կամարավարտ բացվածքներով ուղղված դեպի բերդավան ու Թարթառի գեղատեսիլ ձորը: «Քաղաքատեղի» դյուակ-ապարանքն իր երկու շինարարական շերտերով, հատակագծային ու ծավալատարածական հորինվածքներով եւ կառուցելակերպով դարաշրջանին խիստ բնորոշ պալատական ու ամրաշինական կառույցների համադրությամբ ստեղծված ու մեզ հասած եզակի հուշարձան է¹:

Ապարանքի մոտ, դեպի արեւելք ձգվող ժայռալանջի թեքության վրա տարածվում են ախոռ-ձիանոցի ավերակները (չափերը՝ 4,1 x 23,9 մ): Մուտքը արեւմտյան կողմից է: Շինությունն ուշագրավ է մուտքի եւ լանջին հպված հյուսիսահայաց պատերին 18 կամարակապ որմնախորշերով՝ նախատեսված ձիերի կայանման ու կերակրման համար: Զիանոց-ախոռից արեւմուտք պահպանվում է մի կիսավեր շինության՝ ձիապանների սենյակը:

Ապարանքից հյուսիս-արեւմուտք, լեռնալանջին տեղակայված է մեկ այլ շինություն (ներքին չափեր՝ 10 x 5,5 մ), որի պատերը պահպանվում են մինչեւ 2,5 մ բարձրությամբ: Բաղկացած է երկու կցակառուց սենյակներից: Շինության հարավային պատը՝ տեղադրված ժայռագլխին, անկյունային աշտարակածեւ կլոր վերջույթներով, արտաքուստ առանձնացված ամրոց-ապարանքի տպավորություն է թողնում՝ որոշակիորեն նմանվելով մերձակա «Եռաբուրգ» կոչվող ամրոցատիպ շինությանը:

Ամրոց-բնակատեղիի ուշագրավ շինություններից է նաեւ ներկայումս գորեթ ամբողջությամբ ավերակված վիճակում գտնվող բաղնիքը՝ բաղկացած երկու հիմնական կից սենյակներից: Համենատաքար բարվոք վիճակում է գտնվում հարավահայաց ժայռին հպված շինությունը (2,7 x 2,8 մ չափերի), որն ըստ էության ծառայել է որպես լողարան: Ծածկը չի պահպանվում: Ըստ ուսումնասիրողների², այն տաքացվել է հնուց հայտնի սյունիկների վրա բարձրացված հատակի եւ խողովակավոր պատերի միջոցով՝ հնոցից մղված տաք օդով ու ծխով: Զրանատակարումը եղել է բաղնիքից հյուսիս-արեւմուտք, վերնամասում գտնվող

¹ Ա. Ղույան, նշվ. աշխ., էջ 81:

² ՊԲՀ, 1988, N1, էջ 161:

«Շոշուան» կոչվող աղբբից, որտեղից ջուրը կավե խողովակներով բերվել է բաղնիքի հյուսիսային վերնամասում կառուցված ջրամբարը, այնտեղից ուղղորդվել բաղնիք:

Բաղաքատեղին իր բուն տարածքում՝ շրջագծով եղել է պաշտպանված մի շարք պաշտպանական շինություններով ու ամրոց-դիտակետերով:

Հարավ-արեւմտյան ձորակում «Կախաղան» կոչվող ամրոցի ավերակ-ներն են՝ շուրջ 600 քառ. մ տարածքով (չափերը՝ 20 x 30 մ), որի պատերը շարված են տեղական անմշակ քարերով ու կրաշաղախով՝ ամրացված միաստիճան, երկաստիճան եւ եռաստիճան աշտարակածել ելուստներով, 4-7 մ բարձրությամբ: Տարածքը հիմնականում հարթ է, արտաքուստ թերակղզու տպավորություն է թողնում: Այն մեծավմասամբ, հատկապես հարավ-արեւմտյան եւ հյուսիսային հատվածներում շրջափակված է 15-25 մ բարձրությամբ ժայռապատնեշներով: Ունեցել է արեւելյան կողմից բացվող մուտք, որ այժմ հարակից պարսպապատով ավերակված է:

Հնավայրից հյուսիս-արեւմուտք, ճանապարհի արեւելակորում թեքադիր լանջին պահպանվում են 9,3 x 10,3 մ չափերի, ներքուստ քառանկյուն հատակագծով «Եռաբուրգ» կոչվող շինության ավերակները: Մուտքը արեւմտյան կողմից է: Պատերը շարված են տեղական անմշակ ործաքարերով ու կրաշաղախով, որոնց հաստությունը մինչեւ 1 մ է:

Ուշագրավ են շինության հարավ-արեւմտյան եւ հարավ-արեւելյան անկյունների եւ հարավային պատի կենտրոնական մասում տեղակայված աշտարակները: Ս. Բարխուտարեանցի նկարագրությունից պարզվում է, որ դեռևս XIX դ վերջերին ամրոցը բարվոք վիճակում է եղել. «Հյուսիսային դիտարանի մօտ կայ մի մեծ շինութիւն, որ իւր արտաքին կողմում ունի երեք բուրգ, մեջ տեղում տասն մետրաչափ բարձր քարուկիր սիւն եւ երկու մեծ սենեակներից բաղկացած շինութիւն: Այս է ամենից աւելի հնութիւնն, որ կարծես թէ իւր ամրագին կազմուածքովն ներկայացնում է տեղիս հին իշխողի բնակարանը, որ ունի եւ բնութեան հրաշալի տեսարան»¹:

Ամրոց-քաղաքատեղիի շինությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում հնավայրի հյուսիս-արեւմտյան եւ հարավ-արեւելյան եզրամասերում տեղակայված բուրգ-աշտարակները:

¹ Ս. Բարխուտարեանց, Արցախ, էջ 223, հմնտ. ՊԲՀ, 1988, N1, էջ 158:

Հյուսիս-արեւմտյան աշտարակը, որն ըստ էության ծառայել է որպես պահակակետ-դիտակետ, տեղադրված է Քաղաքատեղիի բուն տարածքից առանձնացված, բարձրադիր մի հարթակի վրա: Կիսավեր է, պահպանվում է մինչեւ 6 մ բարձրությամբ: Աշտարակը երկիարկանի է՝ կառուցված անմշակ ործաքարերով ու կրաշաղախով՝ երեսպատված սրբատաշ բաց դարչնագույն քարերով, որոնք ներկայումս չեն պահպանվում (հանվել են խորհրդային ժամանակներում): Առաջին հարկը հավանաբար ծառայել է որպես պաշտպանների հանգստի սենյակ, իսկ երկրորդ հարկը՝ դիտակետ՝ պաշտպանության տակ առնելով Քաղաքատեղիի տվյալ հատվածի մատուցները: Աշտարակի արեւելյան հատվածը, մինչեւ 3,5 մ լայնությամբ քանդված է: Առաջին հարկի թաղի մի մասը չի պահպանվում, իսկ երկրորդ հարկի ծածկն ամբողջությամբ ավերակված է: Շինության առաջին հարկն ունի ներքուստ քառակուսի հատակագիծ՝ հյուսիս-արեւմտյան կողմից բացվող մուտքով եւ դեպի դուրս ներացող երկու պատուհաններով, որոնք բացվում են աշտարակի հյուսիսային եւ արեւմտյան պատերից: Վերին հարկը հատակագծում ութանկյուն է, ունի երկու պատուհան, որոնք բացվում են հյուսիսային եւ հարավային պատերից:

Մյուս աշտարակը տեղակայված է ամրոց-քաղաքատեղիի հարավ-արեւելյան եզրանասում՝ առանձնացված տեղավայրում: Այն նույնպես երկիարկանի է, նույնատիպ, մինչեւ 6 մ բարձրությամբ: Արտաքին սրբատաշ քարերը գրեթե ամբողջությամբ հանված են: Երկրորդ հարկի ծածկը չի պահպանվում: Աշտարակն արտաքուստ կլոր է, որը ստորին հատվածում եզրափակվում է գետնից ոչ այնքան բարձր քառանիստ ծավալով: Առաջին հարկը ներքուստ ունի խաչաձև հորինվածք (չափերը՝ 4,9 x 5,2 մ): Պարագիծը 14 մ է: Չորս քառանկյուն հենախորշերով (խաչաթեւրով) պարփակված կենտրոնական տարածությունը պսակված է զմբեթով.¹ Գլխավոր մուտքը հարավ-արեւելյան կողմից է, հյուսիսային կողմից բացվում է երկրորդ մուտքը: Ըստ էության ունեցել է երկու լուսամուտ, որոնցից մեկը բացվում է արեւմտյան խաչաթեւրից: Երկրորդ հարկը դրսից եւ ներսից բոլորակ է: Տրամագիծը շուրջ 5 մ է: Այստեղ պատուհանները բացվում են հարավային, արեւելյան եւ արեւմտյան կողմերից, իսկ մուտքը՝ հյուսիսից:

Դիտակետ-աշտարակի մոտ, հյուսիսային վերնակողմում՝ հպված հարավահայաց լեռնալանջին, գրեթե ամբողջությամբ պահպանվում է մեկ այլ ուշագրավ շինություն՝ ըստ էության ամրոցի պահպանների կա-

¹ Նոյն տեղում, էջ 159:

ցարանը՝ ներքուստ թաղակապ եւ կենտրոնից բացվող երդիկով։ Կացարանն ունի քառակուսի հատակագիծ (չափերը՝ 4,6 x 4,6 մ)։ Ծածկը հողաշեն է՝ կրաշաղախով, ներսում կան խորշ-պտրհաններ։

Այսպիսին է ընդհանուր առմանք «Քաղաքատեղի» ամրոց-բնակատեղիի համառոտ նկարագիրը։

Սոլուզարանություն: Մեր կարծիքով «Մայրաքաղաք» տեղանվանումը ուղղակի իմաստով (որպես մայրաքաղաք) բացատրելը տվյալ դեպքում ճիշտ չէ, անկախ նրանից տեղավայրը եղել է իշխանանիստ կամ մելիքանիստ, թե՛ ոչ։ Տեղացիների մոտ անվանումը շրջանառվում է «Մայրամքաղաք» (Մարիամքաղաք) տարբերակով, որը չի հակասում պատմական զարգացման օրինաչափություններին եւ, մասնավորապես, ամրոց-բնակատեղիի՝ որպես Հայոց Արեւելից կողմանց հոգեւոր կենտրոն լինելու իրողությանը (հմմտ. «Թագավորի աղջիկ» կամ «Սբ. Մարիամ» կոչվող սրբատեղի-գերեզմանոց ամրոց-քաղաքատեղիից 250-300 մ հյուսիս-արևելք)։ Ի դեպ, մասնավորապես XIX դ. տեղագրողների եւ հետագա առանձին հեղինակների գրվածքներում «Մայրաքաղաք» է կոչվում նաեւ նոյն՝ Թարթառի գետահովտի Վաղուհաս գյուղի վանքը, որը դարձյալ տեղացիների մոտ շրջանառվում է «Մայրամքաղաք» տարբերակով, որը նույնպես «հնում եղել է նշանավոր, երբեմն՝ եպիսկոպոսանիստ»¹ ու գրչության կենտրոններից մեկը։

Այսպիսով, կարծում ենք, որ մասնավորապես XIX դ. տեղագրող Մ. Բարիսուտարեանցը (որից օգտվել են հետագայի այլ ուսումնասիրողներ) գոնե այս երկու տեղավայրերի նկատմամբ ցուցաբերել է սուբեկտիվ մոտեցում՝ Մարիամքաղաքը դարձնելով Մայրաքաղաք՝ անտեսելով սերնդե-սերունդ ժողովրդի մեջ շրջանառվող այդ երբեմնի նշանավոր հոգեւոր կենտրոնների անվանումները։

Резюме

Статья посвящена исследованию истории и этимологии одного из средневековых центров исторического Арцаха- крепости-поселения “Кахакатех”. В письменных источниках XVII-XIX вв. крепость упоминается под наименованием “Кахакатех” и „Майракахак“. Автор,

¹ Հ. Ակրտյան, Ենթային Ղարաքաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 57։

основываясь на исторических источниках, считает, что истинное наименование крепости „Мариамкахак“.

Summary

The article is devoted to the study of the history and etymology of one of the Medieval centers of historical Artsakh – the fortress-settlement “Qaghqaqategh”. In the written sources of XVII –XIX ages the fortress is named “Qaghqaqategh” and “Mayraqaghqaq”. Basing on historical sources, the author considers the true name of the fortress to be “Mariamqaghqaq”.

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՏԱՐԱՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԹԵԶԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վարդպետ Սաֆարյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԿրՊՀ

Արցախի պատմությունն ու մշակույթը հայ դարավոր պատմության ու մշակույթի անբաժանելի մասն են կազմում:

Խորհրդային տարիներին, «լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի» պայմաններում դարաբառյան թեմատիկան արգելված էր հայ գիտնականների համար: Գոյություն է ունեցել չգրված մի օրենք՝ շրջանցել Ղարաբաղի թեման¹: Այս միտումը հատկապես վառ արտահայտվել է 1930-1950-ական թվականներին, երբ Արցախը ներկայացվում էր որպես «եղբայրական Աղբեջանի անբաժանելի մաս»²: Սակայն 1960-ական թվականների կեսերից սկսած, երբ Արցախի պատմության ու մշակույթի աղբեջանական «մեկնաբանությունը» սպառնում էր վերածվել Աղբեջանական ԽՍՀ և ի մասնավորի Լեռնային Ղարաբաղի հայաթափու-

¹Այս կապակցությամբ խորրդանշական է Ս. Լիսիցիանի մենագրության ճակատագիրը. որը գրված լինելով 1920-ան թթ. տպագրվել է միայն 1981 թ.

² Տեր-Գրիգորյան Տ. Ի. Նագорно-Կարաբահская автономная область. Известия АзФАН СССР, N 4, Баку, 1939, с. 13-22; Варталов А. С. Очерк жилищ и строительных кадров Нагорного Карабаха // Тр. АзФАН СССР, вып. 25, Баку, 1936, с. 99-119.

թյան պատմական հիմնավորման, հայագիտությունը նախ զգուշորեն¹, իսկ 70-ականներից (Երբ Ադրբեջանում առավել մեծ համառությամբ սկսեց հնչել այն գաղափարը, թե «Ղարաբաղը հնուց ի Վեր ադրբեջանական տարածք է», և այստեղ ստեղծված բոլոր մշակութային արժեքների միակ ժառանգորդն ադրբեջանցիներն են) նաև ակտիվորեն սկսեց շոշափել ղարաբաղյան թեմատիկան՝ մանրամասնելով հատկապես Հայաստանի և հայ մշակույթի հետ Արցախի պատմության և մշակութային միասնականության հայեցակարգը։ Ադրբեջանական կեղծարարությունների բացահայտումը և լեզվական, պատմա-մշակութային հիմնավոր փաստարկներով դրանց մերժումը, քաղաքական ակտիվ պաթուը դարձավ մի շարք հայագետների և նուավորականների խնդիրներից մեկը²:

Այսօր, երբ Արցախի խնդրի միջազգայնացման պայմաններում աղրբեցանական քարոզչական մեքենան շարունակում է լայնածավալ աշխատանքներ տանել՝ ուղղված պատմական իրականության կեղծարարությանը, «հայերը Ղարաբաղի տարածքում հյուրեր են»³ թեզի «հիմնավորմանը», հայագիտության նվազումների դիրքերից աղրբեցանական պատմագիտության համակորմանի քննությունը, քննադատությունն ու գնահատումն էլ ավելի արդիական են դառնում:

¹ Πηρησυαν Α. Ι. Λαηρησιφί Ρωμηωρού, Τεριανή, 1965; Τιαψιανή Κ. Ι. Νιαρωρωηή Ρωμηωρωαγήν Ρωμητέρο, Τεριανή, 1968; Ρωμητιηριανή Α. Σιαψιαναφήρ Λαμαδί ήχησιανή ανοικόνη // Άλιτετηκαφήρ, 1964, ρήμα 1, τρ 61-64:

² Мелик-Оганджанян К. А. Историко-литературная концепция З. Бунияташа // Вестн. архивов Армении, 1968, № 2, с. 169-190; Ուղարքյան Բ. Ա. Խաչենի հշուանություն X-XIV դարերու, Երևան, 1975, Առաջի Պուե շրամ, Երևան, 1979; Առաջի Գանձասար, Երևան, 1981; Ղազինյան Ա. Կրցափի // ՀՀԱԲ, N15, Երևան, 1983; Մկրտչյան Ը. Լեռնային Պարարագի պատմաճարչապատճենները, Երևան, 1980; Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н. К изучению истории Кавказской Албании (о книге Ф. Мамедовой „Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э.)“) // К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении. Ереван, 1991, с. 321-352; Арутюнян Б. А. Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении в 387-451 гг. // К освещению проблем истории и культуры Кавказской Албании ..., с. 16-37; он же: К вопросу о локализации страны Лпинк // К освещению проблем истории и культуры Кавказской Албании..., с. 107-126; Улубабян Б. А. Топонимы Албания, Агванкъ и Аранъ // ИФЖ АН Арм. ССР, 1971, № 3, с. 115-126; он же: О границах древнего Агванка // Вестник ЕГУ, 1979, № 1, с. 109-124; он же: К вопросу об административно-политическом положении северо-восточной Армении в домарзпанский период // Вестник ЕГУ, 1975, № 2, с. 149-164; Мнацаканян А. Ш. О литературе Кавказской Албании. Ереван, 1969; Сазян Г. С. Понятие „страны Агванкъ“ в сочинении Мовсеса Каганкатваци // Вестник архивов Армении. 1973, № 1, с. 225-283.

³ Выступление И. Алиева в Лондоне в клубе «Chatham house» 13 декабря 2004 г. Баку 13.12.2004. АзерТА

Սա հատկապես կարևոր է մշակույթի հետազոտության առումով, քանի որ հաճախ հենց մշակութային ժառանգության դրսևորումներով կարելի է վերհանել էթնիկ ինքնության մի շարք կողմերը: Եվ երկրորդ, այսօր Արցախի պատագրման շնորհիվ հայագիտության համար ֆիզիկապես մատչելի է դարձել այդ ժառանգության մի զգալի մասը, և մի շարք դիտարկումներ կարելի է կատարել դաշտային անմիջական աշխատանքների օգնությամբ (այցելություններ, լուսանկարահանում ու չափագրում և իվերջո՛ հնագիտական պեղումներ):

Դարաբաղի պատմության և մշակույթի հարցերը դարձել են ադրբեջանական պատմաբանների հետազոտությունների առարկա այն ժամանակաշրջանից, երբ հին հայկական տարածքը բռնի կերպով մտցվեց նորաստեղծ Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Հոդվածի նպատակն է ադրբեջանական պատմագիտության վերլուծության հիման վրա վեր հանել նրանում Արցախի մշակույթի քննության մեթոդաբանական, տեսական, քաղաքական հիմքերը, ցույց տալ ադրբեջանցի պատմաբանների՝ Դարաբաղում թուրքական էթնոսի բնիկ լինելու և հայերի եկվորության մասին հայեցակարգի սնանկությունը, և հետևաբար, արցախահայության մշակութային ժառանգության յուրացման փորձերի անհիմն և անհեռանկար լինելը:

Նշյալ նպատակը ենթադրում է լուծել հետևյալ կոնկրետ խնդիրները. որոշել ադրբեջանական պատմաբանների կողմից արցախահայության մշակութային ժառանգության օտարման և յուրացման քաղաքական միտումները, վեր հանել նման մեթոդաբանության ամբողջական պատկերը:

Ադրբեջանական պատմաբանների առանձին աշխատանքները դեռևս խորհրդային տարիներին առաջատար հայ և ռուս հետազոտողների կողմից ստացել են համապատասխան գնահատական: Այսպես, Կովկասյան Աղվանքի և Հայաստանի քաղաքական սահմանի, ինչպես նաև Կուրի և Արաքսի միջագետքի վարչական և քաղաքական պատկանելության հարցերը, որոնք բազմիցս բարձրացվել են ադրբեջանական պատմաբանների կողմից, հանգամանորեն դիտարկվել և գնահատվել են Ա.Նովոսելցի, Կ.Մելիք-Օհանջանյանի, Ա.Հակոբյանի,

Պ.Մուրադյանի, Կ.Յուզբաշյանի, Բ.Հարությունյանի, Բ. Ուլուբաբյանի և այլոց աշխատություններում¹:

Հայաստանի հյուսիս-արևելյան գավառների քաղաքական և մշակութային գործիչներին աղվանացնելու ադրբեջանական պատմաբանների փորձերը կանխարգելվել են Կ. Մելիք-Օհանջանյանի, Է.Պիկազյանի, Ա. Մնացականյանի, Պ.Սևակի և ուրիշների աշխատությունների շնորհիվ²:

Կովկասյան Աղվանքի, Արցախի, Ուտիքի և Սյունիքի բնակչության էթնիկական կազմի հիմնախնդիրները դիտարկվել են Ա. Հակոբյանի, Ա. Անասյանի, Բ.Առաքելյանի, Գ.Առաքելյանի, Բ.Հարությունյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի, Ս.Մելիք-Բախչիյանի, Ա.Մնացականյանի, Պ. Մուրադյանի, Ա. Փափազյանի, Բ. Ուլուբաբյանի և ուրիշների աշխատություններում³:

Ի պատասխան ադրբեջանական հետազոտողների Արցախի պատմամշակութային ժառանգությունը յուրացնելու փորձերի՝ 1970-1990-ական թթ. լույս են տեսել հայ և ռուս գիտնականների մի շարք աշխատություններ, որտեղ հիմնավորվում էր նմանատիպ միտումների անհեթեթությունը⁴:

¹ Новосельцев А. П. К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период // Кавказ и Византия. Ереван, 1979, вып. 1, с. 10-18; он же: Кавказская Албания: проблемы, трудности и пути их преодоления // Восток, 1991, № 5, с.190-200; Мелик-Оганджянян К. А. Историко-литературная концепция З. Буниятова.; Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н. К изучению истории Кавказской Албании ...; Арутюнян Б. А. Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении.; Улубабян Б. А. Топонимы «Албания», «Агванк» и «Аран»...; его же: О границах древнего Агванка...; он же: К вопросу об административно-политическом положении северо-восточной Армении в домарзпанский период...; Мнацаканян А. Ш. О литературе Кавказской Албании...; Свазян Г. С. Понятие «страны Агванк» в сочинении Мовсеса Каганкатаца.

² Мелик-Оганджянян К. А. Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора «Судебника» // Вестн.архивов Армении. 1969, № 1, с. 183-198; Пивазян Эм. А. Еще раз о Мхитаре Гоше // К освещению..., с 196-208; Арутюнян Б. А. Когда отсутствует научная добросовестность...; Мнацаканян А. Ш., Севак П. С. По поводу книги З.Буниятова «Азербайджан в VII-IX вв» // ИФЖ, 1967, № 1, с. 177-190.

³ Акопян А. А. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; Анасян А. С.Новая концепция в албанистике // К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении... с.126-154; Аракелян Г. С. Об этнографическом порядке размышлениях З.Буниятова // там же .с.398-405; Арутюнян Б. А. Когда отсутствует научная добросовестность // Вестн.обществ.наук АрмССР. 1987, № 7, с. 33-56; Мелик-Оганджянян К. А. указ. соч.; Мелик-Бахшин Ст. Т. Об одном «разъяснении» З. Буниятова // К освещению проблем...с.208-213; Мнацаканян А. Ш. указ.соch.; Мурадян П. М. Упрощенный подход мешает выяснению этнических проблем//История–память поколений: Проблемы истории Нагорного Карабаха. Ереван, 1990, с. 5-8; Папазян А. Д. Новые этиграфические данные о последних открытиях армянской феодальной знати в Сюнике // К освещению проблем... с.236-244; Улубабян Б. А. Еще одна произвольная интерпретация армянской «Истории страны Агванк» // там же , с.383-397 и др.

⁴ Якобсон А. Л. Гандзасарский монастырь и хачкары: Факты и вымыслы // ИФЖ, 1984, № 2, с.146-152; Асратьян М. М. Арцахская школа армянской архитектуры; факты и фальсификации // К освещению проблем... с.457-469; Аракелян Б. Н., Саакян А. С. Хачкары – предмет антисаунаучных извращений // там же, с.

Այս առօնութեան կարևոր սահմանագլուխ դարձավ «Կովկասյան Աղվանքի պատմության և մշակույթի հիմնախնդիրները» գիտաժողովը՝ նվիրված ակադեմիկոս Ս.Խաչիկյանի 70-ամյակին: Գիտաժողովում Հայաստանի Արևելյան գավառների և Կովկասյան Աղվանքի էթնիկ կազմի, վարչաքաղաքական սահմանների մասին հարցերի և աղբյուրագիտական հիմնախնդիրների հետ մեկտեղ դիտարկվել են մշակույթի հիմնախնդիրները: Մասնավորապես, Պ.Մուրադյանի, Մ.Հասրաթյանի, Հ.Պետրոսյանի և ուրիշների գեկուցումներում վեր են լուծվել այսպես կոչված «հայալեզու աղվանական գրականության», հայ ճարտարապետության արցախյան դպրոցի, Արցախի խաչքարերի իմաստաբանության հետ կապված հարցեր¹:

Աղրբեջանական պատմագիտության զարգացման միտումները բավականին մանրամասն վերլուծված են Վ.Շնիրելմանի աշխատության մեջ, որի եզրակացությունները և հիմնական դրույթները մոտ են մեր տեսակետներին: Մասնավորապես, մենք համակարծիք ենք Վ.Շնիրելմանի այն տեսակետին, որ աղրբեջանական ժողովրդի ծագման՝ իրար հետ բախվող մի քանի տեսությունների համաժամանակյա գոյությունը խոսում է այն մասին, որ աղրբեջանական ազգի կազմավորումը մինչ օրս չի ավարտվել²:

1936 թ.-ից հետո, երբ Ադրբեյջանի թուրքերին սկսել են պաշտոնապես կոչել «ադրբեյջանցիներ», ադրբեյջանական պատմաբաններից պահանջում էին ադրբեյջանական ժողովրդին ներկայացնել որպես բնիկ բնակչություն: Ադրբեյջանական ժողովրդի բնիկ լինելը հիմնավորելու խնդիրն ուներ բացառապես քաղաքական նշանակություն: Մասնավորապես, տվյալ խնդիրը ձևակերպվել է Ադրբեյջանի Կոմունիստական կուսակցության 1949 և 1951 թթ. տեղի ունեցած XVII և XVIII համագումարների ժամանակ³:

Արդեն Աղրբեջանի պատմության առաջին խկ դպրոցական դասագրքում, որը հրատարակվեց 1939թ.-ին և Վերահրատարակվեց 1941 թ.-ին, տեղի բնակչությունը, որ դարձողանին էլ որ Վերաբերվի խոսքը, կոչվում

470-483; Петросян Г. Л. О памятниках из Аветараона (Чанахчи), или как создавались исторические вымыслы // Коммунист, 1989, № 57; Григорян Г.М. Очерки истории Сюника IX-XV вв. Ереван, 1990, с.20-37; Карапетян С. Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха. Ереван, 2000 и др.

¹ Հայաստանի Հանրապետության կողմէն համարված Կարման Հրանտի և գը.

² Шнирельман В. А. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003.

³ Ямпольский З. И. Вопросы древней истории в изданиях Азербайджанской ССР (1948-1951 гг) // ВДИ, 1952, № 2, с. 164.

է բացառապես՝ «աղրբեջանցի»¹: Դասագրքի հեղինակները, փորձելով հիմնավորել Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու իրավասությունը, ընդգծում են, որ այն հնուց ի վեր ունեցել է Աղրբեջանի հետ սերտ տնտեսական կապեր: Աղրբեջանի պատմության մասին հաջորդ դասագրքում (1946թ.) առաջին անգամ աղրբեջանցիների նախնիներ ճանաչվեցին նաև աղվանները²:

1950-ական թվականների վերջերից աղրբեջանական ուսումնասիրողներն սկսեցին Ղարաբաղում և ընդհանրապես Կուրի աջափնյակում ապրող ու ստեղծագործող հայ քաղաքական գործիչներին, պատմաբաններին և գրողներին, ներկայացնել որպես աղվաններ: Այդ ճակատագրին արժանացան պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գանձակեցին, բանաստեղծ Դավթակը, իրավագետ Մխիթար Գոշը, իշխան Սահմանական և ուրիշներ³:

Ղարաբաղի քրիստոնեական հուշարձաններն աղրբեջանական պատմաբանները համառորեն անվանում էին աղվանական ու անդում, թե Արցախի X-XIII դարերի վանքերի հայերեն արձանագրությունների ստեղծողները ոչ մի առնչություն չունեին հայերի հետ⁴: Աղրբեջանցի հեղինակների տրամաբանության համաձայն, եթե աջափնյակը պատկանել է Կովկասյան Աղվանքին և առնչություն չի ունեցել հայերի հետ, ապա այնտեղ հայկական հետքի առկայություն չի կարող լինել, ու բոլոր պատմական հուշարձանները պետք է աղվանների ստեղծածը լինեն: Այս տեսակետի համաձայն արդեն 1950-ական թվականներին հայկական հուշարձանների առկայությունը տարածաշրջանում անտեսվում էր:

Հայերի դերը հին և միջնադարյան Անդրկովկասում փոքրացնելու և նսեմացնելու մի այլ միջոց էլ անտիկ և միջնադարյան սկզբնադրյուրների բազմատիրած վերահրատարակություններում «Հայկական պետություն» եզրույթը «Աղվանական պետություն» եզրույթով փոխարինելն էր, որն ուղեկցվում էր նաև հայությանն ու արցախահայությանն իրար հակադրելով⁵:

¹ История Азербайджанской ССР: Учебник для 8 и 9 кл. Баку, АзФАН, 1939, с.35-36, 72-74, 85.,История Азербайджана. (Краткий очерк). Баку, АзФАН, 1941, с. 5.

² Очерки по истории Азербайджана//Изв. АН АзССР, Отделение общенаук, Баку, 1946, вып.1.с.27.

³ Буниятов З. М. Азербайджан в VII-IX вв. Баку: изд.-во АН АзССР, 1965 с. 12, 184-186.

⁴ Ахундов Д. Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. Баку, 1986, с. 111-112.

⁵ Мурадян П. М. Два искаженных издателем памятника// К освещению проблем истории ... с.225-236.

Ժամանակի ընթացքում «Կովկասյան Աղվանքն» ու «աղվանները» փոխարինվեցին «Աղրբեջան» և «աղրբեջանցիներ» տարբերակով¹: Եվ հենց 1980-ական թթ. վերջին քրիստոնեական հուշարձանների նկատմամբ վերաբերմունքն արմատականորեն փոխվեց: Աղրբեջանական ԽՍՀ կառավարության որոշմամբ տասնյակ հայկական հուշարձաններ որակվեցին որպես «աղվանական»²: 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբներին՝ ազգային շարժման աճի և պետական անկախության նվաճման պայմաններում հատուկ հեղինակություն են ձեռք բերել պանթուրքական հայացքները: Աղրբեջանական պատմաբանները նորից ամենուրեք սկսեցին փնտորել թուրքերին³:

Խորհրդային պետության գոյության ողջ ընթացքում Աղրբեջանում պետական մակարդակով իրականացվում էր Արցախի և Աղրբեջանի կազմի մեջ մտցված՝ պատմական Հայաստանի այլ շրջանների մշակութային ժառանգության յուրացման ծրագիր: Բանայուրացումը հիմնականում ընթանում էր երկու եղանակով՝ փորձեր էին արվում գտնել հայքիստոնեական և թաթար-մահմեդական մշակույթների մեջ “ընդհանուր ակունքներ” և “նմանություններ” (Վ.Լսիատով, S.Տեր-Գրիգորյան, Ա.Ալեքպերով, Ա.Վարտապետով, Զ.Յամպոլսկի, Զ.Բունիյաթով և այլն): Դրա հետ միասին նշված հեղինակների աշխատություններում փորձեր էին կատարվում Արցախի հայությանը ներկայացնել որպես եկվորներ, որոնք հայցրել են տեղական աղվանական բնակչությանը: Մյուս կողմից Արցախահայ մշակութային ժառանգությունը վերագրվում էր աղվաններին, իսկ աղվաններից էլ՝ աղրբեջանցիններին⁴:

¹ Эффendi Р. Каменная пластика Азербайджана. Баку, 1986; Аббасов М. Г. Охрана памятников истории и культуры—гражданский долг каждого// Памятники Азербайджана. Баку, 1989

² Постановление СМ Азербайджанской ССР № 145 от 27 апреля 1988 г./// «Советский Карабах», 8 июля 1988. Դրա մասին տես Մուրադյան Պ. Մ. Нагорный Карабах с древних времен до 1917 г./// История – память поколений, с. 99.

³ Алияров С. С. Об этногенезе азербайджанского народа// К проблеме этногенеза азербайджанского народа / Ред. М. А. Исмайлов. Баку, 1984, с. 4-39. Алиев К. Г. Этюды о населении древнего Азербайджана// К проблеме этногенеза азербайджанского народа / Ред. М. А. Исмайлов. Баку, 1984, с.40-68; Гейбуллаев Г. А. К этногенезу азербайджанцев// К проблеме этногенеза азербайджанского народа / Ред. М. А. Исмайлов. Баку, 1984, с.102-151.; Юсифов Ю. Б. К значению древних топонимов в изучении этнической истории Азербайджана// Изв. АН АзССР, сер. лит-ра, яз. и искусство, Баку, 1987, № 2, с.101-110.; Юсифов Ю. Б Об актуальных проблемах этнической истории Азербайджана// Проблемы изучения источников по истории Азербайджана/ под ред. Т. С. Велиева, Баку, 1988, с.17-19.; Юсифов Ю. Б. Ранние контакты Месопотамии с северо-восточными странами// ВДИ, 1987, № 1, с.19-40; Алиев И. Г. Изучение проблем древней истории, филологии и археологии в Азербайджане в 1977 – 1987 годы // ВДИ, 1988, № 1, с.63.

⁴ Սանրաման տես. Հ. Պետրոսյան. Աշկալովային էթնոցիզմ Արցախում (մշակութային ժառանգության բռնապերացման մեխանիզմը). // Արդթեզանի պետական ակադեմիկությունը և էթնիկական զուտման ներքի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ. Ծովիչ, 2010, էջ 137-149:

Ներկա շրջանում աղբեջանական մտավորականությանը նոր նախնիներ է փնտրում և աղբեջանական էթնոսի կողմից հստակ արտահայտված թշնամական վերաբերմունք է դրսերորդում դեպի արցախահայության մշակութային ժառանգությունը։ Դա կարելի է ցուցադրել Զուղայի խաչքարերի օրինակով, ինչպես նաև Քարվաճառի, Ֆիզովիի, Զանգելանի, Զաբրյալիի և Աղդամի խաչքարերի և քրիստոնեական հուշարձանների նկատմամբ ցուցաբերած վանդալիզմի վաստերով։

Անհրաժեշտ է նշել, որ եթե խորհրդային ժամանակաշրջանում հայկական էթնոսին հատկացվել էր որևէ դեր տվյալ տարածաշրջանի պատմության և մշակույթի մեջ, ապա այսօր ամբողջությամբ արհամարհվում է հայերի գոյությունը ոչ միայն Ղարաբաղում, այլև՝ ընդհանրապես Անդրկովկասում¹: Ժամանակակից աղբեջանական պատմաբանների աշխատանքի մեթոդը պանթուրքիզմի գաղափարների իրականացման նպատակատրված օրինակ է, որը նաև բացահայտութեն քարոզվում է Աղբեջանում։ Ընդ որում այդ գաղափարները ոգեշնչողների դերում, ինչպես և նախկինում, հանդես են գալիս պետության դեկավարները։

Այսօր Աղբեջանի պատմաբանների առաջ դրված է երկու խնդիր՝ «ապացուցել» աղբեջանցիների բնիկ լինելը ժամանակակից Աղբեջանի հանրապետության տարածքում և միաժամանակ մաքրել այդ տարածքը հայկական ժառանգությունից։ Այդ նպատակով փորձեր են արվում։

- Նոյնականացնել Կովկասյան Աղվանքը և Աղբեջանը (տվյալ միտումն առաջին անգամ հնչողություն է ստացել 1930-1940-ական թվականներին և հետագա զարգացում՝ 1960-ական թվականներից ի վեր),

- հայտարարել, որ իբր գոյություն է ունեցել հարուստ աղվանական գրականություն և, որ հայերը դա ոչնչացրել են՝ նախապես այն հայերեն թարգմանելով,

- Ղարաբաղում և ընդհանրապես Կուրի աջակինյակում ապրած ու ստեղծագործած հայ պատմական քաղաքական գործիչներին, պատմիչներին և գրողներին, ներկայացնել որպես աղվաններ,

- «ապացուցել», որ Արցախը երբեք չի պատկանել հայ մշակույթի կենտրոններին՝ հայտարարելով, որ Ղարաբաղի հայացման գործընթացը

¹ Կարաճախ. Օчерки истории и культуры. Баку, 2004; Մամեդова Ф. Кавказская Албания и албанцы. Баку, 2005; Մամեդova Ф. К вопросу о Албанском (Кавказском) этносе // <http://caucasianhistory.org/>

տեղի է ունեցել XII դարից (Զ. Բունիածով), և նույնիսկ XIX դարից (Ֆ. Մամեդովա, Շ. Ախունդով և այլ), սկսած,

- «ապացուցել», որ քրիստոնեությունը Աղվանք մտել է ավելի վաղ քան Հայաստան, և որ Աղվանից եկեղեցին միշտ անկախ էր կամ պայքարում էր Հայ եկեղեցուց անկախանալու համար:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ Արցախի հին մշակույթի հարցում.

- Աղրբեջանական հետազոտողներն ընդգծելով Ազոխի և Թաղլարի անձավային կայանների կարևորությունը մարդկային հասարակության զարգացման ուսումնասիրության մեջ, միաժամանակ հաճախ կատարել են գիտությունից հեռու եզրակացություններ՝ վաղ պալեոլիթի մարդկանց վերագրելով նստակեցություն, հաշվելու համակարգ, ծևավորող խոսք, հոգևոր մշակույթ (Մ. Հուսեյնով, Ի. Ալիև): 1970-1980-ական թթ. որոշ աշխատանքներում փորձեր են կատարվել հետևել աղրբեջանցիների ֆիզիկական տեսակի կայացմանը՝ նույնիսկ պալեոլիթյան ժամանակ-ներից սկսած, իսկ Աղրբեջանի պատմությունը սկսել պալեոլիթից (Ի. Ալիև, Ռ. Կասիմովա, Ա. Սումբատզադե),

- աղրբեջանցի հնագետները որոշակի ներդրում ունեն Ղարաբաղի բրոնզե և վաղ երկաթ դարաշրջանների նյութերի հայտնաբերման և դասակարգման առումով: Միևնույն ժամանակ, նկարագրելով հնագիտական նյութը, նրանք հնարածին էթնիկ երանգ են վերագրում այդ նյութերին՝ Կուր-արաքսյան մշակույթը հայտարարելով որպես թուրքական մշակույթ (Է. Ալիբեյզադե, Կ. Վելիև, Ն. Ոզակ), «նախա-աղրբեջանցիների մշակույթ» (Յու. Յուսիֆով) և այլն: Չիմնավորված անվանափոխել են գիտության մեջ հայտնի հնագիտական մշակույթ-ները՝ խառնաշփոթություն մտցնելով Անդկովկասի հնագիտության մեջ: (Տ. Բունիածով, Մ. Հուսեյնով),

- Եթե մինչև 1960 - ական թվականները քրիստոնեական հուշարձանների գոյությունը նախկին ԼՂԻՄ տարածքում Աղրբեջանի իշխանությունների կողմից արհամարհված էր, ապա 1960-ական թթ. երկրորդ կեսերից սկսած, դրանք դարձան աղրբեջանական պատմաբանների «հետազոտությունների» օբյեկտ: Ղարաբաղի այս հուշարձանները աղրբեջանցի հետազոտողները փորձել են աղվանականացնել՝ հետագա աղրբեջանականացման հեռանկարով (Ռ. Գեորշի, Շ. Ախունդով և ուրիշներ): Այդ նպատակով՝

- աղբեջանցի պատմաբանները «վինտրում» և «գտնում» են միհրականության տարրեր Արցախի քրիստոնեական հուշարձաններում,
- և վերջապես, XX դարի 70-ական թվականներից սկսած, աղբեջանական պատմագիտությունը վերջնականապես անցավ թուրքական հակահայ պատմագրության ավանդույթներին:

Резюме

В статье выявляются политические и научные тенденции и методология азербайджанской исторической науки, направленные на фальсификацию древней и средневековой культуры Арцаха.

Summary

The article identifies political and scientific trends and methodology of the Azerbaijani historical science, aimed at the falsification of the ancient and medieval culture of Artsakh.

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈ

Արմեն Սարգսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրԴՀ

Ավանդությունները էպիկական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալու եղած և տեղի ունեցած իրերն ու դեմքերը, դեպքերն ու երևույթները: Դրանց շնորհիվ հարազատ ժողովրդի և բնաշխարհի առանձնահատկությունները, հնում տեղի ունեցած պատմական դեպքերը, ներքին և արտաքին շփումներն ու փոխհարաբերություններն արտացոլող պատմությունները փոխանցվում են սերնդեսերունը՝ նպաստելով ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանն ու ինքնության հարատևմանը:

Արցախյան բանահյուսության մեջ ուրույն տեղ ունեն ավանդությունները: Ժողովրդական նման ստեղծագործություններ են ընդգրկված Ա. Զալայյանցի «*Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան*» (մասն 1, 1842 թ., մասն 2, 1858 թ.), Ա. Բարխուտարյանի «*Արցախ*» (1885 թ.), «*Աղվանից աշխարհը և դրացիք*» (1893 թ.), Լեոյի «*Ուխտավորի հիշատակարանը*» (1885 թ.), «*Իմ հիշատակարանը*» (1890 թ.), Ռաֆֆու «*Խամսայի մելիքությունները*» (1895 թ.), Ե. Լալայանի «*Վարանդա*» (Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ.) գործերում, *ԽևկըԿի* և *հԾԿԾկւի* տարբեր հատորներում, ինչպես նաև մի շարք ձեռագրերում: Սրանցից առանձնապես արժեքավոր է Ե. Լալայանի «*Վարանդա*» աշխատությունը, որտեղ ազգագրական նյութերի հետ ներկայացվում են Արցախի տարբեր գյուղերից գրառված տասնյակ ավանդություններ: Նշված բոլոր այս ստեղծագործություններն զետեղված են Ա. Ղանալանյանի «*Ավանդապատում*» (1969 թ.) ժողովածուի մեջ: Արցախյան ավանդությունների գրառմանը և հրատարակմանը լուրջ ուշադրություն է դարձվել նաև հետազայում: Հիշատակության արժանի են Ա. Գրիգորյան-Սպանդարյանի «*Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը*» (1971 թ.), Ա. Առաքելյանի և Ռ. Ղահրամանյանի «*Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից*» (1978 թ.), Ա. Լիսիցյանի «*Լեռնային Ղարաբաղի հայերը*» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, 1981թ.) Ա. Ղազիյանի «*Արցախ*» (Հայ ազգագրություն և

բանահյուսություն, հ. 15, 1983թ.), Լ. Հարությունյանի «**Նշխարներ Արցախի բանահյուսության»** (1991 թ.) ժողովածուները, որտեղ բանահյուսական այլ ժանրերի հետ տեղ են գտել բազմաթիվ՝ հիմնականում մինչև այդ չպահպաժ ավանդություններ, իսկ Ա.Սարգսյանի «Արցախյան ավանդություններ» ժողովածուն (2007 թ.) ընդգրկում է 266 ավանդություն և ավանդագրույց՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը մինչև այդ գրավոր ձևով չեն ավանդվել:

Մեծ են ավանդությունների աղերսները ժողովրդական բանահյուսության այլ, հատկապես էպիկական ժանրի մյուս ստեղծագործությունների հետ: Եվ պատահական չէ, որ ժամանակի ընթացքում տեղի են ունեցել փոխանցումներ դրանց միջև, ինչը հիմք է տվել որոշ գիտնականների՝ ավանդությունները նույնացնել այլ ժանրերի հետ¹: Այսպես. Տումի գյուղի **Պռըզվալէնջ** տեղանքի մասին պատմվող ավանդությունը² բանագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև որպես հեքիաթ³: Գիշերվա և ցերեկվա հաջորդականությունը բնորոշող ավանդությունը⁴ հանդես է գալիս «**Մինան թաքավէրը**» հեքիաթի մեջ⁵ և նույնական գործածվում որպես հանելուկ (**Մին պառավ կընէգ՝ ըռըշկին մին սլ՛վ, մին սիպտակ կըծէգ, մինը կըզկում ա, մինը յը՛տ տամ**): Քիչ չէ նաև ավանդությունների վերածված անեկդոտների և գրույցների թիվը: Այսօր էլ արցախյան գոյանարտի հերոսների մասին հյուսվում են զանազան իրական և չափազանցված պատմություններ, որոնք, անշուշտ, տասնյակ տարիներ հետո կստանան ավանդության արժեքը: Որոշ ավանդություններ էլ ժամանակի ընթացքում դարձել են առած-ասացվածքներ, դարձվածներ, օրինանքներ, անեծքներ՝ իրենց մեջ խտացնելով հարազատ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը: Այսքանով հանդերձ՝ ավանդություններն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է նրանց դերով, որը, ի տարբերություն մյուս ժանրերի, ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջմունքների բավարարումն է, այլ նրանց համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ հաղորդելը⁶: Ավանդությունները ստեղծվում և պատմվում են հիմնականում իրենց նյութ դարձած դեմքերի

¹ Ա. Ղանապանյան, Ավանդապատում, 1969, էջ ԺԵ-ԻԲ:

² Ա.Սարգսյան, Արցախյան ավանդություններ, 2007, էջ 39:

³ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, 1966, էջ 675:

⁴ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 16:

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, 1966, էջ 29:

⁶ Ա. Ղանապանյան, նշվ. աշխ. էջ հ4:

ու դեպքերի, առարկաների ու վայրերի մոտակայքում: Եվ եթե այլ ժանրերի ստեղծագործությունների բանասացները պետք է ունենան համապատասխան բնատուր ձիրք, ապա ավանդախոսները տարբեր խավերի և տարիքի սովորական մարդիկ են, որոնք երբեք իրենց լսածն ու տեսածը հաղորդում են խոսակիցներին: Յուրահատուկ է նաև ավանդությունների կառուցվածքն ու ձևը: Դրանց հատուկ է կարձ, պատմողական խոսքը, որը հազվադեպ է ուղեկցվում հարց ու պատասխանով, երկխոսություններով և գերծ է այլ ժանրերին հատուկ կայուն բանաձևերից: Ավանդությունների գեղարվեստական արժեքը հիմնականում պայմանավորված է նրանց սեղմ ոճով: Ընդամենը մի քանի նախադասությամբ ավանդախոսները պարզ ու հասկանալի լեզվով ներկայացնում են կյանքի մի պատկեր, որտեղ բավական հաջող բնութագրվում են արտաքին աշխարհն ու ժամանակը: Առավել մեծ է նման ստեղծագործությունների պատմական և ձանաչողական արժեքը: Հաճախ դրանք դառնում են հուսալի աղբյուր պատմագետների, բանագետների, հնագետների և ազգագրագետների համար՝ հնարավորություն ստեղծելով բացահայտելու հարազատ ժողովրդի պատմության, կենսակերպի, կենցաղի, աշխարհայացքի, հավատալիքների այս կամ այն առանձնահատկությունը, լրացնելով գրավոր աղբյուրների բացը, մեկնաբանելով տարբեր ժամանակաշրջաններում ժողովրդի վերաբերմունքն ու գնահատականը պատմական իրականության, դեպքերի ու դեմքերի նկատմամբ, նպաստելով անհետացած հասարակական որոշ երևույթների հայտնաբերմանը, նրանց ծագման ու գոյատևման հանգամանքների պարզաբանմանը: Դրան զուգընթաց բազմաթիվ ստեղծագործություններ, տարիներ ու դարեր շարունակ փոխանցվելով սերնդից սերունդ, կորցրել են իրենց հավաստիության արժեքը՝ աղավաղելով ստույգ ժամանակագրությունն ու պատմական փաստերը: Աղավաղումները հատկապես ակնառու են այն ստեղծագործություններում, որտեղ փորձ է արվում ստուգաբանել անձնանունները, տեղանունները, երևույթների ու առարկաների անունները: Ահա թե ինչու լեզվաբանները խիստ թերահավատությամբ են ընդունում նման փաստերը: Սակայն որոշ դեպքերում դրանք լեզվաբանական տեսակետից նույնպես կարող են արժեք ներկայացնելու հիմակ, Մարտունու շրջանի Սխտորաշեն (Սըխտուրաշէն) գյուղի անունը շատերը կապում են **սխտոր** բառի հետ, չնայած գյուղացիների

վկայությամբ սխտորը այդ գյուղում լավ չի աճում: Մինչեռ ավանդությունը պատմում է, որ այդ տեղանքը, շնորհիվ իր գեղեցիկ բնության, սառնորակ աղբյուրի և հանրահայտ սոսի ծառի, երկար ժամանակ եղել է իրանի շահի ամառանցք, որի պատճառով էլ կոչվել է **Ծախ դուրան շեն** (շահի կանգնելու շեն), իսկ հետագայում՝ **Ծըսդուրաշեն**¹, ինչը և ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է **սխտոր** բառի հետ՝ ստանալով ներկայիս ձևը: Նման ստուգաբանությունն արդեն լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս:

Հինք ընդունելով ավանդությունների էությունը՝ Ա.Ղանալանյանը դրանք բաժանում է երեք հիմնական տեսակների²:

1. **Ստուգաբանական ավանդություններ**, որտեղ մեկնվում, ստուգաբանվում և իմաստավորվում են անհասկանալի բառերը:

2. **Բացատրական ավանդություններ**, որոնք ընդգրկում են երկնային և երկրային տարբեր մարմինների առաջացումը, կենդանիների ու բույսերի տարբեր հատկություններ, մարդկային ամենատարբեր հարաբերություններ, զանազան երևույթներ, սովորություններ, հավատալիքներ, հանգամանքներ:

3. **Վարքաբանական ավանդագրույցներ**, որտեղ կենսագրական տեղեկություններ և միջադեպեր են պատմվում իրական և մտացածին, հայտնի և անհայտ անհատների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Արցախյան բանահյուսության մեջ ըստ քանակի գերակշռում են ստուգաբանական ավանդությունները: Յուրաքանչյուր բնակիչ փորձում է ստուգաբանել իր բնակավայրի և շրջապատող առարկաների անունները՝ տալով հիմնականում տեղական, պատմական բացատրություն³: Քիչ չեն նաև բացատրական ստեղծագործությունները, իսկ վարքաբանական ավանդագրույցները գգալիորեն գիշում են այդ երկուսին: Որոշ ստեղծագործություններ էլ իրենց էությամբ կարող են դասվել և առաջին, և երկրորդ խմբերի մեջ:

Ըստ բնույթի՝ ավանդությունները բանագիտության մեջ լինում են **ազգային, միջազգային և եկամուտ**⁴: Դրանց մեջ քանակով և պատմական ու ձանաչողական արժեքով գերակշռում են ազգայինները:

¹ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 23:

² Ա.Ղանալանյան, նշվ. աշխ., էջ ԻՇ-ԻՇ:

³ Ա.Ղագիան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973 թթ. գրառումների հիման վրա, Պատմաբանասիրական համեմատ, N 3, 1974 թ., էջ 237:

⁴ Ա.Ղանալանյան, նշվ. աշխ., էջ I-ԱԱ:

Արցախյան ազգային ավանդությունները սերտորեն կապված են Հայաստանի այլ վայրերի համանման ստեղծագործությունների հետ, որոնց միջից հառնում է հայի կերպարը՝ իր բնավորությամբ ու հոգեբանությամբ, կենցաղով, սոցիալ-տնտեսական հարաբերություններով, հավատալիքներով, սովորություններով՝ կապված հայրենի բնաշխարհի հետ: Թերևս այդ ստեղծագործությունների մեջ կարելի է առանձնացնել բուն արցախյանը, որոնք մեծամասամբ ստուգաբանական ավանդություններ են և մեկնաբանում են այն անուններն ու երևոյթները, որոնք գործածական են միայն Արցախում: Այսպես. Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի մերձակայքում գտնվող **Փղոթուշ ախաղուրը** այդպես է կոչվում այն օրվանից, երբ հովհակը ստիպված էր փոխել աղբյուրի հունը և նրա ակի մեջ բրդուճ (*փղոթուշ*) պատրաստել¹:

Հաղորտի շրջանի **Տիգակաղ** (*Դիգակայու*) սարը իր անունը ստացել է այն ժամանակ, երբ կորապաշտների թագավորը իրամայել է քրիստոնեությունն ընդունած իր մերձավորներին փայտի նման դիգել և վառել²:

Շուշու շրջանի Բերդաձոր գյուղի մերձակայքում է գտնվում **Պարին այծ** սրբավայրը, որտեղ թաղված է ժողովրդի մեջ տարածված հիվանդությունը կանխած անանուն մի բժիշկ: Քանի որ, չիմանալով բժիշկի անունը, բոլորը նրան կոչում էին բարի բժիշկ (պարի պըժիշկ), ուստի սրբավայրին էլ տվել են **Պարին այծ** անունը³:

Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի բլուրներից մեկը կոչվում է **Հայրունց թումբ**, քանի որ իրանի Ղարադաղի գավառից գաղթած Հայրունց ազգը սկզբնական շրջանում այս բլրի վրա է բնակություն հաստատել⁴:

Ասկերանի շրջանի Դահրազ և հարևան գյուղերում գործածական է **Դիհրզգցու պէլի** դարձվածքը, որով կոչում են ձաշկերույթի ժամանակ սեղանի մոտ կանգնած մարդկանց: Պարզվում է, որ առաջներուն Դահրազ գյուղում հարսանյաց հանդեսի ողջ ընթացքում քավորը (*պէլի*) մնում էր կանգնած հարսանիքը դեկավարելու համար⁵:

¹ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 58:

² Նոյն տեղը, էջ 36:

³ Նոյն տեղը, էջ 55:

⁴ Նոյն տեղը, էջ 42:

⁵ Նոյն տեղը, էջ 85:

Արցախյան ավանդությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի բնաշխարհն ու նրա հետ կապված հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները: Արցախում ևս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու ոգեղինացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու կենդանիները, առանց որոնց անհնար է արցախցու գոյությունը:

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրսը, Մռավն ու Դիզափայտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել մի շարք ավանդություններում: Այժմ էլ արցախցի կանայք, ձեռքերը կարկառելով դեպի այդ լեռները, խնդրում են կատարել իրենց իղձը՝ մեկին պահպանելու, երկար կյանք պարզելու, փորձանքներից հեռու պահելու կամ պատժելու: Այսպես. չար կեսուրից ազատվելու համար թշվար կինը խնդրում է Քիրսին քար դարձնել, որը և խկոյն կատարվում է¹, բաքվեցի հայ կինը հեռու-հեռվից դիմում է Դիզափայտին իր մահամերձ որդու կյանքը փրկելու խնդրանքով՝ խոստանալով մատաղ անել, և հիվանդը, որի մահը բժիշկները համարում էին ամխուսափելի, կազդուրվում է², բնակիչները խնդրում են Մռավին՝ փրկելու իրենց քափասից, որը, անչափ բարձրանալով, ստվերի տակ է թողել ողջ շրջակայքը: Մռավը լսում է խնդիրքը և թրով զարդում ըմբոստ լեռան գլուխը³:

Հայրենի լեռների հետ պաշտպում են նաև մի շարք քարեր և ժայռեր, որոնք դարձել են ուխտատեղիներ: Դրանց մոտ աղոթում են, մոմ վառում, մատաղ կտրում:

Հերեւեր գյուղից վերև՝ լեռան լանջին, կա մի հսկա ժայռ, որի գլորման սարսափից գյուղացիները ստիպված են եղել տեղափոխվել ներքև և կառուցել նոր տներ⁴: Երկյուղը ստիպել է բնակիչներին պաշտել այդ ժայռը, որպեսզի չգլորվի և չավերի գյուղը:

Գյունե ճարտար գյուղում է գտնվում **Ծմանեքը**՝ երեք ժայռերից կազմված մի ամբողջություն, որոնց միջև կա երկու խորշ: Այդ խորշերով անց են կացնում կատաղած անասուններին, որպեսզի խելոքանան⁵:

¹ Նոյն տեղը, էջ 40:

² Նոյն տեղը, էջ 36:

³ Նոյն տեղը, էջ 41:

⁴ Ե. Լալայան, Վարանդա, Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ., էջ 189:

⁵ Նոյն տեղը:

Խնձրիստան գյուղի մոտ է գտնվում **Սուլուլ քարը**. Ավանդության համաձայն՝ դա քարացած մի կին է՝ երեխան գրկին, որը, ձգտելով ազատվել իրեն հետապնդող թշնամիներից, խնդրել է Աստծուն՝ իրեն քար դարձնել¹: Մեկ այլ տարբերակի համաձայն՝ կինը բողոքել է Աստծու դեմ դաժան ճակատագրի համար, որի պատճառով Աստված զայրացել և նրան քար է դարձրել²:

Առանձնակի պաշտամունքի առարկա են ծծաքարերը, որոնցից իր գորությամբ հայտնի է Խերիսան գյուղի մերձակայքում գտնվողը: Այս հեռվից ծծկեր երեխային կերակրող կնոջ տեսք ունի, որի ծծերից կաթ-կաթ ջուր է հոսում: Սակավակաթ կանայք այդտեղ աղոթում են, մոն վառում, այդ ջուր քսում իրենց կրծքերին, և կաթը իսկույն առատանում է: Ոմանց պատմելով՝ այստեղ ժամանակին ապրել է Խերիսան թագավորի չքնաղ դուստրը՝ Ծովիկը, որը, չցանկանալով թշնամիների ծեռքն ընկնել, ինքնասպան է եղել: Չար թշնամիները կտրել են նրա ծծերը և դրել ժայռի վրա, որից Աստծու գորությամբ սկսել է կաթնաջուր հոսել³: Մեկ այլ ավանդության համաձայն մի անխիղձ մայր այս ժամանակի մոտ արձակել է իր ծծկեր երեխային և փախել: Աստված ժայռին ծծեր ու կաթ տալու շնորհք է պարզել, որ երեխան սովից չմեռնի⁴: Իսկ ոմանք էլ ասում են, որ այդ ժայռը ժամանակին չար կեսուրից հալածված մի հարս է եղել, որը, այլևս չցանկանալով վերադառնալ կեսուրի մոտ, խնդրել է Քիրսին՝ իրեն քար դարձնել⁵:

Նման ծծաքարեր կան տարբեր գյուղերում:

Հայտնի են նաև մի շարք քարեր, որոնցից յուրաքանչյուրը պաշտվում է՝ որպես մի որոշ հիվանդության բժշկող: Որոշ քարեր էլ, թեև չեն պաշտվում, բայց հայտնի են իրենց շուրջը ստեղծված ավանդություններով:

Հաղորտի գյուղի մոտ գտնվող **Ավանա քարը** հայտնի է նրանով, որ այստեղ Ավան Յուզբաշին և Թարիսան հարյուրապետը հաղթել են պարսիկներին՝ այս քարի վրա արձանագրելով հաղթանակի պատմությունը⁶:

¹ Ա. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 45:

² Նոյն տեղը:

³ Ա. Ղազիյան, Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983, էջ 150:

⁴ Ա. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 40:

⁵ Նոյն տեղը:

⁶ Նոյն տեղը, էջ 40:

Գտիչ բերդը և թաղոտ գյուղը բաժանող ձորում կա մի հսկա քարակույտ՝ **Կուտած քարեր**, որը ըստ ավանդության՝ հավաքել են Բուլղարի գինվորները՝ ցանկանալով ձորը լցնել քարերով և ճանապարհ բացել բերդը գրավելու համար¹:

Նման մի քարակույտ էլ կա Աստղաշեն գյուղի մերձակայքում անտառի մեջ, որ կոչվում է **Խէխտած**. Մի անգամ այստեղ մի հարս խեղդել է յուր սկեսրոջը: Սովորության համաձայն գնացող-եկողը երեք քար է նետում պառավի սպանված տեղը, որից և գոյացել է քարաբլուրը²:

Արցախում մնում են նաև ջրի պաշտամունքի մնացուկները. մի քանի աղբյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդությունների բժշկող: Դրանցից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները միայն որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Մինչև այժմ էլ պաշտվում է Գյումե ճարտարի **Դավաշչագ ախառոր**, որը համարվում է մոլոքոր հիվանդության բժշկող: Հիվանդները, ինչպես հնում, աղբյուրի առջև մոմ են վառում, աղոթում և լողանում կամ լվացվում ժայռի մեջ փորված ջրափոսի մեջ: Նրանց համար, ովքեր ի վիճակի չեն բարձրանալ աղբյուրի մոտ, ջուր են տանում, սակայն այդ դեպքում չպետք է հետ նայել կամ ջրի ամանը գետնին դնել, այլապես ջուրը կվորցնի զորությունը:

Որպես ամեն տեսակի հիվանդությունների բժշկող՝ հայտնի է Հաղորտի գյուղի **Զրավոր ախառոր**, որին այցելելով՝ հիվանդները այդ ջրից խնում և քսում են իրենց մարմնին ու կազդուրվում³:

Դիզափայտ լեռան ստորոտի գյուղերում մեծ համբավ ունի լեռան վրա գտնվող **Արշին ախառոր**: Ավանդությունը⁴, ըստ որի՝ աղբյուրը բխել է ծարավից տոչորվող արջի՝ երկնքին ուղղված խնդրանքի արդյունքում, իհմա էլ պատմվում է այդ գյուղերում: Պաշտվում է նաև աղբյուրից վերև գտնվող քարայրը, որտեղ կայծակը խոցել է արջին:

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ: Գողտրիկ մի պատմություն է Խաչմազ գյուղի **Կույր ախառորի** մասին պատմվող դեպքը. Զուր

¹ Նոյն տեղը, էջ 38:

² Նոյն տեղը, էջ 46:

³ Նոյն տեղը, էջ 57:

⁴ Ա. Քաբախանյան, Ուխտավորի հիշատակարանը, 1885, էջ 83: Ս. Լիսիցյան, Լեռնային Դարաբաղի հայերը. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981, էջ 57:

⁵ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, 1991, էջ 90:

վիշապը կուլ է տալիս ջրի եկած աղջկան: Նրա մահը սգում է սիրած տղան և անիծում.

- Զորանան, աղբյուր, կուրանան, աղբյուր,- ինչը և կատարվում է¹:

Մյուս տարբերակի համաձայն՝ Երիտասարդ հովիվը մորթազերծ է անում մի կով և կաշվով փակում վարար աղբյուրի հունը, որպեսզի կարողանա հանել սիրած աղջկա դիակը, բայց ինքն էլ խորտակվում է: Հետագայում, երբ ժողովուրդը բացում է աղբյուրի հունը, այն արդեն ցանաքած (կուրացած) էր²: Մեկ այլ վարկած էլ պատմում է, որ այստեղ խեղդվել է կռապաշների առաջնորդի աղջիկը: Կատարած առաջնորդը հրամայել է քարերով լցնել աղբյուրը և կուրացնել³:

Հացի գյուղում է գտնվում **Անահիտին ախառուրը**. Ժողովրդի պատմելով՝ այս աղբյուրի մոտ է Վաչագան թագավորը առաջին անգան հանդիպել իր ապագա կնոջը՝ Անահիտին⁴: Նույն ավանդությունը պատմվում է նաև Չլդրան գյուղի մերձակայքում գտնվող համանուն աղբյուրի մասին:

Հետաքրքիր է Կաղարծի գյուղի տարածքում գտնվող **Հաց ախառուրի** պատմությունը⁵: Այն սկզբում կոչվել է Թարխան աղբյուր՝ բխեցնողի՝ որսկան թարխանի անունով: Հերթական անգամ, երբ որսկանը ցանկանում է հագեցնել ծարակը, մի ագռավ մի քանի անգամ իրեն նետում է աղբյուրի ակը՝ պղտորելով ջուրը: Զայրացած որսկանը կրակում ու սպանում է ագռավին և հետո միայն նկատում, որ օձը թույնը թափել է ջրի մեջ: Խիստ գղջալով արածի համար՝ թարխանը ճաշկերույթի է հրավիրում համագյուղացիներին և, պատմելով իր երախստամոռության (նամարդության) մասին, խնդրում աղբյուրի անունը փոխել և դնել **Նամարդի Ճուր**: Աղբյուրը ստանում է երկու անուն՝ **Թարխան ախառուր** և **Նամարդի Ճուր**. Հետո ավելանում է նաև երրորդ անունը՝ **Հաց ախառուր** Կաղարծից Հացի գյուղ տանող ձանապարհին գտնվելու պատճառով:

Որոշ ավանդություններ են պահպանվել նաև այլ ջրերի մասին:

⁴ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 61:

⁵ Նոյն տեղը:

⁶ Ս.Արաքեյան, Ռ.Դահրամանյան, Նմուշմեր Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, 1978, էջ 141:

⁷ Ա. Ղազիյան, նշվ.աշխ., էջ 152:

Բալուջա գյուղի գետը կոչվում է *Մղղրակէտ*, քանի որ մեղումերը բույն էին դրել նրա ափի մեծ ծառի վրա, որտեղից մեղրը հոսում էր և լցվում գետը¹:

Սզնեք գյուղի մոտ գտնվող լճակում խեղդվել է մի ջահել աղջիկ: Սզավոր մայրը անիծել է, որի հետևանքով ջուրը սևացել և ստացել է *Մժկ ծով* անունը²:

Հուզիս է Թարթառի հովտում եղած *Եշի արիս* մասին եղած ավանդությունը. գեղեցկուիին պայման է դնում իրեն սիրո առաջարկությամբ դիմած երկու երիտասարդների առաջ. կամուսնանա նրա հետ, ով առաջինը կարողանա ջուր հասցնել մինչև իր հոր պալատը: Զիվանշիրի մելիքի որդին, տեսնելով, որ հակառակորդը՝ Խաչենի մելիքի որդին, աշխատանքն արդեն ավարտում է, դիմում է խարդախության. Թարթառ գետից մինչև աղջկա հոր բերդը կտավ է մեկնում, որը, արևի տակ փայլելով, հեռվից հոսող ջրի տպավորություն է թողնում: Տեսնելով «հոսող ջուրը»՝ Խաչենի մելիքի որդին հանկարծամահ է լինում: Ժողովուրդը խարված երիտասարդին կոչում է Եշ, իսկ առուն՝ *Եշի արիս*³:

Արցախում յուրահատուկ է նաև բույսերի և կենդանիների պաշտամունքը: Ծառապահտության մեջ նախապատվությունը տրվում է պըօքնի (բռնչենի) ծարին, որին կարելի է հանդիպել կալատեղերում, գերեզմանոցներում, սրբավայրերում: Հատկապես պաշտվում են այս վերջինները, քանի որ ժողովրդի մտածողությամբ Աստծու գորությունը տված է սրբերին և նրանց մոտ գտնվող ծառերին: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ու սրբավայր ունի նման ծառեր, որոնց հանդեպ խոր հավատով են լցված բոլոր բնակիչները: Մեծ մեղք է համարվում սրբազան ծառերը կամ նույնիսկ նրանց փոքր ճյուղերը կտրելը. հանդգնողը ժողովրդի դատողությամբ անպայման պատժվում է:

Հադրութի շրջանի *Պլեթանց* գյուղի Եկեղեցու բակի մեծ պոշնենու մասին ասում են, որ մի անգամ գյուղի պատանիներից մեկը համարձակվել է բարձրանալ ծառը և պարսատիկի համար երկճյուղ կտրել: Սակայն իջնելուց ընկել է ժայռի վրա և իսկույն մահացել: Հետագայուն մահացել են նաև նրա եղբայրները և քոյրերը: Պատահական չե, որ մինչև իհնա ոչ ոք չի համարձակվում օգտագործել անգամ ծառի չորացած և

¹ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 59:

² Նույն տեղը, էջ 61:

³ Ա. Գրիգորյան-Սպանդարյան, Եթոնային Ղարաբաղի բանահյուսությունը, 1971, էջ 337:

թափված ձյուղերը, դրանցով միայն մատաղ են եփում, կամ ծերունիները աչքի ուլունքներ են պատրաստում նորածինների համար¹:

Նույն գյուղի մեկ այլ սրբավայրի՝ **Նշիատակի** մասին պատմում են, որ գյուղի՝ զավակ չունեցող բնակչներից մեկը Աստծու պատվերով մի գերեզմանաքար է տանում և կանգնեցնում այդտեղի թքեռնի սուրբ ծառի տակ, և ինը ամիս հետո նրա ընտանիքում տղա է ծնվում: Մի գյուղացի՝ համազյուղացիների բնորոշմանը խելքը հացի հետ կերած մի հայ, անտեսելով պաշտամունքը, սուրբ ծառի՝ կայծակից չորացած և ընկած ձյուղը կտրտում և օգտագործում է տան կարիքների համար, որի պատճառով էլ նրա աջ ձեռքը չորանում է²:

Բացի պաշնուց և թքեռնուց պաշտվում են նաև կաղնին, սոսին, ձապկին, ընկուզենին, տանձենին և այլ ծառեր: Այդ ծառերի տակ մատաղ են անում, մորթված անասունի կամ աքլորի գլուխն ու ոտքերը դնում ծառի փչակում, մոմ վառում, թաշկինակ կամ հագուստի մի կտոր կապում ծառի ձյուղին և վերադառնում: Նման ծառերը չորանալուց հետո էլ մնում են՝ որպես պաշտամունքի առարկա: Դրանց փուտած ձյուղերի փոշին, որ կոչվում է **Խընօթուն**, ջրի մեջ լուծում և խմում են հիվանդություններից գերծ մնալու համար:

Ավանդություններ կան նաև սովորական բույսերի մասին: Ըստ դրանց՝ բամբակը բուսել է կավի մնացորդներից, որից աստված կերտել է մարդուն, խաղողը առաջացել է Նոյ նահապետի մատուցած զոհի ոսկորներից³:

Հետաքրքրական է խաղողի վազի մասին եղած պատմությունը. ժամանակին խաղողի որթը մի սիրուն, ուղիղ ձյուղերով թուփ է եղել, որի պտուղներից առաջին անգամ գինի ստանալով՝ մարդիկ խմել են և հարբելով խաղողի ձյուղերը ծուռումուռ կապկաել, որից և վազը ստացել է ներկայիս տեսքը⁴:

Թթենին ու թգենին աճել են մի կնոջ կրծքերից, որը մեռնելիս պատվիրել է Աստծուն՝ տիրություն անել իր մանուկներին: Աստված մոր կաթը թութ ու թուզ է դարձել, երեխաները սնվել ու մեծացել են⁵:

Հասկը ժամանակին բերքառատ է եղել՝ ամբողջ ցողունը պատաժ հատիկներով: Մի կին հանդգնել է հացի լավաշով սրբել երեխայի կեղտը,

¹ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 48:

² Նոյն տեղը:

³ Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 203:

⁴ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 62:

⁵ Լ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 80:

Աստված զայրացել և հասկից թողել է միայն ցողունը: Բայց, խղճալով սովից ոռնացող շներին, թույլատրել է հասկին քիչ բերք տալ¹:

Թռչուններից ամենից տարածվածը ծիծեռնակի պաշտամունքն է, որի մասին եղած ավանդությունները այժմ էլ տարածված են տարբեր գյուղերում: Մի պատմության համաձայն՝ օձը պատվիրում է լվին՝ խայթել բոլոր կաթնասուններին և տեղեկացնել, թե որի արյունն է ամենաքաղցրը: Ծիծեռնակը, իմանալով, որ լուս ամենաքաղցրը մարդու արյունն է համարել և պատրաստվում է այդ մասին հայտնել օձին, կտցում և պոկում է լվի լեզուն: Օձն էլ փորձում է խայթել ծիծեռնակին, բայց հասցնում է միայն պոչի մեջտեղից կծել, որի պատճառով էլ ծիծեռնակի պոչը մնում է մկրատածն²:

Մի այլ ավանդություն վկայում է, որ ժամանակին մի խորթ մայր, կեղծ հիվանդանալով, պատվիրել է ամուսնուն կտրել երեխայի ձկույթը, եփել և բերել իրեն: Պահանջը կատարելուց հետո ձկույթը ծիծեռնակ է դարձել և թռել³:

Մեծ մեղք է համարվում ծիծեռնակին սպանելը, անգամ նրա բույնը քանդելը, թեկուզ այն լինի տան մեջ կամ նույնիսկ օջախի գլխին: Ժողովրդի կարծիքով ծիծեռնակի բույնը քանդողի տունը անպայման կավերվի:

Ավանդություններ են պահպանվել նաև այլ թռչունների մասին: Ագրավի մասին ասում են, որ մի անգամ, տեսնելով, որ ուխտագնացության եկածների մատադի կաթսայի մեջ օծ է մտել, չի կարողանում հասկացնել հավաքվածներին և ստիպված իրեն նետում է թունավորված կաթսան՝ փրկելով մարդկանց⁴: Մի այլ պատմության համաձայն՝ ագրավը ժամանակին մի վատ կին է եղել, որը կաշառվելով մահացած քրոջ աղջկան հանձնում է թագավորի մարդկանց, որ դնեն կառուցվող բերդի պատի մեջ, որպեսզի այն չփլվի: Մահացող աղջիկը վերջին շնչում անիժում է մորաքրոջը, և վերջինս դառնում է սև ագրավ: Ասում են՝ մինչև հինա էլ ագրավը պատ տեսնելիս կանգնում է վրան և փորձում կտուցով քանդել. իբր գիտակցել է սխալը և ցանկանում է հանել քրոջ աղջկան⁵:

¹ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 62:

² Ա.Արաքեցյան, Ռ.Դահրամամյան, նշվ. աշխ., էջ 137:

³ Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 62:

⁴ Նոյն տեղը, էջ 67:

⁵ Նոյն տեղը:

Սողուններից պաշտվում է լորտուն (լօկը): Ժողովրդի հավաստմամբ լորտուն հայ է, իսկ օձը՝ թուրք: Պատահական չէ, որ լորտուն միշտ սպանում է հանդիպած օձին, որպեսզի վերջինս հայերին չխայթի:

Պաշտվում է նաև տան օձը, որը համարվում է **ովկայք** (հաջողություն բերող): Իշխում է այն կարծիքը, որ, եթե շահմար օձը մեկի բերանում թքի, վերջինս իմաստուն կդառնա: Նման պատվի արժանացել է **Օվչի Փիրումը**¹:

Օծերը տարին մեկ փոխում են իրենց շապիկը (հալավը): Այդ շապիկը մարդիկ դնում են հացի մեջ և ուտեցնում երեխաներին, որ ձեռքերի գորտնուկը անցնի, կամ պահում են գլխարկների մեջ, որ ուրիշ օծեր չմոտենան:

Կաթնասուններից կատվի մասին ասում են, որ նա Քրիստոսի թաշկինակն է: Իբր մի անգամ Հիսուսը հյուրընկալվել է մի տան և, տեսնելով, որ մկները խանգարում են ճաշել, հանել է թաշկինակը, խաչակնքել և արձակել: Այն իսկույն կատու է դարձել և հալածել մկներին²: Կատուն համարվում է սուրբ, նրան սպանելը՝ մեծ մեղք. իգուր չեն ասում.

- Հու վեր մին կատու ըսպանէ, բէդմա օխտը յը՝ խծէ շինի, հանցու մէխկա միզզվի:

Հայ ժողովողական հավատալիքներում զգալի տեղ ունի արջի և գայլի պաշտամունքը, որի մնացուկները գոյատեսում են Արցախում:

Մի ավանդության համաձայն՝ արջը ժամանակին ազահ ջրաղացպան է եղել: Մի անգամ նա գողացել է բազմազավակ որբեայրու այսուրի մի մասը և վերջինիս անեծքով դարձել արջ³: Հուզիչ պատմություն է Պըտկէս պէրք եկեղեցու բակում թաղված արջի մասին եղած ավանդությունը: Երեխտապարտ արջը կամովին գնում է վանք և օգնում իր վերքը բուժած տերտերին՝ եկեղեցու կառուցման համար քարեր կրելով: Հերթական անգամ հեռվից քար բերելով՝ նա իր փրկիչին մեռած է գտնում և, վշտից գլուխը խփելով հանգուցյալի տապանաքարին, ինքնասպան լինում: Արջին թաղում են եկեղեցու բակում, որը և դառնում է սրբատեղի: Չեր կանայք չոքեչոք պտտվում են արջի գերեզմանաքարի շուրջը, Աստված ասում է՝ պըտկըվին, չըպէ՛րք, և նրանք պտղավորվում են: Այստեղից էլ ժողովրդի ստուգաբանությամբ առաջացել է վանքի անունը⁴: Նմանատիա մի գերեզման էլ կա

¹ Նոյն տեղը, էջ 76:

² Նոյն տեղը, էջ 72:

³ Նոյն տեղը:

⁴ Նոյն տեղը, էջ 54:

Խանաբար զյուղի մերձակայքում՝ Նըհատակ տեղամասում: Ասում են՝ այստեղ մի գայլ է թաղված, որը սնել և պաշտպանել է գաղթի ժամանակ մորը կորցրած մի մանկան¹:

Եշի մասին ասում են, որ անհավատ է եղել, գնացել է Աստծու մոտ և, ընդունելություն չգտնելով, ստիպված դիմել է կայծակին: Վերջինս էլ խփել և կտրել է ագին²: Մի այլ ավանդություն ներկայացնում է եզան և եշի հավատարմությունը. Խեղճ աղամա որդին խնդրում է կենդանիներին՝ օգնել իրեն: Միայն էշն ու եզն են մոտենում նրան և ընկերանում: Այդ օրվանից մարդը իր հավատարիմ ընկերներով կռվում է քարի ու հողի հետ³:

Երկնային լուսատուներից պաշտվում են հատկապես արևն ու լուսինը: Ճիշտ է՝ դրանց առաջ այլևս ծունր չեն իջնում և չեն աղոթում, ինչպես առաջներում, բայց շարունակում են դրանցով երդվել.

- Են արդ՝ վը, թա էտ պէնը ըրած ինիմ, էն լուսնինժան ինձ քուողքընէ, թա սը՝ տ ինիմ:

Ծեր կանայք երբեմն դիմում են այդ լուսատուներին՝ խնդրելով պահապան լինել իրենց հարազատներին:

Ասում են՝ արևը մի վախկոտ և ամաչկոտ աղջիկ է եղել. գիշերը վախեցել է շրջել, ցերեկը՝ ամաչել: Մայրը ստիպված տվել է մի փունջ ասեղ, որ իրեն նայողների աչքերը խոցի: Մինչև հիմա էլ արևը, նստած մի առյուծի մեջքի, ձեռքին ասեղների փունջը, շրջում է երկնքում: Երբեմն քաջբերը հարձակվում են, որ գողանան աղջկան: Արևը տխրում և խավարում է, որի պատճառով առյուծը հարձակվում և հաղթում է քաջբերին, իսկ մարդիկ ներքեւից հարայ-հրոց են բարձրացնում, հրացան կրակում և ազատում աղջկան⁴: Պատմում են նաև, որ չարաձճի լուսինը մի անգամ խանգարել է մորը խմոր հունցելիս, մայրը խմորուտ ձեռքով ապտակել է նրա երեխն, և այդ հետքերը մինչև հիմա մնում են⁵.

Աստղերի մասին ասում են, որ դրանցից յուրաքանչյուրը լույս աշխարհ է գալիս մի մարդու ծննդյան հետ և մերնում (ծըլլում) նրա մահվան

¹ Նոյն տեղը:

² L. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 79:

³ Նոյն տեղը, էջ 72:

⁴ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 15:

⁵ Նոյն տեղը:

ժամանակ: Մեծ մարդկանց աստղերը մեծ են, փոքրերինը՝ փոքր, նամուսով մարդկանց աստղերը պարզ են, անամուսներինը՝ աղոտ¹:

Ավանդություններ կան նաև Հարդագողի ձանապարհի, կայծակի, անձրևի, որոտի, գիշերվա ու ցերեկվա, օրվա, Երկրաշարժի մասին:

Մի շարք ավանդություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի և հատկապես Քրիստոսի հանդեպ ունեցած մեծ հավատը. կրապաշտների գորավարը, տեսնելով սպանված քրիստոնյա գեղեցկուիու վրա Երկնքից իջած լույսը, իր գինվորների հետ ընդունում է նրա կրոնը², թուրք քոյր և եղբայր, զարմանքով նկատելով օդի մեջ կանգնած և աղոթող Վարդապետին, ուրանում են հարազատ կրոն՝ դառնալով քրիստոնյա, որի պատճառով էլ հետապնդվում են թուրքերի կողմից և սպանվում³, ամուլ արաք կինը ուխտի է գալիս հայկական վանքը և, զավակ ունենալով, մկրտվում ու դառնում քրիստոնյա, և երբ արարները ուզում են սպանել կնոջն ու Երեխային, Քրիստոսի հրամանով օձերը խայթում են նրանց և ազատում մորն ու մանկանը⁴, հովիվը, հրաժարվելով Քրիստոսին կաթ տալուց, նրա անեծքով իր հոտի հետ քարանում է⁵, Քրիստոսը զայրանալով անիծում է ջորուն, և վերջինս զրկվում է պտղաբերելու հնարավորությունից⁶:

Արցախյան ավանդություններում մեծ արձագանք են գտել նաև ժողովրդի ներքին կյանքը՝ զբաղմունքը, կենցաղը, հասարակական հարաբերությունները: Զբաղմունքներից հատկապես արտացոլվել են Երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, այգեգործությունը, որսորդությունը, որոնք կենսական մեծ նշանակություն ունեն արցախցու կյանքում: Կենցաղային ավանդությունների մեջ տեղ են գտել մի շարք սովորույթներ, հարաբերություններ, ծեսեր, ինչպիսիք են՝ աղբյուրը ջրի գնալու սովորույթը, հարսի հարաբերությունները կեսուրի, կեսրայրի և ամուսնու մյուս հարազատների հետ, ժողովրդի մեջ կատարվող արարողությունները և այլն: Իրենց քանակով և բովանդակությամբ նշանակալից են սիրո և ամուսնության մասին եղած ստեղծագործությունները, որտեղ արտացոլվում են կնոջ իրավագուրկ և ձնշված վիճակը,

¹ Նոյն տեղը:

² Նոյն տեղը, էջ 36:

³ Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 224:

⁴ Ս. Բարիսուղարյան, Արցախ, 1885, էջ 414:

⁵ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 45:

⁶ Նոյն տեղը, էջ 72:

Երիտասարդ տղաների և աղջիկների կախվածությունը ծնողներից և բազմաթիվ այլ հանգամանքներ: Դարեր շարունակ ազատ սիրուն և ամուսնությանը խոչընդոտել են սիրող գույգերի սոցիալական տարբեր ծագումն ու հասարակական դիրքը, ընչքային դրությունը՝ ստիպելով սիրահարներին գաղտնի հեռանալ հայրենի օջախներից, ինչը և հաճախ ոճրագործությունների և ողբերգությունների տեղիք է տվել: Այսպես. Դիզակի Բայանդուր իշխանը, իմանալով, որ իր գեղեցկուիի դուստրը՝ Վարդիթերը, սիրահարված է հովիկ Արտենին և որոշել է փախչել նրա հետ, կրակում և սպանում է երկուսին էլ¹, Վանք գյուղի բեկի աղջիկը՝ Հուռունը, անտեսելով հոր կամքը, փախչում է սիրած տղայի հետ և բնակվում գյուղից հեռու՝ անմարդաբնակ մի վայրում, որտեղ և հոշոտվում է զագաների կողմից: Հետագայում այդ վայրում գյուղ է հաստատվում, որն էլ Հուռունի հիշատակին կոչվում է **Հուռունի թաղ**, իսկ հետո՝ **Հուռաթաղ**²: Սակայն միշտ չեն ծնողները պարտադրում իրենց կամքը զավակներին, երբեմն նրանք տեղի են տալիս՝ հարգելով անկեղծ զգացմունքները: Մի ավանդության համաձայն՝ Դիզակի մելիք Սաջումը չի ընդդիմանում իր մինուճար աղջկա՝ Գայանեի սիրուն և նրան ամուսնացնում է ծառա Գագիկի հետ՝ մելիքությունը կտակելով Վերջինիս: Նարեշտար գյուղի անունը ստուգաբանող ավանդության մեջ քուրդ բեկի մինուճար աղջիկը, հակառակ հոր կամքին, փախչում և ամուսնանում է իրենց տան հայ ծառա Առստամի հետ: Հետագայում հայրը ներում է աղջկան՝ տալով մեծ օժիտ և ծառաներ³: Սրտառուց մի պատմություն է Մեծ Թաղար և Տող գյուղերի խաչմերուկում գտնվող **Արզուման վանքի** մասին եղած ավանդությունը. ռուս գինվորները իրենց հետ Ռուսաստան են տանում կրպի ժամանակ մորը կորցրած մի հայ մանկան՝ Արզուման անունով, որը, կրթություն ստանալով և մեծ հարգանքի արժանանալով, դառնում է գեներալ: Վերադառնալով Շուշի՝ նա ամուսնանում է իրենից տարիքով մեծ մի հայ կնոջ հետ: Մի օր էլ ամուսնու ոտքերը լվանալիս կինը տեսնում է նրա ոտքի նշանը և հեծկլտալով ուշարավիվում. պարզվում է՝ ամուսինները մայր և որդի են, որոնք տարիներ առաջ կորցրել են իրար: Խոր հիասթափություն ապրելով նրանք այդ ամենը պատմում են տերտերին, որն էլ խորհուրդ է տալիս մեղքերը քավելու համար մի եկեղեցի կառուցել և մեջը աղոթել,

¹ Մ. Գրիգորյան-Սպանդարյան, նշվ. աշխ. էջ 338:

² Տես Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 29:

³ Նոյն տեղը, էջ 31:

ինչը և սիրով կատարում են¹: Նման դեպք է կապված Տումի գյուղի մերձակայքում՝ **Իքակ** գետի վրա, գտնվող կամուրջի կառուցման հետ. քույր ու եղբայր, մանկուց իրար կորցնելով, օտարության մեջ հանդիպում են և, անտեղյակ իրականությանը, ամուսնանում: Տարիներ հետո, պառավ կնոջից իմանալով Եղելությունը, նրանք դիմում են Գտիչ վանքի տերտերին՝ մեծ մեղքը քավելու խնդրանքով, և նրա խորհրդով մի թանկարժեք նվեր-հիշատակ են թողնում հայրենի գյուղի ժողովութիւն։ Կառուցում են այդ կամուրջը²:

Մի շարք ավանդություններում արծարծվել են օտար բռնակալների՝ արաբների, պարսիկների, թուրքերի, թաթարների նվաճողական նկրտումները, կատարած ավերածություններն ու թալանը և արցախցիների անզիջում պայքարը նրանց դեմ: Ըստ ավանդության՝ Հաղորութիւն շրջանի գյուղերից մեկը ստացել է **Թեղիսարաք** (հաճախակի փչացող) անունը, քանի որ այդ տեղով անցնող օտար բռնակալներից յուրաքանչյուրը ավերել և թալանել է այն³: Որոշելով հիմնահատակ ավերել Ամարասի վանքը՝ Լենկ Թեմուրը հրամայում է զորքին՝ շարվել մինչև Արաքս և, վանքի քարերը ծեռքից ծեռք փոխանցելով, լցնել գետը⁴: Օտար բռնակալներից հատկապես հիշատակվում են Լենկ Թեմուրի, Բուղայի, Փանահ խանի, Իբրահիմ խանի անունները: Օտար բռնակալներին զուգընթաց ժողովուրդը ավանդություններում կերտել է իր հայրենասեր ու քաջարի զավակների կերպարը: Իրանի աղա Մահմադ շահի թիկնապահը՝ Սահարալիբէգը, տեսնելով, թե ինչպես են պարսիկները Շուշիում հայերին կրտորում, անպատճում և զագանաբար սպանում հղի կանաց, այլևս չի համբերում և գիշերը սպանում է շահին՝ ինքն էլ նահատակվելով: Հետո պարզվում է, որ Վրիժառուն ազգությամբ հայ է, որը մանուկ հասակում գերի է տարվել Պարսկաստան և դաստիարակվել պարսկական ողով⁵: Սակայն, ականատես լինելով հայրենակիցների նախձիրին, նրա մեջ արթնացել է հայ քրիստոնյայի ողին, ինչպես արցախցիներն են ասում՝ **արունը ծիծ ա տըզալ**: Հակոբ անունով մի մանուկ Ասկերանի շրջանի գյուղերից մեկից գերի է տարվուն Իրան և որդեգրվուն Ամիրխան անունով մի մեծավորի կողմից՝

¹ Նոյն տեղը, էջ 49:

² Նոյն տեղը, էջ 38:

³ Նոյն տեղը, էջ 18:

⁴ Ա.Քարախանյան, նշվ. աշխ., էջ 9:

⁵ Ա. Դադիյան, նշվ. աշխ., էջ 154:

ընդունելով պարսկական կրոնը և մկրտվելով **Փառուխ** անվամբ: Հետագայում նա մեծ հարգանք է վայելում Իրանի շահի կողմից և նշանակվում բարձր պաշտոնի: Բայց Երիտասարդը ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ իր ծնողներին, հայրենի բնությունը և մի օր էլ, թողնելով ամեն ինչ, ծածուկ փախչում է՝ հաստատվելով Շուշի քաղաքում, որտեղ կարծ ժամանակում ծեռք է բերում մեծ հեղինակություն: Ահա թե ինչու ժողովուրդը նրա անվամբ է կոչում հայրենի գյուղը¹:

Արցախին առանձնապես վրիժառու է դառնում, երբ փորձում են պղծել նրա սուրբ զգացմունքները: Նման մի հուզիչ պատմություն է ներկայացնում Ճարտար և Սոս գյուղերի մոտակայքում գտնվող **Ղիշավանքի** մասին եղած ավանդությունը. օտար բռնակալ Խօշանբագիք, չբավարարվելով կատարած ավերածություններով և կողոպուտով, օրենք է սահմանում, որի համաձայն՝ իրեն է Վերապահվում յուրաքանչյուր նոր ամուսնացող աղջկա հետ առաջին գիշերն անցկացնելու իրավունքը: Կտրիճ Երիտասարդ Եղիշեն՝ ժողովրդի հավաստմամբ Գրիգոր Լուսավորչի թոռը, չկարողանալով տանել նման անպատվությունը, հարսի շորերով ներկայանում է բեկին և գիշերը խողխողում նրան ինքն էլ նահատակվելով հետագայում իր անունը կրող վանքի տեղում²:

Առանձնակի շարքով են ներկայանում Թեան Ստեփանյանի մասին պատմվող ավանդագրույցները: Նշանավոր հայդուկապետը իր ամբողջ կյանքը նվիրել է արտաքին և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարին: Մի ավանդության մեջ իր փոքրաթիվ քաջերով նա հաղթում է թուրքական զորքին՝ կանխելով արյունահեղությունն ու թալանը³, մի այլ դեպքում գնդակահարում է հայ կնոջ պատվի հանդեպ ոտնձգություն կատարած իր գինվորին⁴, մի ուրիշ դեպքում ծեծում է հայ գյուղացուն, որը համարձակվել է գովել սպանված թուրքի արտաքին գեղեցկությունը⁵:

-Եակ գիղացէք, թօրքը հինչ էլ ինի, հային վըտանը տակէ ցըխըն էլ չարժի,- այսպես է խրատում ազգային հերոսը իր հայրենակիցներին:

¹ Ա. Գրիգորյան-Սպանդարյան, նշվ. աշխ., էջ 335:

² Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 50:

³ Նոյն տեղը, էջ 76:

⁴ Նոյն տեղը, էջ 75:

⁵ Նոյն տեղը:

Նման վարքաբանական ավանդություններ կան Թյուլի-Արզումանի¹, Հոր Երանելու², Խրիմյան հայրիկի³, Վանի Յուգբաշու⁴ և այլոց մասին:

Սակայն միշտ չէ, որ արցախցին կարողացել է գինված պայքար մղել թշնամու դեմ. Երբեմն նա բռնակալներին հակադրվել է իր ստեղծագործ և շինարար ոգով՝ ապավինելով Աստծո և սրբերի զորությանը: Մի ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Լենկ Թեմուրը, խոճի խայր զգալով, թույլատրում է չկոտորել այնքան հայ, որքան կտեղավորի տեղի եկեղեցին: Մարդիկ, մտնելով եկեղեցին, գաղտնի ետնադրոնվ փախչուն են անտառը և ազատվում⁵: Չկարողանալով գրավել Գտիչ բերդ՝ արար զորավար Բուղան ավերում է հայկական սրբավայրերը: Նույն ժամանակ՝ կովի թեժ պահին, հայերը կառուցում են նոր եկեղեցի՝ նրան տալով **Թիժ յուժոցէ** անունը⁶: Պողոսա Գոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները և փրկվում: Հետագայում, երբ խաղաղություն է տիրում, ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում այն անվանելով **Ամէնափերկիչ**⁷:

Վերոհիշյալ ազգային ավանդությունների կողքին տեղ են գտել նաև միջազգային և եկամուտ որոշ ստեղծագործություններ: Միջազգային ավանդություններից, որոնք իրենց գուգահետքներն ու տարբերակներն ունեն մի շարք ժողովուրդների մոտ, Արցախում լայն տարածում ունի համաշխարհային ջրհեղեղի մասին եղած պատմությունը, որի համաձայն՝ Նոյ նահապետը, կանխազգալով գալիք մեծ ջրհեղեղը, շինում է մի տապան և իր ընտանիքով ու կենդանիներով տեղավորվում նրա մեջ⁸: Նման բնույթ ունի նաև տարբեր շինվածքների փլուզումը կանխելու նպատակով շինվածքի մեջ կենդանի վիճակում մարդ թաղելու պատմությունը⁹:

¹ Շաֆֆի, Խամսայի մելիքությունները, 1895, էջ 126:

² Ա. Ղանապեմյան, Աշվ.աշխ., էջ 348:

³ Դագիյան, Աշվ. աշխ., էջ 147:

⁴ Ա. Ղագիյան, Ուսու-պարսկական պատերազմների արծագանքները հայ բանահյուսության մեջ, Պատմաբանասիրական համդես, N3, 1978, էջ 114:

⁵ Ա. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 52:

⁶ Նույն տեղը, էջ 49:

⁷ Նույն տեղը, էջ 51:

⁸ Նույն տեղը, էջ 16:

⁹ Նույն տեղը, էջ 67:

Եկամուտ ավանդությունները փոխառություններ են իայ ժողովրդի հետ պատմական այս կամ այն դարաշրջանում տարբեր շփումների մեջ գտնվող ցեղերի ու ազգերի բանահյուսությունից: Դրանցից են աստվածաշնչյան տարբեր ժողովրդական ավանդություններ, Խիկար Իմաստունու, Լողմանու, Լենկ-Թեմուրի մասին պատմող որոշ պատմություններ, որոնց մի մասը, ժամանակի ընթացքում վերամշակվելով, տեղայնացվել և ձուլվել է ազգային ավանդություններին:

Եվ այսպես հարատեսում են արցախյան ավանդությունները՝ որպես հարազատ ժողովրդի հազարամյակների պատմության խոսուն փաստեր, նրա ինքնության ու անաղարտության լիարժեք վկաներ:

Резюме

В статье исследуются жанровые и смысловые особенности одного из важнейших жанров Арцахского устного народного творчества – легенды. Исследуются их разновидности и приводится история их публикаций.

Summary

This article is about genre and meaning peculiarities of one of the most important genre of Artsakh folklore-legends.Their varieties is examining and the history of publication is presenting.

**ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ
ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԸ ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ
ՂԱՐԱԲԱԴԻ» ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Զինահյա Առաքելյան-Բալայան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրԴՀ

Արցախագիտական միտքն հարստացնող պատմա-քննական, գրական-գեղարվեստական, բանահյուսական, քաղաքական և այլնայլ բնույթի հարցերի հետ միաժամանակ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբարի»-ն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայ զինվորականության վարած կրիվների, քաղաքականության, գաղտնի ժողովների, հայ վրիժառուների, ապա նաև մելիքների, հոգևոր այրերի ու նրանց ունեցած արտաքին և ներքին հարաբերությունների մասին:

Հետաքրքիր ծրագրերով եւ նպատակառուղղվածությամբ էր ընթանում հայ զինվորյալների հրավիրած ժողովը: Նախազահում էր քենդիսուդա խաչատուրը, որն անհետաձգելի եւ ստիպողական խնդիրներ է համարում հետեւյալը (որոնք պետք է լուծվեն զորապետական խորհուրդներում): Դրանցից են՝ «Ճշո-խանութիւնն և Ճշո-մելիքութիւնը ոչնչացնելու խնդիր, հարազատ-մելիքութիւնը և հարազատկաթողիկոսութիւնը Վերականգնելու խնդիր, մեր ընտանեաց կեանքի ապահովութեան խնդիր, մեր ծառայութիւնը վարձատրելու խնդիր, մեր կենաց խնդիր, Շահի և Մելիք-Մեժլումի իրաւերը ընդունելու կամ մերժելու խնդիր...»: Ժողովականներն արտահայտվում են հերթով, առանց մեկը մյուսին խանգարելու, հավասարակշռված, ազատ, անկաշկանդ: Կա պատվի եւ հայրենիքի հարց...

Արրահամ Բեկնազարյանը՝ Մելիք Մեջլումի հմուտ և նվիրված հավատարիմ զորավարը, ծանրակշռորեն է մեկնաբանում խոսքը հայրենիքի ճակատագրի վերաբերյալ. «Ղարաբաղի Ճշո-խանութիւնը և Ճշո-մելիքութիւնը երեք մենք մեր ձեռքով ոչնչացնենք՝ շատ հեշտ է, իսկ եթէ Պարսից շահերին կամ այլոց յուսով թողնենք՝ ծանրակշիռ և դժուարալոյն խնդիր է... Անցելոյն փորձերն պարզապես ցոյց են տալիս, որ պարսիկ շահերն միշտ պահպանած են մեր երկրում Ճշո-խանութիւնը և սոցա գոյութիւնը, թէ և Վերջիններս առաջնոց միշտ թշնամի եղած են և միանգամայն վնասակար»¹:

Արրահամը ցավ է հայտնում, որ չնայած շահերը՝ Նադիրը, Աղիլը, ցանկանում էին Փանահին՝ շահության դեմ գործած քաղաքական հանցագործին, պատմել, բայց այդպես էլ նրանց չհաջողվեց դա

¹ Գաղտնիք Ղարաբաղի, Հեղինակութիւն Ապրեսի Բէկնազարեանց. Արդեամք եւ Ծախիւր Սեծապատիկ Տեարն Արաքել Աղա Ծատուրեան, Ս. Պետերբուրգ, Տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, 1886 (այսուհետ՝ Բէկնազարեանց Ա.), էջ 38-39:

իրագործել: Շահերը գիտեին Ղարաբաղի խաների թշնամի լինելը, սակայն պահպանում էին նրանց:

Մեր մեկ այլ՝ «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» պատմաբանասիրական քննական տեսության և մասի՝ Պլ. Զուբրովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպի վերլուծության ընթացքում հանգամանորեն մեկնել ենք Ղարաբաղի խանության անբարո, անփառունակ հիմնադրի՝ Փանահի կերպարային զուգորդումները վիպական եւ պատմական լայն հենքի վրա, հայ եւ օտար աղբյուրների համադիր եւ հակադիր արժեքաբանական ասպեկտներում: Իսկ Փանահի ձակատագրի անիվի սրընթաց վայրէջքի մասին թողել ենք հետագա ծրագրայնության մեջ ճշտելու այն¹: Այժմ առիթը ներկայացել է: «Անդրկովկասյան պատմական վեպ»-ը՝ «Ղարաբաղի աստղագետը», վիպական երկ է (պատմավեպ է, իսկ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն՝ պատմական ուսումնասիրություն) Փանահի գործունեության, քաղաքականության, լայն ռազմավարական նկրտումների մասին, որոնք ցույց ենք տվել մեր քննական տեսության մեջ, եւ որոնք, հարկավ, չեն կարող «Գաղտնիք»-ում տեսանելի լինել: Այժմ արժեքավորենք նաեւ ծրագրվածը:

Ազրայել-Աբրահամ Բեկնազարյանը պարսից շահերի երկերեսանիության, երկդիմի քաղաքականության եւ Ղարաբաղի խանության ձակատագրի շուրջ խոսում է ցավով եւ համոզվածությամբ, ինչու չէ՝ նաեւ ճարտասանական որոշակի ունակությամբ, մտքերի կշռադատվածությամբ (որն անընդհատ եւ անհարկի զայրացնում է Ռաֆֆուն)², որտեղ փաստված է Ուրմեցի Փաթալի խանի՝ 1761 թվականին դեպի Ղարաբաղ կատարած արշավանքի մասին: Փաթալին Դուրանով երդվել էր Աղիլ շահից գաղտնի ձեռք բերած Փանահի՝ Ղարաբաղի խանությունը հաստատող շինծու հրովարտակը չեղյալ համարել: Երդումը դիտմամբ կրկնում է Զրաբերդի Մելիք Աղամի եւ Գյուլիստանի Մելիք Հովսեփի մոտ, նրանց օգնությամբ գրավում Շուշին, 15.000 թուման փող վերցնուն Փանահից՝ դրժում յուր երդումը, Փանահի հբրահիմ որդուն պատանդ

¹ Տես Արաքելյան-Բալայան Զ., Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում (պատմաքննական-տեսչություն), մաս I, Պատմոն Զուբրովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, Ե., «Հայաստան», կը, 2004 (այսուհետ Արաքելյան-Բալայան Զ.), էջ 141:

² Ռաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Եժ. 10 հատ., տասներորդ հ.Ե., Հայպետհրատ, 1959 (այսուհետ Ռաֆֆի), էջ 472-478:

Վերցնում, ոչ մի կերպ չգնահատելով իայ մելիքների ցուցաբերած օգնությունը Եւ Փանահին թողնելով յուր կեղծ խանության պաշտոնում՝ գնում Ուրմիա բերդը. «Սոյն Փաթալի-խանն սպանած էր Զենդ-Ասկեար-խանը, որի եղբայր Քեարիմ-խանն, իւր եղբօր վրէժը լուծելու համար, ռմժա (1762) թուին յարձակում է Ուրմի բերդի վերայ, գրաւում զայն, Շիրազ տանում իբրահիմը և իւր եղբայրասպան Փաթալի-խանը. Վերջինս սպանում և առաջինը ողջ պահում: Փանահ ճըռ-խանն երբ լսում է՝ առնում է քսան հազար թուման փող և իւր որդին ազատելու համար ընծայ տանում Քեարիմ-խանին: Փանահ ճըռ-խանն երկու տարի մնում է Շիրազում, բայց ոչ կարողանում է զինքը ազատել Զենդ-Քեարիմ-խանի ձեռքից և ոչ իւր որդի իբրահիմը: Փանահ ճըռ-խանն սատանայական խորանանգութեամբ մեռած է ծնանում և դագաղում երկարում, որպէս զի իբրև մեռեալ Ղարաբաղ հասնի: Զենդ-Քեարիմ-խանն, իմանալով այս սատանայութիւնը՝ Փանահ ճըռ-խանի փորը պատառել է տալիս, որ մինչեւ Ղարաբաղ չհոտի: Արդ՝ քանի որ Զենդ-Քեարիմ-խանն իւր աչօք տեսաւ այդ տոհմի խարդախութիւնը, քանի որ ողջ Փանահի փորը ճեխսկել տալով սպանեց և ճըռ-խանութիւնը ևս նորա հետ՝ ուրեմն եթէ ճըռ-խանութեան բարեկամ չէր, ի՞նչ հարկ կար նենգութեամբ սպանուած նենգ հօր ամենանենգ որդի իբրահիմը խան անուանել ռմժգ (1764) թուին, խանութեան տիտղոսով Ղարաբաղ ղրկել և ճըռ-խանութեան շղթան կրկին ամրապնդել»: Բեկնազարյանը իրերի էությունը քննում է ըստ էության՝ բավականին ընդգծված քաղաքական հասկացողությամբ: Կարեւորն այստեղ երեւոյթի գաղափարական եւ ամենակարեւորը, պատմական լուրջ հատկանիշ, որակ ունենալն է. իսկ այսպիսի խոսակցություններ չեն երեւում «Խամսայի մելիքություններ»-ում: Որակ կազմող հատկանիշ է նաեւ Բեկնազարյանի՝ այդ ամենից եզրակացության գալը. «Ահա այս իբրահիմ ճըռ-խանն է, որ այսօր ապստամբելով կռւում է Պարսից շահերի հետ: Բայց այս ևս պատմական ճշմարտութիւն է, որ այդ ճըռ-խանները հաստատող շահերն ևս ճըռ-շահեր էին և ոչ թե հարազատ շահեր, քանզի այդ ժամանակներում շահութիւնը յափշտակելու համար մէկզմէկ սպանում և շուտ շուտ գահակալում էին»: Բեկնազարյանը հմտությամբ, պատմական փոքր էքսկուրս կատարելով՝ ոչ հեռավոր անցյալում տեղի ունեցած երեւոյթները, կապված Ղարաբաղի քաղաքական նկարագրի եւ ճակատագրի հետ, շաղկապելով դրանք ներկայի՝ նույնքան բարդ ու խառնակ

ժամանակաշրջանի պատմական անցքերի հետ, անում է հետեւյալ ընդհանրացումը: «Այս պատմական, անհերքելի փաստերիս հետևութիւնն շատ պարզ է: Աղա-Մամատ-Շահն ևս թէպէտ անսուտ երդմամբ խոստացած է մելիքին՝ ջնջել Ղարաբաղից Ճըռ-կաթողիկոսութիւնը, Ճըռ-մելիքութիւնը և Ճըռ-խանութիւնը և յաղթանակաւ Վերանորոգել հարազատ-կաթողիկոսութիւնը, հարազատ-մելիքութիւնը իրեանց ազատ և անկախ իրաւունքներով՝ սակայն հաւատալի է միայն որ ներկայ Շահն ևս կը հետևի իւր նախորդներին, կըսպանէ Իբրահիմ Ճըռ-խանը և խան կը հաստատէ նորա որդի Մէյտի-Ղուլին: Օստարն միշտ օստար է. օստարն ունի միշտ իւր կեղծ քաղաքականութիւնը և գիտէ գործիք անել մեզ նման անքաղաքագէտ, դիրահաւաւան, պարզ և խեղճ արարածները»: Սրանք առավելագույն հավանականության գնացող մեկնումներ են, իսկ Եղրակացությունը գերապատիվ է. Եթե հնարավորվեր ու Եթե արցախցի բոլոր կարող ուժերոն այն ցանկանային: «Աւելի լավ է,- շարունակում է Աբրահամ Բեկնազարյան զորավարը՝ հերոսական Մելիք Մեջլումի զինվորը, այն մելիքի, որը ճանապարհներ էր փնտրում «Ղարաբաղի խանություն» կոչված Վտանգավոր Երեւոյթը ջնջել յուր Երկրից, որպես թունավոր պալար,- որ մենք մեր յոյսը մեր վերայ դնենք, մեր ուժերը միացնենք և միացեալ ուժով կարգի դնենք մեր գործերը»¹:

Զինվորյալները միանշանակ քննադատում են թե՛ ներքին եւ թե՛ արտաքին անմիաբան, քայլայիշ ուժերի ջանքերը ջլատել Ղարաբաղը, տիրանալ նրան, դարձնել անողնաշար, անիշխան, որպիսին Ղարաբաղը գորեթ երբեք չի եղել եւ չի ունեցել նման քաղաքական կյանք: Մի մասը հակված է ռուսներին հարելու, նրանցից օգնություն սպասելու կարծիքին: Գայլ Օհանին հակածառելով՝ Բեկնազարյանը նկատում է. «Օստարներից օգուտ սպասելն յինարութիւն է: Ամեն կառավարութիւն ունի իւր քաղաքական շահերը և միշտ ծզսում է յօգուտ իւր ընդլայնել այդ շահերը, մանաւանդ շատ անգամ գործիք անելով մեզ նման անհեռատես և անքաղաքագէտ յիմարները զանազան խոստնունքներով, և իւր գործը վերջացնելուց յետոյ ամեն ինչ անկատար թողլով»: Գալով Ղարաբաղի՝ ռուսների կողմից 1700-ական թվականներից սկսած օգնության ակնկալությանը եւ, ընդհանրապես, այս կապակցությամբ պետությունների քաղաքական ինտրիգներին՝ Բեկնազարյանը եզրակացնում է. «...Վերջապէս Ռուսաց այս Կայսրն (Պետրոս Մեծը - Զ. Ա.-Բ.), որ

¹ Բէկնազարեանց Ա., էջ 38-42:

խոստացած էր Հայոց ուժերով Հայոց օգնել և Հայերը Պարսից լծի տակից ազատել՝ ինքն մի դաշնադրութեամբ, որ Պարսից հետ էր, գրաւում է Ղարբանդը, Բագուն, Մազանդարան և Գիլան, իսկ միւս դաշնադրութեամբ ռձծդ (1724) թուին՝ Օսմանցւց նուիրում Շամախին, Նուխին, Ղարաբաղը, Վրաստանը, Արարատեան և Ասրպատական նահանգները»¹:

Պատմության մեջ պահպանված է Ժամանակագրությունը, նույնիսկ ժողովականներն իրենց մտքերը շարադրում են ըստ կարգի՝ Ժամանակադեմ, առանց իրար ընդհատելու: Խոսվում է Նադիր շահի կողմից, նրա թագադրության Ժամանակ (1736) Ղիզակի Մելիք Ավանին՝ Խանի, Զրաբերդի Մելիք Ալահ-Ղուլուն (սուլթանի տիտղոսներ), Հայոց եւ Աղվանից կաթողիկոսներին եւ մեծ արտոնություններ, շնորհներ, պարգեւներ տալու մասին, իսկ որպես ռուսական կողմնորոշման հարողներ՝ մնացին Ներսես կաթողիկոսը եւ Ղարաբաղի հինգ մելիքները²:

Ժողովականները նախատինքի խոսքեր են ուղղում Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հասցեին նրան վերագրելով հայ հոգեւոր եւ աշխարհիկ տերերին ու ժողովրդին հասած վճասների ծանրությունը՝ մի մասին գաղթեցնելու, մյուսին՝ տկարացնելու պատճառով: Մենք այս կարեւոր օղակները քննել ենք նաեւ «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» ուսումնասիրության մեջ՝ տարբեր աղբյուրների, տարբեր մեկնումների համադրական եւ հակադրական օղակներում եւ տվել գիտական արժեք³:

Քյարվան-Ղուան Բրուտը Վարանդայի Մելիք-Շահնազար II-ին (ուսումնասիրության մեջ՝ III) անվանում է մեկը, որի արգանդում հղացավ Ղարաբաղի խանության ստեղծման գաղափարը: Ստեղծված Ղարաբաղի խանության չհաստատված խանը՝ Փանահը, պատրելով սնուցած արգանդ՝ իժի նման դուրս սողաց, որջացավ անմատչելի Շուշիի օձածակում, «հանեց իւր գլուխը այդ բարձրութիւնից, ցոյց տուաւ Ղարաբաղին իւր թունալի ժանիքները, իս ա ն անուանեց զինքն և չարաթոյն ժանիքներով մահ սպառնացաւ զինքը խան չընդունողներին»: Քաջ զինվորականը, հետամուտ յուր մտքերի սեւերուն ընթացքին, շարունակում է. «Յանցանքն մեր անհեռատես մելիքներինն է. մեզանից

¹ Նոյն տեղում, էջ 43, 44, 46:

² Նոյն տեղում, էջ 46- 47:

³ Տես Արաբեյյան-Բալյայան Զ.:

ամեն ոք միայնակ կարող էր ցարդ ջախջախել այդ իժ օձի գլուխը: Ոչ միաբանելու հարկ կայ և ոչ բազմաց աջակցութեան: Յանցանքն ոչ այս տէրութեանն է և ոչ այն, այլ մեր անհոգութեան, որով ցարդ կենդանի պահեցինք այդ վնասակար օձը»¹:

Պատմական այս անցքերը վիպականացրել է Պլ. Չուբովը «Ղարաբաղի աստղագետը» (1834, Մոսկվա) պատմավեպում, որը բազմակողմանի քննության է ենթարկվել մեր կողմից՝ վերոնշյալ ուսումնասիրության մեջ:

Ժողովականներից Դեւ (Տէօվ)-Գասպարն առաջարկում է. «Տղէ՛ք, պարսիկ թովիչն (Շահն) եկած է այդ իժ օձը բռնելու և նորա թունալի ատամները արմատախիլ հանելու»: Բոլորը միասին. «Տղէ՛ք, գնանք, գնանք... այդ Ճըռ-կենդանիքն կեանք ընդունած են Հայերից, պէտք է ընդունին և մահ Հայերից»²:

Զափար-Սարասարը միաբանության, կենտրոնաձիգ իշխանության գոյության նախանձախնորի է. «Երբ մեր մելիքներն մի բերդ միայն կունենան՝ կը դադարին ներքին խռովութիւններն, կամքողջանան ցրուած ուժերն, կամրապնդուին ներքին սիրոյ և միաբանութեան կապերն և դիւրին կը լինի միացեալ ուժով պատերազմել միայն արտաքին թշնամեաց հետ»³:

Պալլ Ղարախան-Յուլգբաշին զորաց միաբանությունը միաբանությունն է համարում մելիքների, որոնք կնստեն Շուշի բերդ-ամրոց քաղաքում՝ «վասն զի թէս շատ ուշ՝ սակայն նոքա (մելիքները - Զ. Ա.-Բ.) համոզուած են անցեալի երկպառակութեան փորձերով և ջլատուած ուժերի տկարութեամբ, որ խիստ թանգ նստաւ Ղարաբաղի Հայոց վերայ»,⁴- Եզրահանգում է Պայլ Ալբերյուն-Բատին (Բաղդասարը):

Երբ Ռաֆֆին հեգնում եւ անմտություն է համարում «Գաղտնիք»-ի հերոսների այն քայլը, թէ ինչպես են նրանք փորձում բացահայտ գործել ընդդեմ Իբրահիմի, կոտորել նրա լրտեսների գլխավորած զորքը, երբ նրանց ընտանիքները գտնվում էին բերդում⁵, զինվորներից Ազնավոր Ուհանը նկատում է. «...Եթէ մենք մեր գերդաստանը Շուշի փոխադրեցինք՝ այդ քաղաքականապէս նշանակում է որ մենք զիրենք

¹ Բէկմազարեանց Ա., էջ 48-49

² Նոյն տեղում, էջ 49:

³ Նոյն տեղում, էջ 50:

⁴ Նոյն տեղում, էջ 51:

⁵ Տես Ռաֆֆի, էջ 473:

բարեկամ համարած ենք և ոչ թշնամի իրաց այս վիճակում: Իսկ այժմ նոքա, այս ամենը իմանալով հանդերձ, ընկան իրեանց լարած թակարթի մէջ: Ուրեմն ոչ եթէ մենք կամաւ գնացած և միացած կը լինինք Շահի բանակին, այլ իրեանց նենգութիւն ստիպած կը լինի զմեզ՝ դիմել այդ միջոցին»¹:

Ռաֆֆուն անհանգստացնում է այն միտքը, թե ինչպես կարող է Աղա Մահմեդ շահը երկու դատարկ գյուղեր ոչնչացնելու համար 7.000 զինվոր ուղարկել²: Հարցն այստեղ գյուղերը չեն, այլ նրանց զինվորյալները՝ պատմության զինավառ եւ հաղթական, հայրենի ազատության եւ սրբությունների հարգն ինացող 80 քաջ զորականները:

Զարպազան-Եռողուրլուն հետաքրքիր ձեւակերպումով մեկնում է յուր հայրենանվեր ընդհանրականը. «Քաջութեան ծնողն Հայրենիքն է, սիրտն վառարան դիւցազնութեան և դիւցազնութիւնն՝ փրկութիւն Հայրենեաց: Ղարաբաղի շնորհիւ մենք ունինք այս ամենը: Ուրեմն, տղէք, այլ ևս ո՞ր ժամի էք սպասում...»³: Ա. Բեկնազարյանը՝ պատմությունը հյուսողը, պատասխանատվությամբ պատմագրում է. «Խորհրդականաց խօսքերն նոյնութեամբ գրուեցան. թերևս ապագայ սերնդոց օգտակար կը լինին»⁴: Հարկավ, մեկնության այս պահի դրությամբ այն անչափ գնահատելի է...

Հեղինակը նախապես հորը բնութագրելով որպես ամենաքաջ այր՝ միաժամանակ ներկայացրել է խնածախ գյուղի զարմանալի հատկանիշներով օժտված, ըստ բնավորության գծերի՝ մականվանյալ հերոսների շարքը...

Նա պատմության առաջին գրքի Զ գլխում մեկնաբանում է ընթերցողների աչքին անսովոր եւ խորթ՝ հերոսներին տրված մականունների շարքը, որոնք նաեւ նրանցից յուրաքանչյուրին տրվել են ըստ իրենց կատարած քաջագործությունների, ունեցած շնորհների: Շատերին մականունները շնորհել են կաթողիկոսներն ու մելիքները, այլոց՝ ժողովուրդը, որը մի կողմից սիրել, մի կողմից մեղմ հեգնել է նրանց՝ յուր սիրեցյալներին⁵:

«Այս անուանց հետ կապուած են և պատմութիւններ, զորս հարկ է համարօտիւ նկարագրել: Բեկնազարյանը ներկայացնում է այն քաջերին

¹ Բէկնազարեանց Ա., էջ 52:

² Տես Ռաֆֆի, էջ 471-472:

³ Բէկնազարեանց Ա., էջ 54:

⁴ Սոյն տեղում, էջ 54, 55:

⁵ Տես Սոյն տեղում, էջ 21, 55:

եւս, որոնց հետ պատմության ընթացքում ընթերցողը նոր պիտի ծանոթանա: Դրանցից են՝ «Քեալլակէօզ-Առստամ, Ուզունղիձ-Սայի, Պաթմանղիձ-Մարտի, Պաթմանթօփուզ-Թէռոս, Անյաղթ-Ղազար, Քաջալ-Սօսի, Քօսակ-Գիւգի, Գիժ-Մէքի, Թողմնախ-Սափարի, Զնտան-Աւթանտիլ, Շիր-Նասիպ, Պէպիւր-Մախնուր, Անգութ-Խաչի, Նէտու-Եղիազար, Թիւլի-Արզունան, Բասարկէչէր-Գեափի, Ղէլի-Մահրասա, Ղէլի-Քեշիշ, ևն։ Դրանցից Կաքեւ-Չաքին (մականուն է ստացել Գանձասարի ժ. Հովհաննես կաթողիկոսից) հետաքրիր պարտավորություն ուներ նաեւ, մի մահակ, որի մէջն պարապ էր: Զեռնափայտն բաղկացած էր երեք կտորներից, որք միանում էին պտուտակներով և կտորներն անյայտանում էին երկու արոյրէ կապերով: Աջ ոլորելով բանում էր, նամակները գետեղում միջում և ձախ ոլորելով կրկին ամրացնում: Ահա Կաքեւ-Չաքին (Կաքավ Չաքարիա) այս մահակով էր իւրեանց հասցներին հասցնում անվտանգ՝ որկիցէ գաղտնի նամակներ»¹: Հերոսներից յուրաքանչյուրն ունի յուր արժեքավոր նշանաբան-երդումը:

Իհարկե, Ղարաբաղի ճակատագրի համար օրիհասական այն ժամանակներում, երբ թէ օտար բռնակալները, թէ բախտախնդիր խան կոչեցյալները, թէ անօրեն մելիքություն ստացած մելիքները, թէ անօրեն կաթողիկոսություն ստացած կաթողիկոսները շոտապում էին անձնականության դիրքերից քայքայել հայրական ստացվածքները, շենացնել անմիաբանության որոմը, այդ անբարոյական մարմինը ներկայացնել շենշող ու ցանկալի, ապա, ըստ այդմ էլ՝ առողջ ուժերը, կենտրոնաձիգ ծգոտումները պետք է գործեին երիցս զգույշ: Պատմության մեջ խնդրո առարկա երեւույթի շուրջ ընդգծված ենք տեսնում գաղտնի ժողովների առկայությունը, որոնք գումարվում էին Գանձասարում՝ միաբանության ուխտին նվիրյալ անձանց կողմից: «Գաղտնիք»-ում առաջին գաղտնի ժողովը թվագրված է ռմլդ (1785) թվականից: Այստեղ ներկա էին բոլոր մելիքները՝ բացի Մելիք Շահնազար II-ից, «Գաղտնիք»-ում՝ Գ-ից, զորավարները, յուզբաշիները, վանահայրերը: Նախազահում էր ժ Հովհաննես կաթողիկոսը: Պատմության մեջ շարադրված է ներկաների ցանկը: Նրանք գաղտնի իրավիրվել էին Կաքեւ Չաքու միջոցով²:

¹ Նույն տեղում, էջ 55-56:

² Տես նոյն տեղում, էջ 56-58:

ժողովում բացահայտվում են Ղարաբաղի ճակատագրի հետ կապված պատմական իրադարձությունները, Ղարաբաղի «խաների»՝ Փանահի, Իբրահիմի սարսափելի խարդախությունները, առողջ եւ անառողջ ուժերի բախումն ու դրանց հետեւանքները, ժողովրդի եւ նրա ճակատագրի պաշտպան թերի ծգտումները, որոշումները, նպատակառողպածությունը, իրատապ խնդիրները, հուսացումները, պայքարի ծգտող ոգու դրսեւորումները: Դրանք պատմական հիմք եւ քաղաքական գաղափարառողպածություն ունեցող վավերականություն ունեն եւ Արցախի պատմության տվյալ ժամանակաշրջանը վերհանող պատմական, քաղաքական կարեւոր գործոններ են հանդիսանում:

Գաղտնի ժողովի քաղաքական ուղղվածությունը կողմնորոշումն ու հուսացումներն էին դեպի ռուսական կայսրությունը: Ժողովականներին մի փոքրիկ պատմական հղում կատարելով՝ նախազահող կաթողիկոսը խոսում է մեծ կարեւորություն ունեցող փաստաթղթի՝ հանրագրության ստեղծման մասին՝ ընդգծելով հետեւյալը. «Այժմ ևս ամենակարևոր է գրել և Եկատերինէ Բ. կայսրուհուն դրկել մի հանրագրութիւն, որն իհմնուած կը լինի մեր նախնեաց ցարդ շարունակած մի և նոյն պայմանների վերայ, զորս քաջ գիտէք ամենեքեամո՞յ»¹: Փաստաթուղթը Կաքեւ Զաքու միջոցով ուղարկվեց Թիֆլիսի (Տփղիս) Հայոց առաջնորդին՝ Արդությանին փոխանցելու համար: Այդ կարեւոր փաստաթղթի մեջ ցուցված էր, թե Ռուսաստանը ինչ կերպ պետք է օգներ հայերին, ինչ իրավունքներով պետք է Ղարաբաղը մտներ Ռուսաստանի հովանավորության ներքո: Դիզակ գավառի Տողի բնակիչ Շեյքան (սատանա) Թունուն վերապահվեց լրտեսի պաշտոն: Վերջինս անմիաբանների բոլոր գործողություններին հետեւում եւ հայտնում էր կաթողիկոսին ու մելիքներին:

Շեյքան Թունին հաճախակի էր կերպարանափոխվում եւ մելիքների, ինգեւոր այրերի հանճնարարությամբ զաղտնիքներ կորզում մերթ Իբրահիմից, մերթ անօրեն մելիքներից, մերթ Խորայել կաթողիկոսից՝ դրանք հաղորդելով ըստ պահանջի դիտվող անձանց, հանդես գալով դերվիշի, մանրավաճառի, Մելիք Շահնազար II-ի, մոլլայի, զվարճաբանի, ակնավաճառի, քահանայի, խենթի, մուրացկանի, հմայողի կամ պարսից շահի բանիքերի եւ այլ կարգի մարդկանց դերերում...

¹ Նոյն տեղում, էջ 59, տես էջ 60, 61:

Հաճախ նման վտանգավոր ճանապարհորդությունները նա կատարում էր Մելիք Շահնազարի զվարձաբան, ինաստասեր Պըլը-Պուղու (խենթ Պողոս) հետ: «Գաղտնիք»-ում Պըլը-Պուղին անվանված է առակախոս, սրախոս-զվարձաբան. նա վայելում էր հասարակության, մելիքների (մինչեւ անգամ անօրեն մելիքների) ջերմ սերն ու համակրանքը: Վերջինիս կողմից Շեյխան Թունին վերամականուն ստանալով՝ անվանվում է «Այր Աստուծոյ, Ամբակում Մարգարե», այսինքն՝ կանխատես մարգարե, հնարագետ¹:

Պատմության հերոսների անսովոր անունները նրանց հաճախակի տրվել են ըստ իրենց արտասովոր հատկությունների՝ մելիքների, կաթողիկոսների կամ խաների, մարտական ընկերների, ժողովրդի կողմից: Այս պարզաբանմանը մենք անդրադարձել ենք, սակայն հեղինակի ներկայացրած հերոսների նոր շարքի մականուններին ու նրանց հատկանիշների պարզաբանմանը հետեւելով, նշում կատարեցինք²:

Սրանք անվանի ու քաջակորով, հսկայական ուժի, խելքի, ձարպկության, արագության, պատեսության, գիշերատեսության, կանխատեսության, վեհանձնության, աներկուղության, ահարկության եւ այլեւայլ արժանիքներով օժտված զորականներ էին, զորավարներ, մեծ հայրենասերներ, որոնց մասին հյուսված պատմությունները ժողովուրդը, ընկերները հիացմունքով եւ սիրով, իսկ թշնամիները՝ սարսափով էին հիշում եւ պատմում... Նրանք այս կամ այլ մելիքական տների նվիրյալներ էին, ընդհանրության մեջ՝ միաբանության եւ հայրենապաշտության ուխտյալներ, իրենց տերերի, ժողովրդի ձայնին ի տրիստուր... Պատմության մեջ (Զ եւ այլ գլուխներում) հերոսները, որ տարբեր արհեստների տեր են, կամ ունեն հայրենյաց՝ նրա օրիհասական պահերին...

Թօփուզ (թուրք.՝ գլուխը գնդաձեւ ձեռնափայտ) Աշուղ Ղարա (սեւ, նախկինում՝ Ասրի-Ասատուր - Զ. Ա.-Բ.). «Թօփուզ» մականունը «Աշուղ» բարի հետ կցած է հայ հասարակութիւնը առնելով սորա հասակի կարծութիւնիցն և թրի արագաշարժ ելեկջիցն... արուեստիւ աշուղ էր և երգում էր յանպատրաստից, հոգեբուլիս և սրտաշարժ երգեր: Բայց երբ տեսաւ հարազատ-մելիքների և կաթողիկոսների տագնապալից

¹ Նոյն տեղում, էջ 62-63:

² Տես նոյն տեղում, էջ 63-71:

դրութիւնները, կրօնի, կենաց և ընչից անապահով վիճակը՝ Հայրենիքը պաշտպանելու եռանդով թողեց սազը և եռացեալ աւինով գէնքեր առած դաշտ իջաւ, յիշատակ թողնելով սոյն նշանաւոր խօսքերը.

«Սագդ Վեր դի՛ր,

(¹Վայր դի՛ր)

Եարադտ Երկաւ², Աշուղ-Ղարա.

(²Զէնքերդ Վեր ա՛ռ)

Սագն ու խաղը ազգ չեն պահում,

(³Ասպարէզ դուրս Եկ)

վախտն փոխուալ ա.

Եարադտ կապի՛,

մէյտան դիս Եկ³, ջրիտ խաղա⁴.

(⁴Զէնք և թուր շողացո՛ր)

Հայի տիւշման սև ոզշունը լոխ գոնդ ըրա»⁵: (⁵Բոլորը կոտորի՛ր, գլխատի՛ր)»¹:

Երբ Մելիք Շահնազարը չարություն հղացավ մտքում՝ հավշտակել ավագ Եղբորից՝ գրասեր կաղ Հովսեփից Վարանդայի մելիքության ավագությունը, մի գիշերվա մեջ կոտորել տվեց նրա ընտանիքը՝ Եղբորով հանդերձ, իսկ Մելիք Հովսեփի Երեխաններից մեկին, որ մանուկ էր, փախցրին պապի հովանավորության ներքո՝ Խաչեն, քանի որ մելիք Հովսեփը Խաչենի մելիքության Զալայյան տոհմի փեսան էր: Պատմական ահա այս քստմնելի փաստի մասին է հետեւյալ հատվածը, որտեղ գործող կերպար է նաեւ Փիլ (փիդ) Առուշանը. «ՈՄԳ (1754) թուին Փանահ Ճըռ-խանն, միաբանելով իւր դաշնակից Մելիք-Շահնազար Գ-ի հետ՝ մեծ զօրքով յարձակեցաւ Խաչենի Ուլու-Պապ բերդի Վերայ, ուր ամրացած էր Զալալեան Մելիք-Ալլահվերտին իւր զօրքով, որի առօրեայ զօրավարն էր այս Առուշանն: Մելիք Շահնազարի չար դիտաւորութիւնն էր Փանահ Ճըռ-խանի միջոցաւ ջնջել Զալալեան հարազատմելիքութիւնը և հիմնել մի Ճըռ-մելիքութիւն այդ գաւառում. քանզի տոհմային (վերոդիտվածի մասին է հիշեցունը - Զ. Ա.-Բ.) գործոց պատճառաւ Մելիք-Շահնազար Գ-ն ուղտի ոխակալութիւն էր տածուն Զալալեան տոհմի դէմ:

Այս Առուշան զօրավարն դարանամուտ եղաւ իւր զօրքով Պտկեսքերդի կիրճում, որով Ուլու-Պապ անցնելու էր թշնամու զօրքն, կոտորեց այդ հայ և թուրք միացեալ բանակի ամենամեծ մասը և մազապուրծ մինչև Շուշի հալածեց Փանահ Ճըռ-խանը և չարագործ Մելիք-Շահնազար Գ-ը: Ահա այս տղամարդութիւնը վարձատրելու համար «Փիլ» մականունը տուած է սմա Զալալեան Մելիք-Բէկեան Մելիք-Ալլահվերտին»²:

¹ Նոյն տեղում, էջ 69, 70:

² Նոյն տեղում, էջ 70:

Պատմության մեջ փոքրիկ դադարով հեղինակն ակնարկում է թշնամյաց՝ պարսից, հռոմեացիների, հույների, թուրքերի, թաթար-մոնղոլների, արխազների, Վրացիների, Դաղստանի լեռնականների եւ այլոց արշավանքների ծերից հասած ավերածությունների մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, որ դրանցից անմասն մնացին Մեծ եւ Փոքր Սյունիքները։ Հայրենի բնությունը եւս անպարտ ու խորհրդավոր զորաբանակ է եղել օտար հրոսակների դեմ, եւ բնության խորհրդին համապատասխան է հայ մարդու նահապետական կյանքը՝ յուր խայտաբղետ լանդշաֆտով։ Այս մասին խոսել են օտար եւ հայ պատմիչներն իրենց երկասիրություններում։ «Ղարաբաղի անտառապատ լեռներն, անդնդախոր ձորերն, ահարկու կիրճերն, սեպածն ժայռերն, աննատչելի քարայրներն, թաւախիտ անտառներն, անառիկ բերդերն և բնութենաստեղծ ամրոցներն սոսկալի երկիւղ ազդելով արտաքին թշնամեաց Վերայ՝ անձեռնամխելի պահած են մեր սուրբ Հայրենիքը, Ղարաբաղը, նոցա բոլոր յարձակումներից։

Ղարաբաղի լեռնոտ դիրքն, մաքուր օդն, վճիտ ջուրն և սննդարար կլիման պարզեած են բնակչաց մի նահապետական և յատուկ կենցաղավարութիւն, ազատ կեանք, վայրագ բնաւորութիւն, յաղթանդամ կագնուածք, զօրեղ ոյժ, աներկիւղ սիրտ, հիանալի գինաշարժութիւն և դիւցազնական արհութիւն»¹։

Այնուհետեւ սեղմ ցույց է տրված Սիսական թագավորական տոհմի ծագումը մինչեւ մելիքության եւ Զալայյան Սարգսի կաթողիկոսության ժամանակները։ Միաժամանակ ներկայացված է Ղարաբաղի խանության ստեղծման, Մելիք Շահնազարի թողևությամբ Փանահի Շուշվա բերդին տիրություն անելու եւ վայրագ խաների՝ Փանահի, Իբրահիմի, Մեհսի Ղուլիի կողմից տարված ծանր քաղաքականության պատկերը, որը գրեթե պառակտեց, քայլայման հասցրեց Արցախի մելիքությունները եւ որի շուրջ հյուսվել են ապագա պատումները։ «Ահաւասիկ այս ներքին երկպառակութիւնն էր, որ ծգոտում էր վնասել Ղարաբաղի քաղաքական, բարոյական և տնտեսական կենաց, որոց անկարող եղած էին վնասել այնքան արտաքին զօրեղ ուժերն»²։

«Գաղտնիք»-ը հետաքրքիր լայն քննողական դաշտ է բացում՝ կապված Ղարաբաղի ներքին եւ արտաքին կյանքի բացահայտման հետ՝ պատասխանելով ամեն կարգի հարցադրումների։ Ուստի, մեկնելով այն, կարելի է ճշտիվ գաղափար կազմել թե՝ տվյալ ժամանակաշրջանի, թե՝ քաղաքական եւ տնտեսական, հոգեւոր եւ աշխարհիկ, թե՝ ռազմա-

¹ Նոյն տեղում, էջ 71։

² Նոյն տեղում, էջ 76։

վարական այն կարեւոր, փաստացի հանգամանքների մասին, որոնցով կամա թե ակամա պարուրված էր կամ շնչում էր Ղարաբաղը եւ որոնց միջոցով շոշափելի են դաշնում մեզ համար շատ ու շատ կարեւորագույն հարցեր, ինչու չէ՝ նաեւ կապված լեզվի, արցախաքարբարի, բանահյուսական երգերի, աշուղական եւ քերթողական հետաքրքիր եւ բարձր նորովի դրսեւորումների, գրական ժամանակակիցների, վարչական, քաղաքական անչափ կարեւոր եւ սուր հարցադրումների հետ...

«Գաղտնիք»-ը բացում է XVIII դարի արցախահյության ծանր ու դրամատիկ ձակատագրի գիրքը, եւ թող որ՝ ինչ-որ տեղերում պատմականության որոշ հարցերի չհարաբերող բացթողումներով, բայց եղելությունները հիմնականում խոսում են ժամանակաշրջանը ներկայացնող եւ բնութագրող բնորոշ հարաբերություններով։ Մենք իրավունք չունենք «Գաղտնիք Ղարաբաղի»-ն փակել եւ ցույց տալ, թե պատմական այդ ուսումնասիրությունը այդպես էլ պետք է մնա տարբուի տակ։ Ոչ, այն պետք է ներկայացնել հանրությանը, գիտական շրջանակներին մղել՝ գրաղվելու գործի արժեքաբաննան հարցով, ինչը եւ առաջին հերթին հանձն ենք առել մենք։ Պետք է մեկ անգամ ընդմիշտ վերցնել այդ ուսումնասիրության վրա դրված արգելքը, սպանիչ, անհարկի զգուշավորությունը եւ օգտագործել այն որպես մեր ժողովրդի ստեղծած հոգեւոր բարձր արժեքներից մեկը։ Հետեւնք որոշ փաստախնդիրների եւ համոզվենք մեր ձեւակերպուներում։ «Ահա սոյն ներքին երկպառակութիւններն բացին արիւնահետ պատերազմների ընդարձակ ասպարեզներ, որոց մէջ աւելի բազմապատկուեցան հարազատ-մելիքների և հարազատ ժողովրդեան ռազմագիտական կրթութիւններն, դիւցազնական քաջազրութիւններն և յաղթական հանդէսներն։ Հայրենիքը, Ազգը, Կրօնը, հարազատ-մելիքաց ազատ իշխանութիւնը պաշտպանելու անդիմադրելի եռանդն բուռն զօրութեամբ պատերազմի դաշտն մղեց համարեա՛ թէ բոլոր հայ հարազատ անհատները։ Մեր սուրբ Հայրենիքում գէնք գործածելու հարկն բնութիւն դարձաւ, պատերազմն՝ արհեստ, արիւնիեղութիւնն՝ օրէնք, մարդասպանութիւնն՝ մսագործութիւն, աւարառութիւնն՝ սեփականութիւն և բոլոր ձըռերը գոնդ անելն՝ անհրաժեշտ ձգտում։» Խոսվում է նաեւ զինվորական արհեստների զարգացման մասին՝ կապված երկրի քաղաքական կյանքի անհանգատությունների հետ։ «Ստիպողական հարկն երկրում կատարելագործեց հրացան, ատրճանակ, թուր, երկսայրի, վաղակ,

վառող, գնդակ, վարօղեղջիւր, գնդակաշարան, փամփուշտ շինելու արուեստները: Զի աշտանակելն, արագ զինավարժութիւնն, նշանակէտին անվրէպ զարնելն դարձած են հասարակաց սովորական արուեստներ, որոց մէջ վարժ են այսօր ոչ միայն Ղարաբաղի հայ տղամարդիկ, այլ և ծերունիք, պառաւունք, կանայք, պատանիք և օրիորդք»¹:

Հեղինակը պարսավով է խոսում ողորմելի, անօրեն մելիքների ու նրանց ընտանիքների մասին, որոնք կարծես բանտարկյալ էին իրենց բերուերում: Մեկնարանվում է Իբրահիմը՝ յուր քաղաքական երկդիմի մղումներով, երբ իրեն ամրապնդելու նպատակով տարբեր ցեղախմբեր է բերում Ղարաբաղ՝ ավելի խարդախորեն գործելով, գերազանցելով հորը՝ Փանահին, ձգտելով Ղարաբաղն աշխարհիկ եւ հոգեւոր օրինական տերերի իշխանությունների կործանման անընդմեջ շրջապույտում պահել: Վերջինս յուր արշավանքների ժամանակ անընդմեջ պարտություններ էր կրում Ղիզակի մելիք Եսայուց, Զրաբերդի մելիք Աղամի եւ մելիք Հովսեփի համազորությունից, մելիք Աղամից: Հոր քաղաքականությանը հետեւող (այս նաեւ առկա է Պյատոն Չուրովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպում) Իբրահիմը Գանձասարի գաղտնի հանրագրի կալանավորությունից (1785թ.) մի քանի ամիս հետո նամակով փորձում է Մելիք Մեջլումին խոհեմության կոչել՝ ձգտելով իրեն Ղարաբաղի տիրակալ ներկայացնել:

Իբրահիմը բոլոր մելիքներին եւ Հովհաննես կաթողիկոսին եւս հրավիրում է Շուշի եւ բարեկամության երդումը դրժելով՝ բանտ նստեցնում... Այս ամենի մասին Կաքեւ Զաքուց իմանալով՝ հայ քաջերը, որոնք նախազգում էին Իբրահիմի խարդախությունը, մագլցելով Շուշիի պարիսպները՝ գիշերով մտնում են քաղաք, բանտի պահապաններին գլխատում եւ փշրելով բանտի դրները՝ ազատում գերյալներին: Սակայն Հովհաննես կաթողիկոսին գտնում են թունավորված-սպանված, իսկ Մելիք Բախտամին՝ հանրագրի հետ, պարզվում է, աքսորել էին Պարսկաստան:

Մելիք Մեջլումը, մի բուռ ոսկի տալով 20 քաջերին, որոնց հետ էր նաեւ Աբրահամ Բեկնազարյանը, ասում է. «Սիրելի Բէկնազարեանց (Աբրահամ), քսան և հինգ քաջերով հետապնդի՛ր յետ բերել Մելիք-Բախտամը և իւր բերդում հանգստացնել: Աստուած ձեզ հետ»²: Մելիք Բախտամը

¹ Նոյն տեղում, էջ 76-78:

² Նոյն տեղում, էջ 83:

Դիզակի հանգուցյալ քաջ Մելիք Եսայու որդին էր, որին շահի հրովարտակով մելիքության կարգեցին 1781 թվականին:

Մեծ ժողովրդականություն վայելող Աղա Մահմեդ շահն անասելի բարկացած էր անօրեն խամերի, այդ թվում նաև՝ Իբրահիմի վրա: Վերջինս էլ յուր հերթին ճանապարհներ էր որոնում շահին սիրաշահելու, եւ առիթը Գանձասարի ժողովի գողացված հայտնի հանրագիրն էր Եւ Դիզակի Մելիք Բախտամը:

Մելիք Մեջլումի ուղարկած 25 քաջերը, երբ հասնում են Խուդափերինի կամրջի մոտ, դիզակցի մի ձկնորսից իմանում են, որ Մելիք Բախտամին տանող զորախումբը (40 հոգի) չորս ժամ առաջ անցել է սահմանը:

Քաջերը հուսահատվում են, բայց դարանակալյում են Բարգուշատի գետեղերքին եւ Շուշի Վերադարձող 40 զինվորներին գլխատում: Նրանցից մեկի՝ Շիրին յուզբաշու մոտ որպես կաշառք հայտնաբերում են Մելիք Բախտամի տված 200 թուման փողը եւ հայտնի հանրագիրը, որը Մելիք Բախտամի զործադրած հնարամտությամբ պիտի հանձնվեր հայ մելիքներին: Խոկ պատմության էջերում գետեղված անհանգստալից տողերը հետեւյալն են գուժում. «Մելիք-Բախտամի հետ Պարսկաստան էր զնում ահա այսպէս և Ղարաբաղի Հայոց անհաւատարմութիւնն, կոտրուած պատիւն և աղարտուած անունն, զորս հարկ էր յետ դարձնել Ճանապարհից»¹:

Ինչպես տեսանք, Ղարաբաղի պատիվը փրկեց պարսից աքսորյալ դարձած, քաջ Մելիք Եսայու՝ նույնքան քաջ, բայց պարսից բանտերում սիրտն ու հոգին մաշած եւ մահացած Մելիք Բախտամը:

Մելիք Ադամյան Մելիք Մեջլումը, որ Հովհաննես կաթողիկոսի քրոջ որդին էր, Գյուլիստանի իշխան Մելիք Աբովի հետ Զրաբերդում ուրախությամբ ընդունում է հանրագիրը, մեծ կսկիծով կաթողիկոսական տեղապահ ընտրում Զալալյան Սարգսի Եպիսկոպոսին:

Եվ այսպես, մեր հայացքի առջեւով սահում են Ղարաբաղի մելիքների հուսացումները մերթ պարսից շահերից, մերթ ռուսաց միապետներից ու այս ծանրագույն ճանապարհին՝ անօրեն դրածոներից, Ղարաբաղի ոխերիմ թշնամի խաներից: Փանակի հաջորդ Իբրահիմից հասնող խարդախությունների շարանը վավերագրերի ու պատմական անհերթելի ապա-

¹ Նոյն տեղում, էջ 85:

ցուցների արժեք է ձեռք բերում, որը փորձում ենք ներկայացնել գիտական գնահատությամբ:

Իբրահիմը կամ պետք է խարդախ ու խաբեքա կոչվեր շահի կողմից, կամ մելիքների անհավատարմությունը հաստատող փաստաթղթեն ուղարկեր շահին:

Վերոհիշյալ մելիքները հանրագի սեւագրությունը եւ հայերի ու ռուսների միջեւ տարված գրագրությունները պահանջեցին հանգուցյալ կաթողիկոսի եղբայր Սարգիս Եպիսկոպոսից եւ թաքցրին Զրաբերդի մելիքարանի ստորգետնյա աներեւոյթ ու անհայտ ծածկապահարանում...

Իբրահիմին խիստ անզորության էր մատնել նաեւ ռուս զորապետ Բուրնաշովի՝ 4000-անոց զորքով Ղարաբաղում երեւալու հնարավոր վտանգը: Իբրահիմի հրամանով պետք է խուզարկվեր Գանձասարի դիվանը եւ կաթողիկոսական ձեռագրադարանը, եւ գրավվեին հնարավոր փաստաթղթերը...

Մելիքները նախօրոք բոլոր փաստաթղթերը երեք մասի են բաժանել եւ թաքցել Գանձասարի եւ Խորա վանքի մերձակայք-կենտրոնատեղիում՝ մի քարայրում, Երկրորդը՝ Զրաբերդի ստորգետնյա անհայտ թաքստոցում, Երրորդը՝ Գյուլհստանի Հոռեկա վանքի հարեւանությամբ: Զեռագրերը լուսաբանում էին Ղարաբաղի՝ գիտականորեն խիստ արժեքավոր պատմությունը՝ հարազատ եւ անօրեն մելիքների վարքը, ծագումնաբանությունը, Աղվանից թագավորների, կաթողիկոսների ծագումնաբանությունը:

«Գաղտնիք»-ի համապատասխան էջերում թվագրված են այն հեղինակներն ու գրքերը, որոնք թաքցրած կային ձեռագրերում: Ղրանցից են՝ 1. Երեմիա կաթողիկոսի «Պատմութիւն կաթողիկոսացն Աղուանից», «Ծագումն թագաւորացն Աղուանից», «Ծագումն Զալալեան տոհմի ի Վախթանկ թագաւորազնէ» (հեղինակը նշում է, թե այդ գրքում (ձեռագիր) «սկզբից մինչև իր օրերն շարունակած էին Զալալեան Գրիգորիս և Եղիա վարդապետներն և սոցա հետագաներն»¹, «Ժամանակագրութիւն անցից» (Ղարաբաղի քաղաքական, Եկեղեցական բոլոր պատմությունները, ուր գետեղված է մելիքների գործունեությունը), 2. Եղիա վարդապետի «Արշաւանք Թաթարաց և պատերազմ ի Կաչաղակաբերդին», 3. Եսայի կաթողիկոսի «Ծագումն և պատմութիւն Մելիք-Հայկագեանց Մելիք-Եսայեայ, իշխողին Զրաբերդի», «Ծագումն և պատմութիւն Մելիք-Աբովի

¹ Տես նոյն տեղում, էջ 89-92:

առաջնոյ, իշխողին Կիլստան գաւառի», «Յարաբերութիւն Հայոց ընդ Ուսւաց» (պաշտոնական գրությունների պատճեններ), 4. Ղետոնդ վարդապետի «Մելիք Շահնազար Երրորդ», 5. Մովսես Վարդապետի (Գանձասարի միաբան) «Վանորայք Արցախի և Կալուածք նոցա» (Փոքր Սյունիքի վանքերի մասին է եւ գրվել է Եսայի կաթողիկոսի հրամանով) գրքերը եւ հիշատակարանները:

Резюме

История армянскоў литературы и периодическоў печати свидетельствует о явлениях, носящих спорны́ характер, которые привлекли внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с грабара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела-ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна А.“Тайна Карабаха”.

В ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование “Тайна Карабаха” содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха - объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале XIX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими, художественно-литературными, и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание.

Summary

In the history of Armenian literature and periodicals there were debatable phenomena which became the focus of certain literary, critical and publicistic circles.

Apres Begnazaryan's historical investigation "Mystery of Karabagh" (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published under the patronage of Arakel-agha Tsaturyan in St. Petersburg in 1886.

But detailed analysis of this work has brought us to the conclusion that "Mystery of Karabagh" contains diversive historical documents concerning the periods of Artsakh peoples` struggle against Persian invasions in the XIX and in the beginning of the XX centuries; historical, and other interpretations of Russian-Armenian-Artsakh relationships; opens and elucidates the development of the scientific thought in Artsakh.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ԱՐՑԱԽԻՀԱԿԱՂԱԿԱԲԵՐԴ ՏԵՂԱՆՔԸ, ԱՆՎԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
Սիլվա Մինասյան	5

ԱՊՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ Խ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ՄԵԼԱՆՅԱ Բալայան	14
ԵՍԱՅԻ ՀԱՍՏԱ-ԶԱԼԱՎԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՈՐՊԵՍ ԱՐՁԱԽԱՀԱՅ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿՈՍ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ Վահրամ Բալայան	29
ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՐՁԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ Վլադիմիր Հովեկյան	40
ԴԱՐԱԲԱՂԸ՝ ՈՌԻՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ 1822-1867 թթ. Նելլի Բաղրամարյան	49
ԱՐՁԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏ 1897 թ. ՀԱՍԱՌԻՍԱՅԱՎԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱԿԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ Լեռնիկ Հովհաննիսյան	60
УЧАСТИЕ НОВО-НАХИЧЕВАНЦЕВ В СТАНОВЛЕНИИ ПАРТИИ ДАШНАКЦУТЮН И ОРГАНИЗАЦИИ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ (1905-1917 гг.) Саркис Казаров, Сурен Манукян	
64	
К ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТИ РУКОВОДЯЩИХ СТРУКТУР АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ НА СЕВЕРНОМ КАВКАЗЕ	
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 194-ում (1991-2002թթ.) Արմինե Արստամյան	94
ԱՐՁԱԽԻ ՀԱՅԱԳԻՐ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ	

Գրիշա Հարությունյան 102

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՅԻՆ ԻՂԵԱԼԱԿԱՆ
ԱՅԳՈՒ

ԵՎ ՆՐԱ ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համլետ Պետրոսյան 114

ՀԱՆԴԱԲԵՐԴԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Լյուբա Կիրակոսյան 124

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՔԱՂԱՔԱՏԵՂ»

Սլավա Սարգսյան 138

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՏԱՐԱՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵջ

Վարդգես Սաֆարյան 147

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԱՆ ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ

ԱՌԱՋՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արմեն Սարգսյան 156

ՀԱՅ ԶԻՆԿՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ ՎՐԻԺԱՌՈՒՄՆԵՐԸ

ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱԴԻ» ՊԱՏՄԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Զինափոխական Առաքելյան-Բալյայան

174

ԱՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

JOURNAL FOR ARMENIAN STUDIES

1

Հարվածքը

և էջաղորումը՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Սրբագրիչ՝ Լ. ՄԱԿԱԿՅԱՆ

Հանձնված է շարվածքի՝ 09.06.10 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 05.11.10 թ.:
Ծավալը՝ 24 տպ. մամով:
Տպաքանակը՝ 150:

ԱրՊՀ հրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ա. Գոշի փ. 5